կթել	to milk	պատ	wall
սակայն	though, although	շարել	to put in a row, to arrange
մեքենայ	machine, engine	փայտ	board, wood
ամրացնել	to firm; to attach	գեղեցիկ	beautiful, nice
սեղմել	to press	վանդակ	cage
էլէկտրական	electric	կանգնել	to stay, to stand
կոճակ	button	հորթ	calf
բուրաւէտ	fragrant,sweet-scented	կերակրել	to feed
կաթ	milk	դասարան	classroom
հոսել	to flow, to run	աշակերտ	student
աման	vessel, container	հինգ (հինգերորդ)	five (fifth)

ԱՌԻՒԾԻ ԵՐԱԶԸ

Առիւծի կորիւնը փակւած էր վանդակում։ Նա մռայլ նայում էր երկաթէ ամուր ձողերի ետեւից։ Կարօտով յիշում էր իր հայրենի տաք անապատը, յիշում էր ինչպէս ազատ եւ ուրախ խաղում էր արմաւենիների տակ։

Այժմ անցել է ամեն բան, եւ գազանանոցում փակւած որպէս գերի՝ տխուր նայում էր նա հաստ ձողերի ետեւից։

Գիշեր էր։ Շուրջը լուռ ու խաղաղ. գազանանոցի գերիները՝ վագրը, արջը, գայլը, կապիկները, ջայլամը, եղջերուները, ամենքն իրենց վանդակներում, յարդի վրայ ընկած՝ սպասում էին լուսանալուն։

Վերջապէս յոգնած առիւծի ձագն էլ գլուխը դրաւ թաթերի վրայ ու քնեց։

Գիշերւայ մի ժամանակ յանկարծ գազանանոցի դուռը բացւեց ու ներս մտաւ նրա մայրը։ Ներս մտաւ, հպարտ ու հզօր, կրակոտ աչքերը ման ածեց վանդակների վրայ ու տեսաւ իր զաւակին։ Աչքերը փայլատակեցին. մռնչաց, յարձակւեց եւ իր զօրեղ զարկով ջարդեց վանդակի ձողերը։

Կորիւնն ուրախութիւնից ճչաց, վեր թռաւ, որ ընկնի մօր գիրկը, դիպաւ երկաթի ձողերին ու զարթնեց..։

Տեսաւ՝ երազի մէջ էր։

Գիշեր էր. շուրջը լուռ ու խաղաղ։ Գազանանոցի գերիները՝ վագրը, արջը, գայլը, կապիկները, ջայլամը, եղջերուները, ամենքն իրենց վանդակներում, յարդի վրայ ընկած՝ սպասում էին լուսանալուն։

Կորիւնը երկար մռնչաց գիշերւայ լռութեան մէջ։

առիւծ	lion	ջայլամ	ostrich
կորիւն	cub	եղջերու	deer
փակել	to close	ամենք	all of them
մռայլ	sad, obscure	յարդ	straw
նայել	to look	ընկնել	to fall
երկաթ	iron	սպասել	to wait
ամուր	firm, solid	լուսանալ	to dawn
ձող	bar	վերջապէս	finally
ետեւից	from behind	յոգնել	to get tired
կարօտ	nostalgia wish; needs	ձագ	young(of animals)
յիշել	to remember	թաթ	paw
հայրենի	of the homeland	յանկարծ	suddenly
տաք	warm	բացւել	to(be)open(ed)
անապատ	desert	հպարտ	proud
ազատ	free	հզօր	mighty
ուրախ	gay, joyful	կրակոտ	fiery
խաղալ	to play	ման ածել	to turn; to take to a walk
արմաւենի	palm tree	փայլատակել	to sparkle, to flash
այժմ	now	մռնչալ	to roar
ամեն բան	everything	յարձակւել	to attack
գազանանոց	zoological garden	զօրեղ	strong
գերի	prisoner	զարկ	blow, hit
տխուր	sorrowful, grieved	ջարդել	to break, to destroy
հաստ	thick	ճչալ	to scream
լուռ	silent	թռաւ (թռչել	to fly) he flew
խաղաղ	quiet	գիրկ	bosom
վագր	tiger	դիպաւ (դիպչել	to touch) he touched
կապիկ	ape	երկար	long, for a long time

ԳԻՇԵՐՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ

Մթնում է. մէկ մէկի ետեւից հանգչում են լոյսերը: Փողոցները դատարկւում են: Դադարում է վերջին հանրակառքերի աղմուկը: Քաղաքը խաղաղ քնած է:

Բայց մի րոպէ մտածեցէք. կարո՞ղ են արդեօք գիշերը բոլորը քնել: Ոչ. կան մարդիկ, որոնք կարող չեն քնել, երբ դուք հանգիստ պառկած էք անկողնում: Նրանց աշխատանքը գիշերն է կատարւում:

Ահա թէ ովքեր են դրանք.

Էլէկտրակայանը գործում է գիշերը. երբ դուք ուզէք՝ ձեր լոյսը կը վառէք: Կայանում չեն քնում. կայանն օր ու գիշեր լոյս է տալիս բնակիչներին:

Գիշերւայ գնացքը մեկնեց. կայարանը դատարկւեց. բայց գնացքը սլանում է դէպի նոր կայարաններ: Ճանապարհորդները հանգիստ քնել են. չեն քնում միայն մեքենավարը, կայարանների պետերը, հերթապահները եւ հնոցապանը:

Քաղաքի մի ծայրում կրակի լեզուները խաղում են:

-Հրդե՞հ է,- կանչում է գիշերապահը:

Մի քանի րոպէ չանցած՝ հրշէջներն ինքնաշարժով սլանում են դէպի այրւող տունը, որ պատած է ծխով ու բոցերով:

-Ներսը մարդ է մնացել,- ճչում են ամբոխի միջից:

Դռան մէջ երեւում է հրշէջի մրոտած դէմքը. նա ուժեղ ձեռների վրայ դուրս է բերում ուշաթափ աղջկան:

Գիշերն անցնում է. աշխատանքից յետոյ բակն են դուրս եկել հացի փուռի բանւորները. սրանք ամբողջ գիշեր հաց էին թխում, որ վաղ առաւօտ քաղաքի բնակիչները թարմ հաց ունենան:

Հեռագրատունը գործում է գիշեր եւ ցերեկ. քաղաքից քաղաք, երկրից երկիր լուրեր են գնում:

Մէկ երկու ժամւայ, երբեմն մի քանի րոպէի ընթացքում մենք իմանում ենք, թէ ինչ է կատարւում մեզնից շատ հեռու տեղերում:

Եթէ հեռագիրը չգործէր գիշերը, էլ ի՞նչ արժէք կունենար ուշացած լուրը:

Տպարանում նոյնպէս չեն քնում. թարմ լուրերն արդէն մեքենայի տակ տպւում են: Ժամը երեքն է. դեռ լոյսը չբացւած՝ առաւօտեայ թերթը կանցնի լրագրավաճառի եւ բաժանորդի ձեռքը:

գիշերն աշխատող	nightworker	սլանալ	to jerk;to fly
մթնել	to become dark	դէպի	toward
մէկ մէկի ետեւից	after each other	ճանապարհորդ	traveler
հանգչել	to rest;(light) to be extinguished	մեքենավար	driver, chauffeur, engineer
լոյս	light	պետ	chief
դատարկուել	to get empty, deserted	հերթապահ	guard;conductor
դադարել	to cease; to stop	հնոցապան	fireman, stoker
վերջին	last	ծայր	end
հանրակառք	bus,omnibus	կրակ	fire
աղմուկ	noise	լեզու	tongue
մի րոպէ	a moment	հրդեհ	fire,conflagration
մտածել	to think	գիշերապահ	(night-)watchman
արդեօք	"I wonder"; whether	մի քանի րոպէ չանցած	in a few minutes
որ, pl. որոնք	who	հրշէջ	fireman
հանգիստ	quiet	ինքնաշարժ	car, automobile
պառկել	to lie down	այրել	to burn
կատարել	to accomplish	այրուել	to be burned
կատարուել	to be accomplished	այրուող	burning
ահա	behold! there!	պատել	to surround
ովքեր	who,pl.	ծուխ	smoke
դրանք	they, those	բոց	flame
էլեկտրակայան	electric power station	ներսը	inside
		միջից	from (in)
վառել	to burn; to turn on (light)	դուռ g. դռան	door
կայան	station	դուրս բերել	to carry out
օր ու գիշեր	day and night	ուշաթափ	fainted; senseless
լոյս տալ	to give light, to light up	աղջիկ g. աղջկան	girl
բնակիչ	inhabitant	երեւալ	to appear
մեկնել	to depart; to leave	մրոտած	sooty, covered with soot

ԹՌՉՆԱՊԱՀ ԱՂՋԻԿԸ

Գիւղից դուրս,ուռենու տակ տխուր նստած էր մի աղջիկ ու լաց էր լինում:

Նրան ձայնակցում էր վճիտ, արագահոս առուակը:

Արցունքի կաթիլները գլորւում էին աղջկայ այտերից, ընկնում խոխոջուն առուակի մէջ: Այդ ժամանակ նրան մօտեցաւ մի ծեր կին՝ Ծովինար տատիկը: Նա լացող աղջկան հարցրեց.

-Աղջիկ,Հռիփսիկ, ի՞նչ է պատահել:

Հռիփսիմէն աւելի յուզւեց եւ ամօթից երեսը շրջելով, ոչինչ չասաց:

Ծովինար տատիկը տեսաւ, որ աղջիկը լացը չի կտրում, լուրջ հետաքրքրւեց.

-Դէ, ասա տեսնեմ, ի՞նչ է պատահել:

Աղջիկն իրեն զսպելով, պատասխանեց.

-Իմ ճտերից գողանում են.,.: Ինը հատ պակասում է ..:

-Ինը հա՞տ,- զարմացաւ Ծովինարը,- բա ինչո՞ւ մինչեւ հիմայ ոչինչ չես ասել..

Աղջիկը չգիտէր, թէ ի՞նչ պատասխան տար: Վեց օր առաջ նա հաշւել ճտերը, տեսել որ երեքը պակասում է, բայց ոչ ոքի չէր ասել: Մէկ էլ այսօր նա համրեց եւ տեսաւ, որ կորածների թիւն վեցն էլ է աւելացել: Ո՞վ էր տարել. ո՞վ կարող էր մտնել կոլտնտեսութեան թռչնանոցը,ճտերը գողանալ, դժւար էր ասել:

-Երեւի աղւէսն է տարել:

-Աղւէսը որտեղի՞ց մտնէր,- առարկեց Հռիփսիկը,- դուռը փակ է եղել:

-Որ այդպէս է, լաց մի լինի, ուշադիր հետեւիր, գողին կը գտնես,- ասաց Ծովինարը եւ հեռացաւ:

Այդ օրը Հռիփսիկը շատ ուշ վերադարձաւ տուն. գիւղից դուրս՝ իրիկւայ մթին, թռչնանոցի դռանը նա մենակ,վախենալով սպասում էր որ գտնի գողին, բայց ոչինչ չգտաւ:

Միւս օրը, վաղ առաւօտեան, այգիների մօտից անցնելիս նրան պատահեց Մովսէս քեռին եւ ասաց.

-Աղջի, Հռիփսիկ,մայրդ քանի անգամ ասել է, որ մի բահի կոթ սարքեմ: Առ, սարքել եմ, վերցրու տար, ես ջրաղաց եմ գնում..:

Հռիփսիկը վերցրեց բահի կոթը եւ ուսին դրած գնաց թռչնանոց: Դուռը բաց արեց եւ բահի կոթը ձեռնափայտի պէս ձեռքին խաղացնելով, դուրս էր անում ճտերին, երբ նկատեց, որ մի քանի ճտեր չեն շարժւում: Հռիփսիկը կռացաւ եւ իսկոյն չկարողացաւ հասկանալ, թէ ինչու են նրանք սատկել: Նա շուրջը նայեց:

Եւ հէնց այդ պահին, պատին տակ, իրենից ընդամենը երկու քայլի վրայ, տեսաւ մի մեծ օձ, որն ընկել էր հաստ պարանի կծիկի պէս: Գորշ, սեւին տւող նախշերով օձը գետնի վրայ տաշտի չափ տեղ էր գրաւում:

Հռիփսիկի մարմնով սարսուռ անցաւ:

Օձն աղջկան տեսնելուն պէս կամաց կամաց գլուխը բարձրացրեց եւ կարծես պատրաստւում էր նրա վրայ յարձակւելու:

Հռիփսիկը գիտէր. մեծերից լսել էր, որ երբ օձը գլուխը բարձրացնում է, պատրաստւում է յարձակւելու:

Գուցէ պէտք էր իսկոյն փախչել. առաջին պատահած մարդուն օգնութեան կանչել: Սակայն նրան թւաց, որ եթէ ինքը շարժւի, օձը կը յարձակւի իր վրայ, կը խայթի:

Կանգնած էր աղջիկը, իսկ նրա աչքի առաջ կամաց կամաց շարժւում էր օձի կծկւած մարմինը: Նրա գլուխը մի գորտի չափ էր. մարմինն աւելի հաստ քան բահի կոթը, որ նա դրել էր իր ոտքերի մօտ, արկղի վրայ: Իսկ թէ ինչքան երկար էր այն, դժւար էր ասել, որովհետեւ օձի մարմնի մի մասը դեռ կծկւած էր: Այդ կծիկը գնալով փոքրանում էր: Օձը կամաց կամաց ցցւում էր տեղում եւ թւում էր թէ ահա ուր որ է կը հասնի առաստաղին: Ցցւում էր եւ զարհուրելի հայեացքը աղջկանից չէր կտրում. շարունակ նայում էր նրան:

Հռիփսիկի լեզուն բռնւեց: Նա ուզում էր կանչել,

-Օգնեցէք..:

Բայց ձայնը դուրս չեկաւ:

Նա չէր էլ զգում, որ ամբողջ մարմնով դողում էր: Եւ չնայած դրան, տեղից չէր շարժւում, մնում էր կանգնած եւ մտածում էր օձից փրկւելու մասին: Պաշտպանւելու համար հարկաւոր էր թէկուզ վերցնել քահի կոթը, որն ընկած էր նրա ոտքերի մօտ:

Այժմ օձը երկարում էր, իսկ նա կարճանում: Ահա նա այնքան պպզեց, որ մատների ծայրերը կպան քահի կոթին: Դողացող ձեռքով քահի կոթը վերցնելով, նա ճիշտ եւ ճիշտ օձի պէս կամաց կամաց կանգնեց տեղում եւ երբ զգաց, որ ամուր կանգնած է, յանկարծ վեր բարձրացրեց ձեռքի փայտը եւ ամբողջ ուժով զարկեց օձին:

Հռիփսիկի աչքի առաջ ընկած հաստ պարանի նման կծիկը խլրտաց, շարժւեց..: Թւաց թէ այն պէտք է գայ, փաթաթւի իրեն, խեղդի:

Օձին մօտ չթողնելու համար Հռիփսիկը ձեռքի փայտի ծայրը դէմ տւեց նրա մարմնին, ամբողջ ուժով պահեց:

Աղջկայ եւ օձի միջեւ սկսւեց մի լուռ մենամարտ:

Հռիփսիկին թւաց, որ եթէ ինքը օձին բաց թողնի՝ իր վերջն է: Դրա համար էլ նա ամբողջ ուժով յենւում էր փայտին եւ չէր համարձակւում վերցնել այն ու նորից հարւածել:

Եւ այդպէս շարունակւում էր լուռ մենամարտը աղջկայ եւ օձի միջեւ:

Դժւար էր ասել թէ ինչով այն կը վերջանար, եթէ յանկարծ թռչնանոցի դռների մէջ չերեւար ծովինարը, որը մինչեւ գոմ գնալը ուզում էր Հռիփսիկին նորից մի լաւ կշտամբել՝ երեկւայ դէպքի համար:

-Աղջի,ի՞նչ ես մտել այդտեղ, դուրս չես գալիս:

Խօսելով նա առաջացաւ դէպի Հռիփսիկը եւ յանկարծ սարսափահար դուրս փախաւ ճչալով.

-Օգնեցէք, օգնեցէք..:

Գոմի մօտ երկու երիտասարդ տղայ եզներ լծում էին սայլին: Թողնելով իրենց գործը, նրանք վազելով եկան թռչնանոց եւ օձին սպանեցին:

Ծովինարը աղջկան տարաւ առւի մօտ, երեսին ջուր ցօղեց, նստեցրեց ուռենու տակ:

Տղաները սպանուած օձին էլ քարշ տուին այդտեղ: Մէկը նրանցից շոշափեց օձին փորը եւ ասաց.

-Այս ի՞նչ է կերել, որ փորն ուռած է..:

Երկու ձեռքով փորը սեղմելով՝ տղան նրա բերանից հանեց մի ճուտ:

-Վա՜յ, քոռանամ ես,- բացականչեց Ծովինար. աղջի, այ, ճտերի գողը..:

Հռիփսիկը ուրախութիւնից լաց եղաւ: Նորից ուռենու տակ, առւի ափին նստած էր աղջիկը, բայց այս անգամ ուրախ էր, որ ինքը բռնել էր գողին:

թռչնապահ	poultry farm
ուռենի	willow
ձայնակցել	to chime in; to join in a song;agree
վճիտ	clear,limpid
արագահոս	streaming , rapidly flowing
առուակ	creak,brook
արցունք	tear
կաթիլ	drop
այտ	cheek
խոխոջուն	rattling
ծեր	old
տատիկ	grandma
լացող	weeping
աւելի	more
յուզուել	to be touched, moved (emotion)
ամօթ	shame
շրջել	to turn
երես	face
լացը կտրել	to stop crying
կտրել	to cut
լուրջ	serious
հետաքրքրուել	to be interested
իրեն զսպել	to control o.s.
ճուտ pl.ճտեր	chicken
գողանալ	to steal
ինը հատ	nine pieces
պակասել	to be less, to miss
զարմանալ	to be amazed, to wonder

վեց օր առաջ	six days ago
հաշուել	to count
ոչ ոք	nobody
այսօր	today
համրել	to count
կորած	lost
թիւ	number
վեց	six
աւելանալ	to increase (intr.)
մտնել	to enter
կոլտնտեսութիւն	collective economy (Sov.)
թռչնանոց	chicken farm
աղուէս	fox
առարկել	to object
փակ	closed
ուշադիր	attentive;careful
հետեւել	to follow; to watch
գտնել	to find
վերադարձաւ	(վերադառնալ to return) he/she returned
մենակ	alone
վախենալ	to fear
սպասել	to wait
գող	thief
աղջի for աղջիկ	girl
անցնելիս	while passing
բահ	spade
կոթ	shaft , handle
սարքել	to make, to prepare
վերցնել	to take,to take up

տար	carry! take
ջրաղաց	watermill
ուս	shoulder
դրած (< դնել	to put) put,p.p.
բաց անել	to open
ձեռնափայտ	(walking)stick
պէս	as, like (gen.)
ձեռքին	in his/her hand
շարժուել	to move (intr.)
կռանալ	to bow,to bend (intr.)
իսկոյն	immediately
կարողանալ	to be able
սատկել	to perish
շուրջ	around
հէնց այդ պահին	just at that moment
ընդամէնը	on the whole
քայլ	step
օձ	snake
պարան	cable
կծիկ	ball, coil
գորշ	gray
սեւին տուող	with a dark tinge
նախշ BW	pattern
գետին	soil, ground
տաշտ	trough
տաշտի չափ	in the size of a trough
գրաւել	to occupy
մարմին	body
սարսուռ	shiver

մարմնով սարսուռ անցաւ	shivered in his body
տեսնելուն պէս	at seeing
կամաց կամաց	little by little, gradually
կամաց	slow
կարծես	*you would think= it seems / seemed
պատրաստուել	to get ready
յարձակուել	to attack
գուցէ	perhaps
պէտք էր	should, must
փախչել	to flee
կանչել	to shout;to call
առաջին պատահած մարդը	the first man met
սակայն	but, though
(նրան)թուաց	it seemed to him/her
ինքը	himself/herself
կը խայթի	he will sting,bite
կծկուել	to shrink ; to wind into a ball
գորտ	frog
արկղ	chest, box
երկար	long
գնալով փոքրանում էր	it became smaller gradually
ցցուել	to erect, to rise upward
ուր որ է	whereever it is
զարհուրելի	frightful
հայեացք	look
հայեացքը կտրել	to stop looking
շարունակ	continuous(ly)
լեզուն բռնուեց	she was speechless
առաստաղ	ceiling

զգալ	to feel	քարշ տալ	to drag, to haul
դողալ	to tremble	շօշափել	to touch, to feel
չնայած դրան	inspite of that; notwithstanding	փոր	belly
մտածում էր փրկւելու մասին	she thought how to save herself	ուռած	swollen
թէկուզ	at least	քոռանամ ես	*I might be blind= I wanted not to see
երկարել	to become longer; to extend, stretch out	ուրախութիւնից լաց լինել	to weep for joy
կարճանալ	to become shorter		
պպզել	to cower, to squat		
մատ pl. մատներ	finger		
կպչել	to stick; to touch		
ամուր	firm, solid		
նման	like (dat.)		
խլրտալ, խլրտել	to budge, to move		
փաթաթել	to wrap		
խեղդել	to strangle		
դէմ տալ	to oppose, to set against		
մենամարտ	duel		
յենւել	to lean		
համարձակւել	to dare		
հարւածել	to strike, to hit		
գոմ	barn; stable		
կշտամբել	to reproach		
դէպք	event		
առաջանալ	to go ahead		
սարսափահար	terrified		
եզ pl. եզներ	ox		
սպանել	to kill		
ցօղել	to sprinkle to spray		
նստեցնել	to seat, to lay to seat down		

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ

Հայ ժողովրդի պատմական կեանքն ընթացել է այն երկրամասում, որը աշխարհագրութեան մէջ յայտնի է Հայաստան կամ Հայկական լեռնաշխարհ անունով: Սովետական Հայաստանը գրաւում է այդ երկրի հիւսիս-արեւելեան մասը:

Հայկական լեռնաշխարհը յայտնի է իր բազմաթիւ լեռնաշղթաներով, բարձրաւանդակներով, սարահարթերով ու հանգած հրաբուխներով: Նա գըտնւում է Փոքր Ասիայի եւ Իրանի բարձրաւանդակների միջեւ, Առաջաւոր Ասիայի հիւսիս-արեւմտեան ծայրամասերում:

Հայկական լեռնաշխարհը ծովի մակերեւոյթից հազար հինգ հարիւրից հազար ութ հարիւր մետր միջին բարձրութիւն ունի: Աւելի բարձր լինելով շրջակայ երկիրներից՝ այն կոչւել է "լեռնային կղզի":

Երկրի միջին մասը, որը կազմում է ընդարձակ սարահարթ,կտրտւած է լեռներով ու հովիտներով: Բազմաթիւ լեռնաշղթաների ու լեռների բնական պատնէշների մէջ ընկած այս երկրամասը հնում յայտնի էր Միջնաշխարհ անունով:

Արարատի զանգւածից սկիզբ առնելով դէպի արեւմուտք, մինչեւ Եփրատ գետը, ձգւում է Հայկական Պար լեռնաշղթան, որը Միջնաշխարհը բաժանում է հիւսիսային եւ հարաւային մասերի:

Արարատ լեռան լայնածաւալ հրաբխային զանգւածը,ՄԵԾ ՄԱՍԻՍ,հնում՝ ԱԶԱՏ ՄԱՍԻՍ(5156 մետր) եւ ՓՈՔՐ ՄԱՍԻՍ (3914 մետր) գագաթներով, գտնւում է Հայկական լեռնաշխարհի համարեա կենտրոնում:

Փոքր Կովկասի լեռնային սիստեմից առանձնացած բարձրանում է ԱՐԱԳԱԾ լեռան (4095 մետր) վիթխարի հրաբխային զանգւածը: Արագածի լայնանիստ ու մեղմաթեք լանջերը հարուստ են ջրերով ու բուսականութեամբ: Բերրիութեամբ ու արօտներով հոչակւած այդ լանջերում, անյիշելի ժամանակներից՝ զարգացած է եղել երկրագործութիւնը, յատկապէս՝ անասնապահութիւնը:

Հայկական ՏԱՒՐՈՍի ծալքաւոր աղեղը հարաւից եզերում է Միջնաշխարհը, բաժանելով այն Հայկական Միջագետքից: Հին Հայաստանի հարաւային ծայրամասային երկրները, ինչպէս Սասունը, Մոկքը, Կորդուքը՝ տարածւած են Հայկական Տաւրոսի լեռնաբազուկների շրջանում եւ ընդգրկում են Արեւմտեան եւ Արեւելեան Տիգրիսի հովիտները:

Հայկական Պարից դէպի հարաւ գտնւում է մի ընդարձակ սարահարթ, մի քանի լեռնային զանգւածներով: Դրանցից են ԲԻՒՐԱԿՆը (Ննում Սրմանց, 3650 մետր), իր ծաղկաւէտ արօտներով ու բազմաթիւ սառնորակ աղբիւրներով, լճակներով, որի համար ստացել է "բիւր - ակն" անունը:

Դրանից դէպի արեւելք փռւած են ԾԱՂԿԱՆՑ լեռները՝ մինչեւ այժմ չհանգած հրաբխային գագաթով, որը կոչւում է Թոնդրակ (3548 մետր): Ծաղկանց լեռներից դէպի հարաւ-արեւմուտք, Վանայ լճից ոչ հեռու, բարձրանում է Նեխ-Մասիք գագաթը (այժմ Սիփանայ սար, 4434 մետր), որը հարաւում վերջանում է վիթխարի խառնարան ունեցող Նեմրութ գագաթով (2910 մետր):

Հայաստանի լեռնապարերի միջեւ ընկած են մի շարք ինքնամփոփ ու բարձրադիր սարահարթեր, արգաւանդ հովիտներ ու դաշտեր: Դրանցից նշանաւոր են եւ խոշոր տնտեսական դեր են խաղացել հայ ժողովրդի պատմութեան մէջ Տարօնի կամ Մշոյ դաշտը, Խարբերդի, Երզնկայի, Բագրեւանդի (Ալաշկերտի) եւ Շիրակի դաշտերը:

Մասիս եւ Արագած լեռների եւ Ախուրեանի ու Արփայի գետաբերանների միջեւ՝ Արաքսի միջին հոսանքում, փռւած է Հայկական լեռնաշխարհի սիրտը կազմող Արարատեան դաշտը: Սա Հայաստանի ամենաընդարձակ,ամենաարգաւանդ դաշտավայրն է: Հնագոյն ժամանակներից ի վեր Արարատեան դաշտավայրը հայ ժողովրդի տնտեսական, քաղաքական եւ կուլտուրական կեանքի կենտրոնն է: Այստեղ են գտնւել Հին Հայաստանի Արմաւիր,Արտաշատ, Վաղարշապատ, Դւին մայրաքաղաքները. այստեղ է եւ Սովետական Հայաստանի մայրաքաղաք Երեւանը:

Արագած լեռան հիւսիս-արեւմտեան ստորոտներից տարածւում է հացառատ Շիրակի դաշտը, որի մէջ գտնւել է միջնադարեան Հայաստանի մայրաքաղաքը Անին:

Հայկական լեռնաշխարհը, շրջապատւած լինելով բարձր լեռնաշղթաներով, ծովերից քիչ խոնաւութիւն է ստանում: Յատկապէս Միջնաշխարհը ցամաքային կլիմայ ունի՝ ձմեռը ցուրտ է, ամառը՝ շոգ ու չոր. բայց առանձին վայրերում կլիման բարեխառն է: Աչքի է ընկնում այն խիստ տարբերութիւնը, որ գոյութիւն ունի ցածրադիր դաշտավայրի եւ նրանց հարեւան բարձր լեռների կլիմայական պայմանների միջեւ: Անձրեւներ գալիս են սովորաբար գարնանը եւ նպաստում լեռների ու դաշտերի ճոխ բուսականութեան աճմանը: Արարատեան դաշտը ունի չոր, ցամաքային կլիմայ: Երեւանում, որը շուրջ հազար մետր բարձր է ծովի մակերեւոյթից, միջին ջերմութիւնը լինում է Յունւարին 6,4°, իսկ Յուլիսին՝ 25°:

Հայկական լեռնաշխարհը Առաջաւոր Ասիայի մեծ գետերի ջրաբաշխն է: Այստեղ են սկիզբ առնում Պարսից ծոցը թափւող Եփրատ եւ Տիգրիս գետերը, Սեւ ծովը թափւող Ճորոխ ու Գայլ գետերը, եւ Կասպից ծով թափւող Կուրը եւ Արաքսը:

Եփրատը (երկարութիւնը 2700 կիլոմետր, Հայաստանի մասում 500 կիլոմետր) ունի երկու բազուկ՝ Արեւմտեան Եփրատ, որ սկիզբ է առնում Կարին քաղաքից հիւսիս՝ ծաղկաւէտ լեռներում, եւ Արեւելեան Եփրատ կամ Արածանի, որ սկիզբ է առնում ծաղկանց լեռներից: Արածանիի վտակներից է Մեղրագետը, որը հոսում է Տարօնի արգաւանդ դաշտի միջով: Արածանին եւ Արեւմտեան Եփրատ գետերը միախառնւելով կազմում են Եփրատ գետը:

Տիգրիս գետը (երկարութիւնը 1950 կիլոմետր, Հայաստանի մասում՝ 380 կիլոմետր) ունի երկու բազուկ՝ Արեւմտեան Տիգրիս, որ սկիզբ է առնում Հայկական Տաւրոսի արեւմտեան ծայրամասի լանջերից, եւ Արեւելեան

Տիգրիս կամ Ջերմ (այժմ՝ Բոհտան-սու), որ սկիզբ է առնում Հայկական Տաւրոսի արեւելեան ծայրամասի լանջերից։

Արաքս գետը (հնում՝ Երասխ, 914 կիլոմետր) հոսում է Բիւրակնեան լեռների հիւսիսային լանջերից. Բասենի հովտում թեքւում է դէպի արեւելք եւ հոսում Կաղզւանի խոր կիրճով, որը հնում կոչւում էր Երասխաձոր։ Ձախ կողմից ընդունելով Ախուրեան գետը, Արաքսն այնուհետեւ հոսում է լայնածաւալ Արարատեան դաշտով։ Այստեղ էլ, դարձեալ ձախ կողմից՝ իր մէջ է ընդունում Քասաղ, Հրազդան, Ազատ եւ այլ վտակները։ Արաքսից եւ նրա այս վտակներից սկիզբ առնող ջրանցքների,առուների ընդարձակ ցանցը՝կեանք է տալիս Արարատեան դաշտավայրի խաղողի ու պտղատու հրաշալի այգիներին եւ բարձրարժէք տեխնիկական մշակութիւնների։ Հայ ժողովուրդը այս գետը կոչել է Մայր Արաքս անունով։

Հայաստանի գետերը մեծ մասամբ հոսում են խոր կիրճերի միջով։ Այդ պատճառով էլ շրջակայ հողերը ոռոգելու համար հարկ է լինում բազմաթիւ մեծ ու փոքր ջրանցքներ անցկացնել հեռւից՝ գետերի վերին հոսանքից։ Միաժամանակ այս լեռնային գետերն ու գետակներն՝ էլեկտրական էներգիայի անսպառ աղբիւր են հանդիսանում։

Հայկական լեռնաշխարհը հարուստ է եւ մեծ ու փոքր լճերով։

Սեւանայ լիճը (հնում՝ Գեղամայ ծով),որը աշխարհի բարձր լեռնային լճերի մէջ ամենամեծերից, եւ մեծ լճերի մէջ՝ ամենաբարձր լճերից մէկն է, գտնւում է ծովի մակերեւոյթից 1916 մետր բարձրութեան վրայ։ Մակերեսը հաւասար է 1416 քառակուսի կիլոմետրի։ Սեւանայ լիճն են թափւում մօտ 25 գետակ, իսկ լճից սկիզբ է առնում միայն մի գետ՝ Հրազդանը (Զանգուն)։ Լճի ջուրը քաղցրահամ է։ Ձկներից աչքի է ընկնում կարմրախայտը, իշխանը եւ գեղարքունին։ Սովետական իշխանութեան օրօք Սեւանի հսկայական ջրամբարը դարձել է էլեկտրական էներգիայի եւ անջրդի հողերը ոռոգելու ամենամեծ աղբիւրը։

Վանայ լիճը (հնում՝ Տոսպ կամ Բզնունեաց ծով) գտնւում է ծովի մակերեւոյթից 1720 մետր բարձրութեան վրայ: Լճի մակերեսը հաւասար է 3733 քառակուսի կիլոմետրի:

Վանայ լճի ջուրը շատ աղի է:Լիճը յայտնի է իր տառեխ ձկնով: Հնագոյն ժամանակներից այստեղ զարգացած են եղել ձկնորսութիւնը եւ աղի ու բորակի հանոյթը:

Կապուտան լիճը (Ուրմիա) գտնւում է Հայկական լեռնաշխարհի եւ Իրանի սարահարթի միջեւ ընկած գոգաւորութիւնում:

Բացի այս երեք խոշոր լճերից, կան եւ անուշահամ ջուր ունեցող բազմաթիւ լեռնային փոքր լճեր, ինչպէս Արփին, որից սկիզբ է առնում Ախուրեան գետը, Արճակը (Վասպուրականում), Գայլատուն (Կոգովիտում) եւ այլն:

Երկրի կլիմայական բազմազանութիւնը ստեղծել է հողի եւ բուսականութեան բազմազանութիւնը: Արգաւանդ դաշտերի յաջորդում են այգեշատ , հարուստ, անտառապատ սարալանջեր, ալպեան մարգագետիններ:

Միջնաշխարհը անտառներ քիչ ունի: Ինչպէս հնում ասում էին՝ "անփայտ" է: Խիտ սաղարթաւոր եւ մասամբ փշատերեւ անտառներ կան յատկապէս Գուգարքում, Աղստեւի հովտում եւ Սիւնիքում, ինչպէս նաեւ Հայկական Տաւրոսի հարաւային լանջերին: Ծովի մակերեւոյթից մօտ երկու հազար մետր բարձրութիւնից վեր սկսւում է ալպեան գօտին՝ Հայկական լեռնաշխարհի հռչակաւոր արօտավայրերը իրենց ճոխ բուսականութեամբ:

Լեռնային հովիտներում, հնագոյն ժամանակներից ի վեր, զարգացած է եղել երկրագործութիւնը՝ հացահատիկների, խաղողի վազի,վուշի, քնջութի, ինչպէս նաեւ ծիրանի, դեղձի, կեռասի, խնձորի եւ այլ մրգատու ծառերի մշակութիւնը: Հայաստանը համարւում է այդ մշակոյթներից մի քանիսի հայրենիքը: Հնուց ի վեր զարգացած է եղել նաեւ մեղւապահութիւնը:

Հայկական լեռնաշխարհը բաւականաչափ հարուստ է նաեւ վայրի կենդանիներով: Կճղակաւոր կաթնասուններից այստեղ կան ազնիւ եղջերուն,այծեամը, դեռեւս հանդիպում է վայրի ոչխարը, իսկ Արաքսի հովտի եղէգնուտներում վարազը: Գիշատիչներից սովորական են՝ գայլը, աղուէսը, արջը, բորենին: Թռչուններից՝ արծիւը, անգղը,ուրուրը, բազէն, արագիլը, ապա կաքաւը, բադը, արոսը, փասիանը:

Հայկական լեռնաշխարհի ընդերքը հարուստ է օգտակար հանածոներով: Մի շարք նահանգների լեռները յայտնի են եղել բազմաթիւ բովերով - պղնձի,երկաթի, կապարի, արծաթի եւ ոսկու հանքերով: Մանաւանդ հռչակւած էին Գուգարքի եւ Սիւնիքի պղնձահանքերը: Հայաստանը վաղուց յայտնի է իր շինանիւթերով՝ զանազան գոյների տուֆ, բազալտ, կրաքար եւ այլն: Հնագոյն ժամանակներից այդ քարերով կառուցել են բերդեր, տաճարներ, դղեակներ եւ կամուրջներ, իսկ այժմ կառուցւում են գործարաններ, հիդրոկայաններ եւ քաղաքի ու գիւղի աշխատաւորութեան համար թէ՛ հասարակական եւ թէ՛ բնակելի հոյակապ շէնքեր: Աղահանքերով հռչակւած էին Կողբը, Կաղզւանը եւ Նախճաւանը:

Հայկական լեռնաշխարհը յայտնի է բուժիչ յատկութիւն ունեցող բազմաթիւ ջրերով՝ ջերմուկներով ու թթու ջրերով: Սրանցից Արղնին ու Ջերմուկը սովետական իշխանութեան օրով դարձել են նշանաւոր կուրորտներ:

Հայկական լեռնաշխարհը չորս կողմից շրջապատւած լինելով բարձր լեռներով՝ դրսի աշխարհի հետ հաղորդակցութիւն է պահպանում մի շարք լեռնանցքներով, որոնք կոչւում են "դրունք" (դռներ): Հայկական լեռնաշխարհով անցել են հին աշխարհի առեւտրական ու ռազմական կարեւորագոյն ուղիներից երկուսը, որոնք կապել են արեւելքը արեւմուտքի հետ: Դրանց տիրանալու համար հարեւան ու հեռաւոր պետութիւնները յաճախակի արիւնահեղ պատերազմներ են մղել, որոնք թատերաբեմը սովորաբար եղել է Հայաստանը: Հիւսիսի հետ Հայաստանը կապւած էր Սեւ ծովի արեւելեան եւ Կասպից ծովի արեւմտեան ափերով անցնող ճանապարհներով:

Մի շարք լեռնանցքներով ձգւող այդ գլխաւոր ճանապարհների հանգուցակէտն էր Արարատեան դաշտը:

Հին Հայաստանը բաժանուած էր տասնհինգ խոշոր նահանգների կամ "աշխարհների": Դրանց մէջ նշանաւոր են եղել Այրարատը, Վասպուրականը, Սիւնիքը, Արցախը, Գուգարքը, Բարձր Հայքը, Տուրուբերանը, Աղձնիքը, Ծոփքը:

Իւրաքանչիւր աշխարհ կամ նահանգ բաղկացած էր ութից մինչեւ տասնվեց գաւառներից, միայն Այրարատն ունէր 22, իսկ Վասպուրականը՝ 36 գաւառ: Այդ գաւառները մեծ մասամբ ունէին կայուն սահմաններ, որոնք համընկնում են այժմեան շրջաններին: Իւրաքանչիւր նահանգ կամ աշխարհ (երբեմն նաեւ գաւառ), բնական տնտեսական պայմաններում՝ հանդիսանում էր ոչ միայն առանձին տնտեսական միաւոր, այլեւ ունէր իր ուրոյն սովորոյթները, տարազն ու բարբառը:

լեռնաշխարհ	highland	հռչակ	reputation
կեանք	life	անյիշելի	immemorial
ընթանալ	to run	երկրագործութիւն	agriculture
աշխարհագրութիւն	geography	անասնապահութիւն	livestock breeding
հիւսիս-արեւելեան	North-East	ծալքաւոր	folded
բարձրաւանդակ	highplateau	եզերել	to border, to surround
սարահարթ	plateau	բազուկ	arm
հանգած	extinguished	ընդգրկել	to embrace
հրաբուխ	volcano	բիւր	tenthousand
մակերեւոյթ	level	ակն	source
միջին բարձրութիւն	average height	փուել	to extend,to spread (intr.)
կղզի	island	խառնարան	crater
հովիտ	valley	բարձրադիր	high
պատնէշ	barrier;dam; dike	տնտեսական	economic
Միջնաշխարհ	Middle land	դեր	rôle
զանգուած	mass	դաշտ	field;plain
արեւմուտք	West	գետաբերան	estuary, mouth(of a river)
հարաւ	South	ընդարձակ	vast
գագաթ	summit, top	արգաւանդ	fertile
սիստէմ, սիստեմ	BW system	հացառատ	rich in wheat,cereals
լայնանիստ	broad based	խոնաւութիւն	humidity
մեղմաթեք	softly inclining	ցամաքային	continental; dry
լանջ	slope	կլիմայ	climate
բուսականութիւն	flora,plants	շոգ	hot
բերրի	fertile	բարեխառն	temperate
արօտ	grassland	ցածրադիր	low

օժանդակել	to contribute	*բազմազանութիւն*	variety
ճոխ	rich	*ալպեան* BW	Alpine
աճել	to grow	*մարգագետին*	meadow
ջրաբաշխ	watershed	*սաղարթ*	foliage, leaves
թափւել	to run (river); to be shed	*փուշ*	thorn,needles
բազուկ	arm	*տերեւ*	leaf
վտակ	creek,rivulet	*գօտի*	belt;zone
միախառնւել	to join, to meet	*խաղողի վազ*	grape-vine
թեքւել	to incline,to turn	*վուշ*	flax
կիրճ	defile	*քնջութ*	sesame
ջրանցք	aqueduct		
ցանց	net	*կեռաս*	cherry
հրաշալի	wonderful	*մրգատու ծառ*	fruittree
բարձրարժէք	valuable	*մեղւապահութիւն*	apiculture
մշակել	to cultivate	*կճղակաւոր*	hoofed,ungulate animals
ոռոգել	to irrigate	*կաթնասուն*	milk-fed
հարկ է լինում	it is necessary	*այծեամ*	roe, buck
էնէրգիա BW	energy	*վայրի ոչխար*	wild sheep
անսպառ	unexhausted, inexhaustible	*վարազ*	boar, wild sow
մակերես	surface	*գիշատիչ անասուն*	beast of prey, predatory animal
կարմրախայտ,իշխան,գեղարքունի	trout,trout of Sevan,subspecies of~	*արջ*	bear
օրօք	during	*բորենի*	hyena
ջրամբար	reservoir	*արծիւ*	eagle
անջրդի	arid	*անգղ*	vulture
տառեխ	herring	*ուրուր*	kite (orn.)
ձկնորսութիւն	fishing	*բազէ*	falcon
բորակ	saltpetre,nitre	*կաքաւ*	partridge
հանոյթ	ore	*բադ*	duck
գոգաւորութիւն	depression	*արոս*	bustard

փասիան	pheasant
ընդերք	bowels
հանածոյ	ore
բով	mine
պղինձ	copper
երկաթ	iron
կապար	lead
արծաթ	silver
ոսկի	gold
հանք	mine;minerals
շինանիւթ	building materials
տուֆ BW	tufa
բազալտ BW	bazalt
կրաքար	lime-stone
բերդ	fortress
տաճար	temple
դղեակ	castle
գործարան	factory
հիդրոկայան	hydro-electric-power-station
բուժիչ	curative
յատկութիւն	quality
ջերմուկ	hot springs, thermal spa
թթու	acid
կուրորտ BW	health-resort, watering-place
հաղորդակցութիւն	communication
լեռնանցք	defile
առեւտրական	commercial

ռազմական	miltary, strategic
ուղի	route
կապել	to bind
տիրանալ	to seize
յաճախակի	frequent
արիւնահեղ	bloody
թատերաբեմ	stage
հանգուցակէտ	point of junction; concourse
ձգուել	to extend (intr.)
նահանգ	province
բաղկանալ	to consist
գաւառ	region, district
կայուն	stable
սահման	limit,frontier
համընկնել	to coincide
այժմեան	actual
միաւոր	unit
ուրոյն	independent
սովորոյթ	habit, wont; custom
տարազ	costume
բարբառ	dialect

ԱՆՏԱՌԻ ԴՈՒՍՏՐԸ

Ցած խոնաւ խճուղում դադարել էր աւտոմեքենաների երթեւեկը: Ծառերի ճիւղերի արանքից թարթում էին մօտակայ գիւղի կրակները: Փչում էր տաք քամին: Ծառերի ճիւղերին՝ տեղ տեղ մնացած էին հալչող ձեան հիւսքեր, եւ լիալուսնի լոյսի տակ անտառը հեքիաթային տեսք ունէր:

Փոքրիկ տնակի ներսում լամպը աղօտ լուսաւորում էր շուրջը: Վառարանը մարած էր:

Տղան վերմակի տակից հանեց գլուխը: Սեւ մազերը իջած էին ճակատին, յօնքերը լայն էին, աչքերը՝ աննինջ:

-Հայրիկ,ի՞նչ է անում անտառի դիցուհին, երբ անտառում լինում է անդորր:

Հայրը բացեց փակւող աչքերը:

-Անդորր պահերին նա քաշւում է անտառի խորքը, ուր չեն կարող հասնել մարդիկ. եւ սպասում է:

-Ինչի՞ է սպասում,- հարցրեց տղան:

-Սպասում է փոթորկոտ գիշերի, որպէս զի նորից մարդկանց մօտ գայ:

-Իսկ ինչու՞ է նա հանգիստ ժամանակ խուսափում մարդկանցից,- հարցրեց տղան:

-Որովհետեւ գիտէ,որ կան չար մարդիկ:

-Բայց ինչու՞ է նա ուզում մօտ լինել մարդկանց:

-Որովհետեւ սիրում է մարդկանց: Քնիր:

Հայրը շրջւեց դէպի պատը: Տղան գլուխը դրեց բարձին, աչքերը փակեց: "Նրա աչքերում բարի կրակներ կան. Նրա աչքերը սեւ են. Այդպէս սեւ լինում է գարնանային գիշերւայ երկինքը: Նա հագած է կանաչ ծաղկաւոր շրջազգեստ. այդպէս լինում է անտառը գարնանը," յիշեց տղան հօր խօսքերը:"Եթէ հաւատացնեմ նրան, որ ես վատ մարդ չեմ, նա երեւի մեր տունը կը գայ անտառի անդորր պահերին: Պէտք է միայն հաւատացնել: Դա դժուար չէ",

- մտածեց տղան։ Ապա յիշեց, որ հայրն ասում է իրեն՝ "Չար տղայ"։ Նա ցանկացաւ համոզւել՝ իսկապէս ինքը չար է, թէ հայրն այդ ասում է միայն բարկանալով։

Նա բացեց աչքերը։

-Հայրիկ։

Հայրը չպատասխանեց։

-Ես չա՞ր եմ, հայրիկ,- հարցրեց տղան։

-Խելօք ես։ Քնիր,- մրմնջաց հայրը։

Տղային թւաց,թէ անտառի դիցուհին հիմա էլ, անդորր, լուսնկայ գիշերին կը թափառի տների մօտ։ Չէ՞ որ նա սիրում է մարդկանց եւ ցանկանում է մօտ լինել նրանց։

Տղան բարձրացրեց գլուխը։

-Հայրիկ։

Հայրը քնած էր։

Առաւօտեան, նախաճաշից յետոյ՝ հայրը վերցրեց հրացանը. գնաց անտառ։ Տղան վերցրեց պայուսակը. գնաց գիւղի դպրոցը։Ցերեկը երկնքում ամպեր կուտակւեցին. օրը մթնեց։ Երեկոյեան յորդ անձրեւ տեղաց։

Քամին հէնց ծխնելոյծի բերանից խլում էր ծուխը, պատառոտում, խառնում էր անձրեւին ու շպրտում փոքրիկ տնակի մերթ այս, մերթ այն կողմը։ Անտառի մերկ ծառերը ծեծւում էին անձրեւից, վշվշում էին մելամաղձոտ։ Փոքրիկ տնակի ներսում այդ վշվշոցը լսւում էր ասես հեռուից, խուլ։

Տղան կծկւել էր վառարանի մօտ։ Նա փայտի մանր կտորներ էր գցում վառարանի մէջ. անթարթ նայում էր վառւող կրակին։ Պատուհանի մօտ ապակիները յանկարծ պարուրւում էին լոյսով, մարում էին։ Տղան թարթում էր աչքերը. գո՛հ էր, որ տանն է եւ ջերմացնում է վառարանը։ Նա վառարանի մօտ դրեց թաց ոտնամանները. վառարանի մէջ գցեց երկու խոշոր կտոր փայտ։ Կրակը բորբոքւեց. սենեակի պատերը լուսաւորւեցին.ստւերներ խաղացին շուրջը։ Տղային մի պահ թւաց, թէ սենեակում ամէն ինչ երերում է։ "Հայրս ուշանում է"- մտածեց տղան.լարեց լսողութիւնը։ Դրսում վշվշում էր հողմածեծ անտառը։

Դուռը թակեցին, նախ՝ կամացուկ, յետոյ՝ ուժգին։ Տղան հասկացաւ, որ հայրը չէր։ Ետ տարաւ փականը, բացեց դուռը։ Մի աղջիկ էր։

-Ես տուն էի գնում, մօտիկ գիւղը։ Բայց ճանապարհին անձրեւը..։

Աղջիկը տղայի հասակին էր. Նրա սեւ վարսերը թրջւել, կպել էին ճակատին. Ջրի շիթերը սահում էին նրա դէմքով։

-Ներս արի,- ասաց տղան։

Նրանք նստեցին վառարանի մօտ։

-Դու այստեղ մենա՞կ ես ապրում,- հարցրեց աղջիկը։

-Հայրս անտառումն է,- ասաց տղան։- Ուշանում է։

-Ես սիրում եմ այսպիսի եղանակը,- ասաց աղջիկը։

-Դու կանաչ, ծաղկաւոր շրջազգեստ ունե՞ս,- հարցրեց տղան։

-Ունեմ,- ասաց աղջիկը։

Նրանք իրար նայեցին։ Աղջկան աչքերը սեւ էին։

-Դու բարի՞ ես,- հարցրեց աղջիկը։

-Ես չար չեմ։

-Մայրս ասում է՝ դժւար պահերին թակիր պատահած դուռը. բարի մարդիկ կօգնեն։

-Քո մայրը անտառի դիցուհի՞ն է,- հարցրեց տղան։

Աղջիկը ծիծաղեց։

-Այո։

-Ուրեմն, դու անտառի դո՞ւստրն ես,- հարցրեց տղան։

Աղջիկը նորից ծիծաղեց եւ նայեց իր թաց շորերին։

- Կը մրսես. հանիր չորացրու,- ասաց տղան։

Աղջիկը սեղմեց շուրթները:

-Հանիր,- կրկնեց տղան:- Ես չեմ նայի:

Տղան դէմքով դարձաւ դէպի պատը:

-Մեզ մօտ էլեկտրակայան են կառուցում,- ասաց աղջիկը:

-Տեսել եմ:

-Իսկ տեսե՞լ ես,ինչպէս է աղւէսը հալածում նապաստակին,- ասաց աղջիկը:

-Տեսել եմ,- ասաց տղան:- Դու կկւի բոյն քանդե՞լ ես:

-Չեմ քանդել,-ասաց աղջիկը:- Ես կենդանիներին սիրում եմ:

-Իսկ մարդկա՞նց:

-Չար մարդկանց չեմ սիրում:

Տղան ցանկացաւ հասկացնել նրան, որ ինքը քանդել է կկւի բոյնը, որովհետեւ այդ հետաքրքիր էր, սակայն..:

-Ետ չնայես,- սաստեց աղջիկը:

-Քո աչքերում բարի կրակներ կան,- յիշեց տղան:

-Քո աչքերը իմի նման չեն,- ասաց աղջիկը:

Տղան ետ նայեց եւ տեսաւ նրան այնպէս, ինչպէս նա նստած էր վառարանի մօտ:

-Ահ, մի նայիր,- աղջիկը շրջազգեստով ծածկեց իրեն:

Տղան արագ դարձրեց դէմքը:

-Դու չար ես,- ասաց աղջիկը:

Տղան ցանկանում էր հասկացնել նրան, որ այդպէս չէ, որ ինքը չէր ցանկանում ետ նայել, սակայն..:

-Չար ես,- լացակումած կրկնեց աղջիկը, եւ տղան հասկացաւ,որ շատ դժւար է համոզել նրան, եւ լռեց:

Նրանք երկար ժամանակ, ասես, միայն լսում էին անտառի խուլ վշվշոցը: Որոտի իւրաքանչիւր դղրդոցի պահին տղան զգում էր,թէ ինչպէս էր ցնցում աղջիկը, եւ ցանկանում էր, որ նա չվախենար:

Ապա աղջիկն ասաց.

-Հիմա կարող ես նայել:

-Ես չեմ ցանկանում նայել քեզ,- ասաց տղան:

-Ես չեմ խնդրում,-ասաց աղջիկը:

Եկաւ տղայի հայրը:

-Հայրիկ,-բացականչեց տղան ,- հիմայ մենք կարող ենք ընթրել:

-Քեզ միայն ընթրի՞քն էր մտահոգում,-ասաց աղջիկը:

Տղան չհասկացաւ նրան:

-Դու չար ես,- պնդեց աղջիկը:

-Հիւ՞ր ունենք,- ասաց հայրը:

-Անտառի դուստրն է, հայրիկ,- պատասխանեց տղան:

-Իսկ դու անտառի չար դեւն ես,- չհամբերեց աղջիկը:

Ընթրեցին անխօս: Ապա հայրը իջեցրեց լամպի կրակը, եւ նրանք պառկեցին:

Տղան երկար ժամանակ չէր կարողանում քնել: Նա իրեն մօտիկ լսում էր աղջկայ հանգիստ շնչառութիւնը: Տխրում էր, որ աղջիկը անհոգ քնել էր: Տղան չիմացաւ, թէ ինչպէս քնեց: Երազում անտառը կանաչ էր ..: Տղան բռնել էր աղջկայ ձեռքը. տանում էր նրան, եւ նա կամակոր չէր. տանում էր նրան մարդկանց մօտ, եւ նա հաւատում էր, որ տղան բարի էր, որ բոլոր մարդիկ բարի են:

Դա անտառի դստեր հեքիաթն էր:

ցած	low
խոնաւ	humid
խճուղի	causeway
երթեւեկ	traffic
արանք	between, space
թարթել	to wink,to blink
փչել	to blow
քամի	wind
ծառ	tree
ճիւղ	branch
հալչել	to melt
ձիւն g. ձեան	snow
հիւսք	snow heap
լիալուսին	full moon
անտառ	forest
հեքիաթային	fairy like
տեսք	sight, appearance
տնակ	hut, small house
լամպ	lamp
աղօտ	dim, dark
վառարան	stove
յօնք	eye-brow
աննինջ	sleepless
դիցուհի	goddess
անդորր	quiet
խորք	depth
փոթորկոտ	stormy
խուսափել	to avoid
չար	bad, malicious
բարձ	pillow
գարուն	spring
գարնանային	springlike,of spring
երկինք	sky
կանաչ	green
ծաղիկ	flower
ծաղկաւոր	with printed flowers
շրջազգեստ	dress,robe
հաւատալ	believe
հաւատացնել	to make believe
վատ	bad
ցանկանալ	to wish, to aspire
համոզել	to convince
խելօք	judicious,well-behaved; intelligent
լուսնկայ	night in moonlight
թափառել	to stroll, to rove
նախաճաշ	breakfast
հրացան	rifle
պայուսակ	sack
դպրոց	school
ցերեկ	day(time)
ամպ	cloud
կուտակել	to heap up
յորդ	abundant, pouring
անձրեւ	rain
տեղալ	to rain, to come down
ծխնելոյծ	chimney
խլել	to pull out
շպրտել	to throw, to toss

ծեծել	to beat
վշվշալ	to whistle
մելամաղձոտ	melancholy,sad
խուլ	deaf
մանր	tiny, small
կտոր	piece
գցել	to throw
անթարթ	staring (eyes), fixed
պարուրել	to wrap
մարել	to extinguish
թարթել աչքերը	to blink the eyes
գոհ	glad
ջերմացնել	to warm
թաց	wet
ոտնաման	footwear, shoes
խոշոր	huge, big
կտոր	piece
կրակ	fire
բորբոքել	to flare up, blaze up
սենեակ	room
ստուեր	shadow,shade
երերալ	to float, to hover
լարել լսողութիւնը	to focus his attention
հողմածեծ	beaten by wind
թակել	to knock
ուժգին	with force
հասակ	stature; age
վարս	hair

թրջել	to dip, to soak
կպել (< կպչել	to stick)stuck,p.p.
ապրել	to live
եղանակ	season
մրսել	to feel cold,to be cold
չորացնել	to dry
սեղմել	to press
հալածել	to pursue,to persecute
նապաստակ	hare
կկու	cuckoo
բոյն	nest
քանդել	to destroy
սաստել	to scold, to rebuke
արագ	quick
լացակումած	tearful
որոտ	thunder
դղրդոց	shock, concussion
ցնցել	to shake
խնդրել	to beg, to ask for
մտահոգել	to worry
պնդել	to insist
դեւ	devil
համբերել	to be patient,indulgent
անխօս	speechless, silent
շնչառութիւն	respiration
բռնել	to hold, to catch
դուստր, g. դստեր	daughter

ԿՈՐԱԾ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ

Միքայէլը երբեւէ իրեն հաշիւ չէր տւել, արդեօք լա՞ւ աղջիկ է Սեդան: Պարզապէս ընկերութիւն էր անում: Դէ, մի բակում էին ապրում եւ այնտեղ ուրիշ հասակակիցներ համարեա չունէին. միեւնոյն դասարանում էլ սովորում էին:

Նրանց բակը Երեւանի հին բակերից էր, որը գտնւում էր Կոնդ կոչւող թաղամասում: Բակում մի հին, ցածլիկ շինութիւն կար, որը մի ժամանակ զոմ էր եղել, իսկ հիմա ծառայում էր որպէս ցախատուն: Այ, հէնց այդ ցախատան կտուրը դեռ շատ փոքրուց՝ Սեդայի ու Միքայէլի ամենասիրած տեղն էր:

Փոքր ժամանակ նրանք չէին նկատել, թէ որքան լաւ տեսարան էր բացւում այդ տեղից: Իսկ հիմայ ասես հասակ առնելու հետ միասին, շարունակ նորանոր հետաքրքրական բաներ էին նկատում: Ամբողջ քաղաքն էր երեւում այդտեղից:

Մի անգամ, երբ երկար ժամանակ լուռ նստած էին,յանկարծ Սեդան ասաց.

-Միքայէլ, մի նայիր տես, թէ այստեղից, ա՞յ այսպէս նայելիս,ինչքան գեղեցիկ է երեւում երկինքը:

Միքայէլը նայեց եւ իսկապէս ինքն էլ զարմացաւ, թէ ինչպէս մինչեւ հիմա չէր նկատել:

Ամռան երկինքը, կէսօրից յետոյ, իսկապէս շատ գեղեցիկ էր:

Դա մի զարմանալի գեղեցկութիւն էր, որը ոչ մի կերպ չես կարողանայ նկարագրել:

-Ճիշտ է որ շատ գեղեցիկ է,-բարձրաձայն համաձայնեց նա:

Յետոյ նորից երկար ժամանակ նրանք նստեցին լուռ, առանց մի բառ անգամ արտասանելու:

Միքայէլը մտածում էր, որ երբ մարդիկ մեծանում ու խելօքանում են, ապա աւելի յաճախ է պատահում, որ երկար ժամանակ լռեն: Նա շատ էր ուզում այդ մասին ասել Սեդային, բայց չգիտես ինչու՝ քաշւում էր:

Մտածելու բան՝ Թէ՛ Սեդան, Թէ՛ Միքայէլը շատ ունէին: Այս տարի նրանք վերջացրել էին եօթնամեակը եւ իրենց զգում էին միանգամից անչափ մեծացած:

Այդ օրը յատկապէս, երբ նկատեց թէ ո՛րքան գեղեցիկ է կապոյտ ու ջինջ ամառային երկինքը, Միքայէլն աւելի հաստատուն մտածեց, որ շատ լաւ կը լինի, եթէ հնարաւորին չափ շուտ ոտք դնի ինքնուրոյն կեանքի ճամփին:

Երկար երկար լռելուց յետոյ, վերջ ի վերջոյ նա իր մտքերը որոշեց կիսել Սեդայի հետ:

-Գիտե՞ս ինչ, Սեդա,-յանկարծ խօսեց նա.-երբ մտածում եմ, որ դեռ երեք տարի պէտք է սովորեմ ու նոր միայն ծնողներիս ազատեմ ինձ պահելու հոգսից,.. դե հասկանուՄ ես... ես ուզում եմ... դե, դու պէտք է որ հասկանաս..:

-Հասկանում եմ,-անմիջապէս արձագանքեց նրան Սեդան:

Սեդան ու Միքայէլ շատ արագ էին հասկանում միմեանց:

-Է՛, լաւ,-շարունակեց Սեդան.-յետո՞յ, ի՞նչ ես մտադիր անել: Հօ չե՞ս կարող վերջ տալ սովորելուն:

-Չէ,իհարկէ, բայց համ էլ ուզում եմ աշխատել:

Սեդան լաւ գիտէր, որ Միքայէլենց ընտանիքը բաւական մեծ էր.Միքայէլը տան ամենամեծ զաւակն էր. իսկ աշխատում էր միայն նրա հայրը:

-Բայց ա՛խր, դու դեռ փոքր ես. ի՞նչ աշխատանք կարող ես կատարել,-խօսեց Սեդան, անվճռականօրէն, աշխատելով ընկերոջ ինքնասիրութիւնը չվիրաւորել:

-Ե՞ս եմ փոքր, ես ու՞ժ չունեմ, ինչ է,-խօսեց Միքայէլ ու ակամայից ինքն էլ նայեց իր ամուր, զարգացած թեւերին եւ անմիջապէս իր այդ հայեացքին համար ամաչեց: :

Բայց Սեղան համարեա հիացմունքով էր նայում նրան:

-Իհարկէ, ես ճիշտ չասացի. դու շատ ուժեղ ես, երանի՛ քեզ:

Ընկերոջ զովասանքը թեւ տւեց ու աւելի ոգեւորեց Միքայէլին:

-Ես հէնց վաղուանից,-խոստացաւ նա,- այդ ուղղութեամբ կաշխատեմ:

Սեղան շարունակում էր նայել նրան հիացմունքով: Աղջկայ աչքում այդ օրը Միքայէլը միանգամից՝ մի ամբողջ գլխով մեծացել էր:

Դրանից յետոյ մի քանի օր շարունակ, Միքայէլը ցերեկները երկար ժամերով անհետանում էր: Միայն Սեղան գիտէր,թէ ո՛ւր էր գնում նա: Միքայէլը նրան խնդրել էր առայժմ ոչ ոքի ոչինչ չասել: Սեղան էլ,ի՞նչ ընկեր, որ չկարողանար ընկերոջ գաղտնիքը պահել:

Իսկ երեկոները, երբ Միքայէլը վերադառնում էր, նրանք նստում էին իրենց սիրած կտուրի վրայ ու զրուցում:

-Մի տեղ ասացին,թէ փոքր եմ դեռ, իրենց գործին յարմար չեմ. մի ուրիշ տեղ էլ խոստացան մի շաբաթից..:

Սեղան նայում էր նրան յարգանքով, մտքում հազար ու հազար անգամ երանի տալով ընկերոջը, որն այդքան վճռականօրէն, այդքան համարձակ կերպով արդէն փորձում էր աշխատանքային ինքնուրոյն կեանք ստեղծել:

Վաղ առաւօտից Միքայէլը նորից անհետացել էր: Եկաւ երեկոյեան դէմ, երբ մինչեւ անգամ տանեցիք արդէն անհանգստացել էին: Եկաւ եւ անմիջապէս մօրը յայտարարեց.

-Աշխատանքի եմ ընդունւել:

Դրանից յետոյ Միքայէլը շատ քիչ ժամանակ էր ունենում:

Սեղան կարգին չէր էլ պատկերացնում նրա աշխատանքը, միայն գիտէր, որ նա աշխատում է ինչ որ շատ մեծ, զարմանալի մեծ մի շինարարութեան վրայ:

Հիմա նրանք աւելի շատ հանդիպում էին երեկոները:

–Դու մեծ կամքի ուժ ունես. դու շատ ուժեղ մարդ կը դառնաս,–մի անգամ հիացմունքով ասաց Միքայէլին Սեդան:

Միքայէլը ոգեւորուած պատմում էր ապագայի ծրագրերն ու երազանքները:

–Համ էլ կը սովորեմ: Հիմա աշխատողների համար սովորելու աւելի շատ պայմաններ կան: Եւ աւելի հեշտ կընդունեն ինստիտուտ:

Սեդան նրան լսում էր յարգանքով, համարեա երկիւղածութեամբ:Չէ, ի՞նչ խօսք, Միքայէլը ուժեղ է, վճռական, քաջ..:

Բայց..:

Ընդամենը երկու շաբաթից մի փոքր աւելի էր ինչ՝ Միքայէլն աշխատում էր: Արդէն քանի անգամ զանազան առիթներով եւ առանց առիթների ոչ միայն Սեդայի մօտ, այլ եւ տանը նա արտայայտւել էր աշխատանքից հիասթափւելու մասին:

–Դու ասում էիր,այնտեղ քո հասակի մի քանի տղաներ էլ են աշխատում, բա նրանք ի՞նչպէս են,–հարցնում էին նրան:

–Դէ նրանք...Այդ աշխատանքը նրանց սրտովն է. երեւի սովոր են. իսկ ինձ այնքան էլ համապատասխան չէ:

Այդ օրը Միքայէլ ճաշից յետոյ գնաց Սեդայենց տուն ու յայտարարեց.

–Սեդա, աշխատավարձ եմ ստացել եւ քեզ հրաւիրում եմ կինօ:

Գնացին, հիանալի էր:

Բոլորովին ուրի՛շ է, երբ կինօ ես գնում ծնողներիդ տւած փողով, եւ ուրի՛շ՝ երբ քո՛ վաստակով դեռ ընկերոջդ էլ ես հիւրասիրում: Ինքդ քեզ աւելի ես սկսում յարգել:

Յետոյ վերադարձան տրամվայով. եւ հէնց տրամվայում էլ պատահեց այն սարսափելի դէպքը:

Նրանք հարթակում կանգնած խօսում էին, բաժանում կինոյի տպաւորութիւնները, երբ Սեդան այլայլւեց ու շշնջաց.

-Միքայէլ, նայի՛ր:

Միքայէլը նայեց աղջկայ հայեացքի ուղղութեամբ:

Կէս քայլ այն կողմ, դէմքով վագոնի խորքը՝ կանգնած էր հասակաւոր մի մարդ. իսկ Միքայէլին հասակակից մի տղայ.. ազնիւ խօսք. այդ շատ պարզ տեսան թէ Միքայէլը եւ թէ Սեդան,- ձեռքը տարել էր այդ մարդու գըրպանը եւ քիչ էր մնում, որ գրպանից հանի դրամապանակը:

-Միքայէլ, բռնի՛ր նրան,-շշնջաց աղջիկը:

Եւ այստեղ Միքայէլը բոլորովին անսպասելի շշնջաց.

-Գործ չունես; Փորձա՜նք..: Դու հասկանու՞մ ես... խուլիգան է, մէկ էլ տեսար..:

Մի վայրկեան միայն նրանց հայեացքները հանդիպեցին, եւ Միքայէլը սարսափով զգաց այն խոր արհամարհանքը, որ արտայայտում էին ընկերուհու աչքերը. ապա ամէն ինչ կատարուեց այնքան արագ:

-Ձեռքդ քաշի՛ր, խուլիգա՛ն,-լսեց տրամվայում Սեդայի սովորականից աւելի զնգուն դարձած ձայնը:

Սեդան անսպասելի արագութեամբ բռնեց գողի թեւից: Գողը շրջուեց, հրեց Սեդային, ամէն կերպ ձգտելով դուրս պրծել աղջկայ ձեռքից: Վերջապէս այդ նրան յաջողուեց: Նա ընթացքի ժամանակ իրեն դուրս գցեց տրամվայից, վերջին վայրկեանին Սեդայի հասցէին մի յիշոց արձակեց ու սպառնաց."Սպասի՛ր, դեռ քեզ կը բռնեմ:"

Այդ ամբողջ ժամանակ Միքայէլն ասես ինչ որ կախարդանքով քարացել էր: Միքայէլը կարգին չէր հասկանում, ի՛նչ էր կատարւում շուրջը: Նրա գիտակցութեանը աղօտ կերպով ինչ որ բառեր ու խօսակցութիւններ էին հասնում: Մի մարդ երկար շնորհակալութիւն էր յայտնում Սեդային, միաժամանակ արհամարհական հայեացք գցելով Միքայէլի վրայ: Յետոյ տեղ հասան:

Ամբողջ ճանապարհին լուռ քայլում էին եւ որքան մօտ էին տանը,այնքան Միքայէլի տագնապն ուժեղանում էր. այդպէս լուռ տեղ հասնելը սարսափելի էր. հարկաւոր էր ինչ որ բան ասել:

-Սեղա՛,-խօսեց Միքայէլը,-ախր դու ի զուր,,.

-Մի՛ խօսիր,-համարեա թէ գոռաց նրա վրայ աղջիկը,-մի՛ խօսիր,-եւ նորից նրա ձայնը մի տեսակ փոխուած էր, ասես լացուկամած լինէր:

Երեկոն փչացաւ: Յաջորդ օրը երեկոյեան Միքայէլը մենակ բարձրացաւ ցախատան կտուրը: Կիրակի չէր, բայց նախորդ օրն աշխատավարձը ստանալով, նա դուրս էր եկել աշխատանքից եւ այժմ ամբողջ օրն ազատ էր: Բարձրացաւ կտուրը թէ չէ, նրա աչքին ընկաւ տետրակի մի թերթ մի փոքրիկ քարի տակ:

Միքայէլը վերցրեց ու կարդաց.

"Դու վախկոտ ես, թոյլ ու անկամ: Ես մտածում էի թէ իրօք, երեւի աշխատանքն այնքան էլ քեզ չի համապատասխանում. բայց դու պարզապէս այնպիսին ես, որ վախենում ես դժւարութիւններից: Վախենում ես նաեւ փողոցային խուլիգանից, որը նոյնիսկ ինձանից վախեցաւ ու փախաւ: Ես քեզ արհամարհում եմ..:"

կորած	lost
բարեկամութիւն	friendship
երբեւէ	any time
պարզապէս	simply
հասակակից	(of) the same age
համարեա	suppose! almost
թաղամաս	(city) district
ցախատուն	woodshed
կտուր	roof
շատ փոքրուց	from infancy
հասակ առնել	to grow
ասես	you would say= it seems/seemed
նկարագրել	to describe
մի նայի՛ր տես	look and see!
յաճախ	often
մի՛ նայիր	don't look!
եօթնամեակ	seven-year-plan
յատկապէս	especially
ինքնուրոյն	independent
ճամբայ, ճամփայ	route,way
հնարաւորին չափ շուտ	as sson as possible
վերջ ի վերջոյ	at the last end, finally
կիսել	to cut into halves to communicate
հոգս	sorrow,Worry, trouble
արձագանք,արձագանգ	echo
մտադիր եմ անել	I intend to do
ի հարկէ,իհարկէ	certainly
Միքայէլենց ընտանիքը	Michael's family
վճռական	decisive
ինքնասիրութիւն	self-esteem: pride
ակամայից	against his will
զարգանալ	to develop
ամաչել	to be ashamed
թեւ	arm(body); wing
ոգեւորել	to inspire;to encourage
անհետանալ	to disappear
առայժմ	for the time being, for the moment
գաղտնիք	secret
զրուցել	to talk
յարմար	fit;suitable; qualified
երանի տալ	to praise
փորձել	to try
ստեղծել	to create
տանեցիք	the family members
պատկերացնել	to fancy;to picture
շինարարութիւն	construction
կամք	will, energy
ապագայ	future
ծրագիր	plan
համ էլ	at the same time
զանազան	various
առիթ	opportunity
հիասթափուել	to disillusion
նրանց սրտովն է	is according to their hearts= they like it
համապատասխան	corresponding
աշխատավարձ	salary
ստացել (< ստանալ to receive)	received
հրաւիրել	to invite

սովոր եմ	I am used to
ճաշ	lunch
փող	money
յարգել	to respect
հարթակ	platform
բաժանել	to divide; to communicate
տպաւորութիւններ	impressions
այլայլւել	to be upset
շշնջալ	to whisper
գրպան	pocket
դրամապանակ	purse
բոլորովին	totally, entirely, at all
խուլիգան BW	hooligan, street rough, hoodlum
հանդիպել	to meet; to occur
խոր	deep
արհամարհանք	contempt, scorn
ապա	then
սովորականից աւելի	more than usual
զնգուն	sounding, shrill
դառնալ	to become; to turn
հրել	to push
յաջողւել	to succeed
ընթացք	course
պրծել	to escape
հասցէ	address
յիշոց	curse
արձակել	to launch
սպառնալ	to threaten, to menace
կախարդանք	magic

քարանալ	to perify;to become insensible
կարգին	properly
գիտակցութիւն	consciousness; knowledge
խօսակցութիւն	conversation
շնորհակալութիւն	thank;gratitude
քայլել	to walk
ինչ որ բան	something
ի զուր, իզուր	in vain
գոռալ	to shout
մի տեսակ	one kind; somehow
փոխուած	changed
երեկոյ	evening
փչանալ	to be despoiled
մենակ	alone
նախորդ օրը	preceding day, day before
այժմ	now
բարձրացաւ թէ չէ	as soon as he got up
տետրակ	notebook
թերթ	sheet
քար	stone
վախկոտ	timid,coward
թոյլ	weak
անկամ	will-less;irresolute
իրօք	in fact;really
համապատասխանել	to correspond
այնպիսի	such one
փախաւ (< *փախչել* to flee)	he fled

ԱՄԵՆԻՑ ՇԱՏ ԴԵՂՁՆ ԵՄ ՍԻՐՈՒՄ

Ազնիւ խօսք, ինձ համար դեղձից համեղ միրգ աշխարհում չկայ։ Եթէ միանգամից մի կիլօ,չէ,ի՞նչ եմ ասում, երկու կիլօ դեղձ տան, կուտեմ։

Բայց մայրիկս երբեք մի կիլօ դեղձ միանգամից չի տալիս ինձ,այլ ամենաշատը երկու կամ երեք հատ։

-Փորդ կը ցաւի,-ասում է նա,-հարկաւոր է չափով ուտել։

Ես չեմ հասկանում, թէ մայրիկը ո՞րտեղից գիտէ իմ չափերը։ Ախր, նրան ո՞վ է ասել, թէ ես որքան կարող եմ ուտել, թէ քանի՞ հատ դեղձ կարող է վնասել ինձ։

Յետոյ, կարո՞ղ է այդքան համեղ միրգը մարդու վնասել։ Ուրիշ ժամանակ ինքն է ասում, թէ միրգը օգտակար է, թէ նրա մէջ վիտամիններ կան։

Իսկ հայրիկս դեղձ չի սիրում։ Նա ասում է.

-Մարմինս փշաքաղւում է, երբ նայում եմ դեղձին։ Մանաւանդ դրա կեղեւը տանել չեմ կարող։

Այդ պատճառով էլ նա քիչ է ուտում դեղձ, այն էլ միմիայն կեղեւած։ Իսկ ես զարմանում եմ։ Տարօրինակ է։ Ախր ինձ ամենից աւելի հաճելի է, երբ կծում եմ դեղձը, եւ անմիջապէս անուշ անուշ հիւթը լցվում է բերանս։

Մի օր մինչեւ անգամ հայրիկին հետ վիճեցինք.դե՞ղձն է լաւ թէ խաղողը։ Վերջը ես յաղթեցի։ Հա՛յրիկին դժուար է յաղթել, բայց ես յաղթեցի։ Ա՛յ թէ ի՛նչպէս եղաւ։

Մի քանի օր առաջ հայրիկը շուկայից դեղձ էր բերել։ Առաջին անգամն էր այս տարի դեղձ առել։ Ա՛յնքան էլ լաւ դեղձեր էին։ Կարծես նկարից պոկւած լինէին։ Բայց ափսո՛ս, որ քիչ էին։ Ինձ միայն մէկ հատ հասաւ։ Բայց ի՜նչ դեղձ էր, գիտէ՞ք։ Մե՜ծ, մի թուշը կարմիր, իսկ միւսը՝ դեղնաւուն.այնքան էլ լաւ հոտ ունէր։

Ես անհամբեր սպասում էի, թէ երբ պէտք է ճաշը վերջացնենք, որ դեղձը ուտեմ, որովհետեւ երբեք ինձ չեն թողնում, որ ճաշից առաջ միրգ ուտեմ: "Ախորժակդ կը փակւի", ասում են:

Վերջապէս նստեցինք ճաշի: Բայց նոր էինք ճաշը վերջացրել, երբ մէկ էլ մեր դռան զանգը հնչեց: Վազեցի բաց արեցի: Մարգօ մօրաքոյրն էր, մեր հարեւանուհին:

-Աստղիկ ջան,-ասաց նա մայրիկիս:-Ես մի կէս ժամով շտապ տեղ եմ գնում: Քնարիկ չի՞ կարող երեխային նայել. տանը մարդ չկայ:

Քնարիկն էլ ես եմ:

-Ինչու՞ չի կարող,-պատասխանեց մայրիկս:-Փոքրիկ հօ չի՞, երրորդ դասարանի աշակերտ է:

-Ինչու՞ չեմ կարող,-անմիջապէս ասացի ես:

Մայրիկս ասել է, երբ մեծերից մէկն ու մէկը մի բան է խնդրում, ապա պէտք է պատրաստակամ լինել:

Ես ուզեցի ցոյց տալ, թէ շատ պատրաստակամ եմ. դրա համար էլ դեղձը չկերայ. անմիջապէս վազեցի:

Մարգօ մօրաքրոջ երեխան երկու տարեկան է, անունը Հրաշիկ, ու շատ զիլ,բարձր ձայն ունի: Երբ գնացի՝ հանգիստ քնած էր:

-Նա ամեն օր ճաշից յետոյ երկու ժամ քնում է,-ասաց Մարգօ մօրաքոյրը:-Հէնց նոր է քնել,այնպէս որ զուցէ մինչեւ իմ գալը չարթնանայ:

Ես հետս "Պիոնէր" ամսագիր էի տարել: Սկսեցի նկարները նայել ու կարդալ: Բայց հէնց որ Մարգօ մօրաքոյրը գնաց, կարծես հակառակի նման, Հրաշիկը քնից արթնացաւ:

Ազնիւ խօսք,ես այդպիսի տզզան երեխայ չեմ տեսել: Հօ շատ էլ փոքր չի.երկու տարեկան է, բայց շարունակ տզզում է: Ես երկու տարեկան ժամանակ իսկի լաց չէի լինում. մայրիկս ասում է: Հրաշիկը զարթնեց ու անմիջապէս սկսեց լաց լինել:

-Ի՞նչ ես ուզում,- հարցնում եմ նրան:

Բայց նա չի պատասխանում ու շարունակում է լաց լինել:

-Ախր ի՞նչ ես ուզում,է՞...:

Վերջ ի վերջոյ, լաց լինելով,սկսեց ասել թէ"Մամայիս եմ ուզում":

Ա՛յ քեզ խաթա..: Ու ես ի՞նչ անեմ: Ես նրան բացատրում եմ, որ մաման գնացել է, որ մի կէս ժամից կը գայ, որ չեմ կարող նրա մամային բերել, բայց նա ոչինչ չի ուզում հասկանալ ու հէնց մի գլուխ լալիս է: Ամօթանք եմ տալիս. ուզում եմ նրա համար մի բան երգել. մէկ մէկ խաղալիքները բերում եմ, տալիս. ոչինչ չի օգնում: Մինչեւ անգամ "Պիոնէրի" նկարներն էլ չեն օգնում. եւ տես թէ ի՛նչքան խորամանկն է: Լաց է լինում, բայց միաժամանակ նկարներին է նայում: Շարունակում է լաց լինել, իբրեւ թէ իսկի էլ պէտքս չեն քո նկարները. բայց ես հօ յիմար չեմ. շատ լաւ տեսնում եմ որ աչքը նկարներից չի հեռացնում:

Ես այդպիսի տզզան երեխայ կեանքումս չեմ տեսել:"Յիմա՛ր երեխայ", մտածում եմ ես:"Ախր փոխանակ ինձ համար հանգիստ դեղձ ուտելու՝ եկել եմ, որ քեզ պահեմ: Ոսկ դու փոխանակ շնորհակալ լինես, դեռ լաց ես լինում:"

Բայց հէնց որ դեղձը յիշեցի, իսկոյն մի բան մտածեցի: Վազեցի մեր տուն. անմիջապէս դեղձս վերցրի ու եկայ: Ցոյց տւեցի դեղձը թէ չէ,իսկոյն լաց լինելը դադարեցրեց:

-Տե՛ս,-ասացի ես,-եթէ ուզում ես, որ ես լաւ դեղձեր տամ քեզ,իսկոյն վերջ տուր տզզոցիդ:

Այս Հրաշիկը շատ յիմար ու տզզան երեխայ է, բայց խորամանկ է,հա՛..; Իսկոյն վերջ տւեց տզզոցին: Դեղձը վերցրեց ու սկսեց ուտել: Ի՛նչպէս էլ ախորժակով էր ուտում:"Երեւի դուր էր գալիս նրան",մտածում եմ: Տզզան է, բայց լաւ Ճաշակ ունի: Դեղձս կերաւ պրծաւ ու իսկի լաց չեղաւ:

Երբ Մարգօ մօրաքոյրը եկաւ, գնացի տուն ու հայրիկին պատմեցի ամեն ինչ:

-Հիմա հաւատում եմ,-ինձ լսելուց յետոյ ասաց հայրիկը,-որ դեղձը ամենալաւ միրգն է: Աստղիկ, մի հատ էլ դեղձ տո՛ւր մեր Քնարին..:

ամենից շատ սիրում եմ	I like the best of all
դեղձ	peach
համեղ	tasty
միրգ	fruit
աշխարհ	world
ամենաշատը	the most
փորդ կը ցաւի	you will have stomach-ache
չափ	measure
վնասել	to harm
օգտակար	useful
վիտամին BW	vitamin
մարմինս փշաքաղւում է	it sickens me
կեղեւ	peel,rind; bark
չեմ կարող տանել	I can't stand
տարօրինակ	strange
հաճելի	agreeable
կծել	to bite
անուշ	sweet
հիւթ	juice
վիճել	to discuss
խաղող	grape
յաղթել	to defeat
շուկայ	market
տարի	year
նկար	picture
պոկել	to pick
ափսոս	alas
քիչ	few;little
թուշ	cheek
կարմիր	red
դեղնաւուն	yellowish
հոտ	scent
ախորժակ	appetite
զանգ	bell
հարեւանուհի	neighbor,fem.
շտապ	in a hurry
պատրաստակամ	ready, willing; obliging
զիլ	shrill
արթնանալ	to awake,intr.
տզզան	whining, crying
այ քեզ խաթա	... there you are! (having trouble)
բացատրել	to explain
մի գլուխ լալիս է	is crying on and on,
Պիոնէր BW	pioneer, name of a magazine
խորամանկ	sly
պէտքս չեն	I don't need,want
յիմար	foolish
ցոյց տալ	to show
դուր գալ	to like
կերաւ պրծաւ	he ate and finished
ճաշակ	taste
վերջ տալ	to end,to stop
իսկի լաց չեղաւ	he did not cry at all

ԱՐԱՐԱՏԵԱՆ ԴԱՇՏԻ ԳԱՐՈՒՆԸ

Մեր երկրի գարունն սկսւում է Արարատեան դաշտում։ Այնտեղ է բացւում առաջին ծաղիկը, եւ բարձր բարդենու վրայ բոյն շինում արագիլը։

Ով որ գարնանը մտնում է Արարատեան դաշտը, ամենից առաջ բարդիների կատարին տեսնում է գարնան այդ աւետաբերին։ Մի ոտքի վրայ կանգնած իր բնի մէջ, նա նայում է լայնատարած դաշտին, որը շրջապատւած է մեծ լեռնազօտիներով։

Գարուն է, եւ գարունն աւելի է գեղեցկացնում Արարատեան դաշտը։ Ծառաստանները ծաղկել են սպիտակ, վարդագոյն ծաղիկներով։ Դաշտը վեր է ածւել հեքիաթային մի ծաղկանոցի, որի մէջ փուել են գիւղերը։

Ամէն տեղ երեւում է շինարարութիւն։ Կոլտնտեսականները քանդում են հին տները։ Հին տների փոխարէն, լայն փողոցների վրայ, տնամերձ պարտէզների մէջ, բարձրանում են գեղեցիկ, լուսաւոր, երկյարկանի տներ, շրջապատւած դեղձենիներով, ծիրանիներով, խաղողի թփերով։ Ծաղկած պարտէզներում տները ասես երեւում են մեծ ծաղկեփնջերի մէջ։

Գիշեր ժամանակ Արարատեան դաշտի գիւղերում, ծառերի ու ծաղիկների միջից, շողում են լամպերը։ Մեծ խճուղու վրայ, որը կիսում է Արարատեան դաշտը,ստւերախիտ ծառերի հովանու ներքոյ, գեղեցիկ յուշաղբիւրներ են շինւած Հայրենական Մեծ Պատերազմում ընկած հերոսների յիշատակին։ Վարդագոյն տուֆից կառուցւած կամարակապ յուշաղբիւրներից հոսում է ձիւնապատ լեռներից բերւած վճիտ, սառնորակ աղբիւրների ջուրը, որն առաջ, գո՛ւցէ, միայն եղնիկներն էին խմում։ Այդ վճիտ ջրերի վրայ էլ բարձրանում են ընկած հերոսների յուշարձանները, որոնք անմահացնում են թէ ընկած քաջերի յիշատակը, թէ այդ շինարարութիւնը։

Արարատեան Դաշտ	Plain of Ayrarat, Armenian province
գարուն	Spring
երկիր	country;Earth
ծաղիկ	flower
բարդենի	poplar
արագիլ	stork
կատար	top, summit
աւետաբեր	messenger
լայնատարած	vast
շրջապատել	to surround
լեռնազօտի	range,chain of mountains
գեղեցկացնել	to make beautiful
ծառաստան	orchard
սպիտակ	white
վարդագոյն	rose (color)
վեր է ածւել	is transformed
ծաղկանոց	flowergarden
փռել	to spread,to extend
կոլտնտեսական	(worker)of collective economy (Sov.)
քանդել	to destroy
փոխարէն	instead
տնամերձ պարտէզ	backyard
երկյարկանի	of two floors
դեղձենի	peach-tree
ծիրանի	apricot-tree
թուփ	bush
ծաղկեփունջ	bouquet
շողալ	to shine,to glitter
կիսել	to divide in two halves
ստուերախիտ	(with)dense(shadow)
հովանի	shadow
յուշաղբիւր	memorial fountain
հայրենական	patriotic
Հայրենական Մեծ Պատերազմ	World War II
հերոս	hero
յիշատակ	memory;souvenir
տուֆ BW	tufa(petrology)
կամարակապ	vaulted
ծիւնապատ	snow-covered
լեռ pl. լեռներ	mountains
սառնորակ	cold
եղնիկ	deer
յուշարձան	memorial;monument
անմահացնել	to perpetuate
քաջ	brave; hero
ընկած քաջեր	dead heroes

ՀԱՅԿ ԵՒ ԲԷԼ

Հայկի եւ Բէլի կուի մասին եղած առասպելն ստեղծւել է հնագոյն ժամանակներում եւ երկար դարեր ապրել է ժողովրդի մէջ: Առասպելին բովանդակութիւնը, ըստ Խորենացու եւ այլ աղբիւրների, հետեւեալն է.

Առաջին աստւածները զարհուրելի եւ երեւելի էին: Նրանցից ծագեց հաստամարմին հսկաների ցեղը: Այդ հսկաներից մէկն էր Հայկը, որը քաջ նետաձիգ էր եւ հաստ աղեղ բռնող: Սա, երեւելի եւ քաջ լինելով՝ ընդդիմանում էր նրանց, ովքեր ձգտում էին հսկաների վրայ իշխանութիւն ձեռք բերել: Բաբելոնում հսկաներից մէկին՝ Բէլին յաջողում է տիրապետող դառնալ: Հայկը չի կամենում ենթարկւել Բէլին,ուստի իր ընտանիքով գալիս բնակւում է Արարատեան երկրում:

Հսկայ Բէլը, որ միայն ընթրելիս քառասուն ոչխար էր ուտում, հաւատարիմ մարդկանց հետ իր որդուն ուղարկում է Հայկի մօտ եւ հպատակութիւն պահանջում: Հայկը խստութեամբ մերժում է: Այն ժամանակ կատաղած Բէլը հաւաքում է մի ահագին բանակ եւ գալիս Հայկի երկիրը նւաճելու:

Գանգուր մազերով, զւարթ աչքերով, ուշիմ եւ հսկայ Հայկը,Բէլի յարձակման լուրը առնելով, իսկոյն հաւաքում է իր որդիներին, թոռներին եւ իր մօտ եղած ուրիշ մարդկանց, որոնք բոլորը շատ փոքր թիւ էին կազմում, եւ դուրս է գալիս Բէլի դէմ: Երբ Հայկը հասնում է մի ծովակի ափը, որի ջուրը աղի է, խրախոյս է կարդում իր զօրքին."Երբ մենք դուրս կը գանք Բէլի զօրքի դէմ, աշխատենք հասնել այն տեղը, որտեղ կանգնած է Բէլը քաջերի բազմութեան մէջ, որպէսզի կամ մեռնենք եւ մեր բոլոր գերդաստանը Բէլի ծառայութեան տակ մտնի, կամ ցոյց տալով մեր մատների յաջողութիւնը նրա վրայ, ցրենք նրա զօրքը եւ յաղթութիւն ստանանք":

Երբ երկու բանակները իրար են հասնում, ընդհարումից ահագին դղրդիւն է բարձրանում երկրի վրայ, ընկնում են բաւական թւով հսկայ մարդիկ երկու կողմից էլ։ Կուի ժամանակ Հայկը ճանաչում է Բէլին, որը թիկնապահների ուժեղ գնդով շրջապատուած՝ կանգնած էր մի բլրի վրայ։ Կռիւը հետզհետէ սաստկանում է, եւ ելքը մնում է անորոշ։ Այս տեսնելով Բէլը զարհուրում է, եւ,կասկածելով կուի յաջող վախճանի մասին, որոշում է ետ քաշուել մինչեւ օգնական զօրքեր հասնեն։ Աղեղնաւոր Հայկը այս բանն իմանալով, իրեն առաջ է ձգում եւ մօտենալով Բէլին, պինդ քաշում է իր աղեղը ու երեքթեւեան նետով հարուածում նրա կրծքի զրահատախտակին. սլաքը, թափ անցնելով թիկունքից, ընկնում է գետին։ Գոռոզ Բէլը տապալւում է ու շունչը փչում։ Նրա զօրքը այսպիսի քաջութեան գործը տեսնելով, փախչում է՝ իւրաքանչիւրն իր աչքը տեսած կողմը։

Տեղի ունեցած պատերազմի վայրը Հայկը կոչում է Հայոց Ձոր, իսկ այն բլուրը, որի վրայ սպանւում է Բէլը՝ Գերեզմանք։ Բէլի դիակը զմռսել տալով՝ Հայկը հրամայում է տանել Հարք եւ թաղել բարձր վայրում, որ սպանուած թշնամու կանայք ու որդիները տեսնեն ու դաս առնեն։

"Հայկ եւ Բէլ" առասպելը տարբեր վարիանտներով պահպանուել է ժողովրդի մէջ մինչեւ նոր ժամանակները։ Այսպէս, օրինակ, բանասէր Գարեգին Սրուանձտեանը իր "Գրոց ու Բրոց" գրքում, Նեմրութ սարի շուրջը բնակւող գիւղացիներից լսելով, պատմում է հետեւեալը։ Դատւան գիւղից դէպի Նեմրութ երեւում է ցցուած քարաժայռերի մի շարան, որը մութ ժամանակ եւ հեռուից՝ ուղտերի կարաւանի է նմանւում։ Տեղացիք դրանք Բէլի ուղտեր եւ ուղտապաններ են համարում, որոնք քարացել են ահից, երբ Բէլը սպանուել է։ Բէլը կռապաշտ թագաւոր է եղել, որը մեծ զօրքով կուի է եկել հայոց թագաւորի ու երկրի վրայ։ Հայոց թագաւորը նրան սպանել է եւ տարել Նեմրութի (որը հրաբխային բարձր լեռ է) գագաթը, մեծ թոնիր փորել ու մէջն այրել։ Յետոյ կրակը ջուր է դարձել եւ Բէլի փոշին գետին իջեցրել, որ չլինի թէ քամին տանի, եւ այդ ջուրն է, որ սարի տակ իջնելով՝ բխում է մի ակից, սկիզբ տալով Մեղրագետին։

"Հայկ եւ Բէլը", որն ստեղծուած է տոհմատիրական յարաբերութիւնների շրջանում, էպիկական մի շարք բնորոշ գծերով մօտենում է հերոսական էպոսի։ Նրա մէջ մեծ շնչով գծուած են գլխաւոր հերոսների բնաւորութիւնները, ինչպէս Հայկը, այնպէս էլ Բէլը՝ գեղարուեստական խոր ընդհանրացումներ են։ Հայկը գեղեցիկ արտաքինով հսկայ է, մի մեծ ընտանիքի նահապետ։ Առասպելի մէջ նա կոչւում է գեղեցիկ, վայելչակազմ, խիտ գանգուր մազերով, զւարթ աչքերով (խայտակն) եւ այլ նման էպիտետներով։ Նրա էութեան հիմնական գիծը հերոսականութիւնն ու ազատասիրութիւնն է. նա չի հանդուրժում հսկաների իր վրայ գործադրած բռնութիւնը։

Բէլը Հայկի հակապատկերն է՝ յանդուգն, ամբարտաւան ու փառասէր. իբրեւ բռնակալի իսկական մարմնացում՝ շատ բնորոշ է, որ Հայկի հետ ունեցած կուի միջոցին, վտանգի հանդէպ ցուցաբերում է ողորմելի վախկոտութիւն։ Նա միշտ շրջապատուած է թիկնապահներով եւ խուսափում է ճակատ առ ճակատ կուի դուրս գալուց։

Հայկ	Patronymic of Hay=Armenians, legendary partriarch	խիստ	severe (here:angrily)
Բէլ	Babylonian Ba'al	մերժել	to refuse, to rebuke
կռիւ	fight, combat	կատաղել	to get furious
մասին	about, concerning	հաւաքել	to gather
առասպել	tale, legend	բանակ	army
դար	century	նուաճել	to subjugate
ժողովուրդ	people, nation	գանգուր	curly
բովանդակութիւն	content	զուարթ	gay(here:laughing)
Խորենացի	A-n historian (see p.	ուշիմ	intelligent
աղբիւր	source; fountain	յարձակում	attack
հետեւեալն է	is as follows	թոռ	grandchild
զարհուրելի	terrifying	կազմել	to make up; to constitute; to bind(book)
երեւելի	famous	ծով	sea
ծագել	to originate	ծովակ	lake
հսկայ	giant	ափ	shore
ցեղ	race	աղի	salty
նետաձիգ	archer	խրախոյս կարդալ	to exhort, to encourage
աղեղ	bow	բազմութիւն	crowd
ձգտել	to tend, to aspire	գերդաստան	patriarchal family
իշխանութիւն	rule, dominion supremacy	ցրել	to disperse
ձեռք բերել	to get	յաղթութիւն տանել	to win the victory, to defeat
տիրապետել	to dominate	ընդհարում	collision, shock encounter, clash
ենթարկուել	to submit o.s.	թիկնապահ	Life Guards
ուստի	hence, therefore	գունդ	group
ոչխար	sheep	բլուր	hill
հաւատարիմ	faithful	հետզհետէ	little by little, by and by,
հպատակութիւն	obedience; submission; citizenship	սաստկանալ	to intensify (intr.)
պահանջել	to claim, to demand	ելք	issue:end

անորոշ	undecided	*բանասէր*	philologist
զարհուրել	to be frightened	*Գրոց ու Բրոց*	(book-title)"Out of books and spades"
կասկածել	to doubt; to be in doubt, to suspect	*սար*	mountain
վախճան	end	*գիւղացի*	peasant
օգնական	auxiliary;aid	*շարան*	group
զորք	army	*ուղտ*	camel
պինդ	firm;tight;fast	*կարաւան,քարաւան*	BW caravan
կուրծք	breast	*տեղացիք*	native people
զրահ	cuirass	*ուղտապան*	camel-driver
սլաք	arrow	*համարել*	to assume, to believe
թափ անցնել	to go through,	*ահից*(< *ահ*	fear) for fear
թիկունք	back of body	*կռապաշտ*	pagan, idolatrous
գետին	soil,earth	*թագաւոր*	king
գոռոզ	arrogant	*թոնիր*	A-n hearth (in a pit)
տապալւել	to reel; to fall down;to roll	*փորել*	to dig
շունչը փչել	to expire,to die	*այրել*	to burn
իւրաքանչիւր	each, every (one)	*փոշի*	dust
տեղի ունենալ	to take place	*չլինի թէ քամին տանի*	to hinder the wind to carry,to prevent it
վայր	place, spot	*բխել*	to spring up ,to flow
գերեզման	grave	*ակ*	water-spring,source
դիակ	corpse	*սկիզբ տալ*	to originate (tr.)
զմռսել	to embalm	*տոհմատիրական*	of tribal system
թաղել	to bury	*յարաբերութիւն*	relation
կանայք	women	*շրջան*	circle, period
դաս առնել	to take a lesson	*շարք*	series; many
տարբեր	different	*բնորոշ*	characteristic
վարիանտ BW	variant	*գիծ*	line;features
օրինակ	(for)example	*էպիկական,էպոս*	BW epic,epics

գլխաւոր	main,principal
բնաւորութիւն	nature,character
գեղարուեստ	Arts
գեղարուեստական	artistic
ընդհանրացում	generalization; abstraction
արտաքին	exterior; appearance
ընտանիք	family
նահապետ	patriarch
վայելչակազմ	well-shaped
խիտ	dense
զուարթ	gay
էպիտէտ BW	epithet, attribute
էութիւն	essence ;personality
հիմնական	basic, fundamental
ազգասիրութիւն	patriotism,love of one's nation
հանդուրժել	to indulge; to accept
գործադրել	to use; to realize
բռնութիւն	force, violence
հակապատկեր	counterpart
յանդուգն	bold, audacious
ամբարտաւան	arrogant
փառասէր	vain,ambitious
բռնակալ	tyrant
իսկական	real
մարմնացում	incarnation
միջոցին	in, while,meanwhile,during
վտանգ	danger
հանդէպ	toward
ցուցաբերել	to show, to prove to display
ողորմելի	pitiable, miserable
վախկոտութիւն	cowardness
խուսափել	to avoid
ճակատ առ ճակատ	face to face (A-n: forehead to ~)

ԱՐԱ ԳԵՂԵՑԻԿ ԵՒ ՇԱՄԻՐԱՄ

Այս առասպելի գլխաւոր հերոսներն են Հայաստանի թագաւոր Արա Գեղեցիկը, եւ Ասորեստանի թագուհի՝ Շամիրամը:

Ասորեստանի թագուհի Շամիրամը, լսած լինելով Արայի գեղեցթեան մասին, խիստ ցանկանում է տեսնել նրան: Իր ամուսնու՝ Նինոսի մահից յետոյ, նա մեծ ընծաներով եւ պարգեւներով պատգամաւորներ է ուղարկում Արայի մօտ եւ աղաչում գալ Ասորեստան՝ իր հետ ամուսնանալու:

Պատգամաւորները մի քանի անգամ գալիս գնում են, բայց Արան միշտ էլ վճռաբար մերժում է Շամիրամի կամքը կատարել : Որովհետեւ Շամիրամը ցանկասէր մոլեգնութեան մէջ էր, անհագին զօրք վերցնելով, գալիս է Հայաստան ՝ Արայի վրայ՝ ոչ թէ նրան սպանելու, այլ նուաճելու նպատակով: Նա շտապով հասնում է Արարատեան զաւառը, որտեղ նրա դէմ դուրս է գալիս Արան, եւ ճակատամարտ է տեղի ուննենում: Չնայած Շամիրամը իր զօրապետներին հրամայել էր Արային կենդանի թողնել, սակայն կուում Արան սպանւում է, յետոյ նրան գտնում են քաջաբար ընկած զինւորների դիակների մէջ:

Շամիրամը հրամայում է Արայի դիակը դնել իր ապարանքի վերնատունը, որպէս զի Արալէզները կենդացնեն: Իր ցանկասիրութիւնից ցնորւած լինելով, նա յոյս ունէր, որ Արան կը կենդանանայ: Բայց երբ դիակը նեխում է, թաղել է տալիս, իսկ իր սիրելիներից մէկին հագցնում է Արայի շորերը եւ յայտնում ամէնքին, թէ իր աստւածները կենդանացրել են նրան: Այս բանը նա անում է մեղմացնելու համար հայ զօրքի զայրոյթը, որ վրէժ լուծելու համար պատրաստւում էր նրա դէմ պատերազմի դուրս գալու:

Յետոյ Շամիրամը հաւանելով օդը եւ տեղի գեղեցկութիւնը, Հայաստանի մի քանի վայրերում շինում է իր ապարանք-ամառանոցները: Իր երկիրը վերադառնալուց յետոյ Շամիրամի դէմ ապստամբութիւն է բռնկում, նա հետիոտն փախչում է Հայաստան: Հասնելով Վանայ ծովի ափը, ծարաւում է, եւ երբ ցանկանում է ջուր խմել, վրայ են հասնում նրան հալածող սուսերաւորները, խլում եւ ծովն են գցում նրա յուռութները՝ կախարդական յատկութիւն ունեցող ուլունքները, որի հետեւանքով Շամիրամը քար է դառնում:

Այս բոլորը Խորենացին պատմելով ըստ մեր աշխարհի առասպելների՝ վերջին դէպքի կապակցութեամբ բառացի բերում է՝ "ուլունք Շամիրամայ ի ծով":

Հետաքրքրական է, որ հազարաւոր տարիներ մեզնից առաջ ստեղծւած, էպիկական զրոյցի գոյն ստացած այս առասպելի մի տարբերակը՝ բանասէրները ժողովրդից լսել եւ գրի են առել 19-րդ դարի վերջերին: Այս եւս մի ցայտուն ապացոյց է այն բանի, որ Խորենացին հարազատօրէն է պատմել ժողովրդից լսածները:

Հնագոյն ժամանակների ժողովրդական այս ստեղծագործութեան մէջ սքանչելի նրբութեամբ եւ խորութեամբ գծւած են գլխաւոր հերոսների՝ Արայի եւ Շամիրամի կերպարները:Արան մարմնաւորում է մարդկային ողջախոհութիւնը եւ ազնւութիւնը: Նա անկաշառ է.Շամիրամի ոչ մի խոստում չի գայթագղեցնում նրան՝ դաւաճանելու իր սիրած կնոջը, եւ նա զէնքը ձեռին դուրս է գալիս՝ ընտանիքի պատիւը պաշտպանելու: Այս դէպքը, միաժամանակ, այլաբանօրէն պարունակում է ուրիշ իմաստ, դա հայրենիքի պատւի եւ ինքնուրոյնութեան պաշտպանութեան գաղափարն է: Շամիրամն իր մէջ մարմնացնում է բռնակալների յատուկ անբարոյականութիւնը, վավաշոտութիւնը: Նա վարում է ցոփ ու շւայտ կեանք,տանջում ու կեղեքում է իր հպատակներին, որի համար էլ նրա դէմ ապստամբութիւն է ծագում:

Արա Գեղեցիկ	king(and god) of A-n mythology	յոյս	hope
Շամիրամ	Semiramis, Assyr. queen	նեխել	to stink; to rot
թագուհի	queen	հագցնել	to dress
խիստ	adv., very much	մեղմացնել	to calm, to soothe
ամուսին	husband	զայրոյթ	anger
մահ	death	վրէժ լուծել	to avenge, revenge
ընծայ	gift	հաւանել	to like; to agree
պարգեւ	present	օդ	air
պատգամաւոր	deputee, messenger	ամառանոց	summer-residence
ուղարկել	to send	ապստամբութիւն	revolt
աղաչել	to beg, to ask	հետիոտն	on foot
ամուսնանալ	to marry	հալածել	to persecute
միշտ	always	սուսերաւոր	(man) armed with sword
վճռաբար	decisively, resolutely	յուռութ	magic
ցանկասէր	sensual	յատկութիւն	quality; power
մոլեգնութիւն	passion; frenzy	ուլունք	beads
ահագին	huge	որի հետեւանքով	in consequence of which
ճակատամարտ	battle	կապակցութեամբ	connection
չնայած	notwithstanding, in spite of	ի ծով	AA to the sea, into sea
զօրապետ	general (mil.)	զրոյց	tale
կենդանի	alive; animal	գոյն	color
զինուոր	soldier	տարբերակ	variant
ապարանք	palace	ապացոյց	proof, argument
վերնատուն	upper floor	կերպար	type, character
Արալէզ	divine dogs (A-n mythology)	ողջախոհութիւն	chastity
կենդանացնել	to revive; to bring back to life	խոստում	promise
ցնորւել	to dote; to get mad	այլաբանօրէն	allegorically

ՏԻԳՐԱՆ ԵՒ ԱԺԴԱՀԱԿ

Մեր թւականութիւնից առաջ 7-րդ դարին վերջին՝ կործանւում է Ասորեստանի պետութիւնը, որը շարունակ ձգտում էր ընկճել Հայաստանը (այն ժամանակ Ուրարտու) ու ենթարկել իրեն. եւ պատմական ասպարէզ է գալիս մի ուրիշ պետութիւն՝ Մարաստանը, որի գոյութիւնը,սակայն, երկար չի տեւում: Շատ չանցած՝ այդ պետութեան դէմ ապստամբում են հայերը եւ ուրիշ ժողովուրդներ.մարերի թագաւոր՝ Աժդահակը սպանւում է, նրա բռնապետութիւնը՝ ոչնչացւում: Ահա հին ժամանակների պատմական այս անցուդարձի շրջանում է ստեղծւել "Տիգրան եւ Աժդահակ" էպոսը,որը իր մէջ ընդհանրացրել է նաեւ յետագայ դարերի մի շարք պատմական անցքեր, որոնք կենսական նշանակութիւն են ունեցել մեր ժողովրդի համար:"Տիգրան եւ Աժդահակի" մէջ յիշատակութիւններ կան այնպիսի դէպքերի մասին, որոնք կատարւել են 1-ին դարում (մեր թւականութիւնից առաջ)՝Տիգրան II-ի ժամանակաշրջանում, երբ Հայաստանը բաւական հզօրացաւ:

Էպոսի բովանդակութիւնը հետեւեալն է. Մարաստանի վիշապ- թագաւոր Աժդահակը խիստ երկիւղ է կրում Հայաստանի թագաւոր Տիգրանից, մանաւանդ երբ իմանում է,թէ իր հակառակորդ պարսիկ Կիւրոս իշխանը դաշնակցել է նրա հետ: Այս երկիւղից շփոթւած՝Աժդահակը մի գիշեր վատ երազ է տեսնում եւ, քնից սարսափահար վեր թռչելով, իսկոյն կանչում է իր բոլոր խորհրդատուներին, որպէս զի տեսած երազը մեկնաբանեն."Մի անծանօթ երկրում,- ասում է նա,- բարձրանում էր մի մեծ լեռ, որի գագաթը,կարծես, սառնամանիքով էր պատած: Երբ նայում էի սարին, ինձ երեւաց նրա գագաթին նստած մի կին, որը երկունքի ցաւով էր բռնւած: Այդ կինը ծնեց երեք դիւցազուններ,որոնցից մէկը՝ մի ահագին վիշապ սանձած յարձակւեց իմ տէրութեան վրայ": Այնուհետեւ շարունակելով պատմել իր երազը, Աժդահակ նկարագրում է,թէ ինչպէս ինքը մենամարտի է բռնւում այդ դիւցազնի հետ եւ նրա ձեռքով սպանւում:

Մեկնելով երազը, խորհրդատուները թագաւորին ասում են թէ քեզ վտանգ է սպառնում Տիգրանի կողմից, որից պէտք է զգուշանաս։ Վտանգի դէմն առնելու համար նրանք խորհուրդ են տալիս ամուսնանալ Տիգրանի քրոջ՝Տիգրանուհու հետ, կեղծ բարեկամութեան եւ երթեւեկութեան հնար ստեղծելու նպատակով,որպէս զի կարողանան Տիգրանին դաւադրաբար բռնել։ Աժդահակն այդպէս էլ վարւում է։ Շատ խնդրելով նա ամուսնանում է Տիգրանուհու հետ, որին մեծ պատիւների է արժանացնում, բայց թաքուն չարութեան ոստայններ է զործում։

Մի անգամ Աժդահակը դիմում է Տիգրանուհուն եւ ասում."Իմացիր, որ Տիգրան իր կնոջ՝Զարուհու նախանձից գրգուելով,ձգտում է ինձ սպանել, որպէսզի իր կինը քո փոխարէն մարերի վրայ թագուհի դառնայ եւ աստուածների շարքն անցնի։ Այժմ մնում է, որ դու կամ մնաս եղբայրասէր եւ յանձն առնես խայտառակ կործանում, եւ կամ քո անձի օգուտը ճանաչելով՝ օգնես ինձ եղբօրդ կողմից սպառնացող վտանգը վերացնելու համար"։ Աժդահակը մտքում դրել էր Տիգքանուհուն սպանել, եթէ նա իր հետ չհամաձայնէր։ Բայց խորագէտ գեղեցկուհին իմանալով նիւթուած դաւաճանութեան մասին՝ Աժդահակին սիրալիր խօսքերով է պատասխանում, իսկ հաւատարիմ մարդկանց միջոցով Տիգրանին լուր է ուղարկում ամուսնու չար խորհրդի մասին։

Շուտով Աժդահակը նամակով Տիգրանին հրաւիրում է սահմանագլուխ՝ ինչ որ կարեւոր գործի մասին խորհրդակցելու։ Տիգրանը, որ արդէն իմացել էր բանի էութիւնը, մերժում է Աժդահակի հրաւէրը եւ պատրաստւում կուի։ Կուի մէջ նրանք հանդիպում են իրար։ Տիգրանը՝ ջրի պէս ճեղքելով Աժդահակի զրահը, շամփուրում է նրան իր նիզակի ծայրին եւ ձեռքը ետ քաշելիս նրա թոքերի կէս մասը դուրս է բերում նիզակի հետ։ Աժդահակը մեռնում է, եւ կռիւը վերջանում։

Տիգրանը իր քրոջ ուղարկում է Տիգրանակերտում բնակւելու, իսկ Աժդահակի առաջին կնոջը՝ իր որդիներով բնակեցնում է Մասիսի ստորոտում։ Այս էպոսում Վիշապ-Աժդահակի սերնդին պատկանողները կոչւում են վիշապազուններ, որոնք յետոյ իբրեւ գործող անձինք, հանդէս են գալիս "Արտաշէս եւ Արտաւազդ" էպոսի մէջ։

"Տիգրան եւ Աժդահակ" հին էպիկական ստեղծագործութեան մէջ էլ, ինչպէս "Հայկ եւ Բէլի" մէջ, հակադրուած են երկու տարբեր կերպարներ, որոնք պատմական ռէալ ընդհանրացումներ են։ Տիգրանը սիրելի հերոս է, օժտուած արտաքին եւ ներքին գեղեցիկ բարեմասնութիւններով, որոնց մասին Խորենացին ժողովրդական--զուսանական բանահիւսութեան խօսքերով գրում է. "Երեսը գունաւոր էր, աչքերը անուշ, թիկունքը հաստ, ազդրերը լիք, ոտները գեղեցիկ, ինքն էլ գեղեցիկ։ Սրա մասին մեր հները, որոնք բամբիռի վրայ երգում էին, ասում էին, թէ սա մարմնի ցանկութիւնների մէջ եւս չափաւոր էր, մեծիմաստ ու ճարտարախօս եւ մարդկութեան վերաբերեալ ամենայն գործի մէջ պիտանի"։

Ժողովուրդն իր ազատութեան վրայ բռնանալ ցանկացողների նկատմամբ խորին ատելութիւն տածելով, ստեղծագործութեան մէջ դրանց պատկերացնում է բացասական գծերով։ Աժդահակը մի հրէշաւոր անձնաւորութիւն է. Նրան սպասաւորում են դեւերը։ Չար ոգին համբուրել է նրա ուսերը, եւ նրանց վրայ առաջացել են վիշապ-օձեր։ Չնայած իր դիւականութեան, սա էլ, Բէլի նման, վտանգի դէպքում վախկոտ է. հերոսականութիւն չունի եւ իր հակառակորդին աշխատում է ոչնչացնել նենգամտօրէն, խաբեբայական միջոցներով։

Թուականութիւն	era	մեկնաբանել	to interpret
կործանել	to destroy, to ruin	անծանօթ	unknown
պետութիւն	State	սառնամանիք	frost
ընկճել	to subjugate	պատել	to cover
ենթարկել	to submit	երկունք	travail, labor
ասպարէզ	career;stage	ցաւ	pains
Մարաստան, մարեր	Media,Medians	սանձել	to bridle
գոյութիւն	existence	զգուշանալ	to beware
տեւել	to last	նպատակ	aim, goal, purpose
ապստամբել	to revolt	դաւադրաբար	with intrigue
բռնապետութիւն	tyranny	արժանացնել	to make worthy; to grant
ոչնչացնել	to annihilate	թաքուն	hidden, secret
անցուդարձ	event	ոստայն	web
անցք	event	չարութեան ոստայն	web of intrigues
կենսական	vital	նախանձ	envy, jealousy
նշանակութիւն	significance, meaning	գրգռել	to irritate
յիշատակութիւն	mention	անձ	person
ժամանակաշրջան	period	օգուտ	utility, advantage
բաւական	sufficient	մտքում դնել	to have in mind
զօրանալ	to become strong, powerful	խորագէտ	perspicacious
վիշապ	dragon	դաւաճանութիւն նիւթել	to contrive a plot
երկիւղ կրել	to fear	սիրալիր	loving
հակառակորդ	rival	միջոցով	through,by the means of
դաշնակցել	to ally, to confederate	խորհուրդ	thought; advice; consultation
սարսափահար	terrified	սահման	frontier
իսկոյն	immediately	սահմանագլուխ	State's border
բոլոր	all, entire	կարեւոր	important
խորհրդատու	adviser, counselor	ճեղքել	to split, to slit

շամփուրել	to spear, to spit
նիզակ	pike, spear
թոք	lung
բնակւել	to live
ստորոտ	foot, skirt (of a mountain)
սերունդ	generation, descendants
պատկանել	to pertain
վիշապազուն	offspring of dragon (myth.)
հանդէս գալ	to appear, to reveal
հակադրել	to contrast
ռէալ BW	real
օժտել	to endow
բարեմասնութիւն	advantage
գուսան	AA singers
բանահիւսութիւն	poetry
թիկունք	back
հաստ	thick
ազդր	thigh
լիք	full
ոտ, ոտներ	foot
բամբիռ	string-instrument (mus.)
ցանկութիւն	passion
չափաւոր	moderate
մեծիմաստ	very wise
ճարտարախօս	eloquent
վերաբերեալ	referring to
պիտանի	useful
բռնանալ	to tyrannize

նկատմամբ	as to, in respect to
խորին	deep
ատելութիւն	hatred
տածել	to entertain, to have
պատկերացնել	to picture
բացասական	negative
հրէշ	monstre
անձնաւորութիւն	person, personality
դեւ	devil
ուս	shoulder
առաջանալ	to originate; to emerge; to come, go forth
օձ	snake
չնայած	notwithstanding, in spite of
դիւականութիւն	diabolicity
հակառակորդ	rival
աշխատել	to work, to try
նենգամիտ	insidious
նենգամտօրէն	with fraud
խաբեբայ	swindler; deceiving
միջոց	means

NOTE:

EA usually indicates the succession of persons with Arabic numerals and centuries with Roman numerals. AA and WA indicate them with A-n letters. (See their numerical values in the Glossary.)

ՎԱՀԱԳՆ

Էպոսի մէջ Վահագնը, որ հեթանոսութեան շրջանում պաշտուել է իբրեւ աստուած, Տիգրանի որդիներից մէկն է: Խորենացին Վահագնի մասին եղած ժողովրդական-գուսանական երգերից բերում է բառացի մի հատուած, որը պատկերում է նրա ծնունդը:

Երկնում էր երկինքը,
Երկնում էր երկիրը,
Երկնում էր եւ ծիրանի ծովը.
Ծովի մէջ երկունքով էր բռնուած եւ կարմիր եղեգնիկը:
Եղէգնի փողից ծուխ էր դուրս գալիս.
Եղէգնի փողից բոց էր դուրս գալիս,
Եւ բոցից դուրս էր վազում մի պատանեակ:
Կրակէ մազեր ունէր նա.
Ունէր բոցեղէն մօրուք,
Եւ աչքերն էին արեգակներ:

Այնուհետեւ Խորենացին յիշատակում է, որ գուսանները նոյն ձեւով երգում էին Վահագնի մասին, թէ ինչպէս նա կուել է վիշապների հետ եւ յաղթել, որ այդ երգի մէջ նկարագրուած Վահագնի քաջագործութիւնները նման էին Հերակլի գործած քաջագործութիւններին: Ըստ պատմիչ Ագաթանգեղոսի՝ Վահագնը Հայաստանում պաշտուել է որպէս քաջութեան աստուած:

7-րդ դարի հայ նշանաւոր գիտնական Անանիա Շիրակացին իր գործերում Վահագնի արարքների մասին պատմում է հնուց մնացած մի զրոյց. "Հին հայերից ոմանք ասել են, թէ Վահագնը, հայերի նախնին, խիստ ձմռան յարդ է գողանում ասորաց նախնուց՝ Բարշամից. այդ մենք բնագիտութեան (տիեզերագիտութեան) մէջ անուանում ենք Յարդագողի հետք": Շիրակացու այս դէպքի յիշատակութիւնից երեւում է, որ Վահագնի մասին դիցաբանական-էպիկական երգեր ու պատմութիւններ ստեղծուել են շատ հին ժամանակներում եւ յետոյ միացւել "Տիգրան եւ Աժդահակ" էպոսին. Վահագն դարձել է Տիգրանի որդին եւ շարունակում է հօր պայքարը վիշապների դէմ, որի համար կոչւել է "Վիշապաքաղ":

Վահագն	A-n god and legendary king
հեթանոս	pagan
պաշտել	to worship
երգ	song
հատուած	section; paragraph
բառացի	literal(ly)
ծնունդ	birth
երկնել	to be in travail, to be in labor
ծիրանի	apricot; ~color
եղեգնիկ	small reed
փող	tube;neck
ծուխ	smoke
բոց	flame
պատանեակ	little boy
կրակ	fire
բոցեղէն	flaming
մօրուք	beard
արեգակ	sun
այնուհետեւ	henceforth; later
քաջագործութիւն	heroic deed, exploit
գիտնական	scholar, scientist
գործ	work,book
արարք	deed, work
հնուց	from antiquity
նախնի	ancestor; ancient,old
ասորի	Syrian
բնագիտութիւն	Natural Science
յարդագողի հետք	Milky Way
դիցաբանական	mythologic
միանալ	to join;to get united
պայքար	fight
վիշապաքաղ	epithet of Vahagn

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐՈՒՄ

Հազարաւոր տարիներ առաջ հայկական լեռնաշխարհում ապրում էին բաւական թւով մեծ ու փոքր ընիկ ցեղեր եւ ցեղախմբեր: Դրանցից պատմութեան մէջ առաւելապէս յայտնի են ուրարտացիները եւ արմէնները:

Ինչ վերաբերում է ուրարտացիներուն, ապա պատմութիւնից յայտնի է, որ նրանք իններորդ դարում (մեր թւականութիւնից առաջ) դաշնակցելով այլ ցեղերի հետ, կամ իրենց ենթարկելով նրանց, կարողացան ստեղծել բաւական մեծ տարածութիւն գրաւող զօրեղ պետութիւն՝ Ուրարտուն:

Ուրատուի մէջ ստեղծւեց սեփական կուլտուրա, որը որոշ կողմերով նոյնիսկ աւելի առաջաւոր էր (օրինակ՝ մետաղամշակման բնագաւառում) հին դարերի զարգացած երկրների, որոնց թւում եւ հարեւան Ասորեստանի կուլտուրայից: Մինչեւ մեր օրերը պահպանուել են զարմանահրաշ աշխատանքի արդիւնք հանդիսացող ուրարտական բազմաթիւ հոյակապ յուշարձանները՝ քարափոր բերդերը, ջրանցքները, մեծ քանակութեամբ սեպագիր արձանագրութիւնները, որոնք երբեմն փորագրւած են քարաժայռի վրայ:

Ուրարտական թագաւորութեան թուլացման ու անկման ժամանակաշրջանում՝ հայերը հետզհետէ թափանցեցին հայկական լեռնաշխարհի խորքերը եւ իրենց ենթարկեցին այնտեղ բնակւող ուրարտական եւ այլ ցեղերի մի մասին: Ժամանակի ընթացքում հայերը նրանց ձուլեցին իրենց մէջ, եւ այդպիսով կազմւեց հայ ժողովուրդը: Հայ ժողովրդի կազմաւորման պրոցէսում հայ լեզուն յաղթող հանդիսացաւ միւս ցեղերի լեզուների հանդէպ եւ դարձաւ հայ ժողովրդի ընդհանուր լեզուն:

Աստիճանաբար մահացած ուրարտական եւ այլ ցեղերի լեզուներից բազմաթիւ բառեր եւ տեղանուններ անցան հայոց լեզւին՝ հարստացնելով վերջինս: Այսպիսով, որոշ իմաստով Հայաստանի գրաւոր կուլտուրայի սկիզբը կազմում են ուրարտական սեպագիր արձանագրութիւնները, որոնք մարդկութեան պատմութեան հին ժամանակների ուսումնասիրութեան համար մեծարժէք աղբիւրներ են:

Հայ գրականութիւնը աշխարհի ամենահին եւ հարուստ գրականութիւններից մէկն է: Հինգերորդ դարից առաջ գոյութիւն ունեցող հայերէն գրականութեան մասին մեծարժէք եւ կարեւոր վկայութիւններ է տալիս Մովսէս Խորենացի պատմագիրը: Ըստ Խորենացու հնում կային բազմաթիւ հեթանոսական մեհենական մատեաններ, գրոյցների մատեաններ, իշխանների միջեւ կնքւած կալւածագրեր եւ այլն: Այդ շրջանում զարգացած էր նաեւ ժողովրդական բանահիւսութիւնը: Յայտնի է, որ դեռեւս մեր թւականութիւնից առաջ, Տիգրան Երկրորդի ժամանակներում (Առաջին դար), Տիգրանակերտ եւ Արտաշատ մայրաքաղաքներում կային թատրոններ, որտեղ, բացի յունարէն պիեսների բեմադրութիւնից, տրւում էին նաեւ հայերէն լեզւով գուսանական ներկայացումներ: Այս եւ շատ ուրիշ փաստերից բացի, ամենախոշոր երեւոյթը, սակայն,մնում է հայոց գրական հին լեզուն՝ գրաբարը, որն իր հարստութեամբ չէր զիջում հին յունարէնին: Հինգերորդ դարում մեծ ճշգրտութեամբ յունարէնից գրաբար թարգմանեցին "Աստւածաշունչը" եւ բազմաթիւ այլ գրքեր:

3-4-րդ դարերում Հայաստանում ֆէոդալական յարաբերութիւնները արդէն ձեւաւորւել էին: Այդ ժամանակաշրջանում երկրում տարածւեց քրիստոնէութիւնը գլխաւորապէս շնորհիւ ֆէոդալական միապետութեան նախաձեռնութեան (Տրդատ Երրորդ թագաւորի օրով):Քրիստոնէութեան տարածման համար հոգեւորականութիւնն սկսում է անխնայ կերպով ոչնչացնել հայ հեթանոսական կուլտուրան ու գրականութիւնը, որը բաւական հարուստ էր եւ սերտօրէն կապւած ժողովրդական բանահիւսութեան հետ:

Սակայն 4-րդ դարի վերջին եւ 5-րդ դարի սկզբներին հայ հասարակութեան համար ստեղծւեց քաղաքական եւ սոցիալական այնպիսի իրադրութիւն, որ անհրաժեշտութիւն դարձաւ վճռական միջոցներ ձեռք առնել՝ հայերէն գիր ու գրականութիւն ստեղծելու:

Հայաստանը, որ երկար դարեր յաղթական դիմադրութիւն էր ցոյց տալիս այն ժամանակւայ երկու հզօրագոյն պետութիւնների՝ Բիւզանդիայի եւ Պարսկաստանի նւաճողական յարձակումներին, 4-րդ դարի վերջերին թուլացաւ եւ պետական ամբողջութիւնը կորցրեց:

387 թ. Բիւզանդիան ու Պարսկաստանը դաշնագրով Հայաստանը բաժնեցին երկու մասի եւ վերցրին իրենց գերիշխանութեան տակ: Հայաստանի բիւզանդական մասում շուտով հայկական պետականութիւնը վերացվեց, իսկ պարսկական մասում (որը Հայաստանի մեծ մասն էր կազմում) միաժամանակ հայկական պետութիւնը շարունակեց իր գոյութիւնը պահպանել կիսանկախ ձեւով: Երկրին ներքին կեանքը որոշ ժամանակ, մինչեւ 428 թւականը, կառավարում էին հայ Արշակունի թագաւորները:

Պարսիկ բռնակալները Հայաստանի՝ իրենց ենթակայ մասում եղած այդ դրութիւնը վերջնական չէին համարում. նրանք ուզում էին ոչ միայն հիմնաւորապէս ոչնչացնել անկախութեան ամեն մի մնացորդ, հայերի ռազմական ուժերը, այլեւ վերացնել գաղափարական այն նախադրեալները, որոնք կարող էին օժանդակել քաղաքական անկախութիւն ձեռք բերելու ձգտումներին, այդ նպատակով նրանք, զանազան հնարների եւ միջոցների դիմելով, ամեն կերպ աշխատում էին թուլացնել եւ նոյն իսկ վերացնել քրիստոնէութիւնը եւ տարածել զրադաշտականութիւնը:

Ուստի այն ժամանակ հայ ֆէոդալական պետութեան շահերը պահանջում էին, որ քրիստոնէական կրօնը աւելի տարածւի եւ արմատաւորւի: Քրիստոնէութիւնն ուժեղացնելու համար անհրաժեշտ էր, որ կրօնական գրականութիւնը, ժամասացութիւնը եւ քարոզչութիւնը լինէին հայերէն լեզւով: Անհասարակ, մայրենի լեզւով գրի ու գրականութեան ստեղծումը մեծ նշանակութիւն պիտի ունենար՝ երկրի ներքին կապերը եւ ուժերն ամրապնդելու գործում: Դրա համար էլ,5-դ դարի սկզբին հայերէն լեզւով գրականութիւն ստեղծելու գործը պետական գործ էր, ժողովրդականութիւն էր վայելում եւ իր նշանակութեամբ դուրս էր գալիս թէ՛ աշխարհիկ եւ թէ՛ ֆէոդալական դասակարգային ձգտումների նեղ շրջանակներից:

Մեզ հասած պատմական տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ հայերէն գրեր ստեղծելու խնդրով նախ եւ առաջ զբաղւել է հայկական պետութիւնը:

Հայ հին պատմիչների միաբերան վկայութեամբ, երբ Սահակ Պարթեւը եւ Մեսրոպ Մաշտոցը դիմում են Վռամշապուհ թագաւորին՝ հայերէն գիր ու գրականութիւն ունենալու համար, եւ ուզում են նրա կարծիքն իմանալ, թագաւորը նրանց պատասխանում է,թէ ինքն արդէն գիտէ, որ Դանիէլ անունով մի եպիսկոպոսի մօտ հայերէն նշանագրեր կան եւ անմիջապէս իր մտերիմ պալատականներից մէկին, Վահրիճ անունով մի մարդու, ուղարկում է Դանիէլի մօտ՝ այդ գրերը բերելու:

Վահրիճ անունով այս պալատականը բոլորովին էլ պատահական մի անձնաւորութիւն չի եղել այդ գործի համար: Խորենացին նրան անւանում է պատուաւոր մարդ եւ "նոյն գործին (այսինքն՝ գրերու ստեղծմանը) փափագող" ու պատմում է հետեւեալը."Վահրիճը Դանիէլի մօտ գնալով, կարգաւորեց վաղուց գտնուած գրերը եւ վերադառնալով տւեց Մեծն Սահակին ու Մեսրոպին: Սրանք սովորելով իրենք, իրենց հետ մի քանի տարի տղաներ եւս կրթելով՝ տեղեկացան,իմացան, որ այն տառերը բաւական չէին հայկական բառերի հնչիւնները ճշդութեամբ արտայայտելու": Այսպիսով, Դանիէլի մօտից բերւած "վաղուց գտնուած գրերը" թերի էին եւ անօգտագործելի: Այն ժամանակ գրերի ստեղծման դժւարին աշխատանքը "Վռամշապուհ թագաւորի սրտագին աղաչանքով", ինչպէս գրում է Ղազար Փարպեցին, յանձն է առնում մեծ գիտնական ու պետական-հասարակական գործիչ Մեսրոպ Մաշտոցը, որին եւ քրտնաջան, յամառ աշխատանքից յետոյ յաջողւում է այդ պատմական գործը գլուխ բերել:

Մեսրոպ Մաշտոցը ծնւել է 361 թւականին, Տարօնի Հացեկաց գիւղում, ազատ շինականի ընտանիքում: Մանկութիւնից սովորում է յունարէն լեզուն եւ ուսումնասիրում գրականութիւնը, ապա գալով Այրարատ, ծառայութեան է մտնում հայ Արշակունի Խոսրով Գ. թագաւորի արքունի դիւանում՝ քարտուղարի եւ թարգմանի պաշտօնով: Այստեղ նա ծանօթանում է աշխարհիկ կարգերին եւ զինուորական արւեստին: Այնուհետեւ նա տարւում է կրօնական գրքերի ընթերցանութեամբ. թողնում է արքունիքը եւ դառնում կրօնաւոր:

Այդ տարիներին Մաշտոցի մօտ հաւաքւում էին աշակերտներ, որոնց մէջ նա բարձր հեղինակութիւն էր վայելում: Ձեռնամուխ լինելով գրերու ստեղծման գործին, Մաշտոցը իր հետ վերցնելով իր աշակերտներին, ուղեւորւում է ժամանակի կուլտուրայով աչքի ընկնող մի քանի քաղաքներ՝ Եղեսիա,Ամիդ, Սամոսատ, Նպատակ ունենալով ուսումնասիրել: Երկարատեւ խոր գիտական հետազոտութիւնից յետոյ Մեսրոպ Մաշտոցն աստեղծում է հայերէն գրերը 406 թւականին. վերադառնում է Հայաստան: Նա իր հետ բերում է նաեւ Աստուածաշնչից թարգմանւած Իմաստութեան գիրքը: Մեսրոպին այն ժամանակւայ մայրաքաղաքում՝ Վաղարշապատում փառայեղ եւ հանդիսաւոր ընդունելութիւն են ցոյց տալիս: Թագաւորն իր արքունիքով եւ ժողովուրդը նրան դիմաւորում են մայրաքաղաքից դուրս, եւ վերադառնում ցնծութեան աղաղակներով ու ամբողջ օրն անց են կացնում տօնական խրախճանքների մէջ:

Հայերէն գրերի ստեղծումը մեծ ոգեւորութիւն է առաջացնում հասարակութեան եւ մտաւորականութեան մէջ: Սկսւում է գրական-ստեղծագործական եւ թարգմանական եռուն գործունէութիւն: Հայաստանի տարբեր վայրերում բացւում են դպրոցներ, հաւաքւում են աշակերտներ, հայերէն նոր գրերը եւ լեզուն սովորելու համար:

Հայերէնի ուսուցման եւ հայկական գրականութեան ստեղծմաս ծաւալւող աշխատանքների մէջ ամենագործուն դերը կատարում է ինքը՝ Մեսրոպ Մաշթոց. Նրա մասին Մովսէս Խորանենացին իրաւամբ ասում է."Մտքով՝ ստեղծող, խօսքերով՝ պայծառ, գործերով՝ համբերող, սիրով՝ անկեղծ, սովորեցնելու մէջ՝ չձանձրացող, եւ որ նրա վարքի մէջ ամբարտաւանութիւնը եւ մարդահաճութիւնը երբեք չկարողացան տեղ գտնել": Ըստ հայ պատմիչների տւած տեղեկութիւնների՝ Մաշտոցը կուլտուրական-գիտական գործունէութիւն է ծաւալում նաեւ Հայաստանի սահմաններից դուրս: Մեսրոպ Մաշտոցը վախճանւել է 440 թւականի Փետրւար ամսին եւ թաղւել Օշական գիւղում:

Ազգային գրականութեան առաջացումը հայ ժողովրդի պատմութեան մէջ հսկայական կուլտուրական, քաղաքական ու հասարակական նշանակութիւն ունեցաւ: Հինգերորդ դարում, գրերի ստեղծումից յետոյ, անմիջապէս առաջ եկաւ ու զարգացաւ հայ ինքուրոյն գրականութիւնը: Դրա հետ միաժամանակ յունարէն եւ ասորերէն լեզուներով գրուած գրքերից կատարւեցին բաւական թւով թարգմանութիւններ:

Թարգմանական գործերը մեծ մասամբ կրօնական գրքեր էին, որոնցից թարգմանական արւեստի տեսակէտից աչքի են ընկնում "Աստւածաշունչը",Յովհան Ոսկեբերանի "Մեկնութիւնները" եւ "Ճառերը", Եւսեբիոս Կեսարացու "Քրոնիկոնը" եւ այլն: Հայ առաջին հեղինակներից, որոնք առանձնապէս զբաղւում էին նաեւ թարգմանական աշխատանքներով, ամենանշանաւորներն էին՝ Մեսրոպ Մաշտոցը, Եզնիկ Կողբացին, Կորիւնը, Յովսէփ Պաղնացին, Յովհան Եկեղեացին, եւ հայ գրականութեան ստեղծման գործին նշանաւոր կազմակերպողներից մէկը՝ Սահակ Պարթեւը, որի մասին Ղազար Փարպեցին գրել է."Իր կատարեալ գիտութեամբ յունաց շատ գիտնականներից բարձր էր, նա կատարելապէս հմուտ էր ձայնաւոր տառերին եւ հռետորական հարուստ գիտութեանը. մանաւանդ տեղեակ էր եւ փիլիսոփայական արւեստին":

Հայ թարգմանական գրականութիւնն անընդհատ շարունակւեց եւ հինգերորդ դարից յետոյ: Այս գրականութիւնը կուլտուրայի պատմութեան համար ունի նաեւ այն նշանակութիւնը, որ յունարէն մի շարք մեծարժէք գործերի բնագրերը կորել են եւ դրանց մասին գիտնականները կարող են գաղափար կազմել միայն շնորհիւ պահպանւած հայերէն բնագրերի:

Հինգերորդ դարում, հայ ինքնուրոյն գրականութեան սկզբնաւորումից յետոյ, առանձնապէս զարգացան պատմագրութիւնը, կրօնահռետորական եւ վարքագրական գրականութիւնը, եկեղեցական բանաստեղծութիւնը, փիլիսոփայութիւնը եւ այլն: Այդ շրջանի հայ հռետորներից եւ փիլիսոփաներից յայտնի են Եզնիկ Կողբացին՝ իր "Եղծ Աղանդոց" գրքով, Դաւիթ Անյաղթը՝ իր "Գիրք Սահմանաց","Մեկնութիւն ստորոգութեանց Արիստոտելի" եւ այլն աշխատութիւններով, Յովհան Մանդակունի՝ իր "Ճառերով": Այս գործիչները իրենց ժամանակի ամենակրթւած մարդկանցից էին։ Գիտական արժանիքներով աւելի նշանաւոր են հայ պատմիչ-գրողները՝ Ագաթանգեղոսը, Կորիւնը, Փաւստոս Բիւզանդը, Մովսէս Խորենացին, Եղիշէն, Ղազար Փարպեցին, որոնք պատմագիրներ լինելով հանդերձ՝միաժամանակ եւ հայ հին գրականութեան լաւագոյն ներկայացուցիչներից են։

Այն հանգամանքը, որ հինգերորդ դարից գրաւոր ձեւով մեզ չի հասել ոչ մի ամբողջական աշխարհիկ գեղարւեստական գործ, ցոյց է տալիս, որ գրականութեան սկզբնաւորման այդ ժամանակաշրջանում շատ հանգամանքներ կային, որոնք խանգարում էին աշխարհիկ գեղարւեստական գրականութեան սկզբնաւորմանն ու զարգացմանը։

գրականութիւն	literature
ցեղ	race
ցեղախումբ	racial group
տարածութիւն	extension
կուլտուրա BW	culture
առաջաւոր	advanced, progressive
որոնց թւում	among whom
բնագաւառ	field, domain
մետաղամշակում	metallurgy
զարմանահրաշ	wonderful
հանդիսանալ	to be, to become
քարափոր	hewn in rock
ջրանցք	aqueduct
սեպագիր	cuneiform
արձանագրութիւն	inscription
թուլանալ	to weaken
անկում	fall
թափանցել	to penetrate
խորք	depth
ձուլել	to assimilate
կազմել	to make; to establish
պրոցէս BW	process
աստիճանաբար	gradually
մահանալ	to die(out)
տեղանուն	place-name
իմաստ	meaning
վկայութիւն	witness, testimony
մեհեան	pagan tempel
մեհենական	pertaining to --
մատեան	book
կնքել	to seal
կալուածագիր	title-deed
բեմադրութիւն	production, staging
ներկայացնել	to represent, to present
երեւոյթ	phenomenon
ճշգրտութիւն	precision
թարգմանել	to translate
Աստուածաշունչ	Holy Bible
նախաձեռնութիւն	enterprise, initiative
տարածել	to extend, to spread
անխնայ կերպով	reckless manner
սերտօրէն	closely
իրադրութիւն	situation
անհրաժեշտ	indispensable, imperative
հզօր	mighty
դաշնագիր	pact
պետականութիւն	state system
ենթակայ	subject
մնացորդ	remainder
ռազմական	military
նախադրեալ	premise
օժանդակել	to contribute
զրադաշտականութիւն	Zoroastrian religion
ֆէոդալական	feudal
ժամասացութիւն	psalmody

քարոզ	sermon
քարոզչութիւն	preaching; propaganda
ամրապնդել	to consolidate
ժողովրդական	popular
տեղեկութիւն	information
միաբերան	unanimous(ly)
կարծիք	opinion
նշանագիր	letter,alphabet
մտերիմ	intimate
հնչիւն	sound
թերի	defective
քրտնաջան	hard-working
յամառ	obstinate, persistent
շինական	peasant
արքունի	royal
դիւան	archive
քարտուղար	secretary
տարուել	to be attracted
կրօնական	religious
կրօնաւոր	monk,religious
ընթերցանութիւն	reading, lecture
հեղինակութիւն	authority
ձեռնամուխ լինել	to start
աչքի ընկնող	prominent
ուսումնասիրել	to study
հետազօտութիւն	investigation, research
փառայեղ	glorious
հանդիսաւոր	solemn
ընդունելութիւն	reception
ցնծութիւն	exultation, joy
աղաղակ	cry, shout
տօն	feast,holiday
խրախճանք	feast, banquet
ոգեւորութիւն	enthusiasm
առաջացնել	to advance, to create
հասարակութիւն	community
մտաւորականութիւն	intelligentsia
աշակերտ	student, pupil
ծաւալուել	to extend,to develop(intr.)
իրաւամբ	with good reasons
ձանձրանալ	to get bored
մարդահաճ	servile
վախճանուել	to die
զարգանալ	to develop,to progress
մեծ մասամբ	mainly
արուեստ	art
տեսակէտ	point of view
ճառ	sermon; speech
առանձնապէս	particularly
կազմակերպել	to organize
կատարեալ	perfect
հմուտ	erudite
ձայնաւոր	vowel
տառ	letter of alphabet
բնագիր	text
վարքագրութիւն	biography

ԳՐԱԴԱՐԱՆԸ ՀԱՐՍՏԱՆՈՒՄ Է ՆՈՐ ԳՐՔԵՐՈՎ

ԱՄՆ-ի Կալիֆորնիոյ նահանգի հայ գաղութից՝ Արտասահմանեան Երկրների Հետ Բարեկամութեան եւ Կուլտուրական Կապի Հայկական Ընկերութեան հասցէով՝ ստացւեց գրքերի մի խոշոր ծանրոց: ծանրոցում կային 1200 անուն պատմական, բանասիրական եւ գեղարուեստական գրքեր, որոնք նուէր էին ուղարկւել Ալ. Միասնիկեան անուան Պետական Գրադարանին:

Գրքերի մեծ մասը հայագիտական լուրջ արժէք են ներկայացնում: Դրանց մէջ են հայ ժողովրդի պատմութեանը եւ լեզւին վերաբերող ուսումնասիրութիւններ, օտարազգի հայագէտների հազւագիւտ աշխատութիւններ, որոնց օրինակները մինչեւ այժմ գրադարանը չունէր: Նման գրքեր ի պահպանութիւն յանձնւեցին գրադարանի հազւագիւտ եւ հնատիպ գրականութեան ֆոնդին:

Վերջերս աւելի քան 250 անուն հազւագիւտ եւ նոր հրատարակւած գործեր են ստացւել նաեւ ֆրանսիայի Մարսէլ քաղաքից, որոնց մի մասը եւս մտցւել է յիշեալ ֆոնդը:

1512 թւականից, երբ լոյս է տեսել առաջին հայատառ գիրքը,մինչեւ այժմ հրատարակւած 67 հազար անուն հայերէն գրքերից աւելի քան 45 հազարը կենտրոնացւած է գրքերի այս իւրատիպ թանգարանում:

("Սովետական Հայաստան" ամսագրից)

գրադարան	library
հարստանալ	to become rich, wealthy
ԱՄՆ = Ամերիկայի Միացեալ Նահանգներ	USA
արտասահման	abroad
ընկերութիւն	society
հասցէ	address
ծանրոց	weight;parcel
անուն	name;title
բանասիրական	philological
գեղարուեստական	artistic; of Arts
պետական	(of the)State
հայագիտական	Armenological
լուրջ	serious
արժէք	value
ներկայացնել	to represent
ուսումնասիրութիւն	study,research
օտարազգի	alien;foreign
հայագէտ	Armenologist
հազուագիւտ	rare
աշխատութիւն	work,study
օրինակ	example
ի պահպանութիւն AA	for conservation
յանձնել	to trust
հնատիպ	printed long ago, rare
ֆոնդ BW	funds
վերջերս	recently

հրատարակել	to edit; to publish
Ֆրանսիա	France
եւս	also, more
մտնել	to enter
յիշեալ	mentioned (above)
հայատառ	in A-n alphabet
կենտրոնացնել	to concentrate; to gather
իւրատիպ	original
թանգարան	museum

ԱՐԱՄԵՐԷՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Սեւանայ լճի մօտակայքում վերջերս յայտնաբերուել էին ուղղահայեաց քարակոթողներ՝ արձանագրութիւններով կամ խորագիր պատկերներով: Նրանց վրայի գրերը դժուար էր վերծանել, որովհետեւ ժամանակի ընթացքում աւերուել էին կամ բոլորովին ջնջուել: Նման արձանագրութիւններ ունեցող քարակոթողներ այդ շրջանում յայտնաբերւում էին արդէն մի քանի տասնեակներ շարունակ:

1957 թւականին յայտնաբերուեց եւս մէկ այդպիսի յուշարձան, որի արձանագրութիւնը լիովին պահպանուած էր: Լենինգրադի Համալսարանի պրոֆէսոր Ի.Վիննիցկրովին յաջողուել է վերծանել այդ արձանագրութեան ամբողջ տէքստը: Այն համադրելով աւելի վաղ յայտնաբերուած գրութիւնների հետ, գիտնականը պարզել է, որ այդ բոլոր արձանագրութիւնների լեզուն մէկ է՝ արամերէնը: Աւելի քան մէկ հազարամեակ արամերէնը համընդհանուր գրական լեզու է եղել Արեւելքի երկրների մատենագրութեան համար:

Ինչպէս վաղուց արդէն կարծում էին հնագէտները, Հայաստանում յայտնաբերուած արամէագիր քարակոթողները եղել են սահմանաքարեր: Վերծանուած տէքստերը հաղորդում են այն մասին, որ Արտաշէս Առաջին թագաւորը, որը պատմութեան մէջ մտել է որպէս հայկական պետութեան հիմնադիր (երկրորդ դար՝ մեր թւականից առաջ), այդ վայրերում կալուածներ է բաժանել:

Հին Արեւելքում սահմանաքարեր կանգնեցնելու սովորոյթը լայն տարածում է ունեցել եւ եկել է հնուց: Թերեւս Բաբելոնում նման մենաքարեր կանգնեցնում էին Սուղուրրու անունով: Սահմանաքարեր գործածել են նաեւ Հռոմում եւ Բիւզանդիայում: Յուշարձանների յիշեալ տիպին են պատկանում նաեւ Սեւանայ լճի մօտակայքում յայտնաբերուած մենաքարերը:

Ուրարտական պետութեան անկումից յետոյ, նորաստեղծ հայկական պետութեան օրօք՝ Արտաշէս Առաջին թագաւորը կարիք է ունեցել իշխանական կալուածների, գիւղերի, ագարակների սահմանները որոշող հաստատուն նշաններ դնել: Կանգնեցուող սահմանաքարերի համար յարմար ձեւ են հանդիսացել ուրարտական կոթողները: Դրանք բաղկացած էին երկու հիմնական մասից՝ խորանարդաձեւ հիմքից եւ վերեւից նրա մէջ ագուցւած տախտակաձեւ քարից, որի վրայ գրւում էին տարբեր բովանդակութեամբ արքայական յիշատակարաններ:

Պատմահայր Խորենացին ժամանակին նկատել եւ մանրամասն նկարագրել է Արտաշէս Թագաւորի հաստած սահմանաքարերը:

("Սովետական Հայաստան" ամսագրից)

արամերէն	Aramaic	բաժանել	to divide
լիճ	lake	արեւելք	East;Orient
մօտակայք	neighborhood, surroundings	կանգնեցնել	to erect
յայտնաբերել	to reveal, to disclose	սովորոյթ	costume, usage
ուղղահայեաց	perpendicular	թերեւս	perhaps
քարակոթող	obelisk	մենաքար	monolith
խորագիր	engraved	Հռոմ	Rome
վերծանել	to decipher	յիշեալ	mentioned
աւերել	to destroy, to ruin	տիպ BW	type
ջնջել	to erase	պատկանել	to pertain
նման	similar	նորաստեղծ	recently created
տասնեակ	decade	հայկական	Armenian
յուշարձան	monument	օրօք	in the days of
լիովին	totally, entirely	կարիք ունիմ	I feel the need of
Համալսարան	University	ագարակ	farm
պրոֆէսոր BW	professor	հաստատուն	stable, permanent
համադրել	to compare	նշան	sign
պարզել	to interpret, to simplify	բաղկանալ	to consist
հազարամեակ	millenium	խորանարդ	square
համընդհանուր	universal	ձեւ	shape
գրական	literary	հիմք	base, fundament
վաղուց	since long time, for a long time	ագուցել	to put in
կարծել	to think, to suppose	տարբեր	different
հնագէտ	archaeologist	բովանդակութիւն	content
սահմանաքար	landmark, boundary-stone	պատմահայր	Father of (A-n) History
հիմնադիր	founder	նկատել	to observe
կալուած	property	հաստել	to fix

ՏՂՄՈՒՏ ԳԵՏԻ ԱՓԻՆ

Գրեց՝ Դ. Դեմիրճեան

Այս դէպքը կատարուել է մեզնից հազար հինգ հարիւր տարի առաջ:

Այն ժամանակ, երբ հայերն իրենց երկրում զբաղուած էին խաղաղ աշխատանքով, սուրհանդակ եկաւ Արտաշատ՝ Հայաստանի մայրաքաղաքը, եւ յայտնեց, որ պարսից զօրքը պատրաստւում է յարձակուելու Հայաստանի վրայ: Հայերը լաւ գիտէին, որ պարսից թագաւորը ուզում է իրենց էլ ստրկացնել:

Այս լուրն իմանալուն պէս, հայ նախարարները, զօրավար Վարդան Մամիկոնեանի կոչով, իրենց զօրքերի հետ հաւաքուեցին Արտաշատում: Այնտեղից զօրքը շտապեց Հայաստանի սահմանը, որպէսզի թշնամուն հարուածի հէնց սահմանի վրայ եւ թոյլ չտայ Հայաստան մտնելու:

Շուտով հայոց զօրքը հասաւ Աւարայր կոչուած դաշտը, որ գտնւում է Տղմուտ գետի ափին: Այդ գետի միւս ափին գտնւում էր թշնամու զօրքը:

Մութն ընկնելուն պէս Վարդան իր զօրքերը դասաւորեց եւ սպասեց առաւօտեան կռւին:

Հայոց զօրքերի դրութիւնը ծանր էր. Նրանք պէտք է կռւէին իրենցից թւով մեծ եւ ուժեղ բանակի հետ: Թշնամու զօրքերի մէջ կային նաեւ փղեր: Այդ փղերի մէջքին շինուած էին աշտարակներ, որոնց մէջ զինուորներ էին տեղաւորուած: Ճակատամարտի ժամանակ եւ՛ փղերն էին կռւում իրենց կնճիթներով ու ոտներով, եւ՛ նրանց վրայ նստած զինուորները:

Լոյսը բացուեց: Թշնամի բանակները նայեցին միմեանց: Ահռելի՜ էր պարսից բանակը. կարծես սեւ անտառ լինէր դաշտում բուսած: Զօրքի յետեւում կանգնեցրել էին հարբեցրած փղերին: Նրանք իրենց կնճիթները վեր ու վար էին շարժում, ոտներով հողը փորում եւ սպասում կռւին:

Հնչեց պարսից շեփորը, որից յետոյ՝ հայոց շեփորը:

Եւ սկսուեց կռիւը:

Աւարայրի դաշտը դղրդաց մարդկանց, փղերի ու ձիերի ոտների դոփիւնից: Սուրացին նետերը, լսուեցին վիրաւորների հառաչանքները:

Պարսիկ զինւորներն առաջ անցան եւ սկսեցին գետը մտնել: Հայ զինւորները նոյնպէս գետը մտան: Կռիւը սաստկացաւ:

Վտանգ կար, որ պարսիկները կարող են շրջապատել հայերին: Վարդան այդ մասին զգուշացրեց իր զօրքին:

Դրանից յետոյ Վարդանը յանկարծ յարձակւեց թշնամու զօրքի միջին մասին վրայ: Պարսիկներն այդպիսի յանդգնութիւն չէին սպասում: Կռիւն աւելի սաստկացաւ: Հայերն անխնայ կոտորում էին պարսիկներին: Բայց թշնամին էլ իր ուժերը կենտրոնացրեց Վարդանի դէմ:

Սկսւեց անհաւասար, հերոսական կռիւը:

Հայ մարտիկները, անձնւիրաբար կռւելով, ընկնում էին մէկ մէկ, բայց եւ լաւ հարւածում էին պարսիկներին ու թուլացնում նրանց ուժը: Հերոսի մահով ընկաւ նաեւ ինքը՝ Վարդան Մամիկոնեանը:

Իրենց զօրավարի մահւանից յետոյ, հայ զինւորները կռիւը շարունակեցին հայկական լեռներում: Պարսից զօրքը այդ կռիւներից յոգնեց եւ ջլատւեց. Նա ջախջախւած էր, պարսից թագաւորը հայերին ստրկացնելու իր յանդուգն միտքը թողեց:

Հայերի հերոսութիւնը, հայրենասիրութիւնը եւ անձնւիրութիւնը յաղթեցին:

II

կատարուել	to occur; to be completed
խաղաղ	pacific;in peace, peaceful
սուրհանդակ	courier
պարսիկ,g.պարսից	Persian; of Persians
ստրկացնել	to enslave
իմանալուն պէս	as soon as(they) learned
նախարար	prince;magnate; minister
կոչ	appeal;summons
շտապել	to hasten, to hurry
հարուածել	to strike; to attack
թոյլ տալ	to allow
շուտով	soon
մութն ընկնելուն	at nightfall
դասաւորել	to group; to arrange
դրութիւն	situation ; plight
ծանր	heavy;difficult
թւով մեծ	outnumbering
նաեւ	also
փիղ	elephant
աշտարակ	tower
մէջք	loins
տեղաւորել	to put in; to install
լոյսը բացւեց	it was dawn, daybreak
ճակատամարտ	battle
կնճիթ	trunk
ահռելի	frightening
հարբեցրած	made drunken
փորել	dig
հող	earth
դղրդալ	to resound
դոփիւն	tramp(le), ~ing, stamp, ~ing
վիրաւոր	wounded
հառաչանք	sigh
առաջ անցնել	to go ahead
սաստկանալ	to intensify (intr.)
վտանգ	danger
շրջապատել	to surround
զգուշացնել	to warn
դրանից յետոյ	after that
յանկարծ	suddenly
միջին մաս	middle part, center
յանդգնութիւն	audacity
կոտրել	to break; to kill
կենտրոնացնել	to concentrate
անհաւասար	unequal
մարտիկ	fighter, soldier
անձնուիրաբար	with dedication, unselfishness
թուլացնել	to weaken
հերոս	hero
յոգնել	to get tired
ջլատուել	to be paralyzed
ջախջախել	to break, to shatter
յանդուգն	audacious, ruthless
միտք	idea;mind

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԷՊՈՍ
Սասունցի Դաւիթ

Միջնադարեան հայ գեղարւեստական կուլտուրայի պատմութեան մէջ բացառիկ տեղ է գրաւում "Սասունցի Դաւիթ" ժողովրդական հերոսական էպոսը։

"Սասունցի Դաւիթ"ն ստեղծւել է 8-10-րդ դարերում, երբ հայ ժողովուրդը հերոսական պայքար էր մղում արաբական խալիֆաթի դէմ, եւ բանաւոր կերպով սերնդից սերունդ անցնելով՝ բազմաթիւ պատումներով հասել է մինչեւ մեր օրերը։ Հայկական մեծ էպոսը Մշոյ Առնիստ գիւղի բնակիչ, ասացող Կրպոյից առաջին անգամ գրի է առել ու 1874 թւականին Պոլսում՝ իր "Գրոց ու Բրոց" եւ "Սասունցի Դաւիթ կամ Մհերի Դուռ" վերնագրով գրքում հրատարակել է նշանաւոր բանահաւաք Գարեգին Սրւանձտեանը։ Դրանից յետոյ էպոսի մի այլ պատում,1886 թւականին Էջմիածնում Մոկաց երկրի Դինեկանց գիւղի բնակիչ Նահապետից գրի է առել ու 1889 թ. Շուշում ՝ "Դաւիթ եւ Մհեր, ժողովրդական դիւցազնական վէպ" վերնագրով հրատարակել ականաւոր գիտնական Մանուկ Աբեղեանը։

Յետագայում մի շարք բանասէրներ զբաղւել են այս մեծ էպոսով եւ տարբեր ժամանակներում հրատարակել են նոր պատումներ։ Սովետական շրջանում ուժեղ թափ ստացաւ էպոսի տարբեր պատումների հաւաքման ու հրատարակման աշխատանքը։ Կառավարութիւնը բարձր գնահատելով "Սասունցի Դաւիթ" հանճարեղ էպոսի ժողովրդական-հայրենասիրական էութիւնը, 1939 թ. կազմակերպեց նրա հազարամեայ յոբելեանը։ Յոբելեանը առիթ հանդիսացաւ վաթսունի հասնող պատումներից կազմելու "Սասունցի Դաւիթ" էպոսի համահաւաք տեքստը։

Ինչպէս ամեն մի ժողովրդի էպոս, այնպէս էլ "Սասունցի Դաւիթը" իրական պատմական եղելութիւնների, ժողովրդի կեանքի եւ հասկացողութիւնների գեղարւեստական խոր ընդհանրացումն է։ Էպոսի մէջ չի պահպանւում անցքերի ժամանակագրական կարգը եւ կոնկրէտ նկարագիրը, այնպէս որ Բաղդադի խալիֆի ու Մսրայ Մելիքի դէմ Սասնայ գիւղացիների մղած կռիւ-

2

ները եւ տարած յաղթանակները արաբական բռնակալութեան դէմ հայ ժողովրդի մղածբազմաթիւ հերոսական կռիւների ընդհանրացումն է: Առաջանալով Սասունում,"Սասունցի Դաւիթը" տարածւել է Հայաստանի միւս շրջաններում, հարստացել է բովանդակութեամբ ու դարձել հայ ժողովրդական էպոս:

"Սասունցի Դաւիթը" պատկանում է մարդկութեան երբեւէ ստեղծած հանճարեղ գեղարւեստական գործերի թւին: "Սասունցի Դաւթի" գեղարւեստական արժէքը պայմանաւորւում է պատմական իրականութեան խոր եւ ճըշմարտացի ընդհանրացմամբ, գաղափարական հարուստ բովանդակութեամբ ու սիւժէով, հերոսների բնաւորութեան հետեւողական ու բազմակողմանի պատկերացմամբ ու տիպականութեամբ, կուռ կառուցւածքով, տեղական վառ կոլորիտով, գործողութեամբ,ուժեղ թափով եւ ոճի պատկերաւորութեամբ ու պարզութեամբ:

Հայ ժողովրդական մեծ էպոսը՝ "Սասունցի Դաւիթը" կազմւած է չորս ճիւղերից, որոնք բոլորը միասին ներկայացնում են մի հոյակապ ամբողջութիւն:

Համառօտակի շարադրենք էպոսի սիւժէն: Հայոց Գագիկ թագաւորը հարկատու է Բաղդադի խալիֆին: Սովորական հարկահանութիւններից մէկի ժամանակ Բաղդադի կռապաշտ թագաւորի հարկահանները պատահաբար տեսնում են Գագիկ թագաւորի աղջկան, ուշագնացութեան չափ հիանում են նրա գեղեցկութեամբ: Թողնելով հարկահանութիւնը, շտապում են Բաղդադ, խալիֆին յայտնում են Գագիկի աղջկայ՝ ծովինարի գեղեցկութեան մասին եւ հաղորդում ինչ գնով էլ լինի՝ տիրանալ նրան:

Խալիֆը Գագիկից պահանջում է ծովինարին. Գագիկը հրաժարւում է խալիֆի պահանջը կատարել: Զայրացած խալիֆը զօրք է ուղարկում Հայաստան, զօրապետներին հրամայելով աւերել Կապուտկողը եւ բերել ծովինարին: ծովինարը տեսնելով որ իր պատճառով պէտք է երկիրը ու ժողովուրդը տուժեն, որոշում է՝ լաւ է մենակ ինքը զոհւի,"քանց մեր Հայաստան երկիրը աւերի, էն հազար հազար հոգիք կորուսանին":

Լսելով աղջկայ վճիռը՝ Գագիկ Թագաւորը համաձայնում է նրան յանձնել խալիֆին։ Բաղդադ գնալուց առաջ ծովինարը վերջին անգամ զբօսնում է հայրենի "աղբիւրների վրայ"։ Երեկոյեան վերադարձին ծարաւում է եւ ծովափի մի քարից բխող "համեղ" ջրից երկու բուռ ջուր է խմում՝ մէկը՝"լիքը", մէկը՝"կիսատ"։ Յղիանում է այդ ջրից եւ Բաղդադում ունենում է երկու տղայ՝ մէկը մեծ,միւսը՝ փոքր։ Մեծի անունը դնում է Սանասար,փոքրինը՝ Բաղդասար։ Խալիֆը հրամայում է սպանել ծովինարին, բայց վերջինիս խնդրանքով յետաձգւում է վճռին կատարումը։Տասը տարուց յետոյ դահիճները գնում են վճիռը կատարելու։ Սանասարը սպանում է դահիճներին եւ ապա կոտորում խալիֆի զօրքը։ Խալիֆը տեսնելով երկու եղբայրների հզօրութիւնը, հրաժարւում է նրանց սպանելու մտքից։

Գագիկ Թագաւորի դէմ մղած եօթնամեայ կռւում պարտւում է խալիֆը եւ հազիւ կարողանում կենդանի վերադառնալ Բաղդադ։ Յաջող փախուստի համար կուռքերին խոստանում է Սանասարին ու Բաղդասարին մատաղ անել։ Երազում իմանալով այդ, ծովինարը տղաներին պատւիրում է հեռանալ Բաղդադից։

Սանասարն ու Բաղդասարը երկար թափառումներից յետոյ հանդիպում են մի բարակ առւի, որը սառից իջնում, կիսում է Մեղրագէտը, նոր ապա խառնւում գետին ու գնում։ Եղբայրները գտնում են այդ բարակ, բայց "զօրընդեղ" ջրի ակունքը եւ վրան հիմնում իրենց բերդը՝ Սասունը։

Սանասար մի օր սուզւում է ծովի յատակը, ձեռք բերում Քուռկիկ Ջալալին, Թուր Կայծակին եւ Խաչ Պատարագին. լողանում է ծովի յատակում եղած կաթնաղբիւրին մէջ, հզօրանում է եւ ձին նստած դուրս գալիս ծովից։ Այնուհետեւ Բաղդասարի հետ գնում է Բաղդադ։Սպանում են խալիֆին, կոտորում նրա զօրքը եւ իրենց մօր հետ վերադառնում Սասուն։ "Աշխարհում մէկ" տարածւում է եղբայրների դիւցազնական արարքների լուրը։ Աղքատ մարդիկ թողնում են իրենց բնակավայրը եւ գնում են Սասուն, որովհետեւ "էդ տեղի մարդոց ոչ հարկ կառնեն, ոչ տուրք"։ Այդպիսով բազմանում էս Սասունի ժողովուրդը, իսկ Սասունը դառնում է մեծ քաղաք։

Երկու "փահլեւանների" համբաւը լսում է Պղնձէ քաղաքի թագաւորի աղջիկը՝ քառասուն-ճող-ծամ Դեղձուն ծամը։ Սա նամակով Սանսարին յայտնում է իր սէրը։ Սանսարը սլանում է Պղնձէ քաղաք։ Յաղթահարում է մի շարք գերմարդկային արգելքներ եւ կռւում թագաւորի "գոմշանման վաթսուն փահլեւանների դէմ։ Օգնութեան է հասնում Բաղդասարը։ Երկուսով գնում են Կանաչ քաղաք, սպանում ջրարգել վիշապին, վերադառնում վերցնում Դեղձուն-ծամին, իսկ ճանապարհին՝ նրա քրոջը, եւ գնում Սասուն։ Սանասարն ամուսնանում է Դեղձուն-ծամի, իսկ Բաղդասարը՝ նրա քրոջ հետ։ Սանասարն ունենում է երեք տղայ՝ Վերգօ, Ձէնով Յովան եւ Մհեր։

Սանասարի մահից յետոյ Սասունը կառավարում է նախ Դեղձուն-ծամը, ապա՝ հասունացած Մհերը։ Վերջինս սպանում է առիւծին եւ սասունցիներին ազատում է սովամահութիւնից։ Առիւծին սպանելուց յետոյ Մհերին անւանում են Առիւծաձեւ Մհեր։ Այնուհետեւ նա կռւում է Խլաթայ թագաւոր Սպիտակ Դեւի դէմ. սպանում է նրան, ազատում Թեւաթորոսի աղջիկ Արմաղանին եւ ամուսնանում նրա հետ։

Մսրայ Մելիքը, լսելով Սանասարի մահւան մասին, նորից "խարջի տակ է դնում" Սասունը։ Մեծ Մհերը հրաժարւում է Մելիքին հարկ վճարել. Ձէնով Յովանի խորհրդով Մհերը գնում է Մըսր եւ կռւում Մսրայ Մելիքի հետ։ Մելիքը տեսնելով Մհերի վիթխարի ուժը, զիջում է Սասունցիների հարկը։ Աւելին."ախպերանում" է Մհերի հետ. պայմանաւորւում են որ ով շուտ մեռնի, նրա երեխաներն ու կինը պահի կենդանի մնացողը։ Շուտով մեռնում է Մելիքը։ Մելիքի կինը՝ Իսմիլ խաթունը Մհերից ժառանգ ունենալու ակնկալութեամբ Մհերին կանչում է Մըսր, եօթ տարւայ գինով հարբեցնում է եւ կենակցում հետը։ Ծնւում է փոքր Մելիքը։

Եօթ տարի Մհերը մնում է Մըսրում։ Մի օր պատահաբար լսելով մանուկ Մելիքին Իսմիլ խաթունի տւած խրատը, թէ "Մսրայ օջախ կանգնացուցես, հայու օջախ փչացուցես", սթափւում է, հասկանում է իր կատարած սխալը եւ անմիջապէս վերադառնում Սասուն։ Ծնւում է Դաւիթը, եւ նոյն օրն էլ մեռնում են Մհերն ու Արմաղանը։

Հօրեղբայրները, չկարենալով Դաւթին խնամել, նրան ուղարկում են Մըսր՝ Իսմիլ խաթունի մօտ։ Կարճ ժամանակից յետոյ Դաւիթը հրաժարւում է վերցնել Իսմիլ խաթունի կուրծքը։ Մելիքի խորհրդով՝ նրան կերակրում են Սասունից բերած մեղր ու կարագով։ Մեծանում է Դաւիթը, դառնում է հզօր եւ իր ուժով զարմացնում բոլորին։

Մելիքը Դաւթի մէջ տեսնում է իր ապագայ թշնամուն, այդ պատճառով մի դէպքի առիթով որոշում է սպանել նրան։ Մօր խնդրանքով Դաւթին ոսկով ու կրակով փորձելուց յետոյ ուղարկում են Սասուն։ Դաւիթը Սասունումն է։ Հօրեղբայրը՝ Ձէնով Յովանը նրան նախ դարձնում է գառնարած, ապա՝ հորթարած եւ ի վերջոյ՝ նախրորդ։

Դաւիթը սպանում է քառասուն դեւերին եւ նրանց կուտակած ոսկին հօրեղբայրների օգնութեամբ բերում է Սասուն։ Դրանից յետոյ կորեկի արտատէր պառաւի խորհրդով ստանում է հօր նետ-աղեղն ու զբաղւում որսորդութեամբ։ Պառաւից իմանում է նաեւ հօր ծովասարի մասին։ Յովանի հետ գնում է ծովասար, քանդում է Մելիքի կառուցած պարիսպները, ազատ արձակում կենդանիներին, վերաշինում Մարութա Բարձր Աստուածածինը եւ վերադառնում Սասուն։

Մսրայ Մելիքը լսում է կատարւածի մասին։ Զօրքով ուղարկում է Խոլբաշուն, պատւիրում է սպանել Դաւթին եւ քանդել Մարութիկը։ Խոլբաշին խաբէութեամբ քանդում է Մարութա վանքը եւ սպանում վարդապետներին։ Դաւիթը, իմանալով այդ, հետապնդում է Խոլբաշուն եւ կոտորում զօրքը։ Կենդանի է կողնում միայն Խոլբաշուն եւ պատւիրում է Մելիքին յայտնել թէ՝

Դեռ Սասուն չի մեռե.
Մէկ էլ թող էսպէս բան չանի.
Աւեր բանից ի՞նչ կը դառնայ։

Զայրացած Մելիքը երկրորդ անգամ Սասուն է ուղարկում Կոզբաղինին։

Դաւիթը այս անգամ էլ է պատուհասում հարկահաններին եւ դուրս վռնդում Սասունից: Դրանից յետոյ անհամար զօրքով Սասուն է գալիս Մըսրայ Մելիքը: Պառաւ կնոջ խորհրդով հօրեղբօրից ստանալով Քուռկիկ Ջալալին եւ հօր զէնքը, Դաւիթը գնում է Մելիքի դէմ կռւի: Սպանում է Մելիքին, ազատ է արձակում Մըսրայ զօրքը եւ ապա վերադառնում Սասուն:

Որոշ ժամանակից յետոյ Դաւիթը գնում է Գիւրջստան: Ծնւում է Փոքր Մհերը: Դաւիթը Գիւրջստանում մնում է եօթ տարի: Եօթ տարուց յետոյ Փոքր Մհերը գնում է հօրը փնտրելու: Ճանապարհին հայր ու որդի հանդիպում են իրար: Կարճ բանակռւից յետոյ սկսում են զօտեմարտել, բայց շուտով ճանաչում են իրար: Իր հետ կռւելու համար՝ Դաւիթն անիծում է Մհերին անմահ ու անժառանգ մնալ: Այնուհետեւ գնում է Չմշկիկ Սուլթանի հետ կռւելու: Վերջինս նենգութեամբ սպանում է Դաւթին:

Փոքր Մհերը Կապուտկողումն է: Հօրեղբայրները վախենալով Սասնայ թշնամիներից, Մհերին բերում են Սասուն: Մհերը ճանապարհին սպանում է Մատղավանքի տէրտէրին եւ վանքի անունը դնում է Մատնավանք: Այնուհետեւ կռւում է Չմշկիկ Սուլթանի զօրքի դէմ, կոտորում է զօրքը, սպանում Չմշկիկ Սուլթանին եւ այս կերպ առնում հօր վրէժը: Կարճ ժամանակից յետոյ Մհերը թողնում է Սասունը եւ սկսում շրջել: Ամուսնանում է Գոհարի հետ եւ սպանում նրա հօր թշնամիներին: Կոզբադինի թոռները հանգիստ չեն տալիս սասունցիներին: Յովանի խնդրանքով Մհերը վերադառնում է Սասուն: Սպանում է Կոզբադինի թոռներին, գնում է Բաղդադ, ապա Պաճիկ թագաւորի երկիրը, իր կնոջ՝ Գոհարի մօտ: Գոհարին գտնում է մեռած: Բերում է Սասուն եւ թաղում Խանդութի գերեզմանի մօտ:

Նորից ցանկանում է շրջել, բայց արդէն չի կարողանում, ծերացած հողը թուլանում է ոտքերի տակ: Մեռած ծնողների խորհրդով գնում է Վան: Ճանապարհին կռւում է հրեշտակների հետ եւ ապա փակւում քարայրում: Ասացողները պատմում են, որ Մհերը կենդանի է, դուրս կը գայ այն ժամանակ,"երբ աշխարհը աւերուի, մէկ էլ շինուի. երբ ցորեն եղաւ քանց մասուր մի ու գարին եղաւ քանց ընկուզ մի":

Ողջ միջնադարի հայ գեղարուեստական մշակոյթի մէջ "Սասունցի Դաւիթ" ժողովրդական էպոսը իր գաղափարական բովանդակութեան հարստութեամբ բացառիկ տեղ է գրաւում: 10-րդ դարում, երբ ձեւաւորուել է "Սասունցի Դաւիթը", գրականութեան մէջ դեռեւս ուժեղ էր ֆէոդալական-եկեղեցական աշխարհհայեցողութիւնը, որը ժողովրդին քարոզում էր համակերպուել իրականութեանը: Մինչդեռ "Սասունցի Դաւիթը" ժողովրդին դաստիարակում եւ սովորեցնում է նախ եւ առաջ պայքարել հին, ծանր վիճակը փոխելու եւ ապա նոր, երջանիկ կեանք ստեղծելու համար:

Հայ ժողովուրդը այս էպոսի մէջ խոր եւ ուժեղ կերպով արտայայտել է իր ուժի անպարտելիութեան գիտակցութիւնը, իր ազատասիրական ոգին, ջերմ սէրը դէպի հայրենիքը, իր ցասումն ու ատելութիւնը ամէն կեղեքիչների ու բռնակալների դէմ, դրսեւորել է բոլոր ժողովուրդների ազատութեան ու բարեկամութեան վեհ գաղափարը եւ ազնիւ ստեղծարար աշխատանքի պաշտամունքը: Հէնց այս գաղափարներով էլ, որոնք միաժամանակ համամարդկային են, պայմանաւորուած են "Սասունցի Դաւիթ" էպոսի դիւցազուն հերոսների գործողութիւններն ու արարքները:

բացառիկ		exceptional
բանաւոր կերպով		orally
պատում		variant of tale
բանահաւաք		collector of folklore
վէպ		novel;story
դիւցազնական վէպ		epics
գնահատել		appreciate
յոբելեան		jubilee
ժամանակագրական		chronologic
կոնկրէտ	BW	concrete
նկարագիր		character
հանճարեղ		ingenious, creative
պայման		condition
սիւժէ	BW	subject
հետեւողական		consequent, constant
կուռ		solid, firm
վառ		bright, rich
կոլորիտ	BW	coloring
թափ		impetus,force
ոճ		style
համառօտ		brief,short
հարկահան		tax-collector
ինչ գնով էլ լինի		at any price, cost
քանց	vr.	than (in comparison)
կորուսանին	vr.	are lost
բուռ		hendful
յղիանալ		to conceive
յետաձգել		to differe,put off,postpone
դահիճ		executioner

մատաղ անել		to sacrifice
թափառել		to wander
բարակ		thin;narrow
Քուռկիկ Ջալալի		mythological horse (A-n epics)
Թուր Կայծակի		Sword of lightning (A-n epics)
Խաչ Պատարագի		Cross of Mass (A-n epics)
կաթնաղբիւր		source of milk, fountain of milk
փահլեւան	BW	wrestler
ճող		lock, tuft of hair
ծամ		hair
գոմէշ		buffalo
գոմշանման		like a buffalo
առիւծ		lion
սովամահ		starving
խարջ	BW	tax, tribute
վիթխարի		gigantic
ակնկալութիւն		expectation
խնամել		to take care of
Մըսր	BW	Egypt
խաթուն	BW	lady
մեղր		honey
կարագ		butter
գառնարած		shepherd of lambs
հորթարած		shepherd of calves
նախրորդ		shepherd of cows
կուտակել		to heap up, to pile up
պարիսպ		city-wall, fortress
պատուհասել		to punish
դուրս վռնդել		to expulse,to expell, to banish

անհամար	countless, innumerable
պառաւ	old woman
խորհուրդ	advice
ազատ արձակել	to let go free
որոշ	certain
Գիւրջստան BW	Georgia
ծնուել	to be born
հանդիպել իրար	to meet each other
ճանապարհին	on the way
կարճ	short
բանակռիւ	discussion, dispute
զօտեմարտել	to wrestle
անիծել	to curse, to damn
անմահ	immortal
անժառանգ	heirless
նենգութիւն	fraud
տէրտէր	married priest
վանք	monastery, convent
այս կերպ	so, this way, thus
վրէժ	revenge, vengeance
շրջել	to wander
հանգիստ չտալ	to leave in peace, quiet
գերեզման	grave
հրեշտակ	angel
քարայր	cave
ցորեն	wheat
մասուր	fruit of briar
գարի	barley
ընկուզ, ընոյզ	walnut
ողջ	entire;throughout; alive
միջնադար	Middle Ages
ձեւաւորուել	to be shaped
դեռեւս	yet,still
աշխարհայեցողութիւն	weltanshauung,vision of life
համակերպուել	to conform,to resign o.s
իրականութիւն	reality
դաստիարակել	to educate
անպարտելիութիւն	invincibility
գիտակցութիւն	consciousness
ազատասէր	loving freedom
ջերմ	warm, ardent
հայրենիք	homeland
ցասում	anger
ատելութիւն	hatred
կեղեքել	to oppress,to vex, to rob
բռնակալ	tyrant
դրսեւորել	to express, to shape
վեհ	high, sublime
պաշտամունք	cult
համամարդկային	human, of all mankind
արարք	deed, work

ԱՐԵՒԵԼԱՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԹՈՒՐՔ ՆՈՒԱՃՈՂՆԵՐԻ ԴԷՄ

Այն ժամանակ, երբ հայ-վրացական գործիչները բանակցութիւններ էին վարում Պետրոս Առաջինի հետ՝ 1723 թ. Թուրքական մի բանակ ուղղութիւն վերցրեց դէպի Թբիլիսի, եւ Յունիս ամսին գրաւեց այն: Թուրքական բանակին ուժեղ դիմադրութիւն ցոյց տուեց Լոռի բերդաքաղաքը եւ ոչ մի պայմանով անձնատուր չեղաւ:

Ի պատասխան Թուրքերի առաջխաղացման, 1723 թվի ամառը, ռուսական մի զօրամաս մտաւ Բաքու, ապա՝ Գիլանի ու Մազանդարանի մարզերը: Այս լուրը մեծ ոգեւորութիւն առաջ բերեց Ղարաբաղում եւ Սիւնիքում:

Վրացի եւ հայ գործիչներն անվերջ դիմումներ էին յղում ցարին՝ օգնութիւնը շտապեցնելու համար: Պետրոս Առաջինը յուսադրական նամակներ ուղարկեց հայ-վրացական ղեկավարներին, որ ամուր կանգնեն իրենց նուաճած դիրքերում եւ չյուսահատին:

Սակայն օգնութիւնը չեղաւ, իսկ ուշ աշնանը, թուրքական բանակը Թբիլիսից շարժուեց դէպի Գանձակ (այժմ՝ Կիրովաբադ): Այստեղ թուրքերը հանդիպեցին ադրբէջանցիների եւ տեղական հայերի հերոսական ու երկարատեւ դիմադրութեանը եւ ստիպուած եղան նահանջել, մօտ 2000 զոհ տալուց յետոյ:

Թուրքական զօրքին յաջողուել էր գրաւել քաղաքի հայկական թաղը, կողոպտել, կոտորել եւ կենդանի մնացածներին գերի տանել:

Սուլթանի հրամանով, 1724 թւի սկզբին,Էրզումում մեծ բանակ էր համալրուել՝ Արեւելեան Հայաստանի եւ Ազրբէջանի վրայ արշաւելու համար: Վաղ գարնանը թուրքական բանակը ներխուժեց Շիրակի դաշտը եւ գիւղերն աւերելով, Ապարանի վրայով՝ մտաւ Արարատեան դաշտ:Երեւանի խանը, որ Արեւելեան Հայաստանի կենտրոնական մասում գտնուող պարսկական բանակի հրամանատարն էր, Եղվարդի դաշտում 12 հազարանոց բանակով ընդհարուեց մօտ 2000 հոգուց բաղկացած թուրքական առաջապահ գնդի հետ, բայց պարտուեց ու փախաւ Երեւան:

Երեւանի ճանապարհին Թուրքական բանակի առաջապահ մասը հանդիպեց Կարբի գիւղաքաղաքի դիմադրութեանը: Հայկական այդ վեց հազար բնակիչ ունեցող փոքրիկ քաղաքի համարձակութիւնը զարմացնում է Թուրք փաշային,որը հարց է տալիս կարբեցիներին, թէ "ինչու՞ էք զէնք վերցնում մի երկրի համար, որի տէրութիւնը ձե՛րը չէ": Նա չէր կարող հասկանալ, որ հայ գիւղացիներն ու քաղաքացիները օտար զաւթիչներից պաշտպանում էին ո՛չ թէ պարսկական տէրութիւնը, այլ իրենց հարազատ հողը՝ իրենց հայրենիքը: Մի քանի օրից յետոյ կարբեցիները ստիպւած եղան զէնքը վայր դնել, պայմանով որ Թուրք զինւորները չմտնեն Կարբի:

Կարբին ընկճելուց յետոյ Թուրքական բանակը, Աշտարակի ճանապարհով, հասաւ Երեւան: Խանը, իր կայազորով եւ քաղաքի մեծամեծների հետ, փակւեց բերդում.այստեղ ապաստանեցին նաեւ հայ մելիքները եւ խոշոր վաճառականների մեծ մասը: Թուրքական փաշայի վերջնագրին՝ բերդը յանձնելու մասին, խանը անորոշ պատասխան տւեց, թէ կը սպասի Շահ-Թահմազի հրամանին:

Բայց այնպէս չէին մտածում քաղաքի տէրերը: Երեւանը մի բաւականի խոշոր բայց անպարիսպ քաղաք էր, իսկ բերդը՝ քաղաքի մի ծայրում, Թառած Հրազդանի ափին: Նման պայմաններուն՝ ուժեղ բանակի համար ռազմական պրոբլէմ չէր քաղաք մտնելը, բայց նրանց համար եղաւ անսպասելին: Քաղաքի բնակիչները փակեցին միակ կամուրջը, Հրազդանի գետափը եւ կանգնեցին 40 հազարնոց սպառազինւած բանակը: Սկսեց յարձակումը Երեւանի վրայ, բայց քաղաքի հայ եւ ազրբէջանցի բնակիչները կատաղի դիմադրութիւն ցոյց տւին: Խանը հրամայեց ազրբէջանցի բնակիչներին քաշւել բերդի մէջ, որը դժւար կացութիւն ստեղծեց հայերի համար:

Պաշարման չորրորդ օրը սկսւեց առաջին մեծ գրոհը՝ կամրջից եւ Զորագիւղի դիմացից: Հրանօթների անընդհատ ռմբակոծութեան օգնութեամբ, թշնամին անցաւ գետը եւ ամբողջ օրը գրոհեց քաղաքի վրայ, բայց շատ մեծ զոհեր տալով, գիշերը նահանջեց միւս ափը: Այս մարտում քաղաքի հերոս պաշտպաններից զոհւեցին երկու հազար հոգի:

Երեւանի մէջ ապաստան էին գտել շրջակայքի հայկական գիւղերի բնակիչները. եւ մարտունակ տղամարդիկ իրենց զէնքով, եկել էին քաղաքը պաշտպանելու: Ծանր զոհերի գնով տարած յաղթանակից յետոյ, նոյն գիշերը՝ քաղաքի պաշտպանները հաւաքւեցին եկեղեցին, որոշելու յետագայ անելիքը: Քաղաքը լքելու եւ նահանջելու հնարաւորութիւնը կար, բայց Երեւանը դիտւում էր հիւսիս-արեւելեան Հայաստանի բանալին. Նահանջը բաց էր անում Թուրքական բանակի ուղին դէպի երկրի խորքը, խորտակելու նոր սկսւած ազատագրական շարժումը: Ուստի միաձայն որոշւեց կազմակերպել ուժերը եւ շարունակել պայքարը, փակել Թշնամու ուղին:

Այդ նոյն գիշերը եւ առաւօտեան հաւաքագրւեց հրազէն ունեցող 1443 հոգի, որոնց բաժանեցին չորս խմբի եւ ընդհանուր հրամանատար ընտրեցին Հունդիբեկեան Յովհաննէսին:

Երեւանը դարձաւ ռազմական ճամբար, որովհետեւ պաշտպանութեանը մասնակցում էին բոլորը՝ զինւած թէ անզէն:

Անակնկալի եկած Թուրքական բանակի հրամանատար Աբդուլլահ փաշան քրդական զօրամասեր կանչեց օգնութեան: Շուտով նրան օգնութեան հասաւ նաեւ եգիպտացիներից հաւաքագրւած հարւածային մի զօրամաս, բաղկացած 3000 հոգուց:

Վերջիններս յայտարարել էին, թէ իրենք անմիջապէս կը մտնեն քաղաք եւ, առանց փաշայի հրամանի, յանկարծակի գրոհի դիմեցին: Նրանք գետն անցան եւ հասան Ձորագիւղի ջրաղացներին, բայց Կոնդ արւարձանից Թշնամու ձախ Թեւը կրակի տակ առաւ Ղազար Բաքուրեանի զօրամասը. մեծ ջարդ տւին ու ետ շպրտեցին: Այս կռւում հայերն ունեցան 1300 մարտիկի կորուստ, հակառակորդը՝ 6000: Երեւանի պաշտպաններն ունէին այն առաւելութիւնը, որ այդ ճակատամասում նրանց համար պարիսպ էին ծառայում վարար Հրազդանը, գետափի բարձր ժայռերը ու Երեւանի խիտ այգիները:

Թշնամու բոլոր գրոհները դէմ էին առնում միահամուռ ու կատաղի դիմադրութեան: Թուրք փաշաների համար այդ մի անհասկնալի անակնկալ էր, որ դարերով ստրկացած ռայան՝հայ գիւղացին ու արհեստաւորը, կարող էին զէնք *բարձրացնել իրենց հարստահարողների դէմ եւ նման հերոսութիւն ցուցաբերել։ Մանաւանդ այդ նոյն ժամանակ եւ յետագայում՝ թուրքական մի այլ զօրամասի բազմաթիւ գրոհները քաջաբար ետ էին մղում լոռեցիների կողմից՝ Լոռի բերդաքաղաքում։*

Հայ ազատագրական շարժման գաղափարը եւ ռուսական բանակի օգնութեան յոյսը խորապէս համակել էին Երեւանի ու Արարատեան դաշտի բնակիչներին։ Այն զէնքն ու զինական ուժը, որ հայերը վաղուց պատրաստել էին պարսկական շահերի ու խաների լուծը թօթափելու համար, ստիպուած եղան գործադրել աւելի ուժեղ ու վտանգաւոր թշնամու՝ թուրք զաւթիչների դէմ։ Երեւանի պաշտպանները գիտէին, որ օսմանեան այդ բանակների առաջադրանքներից մէկն էր՝ վերջ տալ հայ ազատագրական շարժումներին։

Թաւրիզ ուղեւորւող թուրքական այս բանակը երկու ամիս զամւած մնաց Երեւանի տակ։ Ուստի, թուրքական հրամանատարութիւնը, Անդրկովկասը նուաճելու համար՝ ուղարկւող 38 հազար հոգուց բաղկացած երկու նոր բանակներին հրամայեց՝ օգնութեան հասնել Երեւանի դէմ գործող բանակին։

Մինչեւ սրանց տեղ հասնելը, Աբդուլլահ փաշան, խայտառակութիւնից իրեն փրկելու համար, վերջին գրոհը ձեռնարկեց՝ արդէն Կոնդի ուղղութեամբ։ Հայկական ուժերի հերոսական ձեռնամարտն այս անգամ էլ վերջացաւ յաղթանակով. հայերից սպանւեցին 470 հոգի, որից 70-ը կոնդեցիներից։

Անհաւասար պայքարի մէջ զոհւածների զէնքն ու տեղը գրաւում էին նոր մարդիկ. բայց մարդկանց հետ սպառւում էր եւ վառօդի պաշարը ու զէնքը։ Յունիսի սկզբին Երեւան հասաւ Գանձակ ու Ղարաբաղ շարժւող բանակը։ Թըշնամու ուժը կրկնապատկւեց եւ քաղաքն առնւեց օղակի մէջ։ Անպարիսպ քաղաքը թւով տասն անգամ գերազանց կանոնաւոր բանակից պաշտպանելը հեշտ չէր, իսկ բերդում փակւած պարսկական զօրամասը մնում էր հանդիսատեսի դերում, բաւարարւելով երբեմն հրանօթ արձակելով՝ այն էլ յատկապէս առաջին շաբաթներում։

Անյաջող անցան հայերի բանակցութիւններ վարելու փորձերը։ Յունիսի

6-ին թշնամին նախապատրաստեց քաղաքը գրոհել չորս կողմից: Ամբողջ գիշերը՝ Երեւանի հերոս պաշտպանները, Սուրբ Սարգսի եկեղեցում, հերթով, հաւատարմութեան եւ անձնազոհութեան երդում տւեցին: Նրանց քաջալերում էր քաղաքի պաշտպանութեան կազմակերպիչներից մէկը՝ քաջ հայրենասէր Գրիգոր վարդապետը: Բոլոր տղամարդիկ երդւեցին չյուսահատւել, զերի չյանձնւել, չնահանջել եւ մէկ մարդու պէս կռւել՝ մինչեւ արեան վերջին կաթիլը, եւ չտեսնել կանանց ու երեխաների կոտորածն ու ստրկացումը:

Յունիս 7-ին (նոր տոմարով՝ 18-ին), վաղ առաւօտեան սկսւեց ընդհանուր գրոհը: Երեւանի պաշտպանութեան վերջին ճակատամարտը տեւեց ամբողջ օրը: Թշնամին, ծանր կորուստների գնով՝ ներխուժեց քաղաք. մինչեւ ուշ գիշեր՝ փողոցներում եւ տներում շարունակւեց կատաղի եւ անհաւասար ձեռնամարտը: Մօտ 10 հազար տղամարդ ընկան հերոսի մահով. Երեւանը աւերւեց, կողոպտւեց.կենդանի մնացած բնակչութիւնը գերւեց: Ըստ Թուրքական աղբիւրների, միայն Երեւան քաղաքից աւելի քան 10 հազար կին ու երեխաներ վերցրին, չխնայելով եւ ազրբէջանցիներին: Դրանից բացի՝ 20 հազար հայ գիւղացիներ գերւել եւ քշւել էին Թուրքիա, ճանապարհին հանդիպած գիւղերից:

Երեւանի պաշտպանութիւնը՝ հայ ժողովրդի հազարամեայ պատմութեան ամենապայծառ ու հերոսական էջերից մէկն է, երբ մահը գիտակցւած էր եւ ամէն մարտնչող՝ անձնուրաց հերոս: Այն ունեցաւ ոչ միայն բարոյական,այլեւ ռազմական կարեւոր նշանակութիւն: Մի քանի ամսով յետաձգւեց օսմանական բանակի արշաւանքը դէպի Սիւնիք եւ Ղարաբաղ, որոնք ժամանակ շահեցին աւելի լաւ նախապատրաստւելու պաշտպանութեան: Բացի այդ, օսմանական բանակը մօտ երեք ամսւայ կռիւներում թուլացաւ: Երեւանի համար մղւած մարտերում հայերից սպանւեց մօտ 15 հազար տղամարդ, իսկ Թուրքերից՝ աւելի շատ:

արեւելահայ	East-Armenian	թաղ	(city) district
բնակչութիւն	population	կողոպտել	to ravage
նուաճող	invader;occupant (mil.)	գերի	prisoner
գործիչ	agent	հրաման	order
բանակցութիւն	negotiation	համալրուել	to gather
վարել	to lead;to carry on;to drive	ներխուժել	to invade
Պետրոս	Peter	խան BW	Persian governor; Persian title
ամիս	month	ընդհարուել	to collide; to meet (enemy)
դիմադրութիւն	resistance	բաղկանալ	to consist
բերդաքաղաք	fortified city	առաջապահ	vanguard
անձնատուր լինել	to surrender	գունդ	troop,troupe
ի պատասխան AA	in reply	համարձակ	bold
առաջխաղացում	progress,advance; invasion	փաշա BW	Turkish title (mil.)
ռուսական	Russian	զէնք	arm
զօրամաս	division (mil.)	զաւթիչ BW	occupant
մարզ	region (geogr.)	հարազատ	genuine
առաջ բերել	to produce	զէքն վերցնել	take up arms
անվերջ	endless	- վար դնել	lay down ~
դիմում	appeal	կայազօր	gerrison
յղել	to send	մեծամեծներ	chiefs
յուսադրական	encouraging	ապաստանել	to take shelter, to seek refuge
ղեկավար	leader	մելիք	A-n prince (hist.)
դիրք	position	վերջնագիր	ultimatum
յուսահատել	to be despondent, discouraged	յանձնել	to deliver
ստիպուել	to be forced,obliged	թառել	to perch
նահանջել	to retreat	պրոբլէմ BW	problem
զոհ	victim	անսպասելի	unexpected

սպառազինել	to arm	ջարդ	slaughter
կատաղի	furious	ետ շպրտել	to beat off,to repel, to repulse
կացութիւն	situation	կորուստ	loss
պաշարում	siege	առաւելութիւն	advantage
գրոհ	attack	վարար	abounding in water
դիմացից	from the opposite side	միահամուռ	all together ,general
հրանօթ	cannon	անակնկալ	surprise
անընդհատ	uninterrupted	ռայա BW	Christian subjects of Sultan
ռմբակոծել	to bombard	հարստահարել	to ravage
մարտ	fight, battle	ետ մղել	to push back
մարտունակ	ready,willing, capable to fight	համակել	to affect, to influence
տղամարդ	man	լուծ	yoke
յաղթանակ	victory	թօթափել	to shake off
լքել	to abandon	օսմանեան	Ottoman
հնարաւոր	possible	առաջադրանք	purpose,proposition
դիտուել	to be considered	գամել	to nail
բանալի	key	գամուած մնալ	to remain immobile
խորտակել	to break;to destroy	բաղկանալ	to consist
ազատագրել	to free	խայտառակութիւն	public outrage, disgrace, shame
ուղի	way,route	վառօդ	gunpowder
միաձայն	unanimous	պաշար	supply,provision
հրազէն	firearm	կրկնապատկել	to double
ճամբար	camp	օղակ	ring
ռազմական	military	հեշտ	easy
հարուածային զօրամաս	shock troops	հանդիսատես	spectator
արուարձան	suburb,outskirts	դեր	rôle
ձախ	left	բաւարարել	to satisfy
թեւ	wing	փորձ	trial, attempt

պաշտպան	defender
եկեղեցի	church
հերթ	(in)turn
անձնազոհութիւն	self-sacrifice
երդում տալ	to swear
քաջալերել	to encourage
կազմակերպիչ	organizer
հայրենասէր	patriotic
վարդապետ	unmarried priest
մէկ մարդու պէս կուել	to fight as one man
յուսահատուել	to despair, to give up hope
կոտորած	slaughter
կաթիլ	drop
արիւն(g.արեան)	blood
ընդհանուր	general
գնով	at the price of
ներխուժել	to invade
անհաւասար	inequal
ձեռնամարտ	hand to hand fighting
ընկնել հերոսի մահով	to die a hero
գերել	to take prisoner
աղբիւր	source
խնայել	to spare
դրանցից բացի	beside that
քշել	to drive (away)
հազարամեայ	of thousand years
ամենապայծառ	the brightest
գիտակցել	to be aware
անձնուրաց	unselfish
բարոյական	moral
նշանակութիւն	meaning
յետաձգել	to postpone, to delay
արշաւանք	invasion;campaign
շահել	to win
նախապատրաստել	to prepare
թուլանալ	to weaken
տղամարդ	man

ՀԵՐՈՍ ՍՈՆԱՆ

Այդ օրը Թէոդոսիայում կառապանների պակաս էր զգացւում: Նրանք բոլորը զբաղւած էին հայ գաղթականներին Այվազովսկու քաղաքամերձ կալւածքը փոխադրելով:

Օրը տաք էր, օդն անշարժ, նոյն իսկ ստւերում շնչելու բան չկար: Այվազովսկին եւ Ռեպինը մօտեցան կանաչների մէջ թաղւած մի փոքրիկ սպիտակ տան դռնակին: Դարբասի մօտ պառկած էր մեծ, փրչոտ շուն: Նա շնչում էր ծանր. նրա երախը բաց էր. դուրս ընկած լեզուն անընդհատ թեթեւակի դողում էր: Ինչպէս երեւում էր՝ Այվազովսկին այստեղ յաճախ էր լինում. շունը ուրախ կաղկանձով վազեց նրա մօտ: Ռէպինը, տեսնելով այդ տեսարանը, յանկարծ ուրախ ծիծաղեց: Շունը նայեց նրան եւ սիրալիրութեամբ թափահարեց պոչը: Մէկ էլ յանկարծ ականջները սրեց եւ սլացաւ դէպի տուն տանող ծառուղին: Այնտեղ երեւաց բարձրահասակ, զօրեղ կազմւածքով, սպիտակ, երկար մօրուքով մի ծերունի: Չնայած խոր ծերութեանը, բարեկազմ էր եւ ձեռնափայտ չէր օգտագործում: Դա Սերոբ Բէյլերեանն էր: Այվազովսկին նրան ընդառաջ գնաց, իսկ Ռէպինը դանդաղեցրեց քայլերը, հեռւից հիանալով ծերունու կեցւածքի վեհութեամբ եւ վայելչութեամբ:

Սերոբը, բաց չթողնելով Այվազովսկու ձեռքը, մօտեցաւ Ռէպինին. խոնարհ, բայց արժանապատւութեամբ գլուխ տւեց: Նրա շարժումները հանգիստ էին եւ զուսպ:

Ընդարձակ մաքուր սենեակում զով էր: Ծերունի Սերոբը հիւրերին նստեցրեց, նրանց առաջարկեց սաթի գոյն թարմ մեղրահացը եւ ածուներից հէնց նոր քաղւած վարունգներ:

-Ես արդեօք հարազատ Ուկրաինայում չե՞մ գտնւում,- հրճւեց Ռէպինը,- միայն այնտեղ է, որ մեղրի հետ թարմ վարունգներ են մատուցում:

-Դուք չէք սխալւում, թանկագին հիւր. սա ուկրաինական անուշեղէն է, - սիրալիր հաստատեց Բէյլերեան,- ինձ այդ սովորեցրել են իմ ուկրաինացի բարեկամները հարեւան գիւղից: Նրանք այնտեղ շատ են:

-Այդ ո՞ր գիւղն է,- անմիջապէս հետաքրքրուեց Այվազովսկին:

-Ջումա-էլի, Օհաննէս: Իմ բարեկամները ինձ խնդրել են նրանց իմաց տալ քո գալու մասին: Նրանց մօտ հողի կապալի հետ դժբախտութիւն է պատահել եւ ամբողջ յոյսը քո միջամտութեան վրայ է:

Այվազովսկին համաձայնեց առանց յետաձգելու լսել գիւղացիներին:

Երբ ծերունին դուրս գնաց, Ռէպինը տեղից վեր կացաւ եւ մօտեցաւ պատից կախուած՝ գեղջական հասարակ զգեստով, ջահել, գեղեցիկ հայուհու դիմանկարին:

-Ինչպիսի՞ ողբերգական դէմք: Որքա՞ն ճիշտ է նկարուած բնաւորութիւնը: Թէեւ ամեն ինչից երեւում է, որ նկարիչը կերպարւեստի տեխնիկային միանգամայն անծանօթ է:

-Իլեա Էֆիմովիչ, ես ձեզ շատ եմ խնդրում,- յուզուեց Այվազովսկին,- այդ դիմանկարի մասին ծերունուն հարց ու փորձ չանէք: Դա ընտանեկան ողբերգութիւն է: Ես յետոյ ինքս կը պատմեմ ձեզ:

-Դու ճիշտ չես,Օհաննէս,- հնչեց Սերոբի ձայնը, որ վերադարձել եւ լսել էր Այվազովսկու վերջին խօսքերը:- Մեր հիւրը, ռուս նկարիչը, կարեկից սրտի տէր մարդ է. դու նրա մասին ինձ շատ անգամ ես պատմել. պատմել ես նաեւ այն մասին, որ նա մի մեծ նկար է նկարել իր ժողովրդի տառապանքների մասին՝"Բուռլակները": Տեսնու՞մ ես, նոյն իսկ մտքումս պահել եմ անունը, թէպէտ սկզբում ինձ համար դժուար էր արտասանել այդ բառը: Ես կարծում եմ, որ նա կը հասկանայ եւ մեր ժողովրդի տառապանքները:

Ծերունին նստեց այնպէս, որ իրեն տեսանելի լինի դիմանկարը, եւ սկսեց իր պատմութիւնը:

-Այդ երիտասարդ կինը իմ աւագ եղբայր Մուշեղի աղջիկն է: Նրան Սոնա էին կոչում. նա արտակարգ գեղեցիկ էր: Հարուստ ընտանիքների զաւակները երազում էին նրա հետ ամուսնանալ: Բայց նա սիրեց չքաւոր Մարտիրոսին, որը ունէր մաքուր, ազնիւ սիրտ, բայց, ինչպէս դուք ասում էք, բոլորովին 'մերկ' էր: Ճիշտ է, նա կարողանում էր երգել, նկարել: Ահա Սոնայի այդ նկարը ինքն է նկարել։ Սոնան ամուսնացաւ նրա հետ։ Երիտասարդներն ապրում էին կարիքի մէջ, բայց երջանիկ էին, որովհետեւ սիրում էին իրար։ Սոնան մի տղայ ունեցաւ։ Դրանից յետոյ նրա գեղեցկութիւնն աւելի փթթեց։ Մի անգամ,ի դժբախտութիւն մեզ, Սոնային տեսել էր հողատէր Սուլէյման բէկը, մի բռնակալ, սանձարձակ ու անառակ անձնաւորութիւն։ Նա Մարտիրոսին կանչում է իր մօտ, որ իր ’ողորմածութիւնը’ ցոյց տայ նրան։ Բէկը հրամայում է տալ նրան հողաշերտ, ցանքսի համար սերմ եւ արօր։ Մարտիրոսը բախտաւոր էր, եւ ամբողջ հոգով շնորհակալ է լինում բէկին։ Խեղճ երիտասարդը՝ առանց երկար մտածելու ստորագրում է պարտքի պարտաւորութիւնը։

Եկաւ աշունը։ Մարտիրոսը հաւաքեց առաջին առատ բերքը եւ ուրախանում էր երեխայի նման։ Նա արդէն երազում էր վաճառել հացահատիկի կէսը եւ ստացւած փողերով հագուստ գնել՝ կնոջ եւ երեխայի համար։ Բայց գալիս է բեկի կառավարիչը եւ գրաւում ամբողջ բերքը՝ հողից օգտւելու, հարկերի, սերմերի եւ պարտքի տոկոսների փոխարէն։

Երեք տարի շարունակ չարչարւում էր դժբախտ Մարտիրոսը, իսկ բէկի օգտին վերցւող տոկոսները անընդհատ աւելանում էին։ Չդիմացաւ Մարտիրոսը եւ վճռեց փախչել օտար երկիր, որպէսզի բաւականաչափ փող վաստակի եւ ազատի իր ընտանիքը՝ կնոջ ու մանկահասակ երեխային ստրկացնող պարտքից։Հէնց այդպիսի բանի էր սպասում անիծեալ բէկը։

Ընտանիքի հետ Մարտիրոսի մնաս բարեւ անելուց մի քանի օր յետոյ, բէկը գիշերով մօտենում է այն խրճիթին, որտեղ դառնաղի արցունքներ էր թափում խեղճ Սոնան։ Նա ներս է խուժում Սոնայի բնակարանը եւ փորձում նրան պատւազուրկ անել։ Բայց Սոնան արագ դուրս է քաշում բէկի սեփական դաշոյնը եւ խրում ամբարտաւան բեկի կուրծքը։

Սոնան վերցնում է երեխային եւ խելագարի պէս վազում հարեւան գիւղը, իր զառամեալ հօր՝ իմ աւագ եղբայր Մուշեղի մօտ։ Բայց մի ժամ էլ չի անցնում, բէկի կրտսեր եղբայրը եւ նրա արնախում ծառաները ներս են խուժում իմ եղբօր տունը եւ սրախողխող անում ամբողջ ընտանիք: Այս դէպքը շատ տարիներ առաջ է պատահել, բայց չենք կարող մոռանալ այդ կսկիծը:

Ծեր Սերոբը աւարտեց իր պատմութիւնը եւ գլուխը խոնարհեց: Արցունքները ցայտեցին ալեզարդ մօրուքի վրայ:

(Լ.Վագնէր,Պատմութիւն նկարիչ Այվազովսկու մասին, Երեւան 1962)

կառապան	coachman	կեցուածք	posture, position
պակաս	need ;less	վայելուչ	dignified
զաղթական	displaced person	խոնարհ	humble
կալուածք	property, estate	արժանապատուութիւն	dignity
քաղաքամերձ	in the neighborhood of the city	գլուխ տալ	to bow one's head
ստուեր	shade, shadow	զուսպ	controlled, tempered
շնչել	to breathe	մաքուր	clean
դռնակ	small door	զով	fresh, cool
դարբաս	gate	հիւր	guest
պառկել	to lie down	սաթ	amber
փրչոտ	hairy;pilous	ածու	bed, cultivated field
երախ	mouth, jaws	քաղել	to pick, to gather
լեզու	tongue	վարունգ	cucumber
յաճախ	often	հարազատ	genuine, real
կաղկանձ	yap, yelp	հրճուել	to be delighted
տեսարան	scene	մատուցանել	to serve, to offer
թափահարել	to wag	սխալուել	to be wrong, mistaken
պոչ	tail	թանկագին	precious
ականջ	ear	անուշեղէն	pastry
ականջները սրեց	to prick up one's ears	հաստատել	to affirm
ծառուղի	alley, tree-lined path	հարեւան	neighbor, -ing
կազմուածք	constitution, nature	հետաքրքրուել	to be interested
օգտագործել	to use; to profit	իմաց տալ	to give notice, to inform
ընդառաջ գնաց	to go to meet	կապալ	contract
դանդաղ	slow	դժբախտութիւն	mishap, bad luck
հիանալ	to admire	պատահել	to occur

միջամտութիւն	mediation;intercession	ազնիւ	gentle,noble
կախել	to hang	սիրտ	heart
գեղջական	rustic,rural; simple	բոլորովին	entirely
հասարակ	common;usual	մերկ	naked ;'poor'
զգեստ	dress	երգել	to sing
ջահել BW	young	կարիք	needs,poverty
դիմանկար	portrait	փթթել	to blossom
ողբերգական	tragic	ի դժբախտութիւն մեզ AA	unfortunately for us
դէմք	face	հողատէր	landowner
թէեւ	though,although	բէկ BW	beg,bey
կերպարուեստ	graphic art	սանձարձակ	inordinate;dissolute
տէխնիկա BW	technique	անառակ	lewd;immoral:urchin, brat
հարց ու փորձ անել	to interrogate	ողորմածութիւն	compassion,charity
ընտանեկան	of the family, domestic	շերտ	strip;slice;piece
ես ինքս	myself	հողաշերտ	tract of land
պատմել	to tell	ցանքս	sowing
ճիշտ, ճիշդ	just;true	սերմ	seed
կարեկից	compassionate	արօր	plough
տէր	lord, owner	շնորհակալ լինել	to thank
նկար	painting	ստորագրել	to sign
նկարել	to paint	պարտք	debt
նկարիչ	painter	աշուն	fall, autumn
տառապանք	sufferings	առատ	abundant
արտասանել	to pronounce	բերք	yield,produce
դիմանկար	portrait	վաճառել	to sell
աւագ	elder	հացահատիկ	wheat
արտակարգ	extraordinary, unusual	կէս	half

փող	money	*բնակարան*	home,residence
հագուստ	clothing	*պատուազուրկ անել*	to disgrace;to dishonor
կնոջ (<*կին* wife)	of/to wife,	*սեփական*	one's own
կառավարիչ	governor;manager	*դաշոյն*	dagger
օգտուել	to use;to profit	*խրել*	to drive,to plunge
հարկ	tax	*ամբարտաւան*	arrogant
տոկոս	interest	*կուրծք*	breast
փոխարէն	for;instead; euivalent	*խելագար*	mad
չարչարել	to torment	*զառամեալ*	aged, old
անընդհատ	uninterrupted, successively	*կրտսեր*	younger
աւելանալ	to increase	*արնախում*	bloodthirsty
դիմանալ	to resists, to stand	*ծառայ*	servant
վճռել	to decide	*սրախողխող անել*	to slay with sword
փախչել	to flee	*մոռանալ*	to forget
օտար	foreign	*կսկիծ*	pain,grief
վաստակել	to get,to win; to work	*աւարտել*	to end
մանկահասակ	young	*խոնարհել*	to bow,to bend
ստրկացնել	to enslave	*ցայտել*	to gush
անիծեալ	cursed, damned	*ալեզարդ*	white,gray
մնաս բարեւ	good-bye	*մօրուք*	beard
- - *անել*	to say good-bye; to depart		
խրճիթ	hut		
դառնաղի	bitter		
արցունք	tears		
- *թափել*	to shed tears		
խեղճ	poor,miserable		
ներս խուժել	to rush in		

ԱՒԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆ
(1875-1957)

Աւետիք Իսահակեանը հայ մեծագոյն բանաստեղծներից է. Նա իր անզուգական տաղանդով զարգացրել եւ մի նոր աստիճանի է բարձրացրել մեր քնարերգութիւնը (լիրիկան): Նրա ստեղծագործութեան մէջ կենտրոնացւած են նախորդ շրջանի հայ բոլոր քնարերգուների երգած մոտիվները: Բանաստեղծը լայն, համակողմանի, նուրբ ու բարձր արւեստով է երգել էպոխայի կեանքը, հասարակական տրամադրութիւնները, մարդկային հոգու բազմազան ապրումները: Սէրը մարդու նկատմամբ, զգացմունքների խորութիւնը եւ նրբութիւնը, որոնք յատուկ են Իսահակեանի պոէզիային, նրան դարձրել են ժողովրդի հոգեհարազատ,սրտամօտ երգիչը:

Իսահակեանի լաւագոյն գործերը թարգմանւած են բազմաթիւ լեզուներով, ամենուր ընդունում են բանաստեղծի տաղանդի ուժն ու մեծութիւնը: Յովհաննէս Թումանեանի հետ միասին Աւետիք Իսահակեանը հայ պոէզիան դարձրեց ազգային հոգու եւ բնաւորութեան անխարդախ հայելին, աշխարհի առաջ ցուցադրելով մեր ժողովրդի հոգու գեղեցկութիւնը, ազնիւ ձգտումներն ու երազանքները, որոնք հարազատ են նաեւ միւս բոլոր ժողովուրդներին:

Դեռ 1916 թւականին ռուս մեծ բանաստեղծ Ալեքսանդր Բլոկը, կարդալով եւ թարգմանելով Իսահակեանի բանաստեղծութիւնները, բարձր գնահատելով նրա պոէզիայի առողջ ոգին, ազգային կախարդիչ գոյները, գրել է. "Իսահակեանը ինձ գերել է","Իսահակեանը առաջնակարգ բանաստեղծ է, թերեւս այդպիսի լուսաւոր ու անմիջական տաղանդ այժմ ողջ Եւրոպայում չկայ":

Աւետիք Իսահակեանը ծնւել է 1875 թ.,Հոկտեմբեր 30-ին,Ալեքսանդրապոլում (այժմ Լենինական): Տարւայ մեծ մասը նրանց ընտանիքը անց էր կացնում Ղազարապատ գիւղում (այժմ Իսահակեան), որտեղ բանաստեղծի հայրն ունէր ջրաղաց,բարդիներով եւ ուռենիներով պարսպւած պարտէզ: Զգայուն երեխայի վրայ վառ տպաւորութիւն են թողնում գիւղական կեանքն ու բնութիւնը։ Նրան դիւթում են հայրենի երկրի ծաղկազարդ գարունները, ցորենի ծփուն արտերը, գետերի վրայ թեքւած լացող ուռենիները,երփներանգ ծաղիկներով վառւող դաշտերն ու հովիտները։ Մանուկ հասակից բանստեղծին գրաւում են գիւղական աշխարհի պարզ ուրախութիւնները, տօնակատարութիւններում ժողովրդական խաղերն ու գունազեղ կենսաղը։ Երեխայի վրայ կախարդիչ ազդեցութիւն են թողնում ժողովրդական երգն ու երաժշտութիւնը,որոնցով այնքան հարուստ է Շիրակի ժողովուրդը։

Իսահակեանը մանուկ հասակից եղել է մայրենի ժողովրդի գրկում։ Նրա երեւակայութեանը սնունդ են տւել հայրենի երազկոտ բնութիւնը, ժողովրդական երգերն ու բանաստեղծութիւնները. Նրա հոգուն հարազատ են դարձել հայկական գիւղի ուրախութիւններն ու վշտերը։ Գեղեցիկ բնութիւնը, ժողովրդի կեանքն ու բանահիւսութիւնը՝ դառնում են ապագայ բանաստեղծի ստեղծագործական ոգեւորութեան անսպառ ակունքը։

Ութ տարեկան հասակում Իսահակեանը յաճախում է Շողօ Բաջու ուսումնարանը, որտեղ իշխում էր տխահռչակ Տէր Թոդիկի կրթական մեթոդը։ Չորս ամսից յետոյ ծնողները նրան տեղափոխում են թեմական հոգեւոր դպրոցը, որտեղ սովորում էին հայոց եւ ռուսաց լեզու, պատմութիւն, աշխարհագրութիւն, բնական գիտութիւններ։ 1885 թւականին ցարական ինքնակալութեան հրամանով շատերի հետ փակւում է նաեւ այս դպրոցը։Իսահակեանը ուսումը շարունակում է Հառիճի վանքի դպրոցում, որն աւարտում է 1889 թւականին։ Ուսման տարիներին բանաստեղծի առաջ բացւում է մի ուրիշ աշխարհ՝ գրքերի հարուստ ու կախարդիչ աշխարհը։ Նա անյագօրէն կարդում է հայ գրականութեան նշանաւոր գործերը, վէպերն ու բանաստեղծութիւնները, որոնք պատանու հոգին բորբոքում են ազնիւ ձգտումներով եւ հայրենասիրութեամբ։ Հայ գրողների երկերը բացում են երեխայի աչքերը, սովորեցնում են նրան ճանաչել ու սիրել հարազատ ժողովրդին, օտար ու ներքին տէրերի լծի տակ տառապող աշխատաւոր մարդուն։

կարդացած գրքերի ազդեցութեան տակ 11-12 տարեկան երեխան սկսում է գրական առաջին փորձերը:

1889 թւականին Իսահակեանը ընդունւում է Էջմիածնի Գէւորգեան ճեմարանը: Երկու տարի յետոյ նա միանում է ճեմարանի ըմբոստ ուսանողներին, որոնք բողոքում են դաժան ռէժիմի եւ վերակացուների կամայականութեան դէմ, եւ քսանութ հոգու հետ միասին թողնում է ճեմարանը: Բայց մի տարի յետոյ, յանձնելով բաց թողած քննութիւնները, նա աւարտում է ճեմարանը: Այս տարիներին Իսահակեանի կեանքում բախտորոշ դեր է խաղում նշանաւոր քնարերգու Յովհաննէս Յովհաննէսեանը, որը ճեմարանում դասաւանդում էր ռուսաց լեզու: Յովհաննէեսանը ընթերցում է իր աշակերտի գրական թոթովանքները, արժէքաւոր դիտողութիւններ է անում եւ անգնահատելի խորհուրդներ տալիս: Իսկ 1892 թւականին, ընթերցելով Իսահակեանի "Ծաղիկ էր նորաբողբոջ..." ոտանաւորը, նա բացականչում է."Կեցցես, հիմա բանաստեղծ ես":

Հայ մամուլում սկսւում են տպագրւել տաղանդաւոր պատանու գեղեցիկ ոտանաւորները, որոնք ջերմ արձագանք են գտնում ընթերցողների շրջանում: 1892 թւականի դեկտեմբերին Իսահակեանը Թիֆլիսում ծանօթանում է Յովհաննէս Թումանեանի, Ղազարոս Աղայեանի եւ մի շարք նշանաւոր գրական գործիչների հետ:

1898 թւականին նա մեկնում է արտասահման եւ ընդունւում Լայպցիգի համալսարանը՝ որպէս ազատ ունկնդիր: Գերմանիայում նա կարդում է աշխարհի նշանաւոր փիլիսոփաների աշխատութիւնները, խորապէս ուսումնասիրում համաշխարհային կլասիկների երկերը, ծանօթանում արւեստի կոթողներին: 1895 թւականին բանաստեղծը վերադառնում է Ալեքսանդրապոլ: Այստեղ նրան բանտարկում են մեղադրելով հակացարական տրամադրութիւնների մէջ, եւ մէկ տարի պահում Երեւանի բանտում:

1898 թւակնին լոյս է տեսնում մեծ բանաստեղծի առաջին գիրքը՝

"Երգեր ու վէրքեր" խորագրով: Այս գրքով հայ պոէզիայի մէջ մտնում է մի խոշոր, անզուգական քնարերգու, իր հետ բերելով բանաստեղծական զգացումների, ապրումների ու յոյզերի մի նոր աշխարհ: Իսահակեանի անունը միանգամից դասւում է հայ խոշորագոյն գրողների անունների շարքը:

Կեանքի յետագայ շրջանում Իսահակեանը շատ է ճամփորդել: Եղել է աշխարհի բազմաթիւ երկրներում ու քաղաքներում՝ Գերմանիայում,ֆրանսիայում, Իտալիայում, Յունաստանում, Ռուսաստանում: Թափառումների տարիներին, օտար ուղիներում մեծ գրողին մշտապէս յուզել է մարդկանց եւ ժողովուրդների բախտը.

Նորից եկան գարնան անուշ օրերը.
Ցուպս առնիմ, ընկնիմ սար ու ձորերը.-
Սիրտս կուզէ հեռուները սաւառնել,
Նոր ուղիներ, նոր աշխարհներ թափառել:

Բայց այդ նոր աշխարհներում եւ ուղիներում բանաստեղծը տեսնում է նոյն ցաւերը, նոյն տառապանքները, որ սրտի մորմոքով նա տեսել է Հայաստանում."Տեսայ, որ միայն հայը չի տառապում. բովանդակ աշխարհը լաց ու կոծի մէջ է. բոլոր ժողովուրդները լծի տակ են առնւած. ուժեղը լափում է թոյլին. ամենուրեք բռնակալութիւններ, ճնշումներ, արիւնահեղ պատերազմներ, եւ պոգրոմներ (ջարդեր) եւ, վերջապէս, ամենուրեք... շահագործում, հարստահարութիւն":

Արտասահմանում գտնւած տարիներին եւս Իսահակեանը մշտապէս տանջւել է հայրենի երկրի վշտերով. Նա յաճախ վերադառնում է Հայաստան, շրջում Անդրկովկասի գիւղերն ու քաղաքները, Արեւմտեան Հայաստանի նահանգները, մօտիկից տեսնում հայ ժողովրդի կեանքի ճշմարիտ պատկերը: Բանաստեղծը արտասահմանում է ստեղծել իր խոր հայրենասիրական բանաստեղծութիւնների մի զգալի մասը:

1926 թուականին վերադառնում է Սովետական Հայաստան. երեք տարի մնալուց յետոյ նա նորից մեկնում է Փարիզ, ընտանիքը, արխիւը, գրքերը տեղափոխելու համար: 1936 թուականին վերջնականապէս տեղափոխւում է Երեւան:

Աւետիք Իսահակեան ակտիւօրէն մասնակցում էր մեր երկրի քաղաքական եւ կուլտուրական կեանքին: Նա Հայաստանի Գրողների Միութեան նախագահն էր, ՀՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի իսկական անդամ, ՀՍՍՌ Գերագոյն Սովետի դէպուտատ: Սովետական հայրենիքին մատուցած ծառայութիւնների համար բանաստեղծը երկու անգամ արժանացաւ բարձրագոյն պարգեւի՝ Լէնինի շքանշանի:

Հայ ժողովրդի մեծ բանաստեղծը վախճանուեց 1957 թուականի հոկտեմբեր 17-ին. երկիրը խոր վշտով ճանապարհ դրեց իր մեծ զաւակին ու երախտաւորին:

բանաստեղծ	poet
անզուգական	unmatched
տաղանդ	talent
քնարերգութիւն	lyrics
մոտիվ BW	motive
էպոխա BW	epoch
զգացմունք	feeling
նուրբ	subtle
յատուկ	own, proper
պոէզիա	poetry
սրտամօտ	intimate
անխարդախ	unadulterated, pure; genuine
հայելի	mirror
ոգի	spirit, soul
ազգային	national
կախարդիչ	enchanting
գերել	to make slaves; to fascinate
ջրաղաց	watermill
պարսպել	to surround (with walls)
տպաւորութիւն	impression
ծփալ	to float; to wave
լացող ուռենի	weeping willow
թեքուել	to incline, to bend over
երփներանգ	colorful
վառել	to burn; to adorn
գունազեղ	colorful; color-bright
կենսաղ	life; living
գիրկ	bosom
երազկոտ	dreamy
վիշտ	pain
յաճախել	to frequent; to go
թեմական	diocesan
անյագ(օրէն)	insatiable (~bly)
լուծ	yoke
ըմբոստ	rebellious
դաժան	bitter; harsh
ռէժիմ BW	regime
վերակացու	superintendent
կամայականութիւն	caprice; whim
ընթերցող	reader (of a book)
մամուլ	press; printing
տաղաւոր	verse, poem
ունկնդիր	auditor; audience
համաշխարհային	international
կլասիկ BW	classics
բանտ	jail
բանտարկել	to jail
մեղադրել	to accuse
վէրք	wound
ցուպ	walking stick
մորմոք	grief
ամենուրեք	everywhere
ՀՍՍՌ	Armenian SSR
արխիւ BW	archive
ակտիւ BW	active
դէպուտատ BW	deputee
շքանշան	decoration, medal

ՇԻՐՎԱՆԶԱԴԷ

Բնութիւնը Շիրվանզադէին բացառիկ գեղեցկութեան հետ միասին օժտել էր եւ բացառիկ կենսասէր ոգւով։Ունրան նայելիս, թւում էր ր իսկապէս թէ այդ գեղեցկութեան տէր տղամարդն ուրիշ կերպ էլ չէր կարող լինել, քան կենսասէր։ Եւ առաջին բանն իրօք, որ աչքի էր ընկնում մեր վիպասանի բնաւորութեան մէջ՝ դա նրա կենսասիրութիւնն էր, անյագ կենսասիրութիւնը, որով մեծապէս տոգորւած են եւ նրա երկերը։ Կեանքով լեցուն՝ նա սիրում էր կեանքն իր ամբողջութեամբ, իր բոլոր արտայայտութիւնների մէջ։ Կան հեղինակներ, որ վախենում եւ փախչում են կեանքից, կամ ապաւինում են նրա մի անկիւնին։ Շիրվանզադէն, ընդհակառակը. Նրա սրտի դռները բաց էին կեանքի առաջ. Նա փնտրում էր կեանքը եւ ապրում էր այդ կեանքը իր էութեան բոլոր ֆիբրերով։ Եւ դրա համար էլ ասում էր յաճախ.

–Չկայ կեանքից աւելի գեղեցիկ բան։

Նա գրողներից շատերի նման չէր վարում ինքնամփոփ կեանք, ոչ էլ մեր միւս հեղինակների նման՝ սահմանափակւում էր լոկ հայ իրականութեամբ։ Ինչպէս իր երկերի մէջ, այնպէս էլ կեանքում, նրա դիապազոնը լայն էր. սիրում էր միշտ մարդկանց նոր շրջան, նոր ընկերութիւններ։ Երբ դրսից, ասենք Ռուսաստանից թէ արտասահմանից , նշանաւոր արւեստագէտներ էին գալիս Թիֆլիս, կարելի է ասել՝ հայ հեղինակներից առաջինը եւ թերեւս միակը, նա էր ծանօթանում նրանց եւ կապ ստեղծում։ Ու այդպիսով նա մեծ ծանօթութիւններ ունէր ժամանակի օտար շատ արւեստագէտների հետ։ Իսկ Անդրկովկասում նա մօտ էր թէ վրացի,թէ Թուրք գրեթէ բոլոր նշանաւոր գրողներին, արւեստագէտներին ու գործիչներին։ Ու թէ Թիֆլիսում, թէ Բաքւում նա իրեն այնպէս էր զգում, ինչպէս իր հարազատ տանը։ Այնպէս որ նա միանգամայն իրաւացի էր,երբ 29 թւին հայ գրողների դելեգացիայի շրջագայութեան ժամանակ Թիֆլիսում ու Բաքւում յայտարարում էր.

-Անդրկովկասն իմ հայրենիքն է. Ադրբէջանը՝ ծննդավայրս.Թիֆլիսը՝ իմ գրական գործունէութեան օրրանը, իսկ Հայաստանը նոր որդեգրել է զիս։

60 տարեկան հասակում մարդիկ սովորաբար սկսում են վախենալ մահից, ծեռք ենառնում,ինչպէս ասում են բոլոր"Նախազգուշական միջոցները",նրանից պաշտպանւելու։ Այսպէս չէր Շիրվանզադէն։ Մինչեւ վերջն էլ՝ քաջառողջ կազմւածքի տէր, նա անվախ նստում էր միջանցուկ հոսանքների մէջ, կէսգիշերին դուրս էր գալիս զբօսանքի. իսկ 19 թւին, երբ 62 տարեկան էր արդէն, պատանու խանդավառութեամբ պատրաստւում էր նորից արտասահման մեկնելու.

-Յունաստան, Եգիպտոս, Ամերիկա չեմ տեսել,- ասում էր նա։- Պէտք է գնալ այդ հին ու նոր աշխարհները տեսնել, նոր տպաւորութիւններ ստանալ։ Գրողը մի տեղ չպիտի նստի։ Պէտք է յաճախ ճամբորդել, ճամբորդել ու գրել։

Եւ երբ մենք ակնարկում էինք նրա տարիքը եւ պատերազմից յետոյ ստեղծուած դժւարութիւնները ճամբորդութեան համար, ժպտում էր.

- Տարի՞քը. դատարկ բան է։ Իսկ դժւարութիւններից թող երիտասարդները վախենան։

Ու, ինչպէս յայտնի է, յաջողութեամբ գնաց Թուրքիա, Եգիպտոս, ապա Ամերիկա եւ, իսկապէս, նոր տպաւորութիւններ ստանալով գրեց մի շարք ակնարկներ, որոնց մէջ հիանալի է մանաւանդ Նիւ Եորքի նկարագրութիւնը։

Նոր կեանք, նոր վայրեր տեսնելու ձգտումը միշտ վառ էր այդ ծերունու մէջ. մահից մի տարի առաջ էլ նա մի տեղ հանգիստ չէր նստում. մի ոտը Երեւան էր, միւսը՝ Թիֆլիս-Բաքու։ Մահից մի տարի առաջ, արդէն 76 տարեկան, մտածում էր նորից մի քանի ամսով գնալ Եւրոպա, ճամբորդել եւ տեսնել, թէ ինչ նորութիւններ կան։ Այնքան կեանքի ծարաւը եւ կեանքի երեւոյթներով հետաքրքրւելու բնազդն ուժեղ էր նրա մէջ:

Ինձ թւում է՝ այս կենսասիրութեան հետ էին կապւած նրա գրական հակումներն ու ճաշակը: Լինելով ռէալիստ՝ չէր սիրում յոռետես , սեթեւեթ, էսթետ հեղինակներին:Նա կեանքի, կենդանի կեանքի ճշմարտացի վերարտադրութիւնը բարձր էր դասում ամեն տեսակի գրական ուղղութիւններից:

- Ինչ ուղղութեամբ ուզէք՝ գրէք, միայն թէ մեզ տւէք մարդն իր հոգեբանութեամբ, իր վարմունքով . կեանք տւէք, յուզեցէք,ապրեցրէք մեզ:

Ձեւի կողմից լինելով կառուցիկ ու հաւաք գրող՝ չէր սիրում կառուցւած չունեցող, թափթփւած գրւածքներ: Լինելով սակաւախօս ու կոնկրէտ իր երկերում՝ չէր սիրում նաեւ ճոռոմ ու շատախօս հեղինակներին:

- Փքուն, գեղեցիկ բառեր գործածող հեղինակն ինձ յիշեցնում է գաւառացի,անճաշակ,հարուստ կին, որ գեղեցկութեան համար մի քանի շար ոսկի ու մարգարիտ է կախում վզին ու բոլոր մատները զարդարում է մատանիներով: Պէտք է գործածել այնքան բառ, որքան հարկաւոր է իրը եւ այս կամ այն վիճակը տալու համար: Աւելորդ բառը մթագնում է պատկերը:

Այստեղ նա հետեւում էր, ի հարկէ, ֆլոբերին, եւ, պէտք է ասած, մեծ համակրանք ունէր ֆրանսիացի այդ խստապահանջ արւեստագէտի հանդէպ: Առհասարակ Շիրվանզադէն շատ բարձր էր գնահատում ֆրանսիացի ռէալիստ հեղինակների (ֆլոբերի, Դոդէի,Մոպասանի) արւեստը, ու չէր թաքցնում որ ինքը որոշ չափով գտնւել է նրանց ազդեցութեան տակ:

- Աշխարհը Մոպասանի նման սքանչելի պատմող չի տեսել,- սիրում էր կրկնել նա,- իսկ Դոդէի հումորի նրբութիւնը հասկանալու համար պէտք է ապրել ֆրանսիայում:

Նա հիացմունքով էր խօսում մանաւանդ նրա "Նարաբի" մասին,որպէս քաղաքական ու հասարակական կեանքի սատիրայի:

Նա գրեթէ ամեն օր, որպէս աշխատակից, լինում էր "Մշակ" թերթի խմբագրատանը եւ ես յաճախ առիթ էի ունենում նրա հետ զրուցելու այս կամ այն խնդրի, մասնաւորապէս, ի հարկէ, գրականութեան շուրջ։

Կեանքը լայն չափերով սիրող եւ իսկական կեանքը վերարտադրող՝նա, կարդալով ընթացիկ գրականութիւնը զարմանում էր,որ երիտասարդ հեղինակները, պատերազմի արհաւիրքի օրերին, զբաղւում են իրենց անձնական նեղ ապրումներով ու չեն կարողանում կեանքն ընդգրկել, ծաւալուն գործեր տալ։

– Մեր երիտասարդ գրողները խիզախութիւն չունեն խոշոր գործերի համար։ Ա՜յ Պոոշեանը,քսան տարեկան պատանի, գրեց "Սոս եւ Վարդիթերը", Լերմոնտովը՝"Մեր ժամանակի հերոսը", Դիկկէնսը՝"Պիկւիկի կլուբը" եւ այլն։ Իսկ մեր երիտասարդները "Սիրտս ցաւում է","Սիրում եմ քեզ",մի քանի տող, թէ ոտանաւոր,եւ կամ՝ մի երկու էջ բան են նկարագրում,թէ պատմւածք է։ Նրանք կեանք չեն տալիս, այլ կեանքի պատառիկներ, որոնք լաւագոյն դէպքում ընթերցողի համար կարող են դեսերտ լինել, բայց ոչ սնունդ։

Ու անելով զաստրոնոմիական այս համեմատութիւնը, նա աւելացնում էր.

– Սիրտս ուզում է մի մեծ վէպ գրեմ մեր բուրժուազիայի կեանքից եւ դուրս բերեմ այսօրեայ գործիչներին։

– Այդ շատ լաւ կը լինի,վարպետ, բայց ինչո՞ւ ձեր կիսատ "Վարդան Ահրումեան"ը չէք շարունակում։ Ընթերցողներն սպասում են։

– Ճիշդ է, ես ընթերցողներին պարտ եմ այդ բանում. բայց հիմա, պատերազմի այս օրերին ո՞վ տրամադրութիւն ունի այդպիսի բան գրելու,– ասում էր նա տխրութեամբ եւ քիչ յետոյ աւելացնում յուզւած,– բայց գիտես, եթէ շարունակեմ լաւ բան կը լինի։ Հերոսներէս մէկը դառնալու է զեներալ, միւսը՝ արդիւնաբերող, երրորդը հոգեւորական։ Նպատակ ունէի այդպիսով ընդգրկել մեր կեանքի մի քանի կարեւոր ասպարէզ իր ուժեղ դէմքերով։

Սովետական շրջանում նա փորձեց շարունակել "Վարդան Ահրումեան"ը վաղուց յղացած իր ուժեղ բնաւորութիւնները տալու բուռն ցանկութեամբ: Բայց մի քանի գլուխ գրելուց յետոյ,դժբախտաբար, թողեց կիսատ: Երբ մի օր հարցրի պատճառը, նա տխրութեամբ խոստովանեց.

- Գրական յղացումը, եթէ ժամանակին գրի չի առնւում, յետոյ դժւար է գրել: Ինձնից քեզ մի խրատ. մի բան յղանալիս՝ գրի առ, յետոյ կը մշակես:

Տակիտոսի այդ միտքը նրան դուր էր եկել, բայց ինքը չէր գործադրում: Սակայն այդ անյաջողութիւնից Շիրվանզադէն չվհատեց. նրա կորովի, կենսունակ ոգին մինչեւ մահը լցւած էր ստեղծագործելու անզուսպ տենչով: Նրա վերջին գործը եղաւ, ինչպէս յայտնի է, մի կինո-սցէնար, որը գրեց մահից մի տարի առաջ եւ որը կրում է ճակատագրական վերնագիրը "Վերջին Շատրւանը":

Եւ իրօք, դա եղաւ նրա ստեղծագործութեան վերջին շատրւանը:

Կենսասէր լինելով, նա, բնականաբար կենսուրախ մարդ էր: Ընկերական շրջանում սիրում էր կատակներ, զւարթ խօսակցութիւն, սիրում էր ինչպէս ասում են երեւանցիք "ձեռ առնել" ընկերներին եւ երբեմն ինքն իրեն:Այդպէս էր նա առաջ, այդպէս էր եւ ծերութեան օրերին:

Ծերութիւն... նա այնքան լի էր կեանքով, որ նրան ծերունի ասելը չէր սազում, եւ նա ինքն էլ երբեք չէր սիրում ծերերի շրջանը,ինչպէս սիրում են սովորաբար ծերունիները: Ընդհակառակը, նա միշտ խուսափում էր նրանցից եւ գալիս նստում երիտասարդների մօտ:

- Զահլաս գնաց այդ ծերունիներից. մէկը ծանր է լսում, միւսը դանդաղ է խօսում, երրորդը յիշողութիւնը կորցրել է: Չեմ սիրում..:

Անգամ ծանր հիւանդութեան օրերին նա իր զւարթութիւնը չէր կորցնում եւ կատակում էր շրջապատողների հետ: Մահւանից մի տարի առաջ շատ լուրջ հիւանդացաւ՝ թոքերի բորբոքումով, այնքան լուրջ, որ ամեն րոպէ սպասում էին մահւան: Պառկած էր Երեւանի Երկրորդ հիւանդանոցում, առանձին սենեակում. որպէս զի ծեր սիրտը դիմանայ հիւանդութեան՝

բժիշկները շուտ շուտ կամֆորա էին սրսկում։ Բայց այդ բանը դուր չէր գալիս հիւանդին, եւ նա գթութեան քոյրերին չէր թողնում այդ անելու։ Մի օր էլ, երբ նա այդպիսի քմահաճութիւններ էր անում՝ ներս եկաւ մի երիտասարդ բժշկուհի թէ քոյր, եւ համարձակ մօտեցաւ հիւանդի մահճակալին։

- Ընկեր Շիրվան, չէ՞ որ դուք սիրում էք գեղեցիկ աղջիկներ. Թողէք ուրեմն ես ինքս սրսկեմ ձեզ..։

Հիւանդի դէմքին փշրուած ժպիտի նման մի բան խաղաց. նա ակնոցը բարձի տակից վերցնելով՝ դրեց աչքերին ու զննաբար նայեց աղջկան։

- Այո, ճիշդ է. գեղեցիկ աչքեր ունես։ Սրսկիր։

Մի ուրիշ անգամ նկարիչ Փանոս Թերլեմեզեանը, հիւանդին մխիթարելու համար ասում էր.

- Շուտ լաւացիր, Շիրվան, գնանք Թիֆլիս, քէֆ անենք. դու կը խմես, ես կը պարեմ։

- Չգիտեմ, Փանոս, ինչպէս կը վերջանայ իմ պատմութիւնը. գուցէ եւ մեռնեմ. բայց արի, աւելի լաւ է, հէնց հիմա պարի... քո պարից զոնէ չզրկուեմ։

Մի օր էլ, երբ այցելեցինք հիւանդին՝ նա մեզ ընդունեց մի տեսակ քմծիծաղով։

- Գիտես ի՞նչ,- ասաց հազիւ շնչելով,- երազիս Արաքսի ափին էի։ Գետի այն կողմը կանգնած էին Աբովեանը, Պատկանեանը, Րաֆֆին, Թումանեանը, Աղայեանը եւ կանչում էին ինձ։ Ես նրանց ասի՝ "Ածիլեմ յետոյ կը գամ։" Հիմա խնդրում եմ՝ մի մարդ ուղարկէք ածիլեմ,գուցէ գնալու կարիք լինի..։

Եւ այդպէս կատակում էր նա 75 տարեկան հասակում։ Այնքան կեանքը եւ ապրելու բնազդը ուժեղ էր նրա մէջ, որ նա հեգնում էր անգամ մահը եւ չէր կարողանում հաշտուել նրա անխուսափելիութեան հետ։

Այս ամենից եզրակացնել թէ կեանքը թեթեւ էր անցնում Շիրվանզադէի համար՝ սխալ կը լինէր։ Հաստատուն եկամուտ չունենալով՝ նա ապրում էր դժուարութեամբ, նոյնիսկ իր երեսունամեայ յոբելեանից յետոյ։ Չնչին հոնորարը, մի քանի հայ ընկերութիւնների եւ անհատների օժանդակութիւնը հազիւ հնարաւորութիւն էին տալիս ծայրը ծայրին հասցնել։

բնութիւն	nature	յոռետես	pessimist
օժտել	to endow	սեթեւեթ	affected,unnatural
կենսասէր	with a great love for life	էսթետ BW	formalist(in writing)
ուրիշ կերպ	otherwise	վերարտադրութիւն	reproduction
իրօք	indeed	հոգեբանութիւն	psychology
անյագ	insatiable	վարմունք	behaviour
տոգորել	to imbibe; to impress	թափթփել	to drop;to be neglected, to be careless
երկ	(literary) work	սակաւախօս	taciturn
անկիւն	corner	կոնկրէտ BW	concrete
ընդհակառակը	on the contrary	ճոռոմ	bombastic (speech, style)
ֆիբր BW	fiber	փքուն	inflated
ինքնամփոփ	selfcentered, reserved	մթագնել	to dim
սահմանափակել	to limit	խստապահանջ	exigent, exacting,precise
լոկ	only	թաքցնել	to hide
դիապազոն BW	tuning fork, concert pitch	հումոր BW	humor
կապ ստեղծել	to create relations,connections	սատիրա BW	satire
միակ	only	ընթացիկ	current
իրաւացի	just,with right	արհաւիրք	fright, terror
դելեգացիա BW	delegation	խիզախ	daring,bold
ծննդավայր	birthplace	դեսերտ BW	dessert
օրրան	cradle	գաստրոնոմիա	BW gastronomy
նախազգուշութիւն	precaution	բուրժուազիա	BW bourgeoisie
միջանցուկ հոսանք	airdraught	վարպետ	master
ակնարկել	to hint	կիսատ	half-done
դատարկ	empty; meaningless	տրամադրութիւն	disposition,mood
ակնարկ	glance,look	արդիւնաբերող	productive;industrialist
բնազդ	instinct	ընդգրկել	embrace
հակում	inclination	ասպարէզ	career

խրատ	advice	քմահաճութիւն	caprice
գրի առնել	to write down	մահճակալ	bed;bedstead
յղանալ	to conceive	փշրել	to break
մշակել	to cultivate; to elaborate	ակնոց	eyeglasses
Տակիտոս	Tacitus	բարձ	pillow
վհատել	to be discouraged,despondent	զննաբար	keenly, searchingly
կորովի	strong	մխիթարել	to console, to solace
անզուսպ	indomitable; unrestrained	լաւանալ	to improve;to get well;to restore(intr.)
տենչ	desire;passion	քէֆ անել	to amuse o.s.,to have fun,to enjoy life
կինօ-սցէնար BW	movie-scenario	պար	dance
ճակատագրական	fatalistic; decisive	զրկւել	to be deprived
վերնագիր	title	այցելել	to call on, to visit
շատրւան	fountain	քմծիծաղ	ironical smile
կենսուրախ	joyful of living	ածիլւել	to shave
կատակ	joke	զուցէ կարիք լինի	it may be necessary
խօսակցութիւն	conversation	հեգնել	to laugh at, to deride
ձեռ առնել	to pull one's leg	հաշտւել	to reconcile (intr.)
սազել	to fit,to suit	անխուսափելի	inevitable
խուսափել	to avoid	եզրակացնել	to conclude
զահլա BW	mood	թեթեւ	light
ծանր լսել	to be hard of hearing	հաստատուն	stable,fixed permanent
թոքերի բորբոքում	pneumonia	եկամուտ	income
կամֆորա BW	camphor	յոբելեան	jubilee
սրսկել	to inject	չնչին	tiny,minute small
գթութեան քոյր	sister of charity	հոնորար BW	honorary
կենսունակ	lively	անհատ	individual
բժիշկ	physician	հնարաւորութիւն	possibility,opportunity
բժշկուհի	lady physician	ծայրը ծայրին հասցնել	to make the ends meet

ՁԵՌՔԻ ՆՈՐ ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐ

Վերջերս մեր ռեսպուբլիկայի արտադրական ձեռնարկութիւնների շարքը մտաւ մի նոր գործարան: Այն հիմնադրուել է Երեւանի ժամացոյցի նախկին գործարանի բազայի վրայ եւ թողարկելու է ձեռքի տարբեր տեսակի ժամացոյցներ՝ ոսկուց գեղարուեստօրէն ձեւաւորուած, ապարանջանով, առանց ապարանջանի եւ նորաձեւ այլ տիպերի:

Գործարանի կոլեկտիվը համալրուած է միջնակարգ կրթութիւն ունեցող պատանիներով ու աղջիկներով, Սովետական Միութեան այլ քաղաքներից հրաւիրուած որակեալ մասնագէտներով:

Գործարանում արդէն սկսել են թողարկել "Նաիրի" մակնիշի (մարկայի) ձեռքի ժամացոյցներ, որոնք շատ կարճ ժամանակամիջոցում արդէն յայտնի են դարձել Սովետական Միութեան շատ վայրերում: Նոր ժամացոյցների համար օգտագործւում են թանկարժէք ու կիսաթանկարժէք քարեր:

Նորաստեղծ գործարանը գնալով աւելի է ընդարձակւելու: Եօթնամեակի վերջում ժամացոյցների թողարկումը այստեղ հասցւելու է տարեկան 500 հազար հատի: Այդ ծրագիրը իրագործելու համար արդէն նախագծւել ու կառուցւում է գործարանի արտադրական նոր առանձնաշէնք, որը հագեցւելու է բարձրորակ սարքաւորումներով:

Այժմ գործարանում նախապատրաստական եռանդուն աշխատանքներ են տարւում "Սեւան" մակնիշով մատանի ժամացոյցներ արտադրելու ուղղութեամբ: Այդ հետաքրքրական ժամացոյցի մասսայական թողարկումը սկսւելու է օրերս:

Կիսամեակի վերջում գործարանում թողարկւելու են եւս նոր տիպի՝ "Երեւան" մակնիշով տղամարդկանց ձեռքի ժամացոյցներ:

("Սովետական Հայաստան" ամսագրից)

ժամացոյց		watch
ձեռքի ժամացոյց		wristwatch
ռեսպուբլիկա	BW	republic
արտադրել		to produce
ձեռնարկութիւն		enterprise
շարք		serial;series
գործարան		factory
բազա	BW	base,basis
թողարկել		to deliver
տեսակ		kind;category
տարբեր		different
ձեւաւորել		to shape
ապարանջան		bracelet
նորաձեւ		fashionable; new
տիպ	BW	type
կոլեկտիվ	BW	collective
համալրել		to complete,to fill out
միջնակարգ		highschool
կրթութիւն		education; instruction
պատանի		young man
Սովետական Միութիւն		Soviet Union
հրաւիրել		to invite
որակեալ		qualified
մասնագէտ		specialist, expert
մակնիշ		trademark
մարկա	BW	mark
կարճ		short
ժամանակամիջոց		period
վայր		place
օգտագործել		to use;to profit
թանկարժէք		precious
կիսաթանկարժէք		semiprecious
քար		stone
նորաստեղծ		recently created, established
գնալով		gradually
ընդարձակուելու է		is going to be enlarged
հասնել		to reach
ծրագիր		program
իրագործել		to realize;to fulfill
նախագիծ		outline;sketch
առանձնաշէնք		special building
առանձին		alone, by itself
շէնք		building
հագեցնել		to invest
բարձրորակ		of high quality
սարքաւորում		equipment
նախապատրաստական		preparatory
աշխատանք տանել		to work
մատանի		ring
ուղղութիւն		direction;goal
մասսայական	BW	massiv
կիսամեակ		smestre, semiannual

Official language

ԴԻՄՈՒՄ

(Քաղուած "Սովետական Հայաստան" ամսագրից)

Կատարուեց մեծ իրագործութիւն: Պատմութեան մէջ առաջին անգամ մարդը տիեզերք թռաւ:

1961 թուականի ապրիլի 12-ին, Մոսկվայի ժամանակով՝ ժամը 9-ն անց 7 րոպէին "Վոստոկ" տիեզերանաւը, որի մէջ մարդ կար, բարձրացաւ տիեզերք եւ, երկրագնդի շուրջը թռիչք գործելուց յետոյ, բարեյաջող կերպով վերադարձաւ մեր Հայրենիքի՝Սովետների երկրի սրբազան հողը:

Դա բնութեան ուժերի նկատմամբ մարդու անօրինակ յաղթանակն է,գիտութեան եւ տեխնիկայի մեծագոյն նուաճումը, մարդկային բանականութեան յաղթութիւնը: Մարդու՝ տիեզերական տարածութիւն թռիչքներ կատարելու սկիզբը դրուեց:

Անցեալում յետամնաց ցարական Ռուսաստանը չէր կարող անգամ երազել առաջադիմութեան պայքարում այդպիսի սխրանքներ կատարելու մասին,տեխնիկա-տնտեսական տեսակէտից առաւել զարգացած երկրների հետ մրցելու մասին:

Երբ բանւոր դասակարգը 1917 թուականին Հոկտեմբերին իշխանութիւնը վերցրեց իր ձեռքը, շատերը, նոյն իսկ ազնիւ մարդիկ՝ կասկածում էին, թէ, նա արդեօք կարո՞ղ է կառավարել երկիրը,պահպանել էկոնոմիկայի, գիտութեան եւ տեխնիկայի զարգացման թէկուզ նուաճուած մակարդակը:

Եւ ահա ... մեր երկիրն առաջ անցաւ միւս բոլոր պետութիւններից եւ առաջինը հարթեց տիեզերքի ուղին: Սովետական Միութիւնը առաջինն արձակեց միջմայրցամաքային բալիստիկ հրթիռը. առաջինը բաց թողեց երկրի արհեստական արբանեակը. առաջինը տիեզերանաւ ուղարկեց լուսին. ստեղծեց արեգակի առաջին արհեստական արբանեակը. իրագործեց տիեզերանաւի թռիչք վեներա մոլորակի ուղղութեամբ: Կենդանի էակներ վերցրած սովետական տիեզերանաւերը միմեանց յետեւից թռիչքներ էին գործում դէպի տիեզերք եւ վերադառնում երկիր:

...Տիեզերքի իւրացման յաղթանակները մենք համարում ենք ոչ միայն մեր ժողովրդի, այլեւ ամբողջ մարդկութեան նուաճումը։ Մենք ուրախութեամբ դրանք ի սպաս ենք դնում բոլոր ժողովուրդներին, երկրագնդի բոլոր մարդկանց առաջադիմութեան, երջանկութեանն ու բարեկեցութեանը։ Մեր նուաճումները եւ յայտնագործութիւնները մենք ի սպաս ենք դնում ոչ թէ պատերազմին, այլ ժողովուրդների խաղաղութեանն ու անվտանգութեանը։

Գիտութեան ու տեխնիկայի զարգացումը անսահման հնարաւորութիւններ է ստեղծում բնութեան ուժերին տիրելու եւ դրանք մարդու բարօրութեանը ծառայեցնելու համար. այդ նպատակով նախ եւ առաջ հարկաւոր է խաղաղութիւն ապահովել։

Այս հանդիսաւոր օրը մենք նորից բոլոր երկրների ժողովրդներին ու կառավարութիւններին ենք դիմում խաղաղութեան կոչող խօսքով։

Թող բոլոր մարդիկ, ռասսաներից եւ ազգերից, մաշկի գոյնից, դաւանանքից եւ սոցիալական պատկանութիւնից անկախ, բոլոր ուժերը գործադրեն ամբողջ աշխարհում կայուն խաղաղութեան ապահովման համար։ Վերջ տանք տպառազինութիւնների մրցավազքին։ Ընդհանուր եւ լրիւ զինաթափում կատարենք միջազգային խիստ վերահսկողութեան տակ։ Դա կը լինի վճռական ներդրում խաղաղութեան պաշտպանութեան սրբազան գործում։...

...Առա՜ջ, դէպի նոր յաղթանակներ յանուն մարդկութեան խաղաղութեան, առաջադիմութեան ու երջանկութեան։

Մոսկվա, Կրէմլ
1961 թուականի Ապրիլի 12

դիմում	address, appeal	միմեանց յետեւից	after each other
կատարել	to accomplish	իւրացում	appropriation
տիեզերք	universe	համարել	to consider
տիեզերանաւ	space-ship	ի սպաս դնել AA	to put in the service of
երկրագունդ	globe, Earth	առաջադիմութիւն	progress
թռիչք գործել	to fly	բարեկեցութիւն	welfare
բարեյաջող	successful	յայտնագործութիւն	reveleation: disclosure
սրբազան	holy, sacred	բարօրութիւն	welfare
անօրինակ	unmatched	նպատակ	aim; goal
նուաճում	conquest	ապահովել	to assure
բանականութիւն	reason, thinking	հանդիսաւոր	solemn
տարածութիւն	extension	ռասսա BW	race
յետամնաց	backward	մաշկի գոյն	color of skin
սխրանք	great deed, feat, exploit	դաւանանք	confession, belief, denomination
տեսակէտ	point of view	սոցիալական BW	social
մրցել	to compete	պատկանութիւն	pertaining
բանուոր դասակարգ	laboring class	անկախ	independent
մակարդակ	level	կայուն	stable
ուղի հարթել	to smooth the way; to prepare the ground	սպառազինութիւն	(re)armament
արձակել	to launch	մրցավազք	race, competition
միջմայրցամաքային	intercontinental	լրիւ	complete(ly)
բալիստիկ BW	ballistics	զինաթափում	disarmament
հրթիռ	rocket	վերահսկողութիւն	surveillance
արհեստական	artificial	ներդրում	investment
արբանեակ	satellite	յանուն AA	in the name of
մոլորակ	planet	խաղաղութիւն	peace

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ
Բ ՄԱՍ

SECOND PART

In the Second Part the explanations are given in Armenian, exceptionally in English.

ՄԱՅՐԸ

գրեց Յովհաննէս Թումանեան

Մի գարնան իրիկուն դռանը նստած զրոյց էինք անում, երբ այս դէպքը պատահեց: Այդ դէպքից յետոյ չեմ մոռանում այն գարնան իրիկունը:

Ծիծեռնակը բուն էր շինել մեր սրահի օճորքում: Ամէն տարի աշնանը գնում էր, գարնանը ետ գալիս, ու նրա բունը միշտ կպած էր մեր սրահի օճորքին:

Եւ գարունն էր բացւում, եւ մեր սրտերն էին բացւում, հէնց որ նա իր զւարթ ճիչերով յայտնւում էր մեր գիւղում ու մեր կտուրի տակ:

Եւ ինչ քաղցր էր, երբ առաւօտները նա ծլվլում էր մեր երդիկին, կամ երբ իրիկնապահին իր ընկերների հետ շարւում էին մի երկար ձողի վրայ ու երգում:

Եւ ահա նորից գարնան հետ վերադարձել էր իր բունը: Ձու էր ածել, ճուտ էր հանել ու ամբողջ օրը ուրախ ճչալով թռչում՝ կերակուր էր բերում իր ճուտերին:

Այն իրիկուն էլ, որ ասում եմ, եկաւ, կտցում կերակուր բերեց ճուտերի համար: Ճուտերը հրճւանքով բնից դուրս հանեցին դեղին կտուցները:

Այդ ժամանակ, ինչպէս եղաւ, նրանցից մինը, գուցէ ամենից անզգոյշը կամ ամենից սովածը, շտապեց, աւելի դուրս ձգւեց բնից ու ընկաւ ներքեւ:

Մայրը ճչաց ու ցած թռաւ ճուտի ետեւից: Բայց հենց այդ վայրկեանին, որտեղից որ էր, դուրս պրծաւ մեր կատուն, վեր թռցրեց փոքրիկ ճուտը:

"Փի̂շտ,փի̂շտ", վեր թռանք ամենքս, իսկ ծիծեռնակը սուր ծղրտալով ընկաւ կատւի ետեւից, նրա շուրջը թռթռալով ու կտցահարելով, բայց չեղաւ: Կատուն փախաւ մտաւ ամբարի տակը: Եւ այս ամենն այնպէս արագ կատարւեց, որ անկարելի էր մի բան անել:

Ծիծեռնակը դեռ ծղրտալով պտտւում էր ամբարի շուրջը, իսկ մենք, երեխաներս, մի-մի փայտ առած, պտրտում էինք ամբարի տակ, մինչեւ կատուն դուրս եկաւ ու փախաւ դէպի մարագը, դունչը լիզելով:

Ծիծեռնակը դատարկ կատւին որ տեսաւ, մի զիլ ծղրտաց ու թռաւ, իջաւ դիմացի ծառի ճիւղին: Այնտեղ լուռ վէր կեցաւ:

Մին էլ տեսանք, յանկարծ ցած ընկաւ մի քարի կտորի նման: Վազեցինք, տեսանք՝ մեռած ընկած էր ծառի տակ:

Մի գարնան իրիկուն էր, որ այդ դէպքը պատահեց: Շատ տարիներ են անցել, բայց ես չեմ մոռանում այդ գարնան իրիկունը, երբ ես առաջին անգամ իմացայ, որ ծիծեռնակի մայրն էլ մայր է, ու սիրտն էլ սիրտ է, ինչպէս մերը:

զրոյց անել	- խօսակցել
բուն	-(գրական՝)բոյն, թռչունների բնակարանը
կպչել, կպած	-փակչել,փակած
գարունը բացւում է	- սկսում է
սիրտս բացւում է	- ուրախանում եմ
կտուր	- երդիք,տանիք
իրիկնապահին	- երեկոյեան
հրճւանք	- հաճոյք,ուրախութիւն
դուրս պրծաւ	- ելաւ,յայտնւեց
վեր թռցրեց	- փախցրեց
ետեւից ընկնել	- հալածել
կտցահարել	- կտուցով զարկել
բայց չեղաւ	- բայց չյաջողւեց
ամբար	- շտեմարան
վէր գալ	- իջնել,թառել
պտրտել (պտռտել)	- փնտռել,փնտռտել
մարագ	- յարդի շտեմարան
օճորք	- առաստաղ

ՆԱՄԱԿ ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻՆ

Ամենասիրելի Յովհաննէս Թումանեանին

Խորապէս ցաւում եմ, որ հնարաւորութիւն չունեմ անցնել Ձեզ մօտ եւ ամենախորին յարգանքներս բերել Ձեզ, մեր խօսքի ամենամեծ վարպետին, մեր ամենասիրելի պոետին: Այսօր ժամը չորսին ես Ալեքսանդր Ֆեոդորովիչի հետ մեկնում եմ Երեւան, գնում եմ մեր երկիրը, խորապէս համոզւած լինելով, որ միմիայն այնտեղ, մեր հայրենի եզերքում մենք պիտի հնարաւորութիւն ունենանք ստեղծելու մեր կուլտուրան, մեր գրական կուլտուրան, որը պէտք է բխի ձեր ստեղծագործութեան՝ որպէս տեղական ստեղծագործութեան, տրադիցիաներից:

Դառը սրտով գնում եմ այստեղից, ցաւելով որ հնարաւորութիւն չունեմ Ձեզ մօտ լինելու եւ հետեւելու Ձեր ամոքմանը, նաիրեան խօսքի աւագ նահապետի ամոքմանը, որից դեռ այնքան իմաստուն եւ այնքան լիքը սպասումներ ունի հայրենի եզերքը:

Սիրելի Թումանեան, ես խորապէս հաւատում եմ, որ Դուք կ’առողջանաք, կը կազդուրւէք եւ կը նւիրէք մեզ Ձեր ’’ Հազարան բլբուլը’’, որի մասին լսել եմ ես մանկութիւնից եւ սրտատրոփ սպասում եմ կատարմանը: Ընդունեցէք իմ՝ Ձեր կրտսերագոյն աշակերտի ամենաջերմ յարգանքները, հաւատացած եղէք, որ ես Երեւանում սրտատրոփ պիտի սպասեմ Ձեր վերադառնալուն եւ պիտի գամ Թիֆլիս՝ իմ անհուն ակնածանքը բերելու Ձեր վաստակած եւ իմաստուն կեանքին, որ նւիրել է հայրենի եզերքին այնքան ”շռայլ” ձեռքով հոգեկան բարիքներ ու գանձեր:

Նորից եւ նորից ցանկանում եմ Ձեզ լիակատար առողջութիւն:

Համբուրում եմ Ձեր վաստակած ձեռքը:

Ձեր՝ Եղիշէ Չարենց

Մոսկվա, 1 Յունւարի 1928 թ.

տրադիցիա	- աւանդութիւն	ամոքել	- մխիթարել,սփոփել
գանձ	- հարստութիւն	նաիրեան	- հայկական. Նաիրի՝ հին Հայաստանի հարաւ-արեւմտեան մասը.
հնարաւորութիւն	- կարելիութիւն		
անցնել ձեզ մօտ	- ձեզ հանդիպել	աւագ	- մեծ
պոետ	-բանաստեղծ	կրտսեր	- երիտասարդ, փոքր
կուլտուրա	- մշակոյթ	սրտատրոփ	- անհանգիստ,անհամբեր
ստեղծագործութիւն	- արւեստի գործ		

ԵՕԹՆ ԵՂԲՕՐ ԱՐԻՒՆԸ

գրեց Վ.Անանեան

Կարծես ծիածանի բոլոր գոյներն էլ արտացոլւած էին Գիժ սարի լանջին փռւած եւ աչք հմայող ընդարձակ ու ծաղկանկար գորգի վրայ։

Բնասէր տղաների խումբը, ծերունի որսկան Ասատուր պապի հետ, կանգ առաւ եւ լուռ հիացմունքով նայում էին կանաչի մէջ վառ կարմրին տւող լեռնային խոշոր կակաչներին։ Հեզ հարսների նման իրենց երկար թարթիչները խոնարհել էին նարգիզները, որ կարծես չէին համարձակում գլուխները բարձրացնել ու նայել իրենց մօտեցող մարդկանց։ Նարնջագոյն "խնկի ծաղիկները" արբեցուցիչ խնկաբոյր էին տարածել։ Նրանց մօտ, բարակ, երկար ցօղունների վրայ, իրենց գլուխներն էին խոնարհել "եղածաղիկները", որոնց ծաղկաթերթիկները պսպղում էին հեռուից, կարծես օծւած լինէին Մայիսի դեղին իւղով։ Հնում՝ սնահաւատ սարւոր պառաւները այդ ծաղկից դնում էին խնոցու վրայ, որ սերից շատ իւղ ստացւի։ ճերմակ "լուի ծաղիկները" աճել էին խմբերով, խոտերի մէջ համեստօրէն թաքնւել էին չափազանց փոքրիկ եւ նրբագեղ թերթիկներով կիտրոնագոյն ծաղիկներ, որոնց բոյրը տղաները զգում էին դեռ հեռուից։ Իսկ "զանգակների" լազուր տեսքից՝ լանջը հեռուից կապտին էր տալիս։

Շոգն սկսւելու հետ ծաղկոտ լանջերը լցւել էին ամեն տեսակի մեղուների եւ միջատների միալար ժխորով։ Արեւի շողերից ջերմացած խոտերն ու ծաղիկները հազար տեսակի բոյր էին արձակել եւ օդը լցրել այնպիսի անուշահոտութեամբ, որ մարդուս արբեցնում էր եւ դարձնում երազկոտ։ Անջրդի եւ արեւոտ այդ լանջին բուրում են ոչ միայն ծաղիկները, այլ եւ խոտերը։ Այնտեղ, սովորական կանաչն անգամ անուշահոտ բոյր ունի, որովհետեւ նրան հիւսւած աճել են համեմների բոլոր վայրի տեսակները՝ ուրցը, թերը,գինձը, սամիթը։ Այդ ծաղիկների մէջ, այդ բուրմունքներից արբեցած, դէպի վեր էին գնում պատանիները եւ նրանց համար ողջ աշխարհը ծաղիկ էր ու թիթեռ։

- Կամօ, Արմէն, մի տեսէք՝ ինչ գոյներ են...Սարի կակաչներ եմ գտել. տեսէք, իսկի մեր գիւղի կակաչներին նման չեն,- կանչում էր Յասմիկը մի փոքրիկ ձորակից, ուր կարծես լեռնային ծաղիկների մի ցուցահանդէս էր։- Սպասեցէք, ես հիմա վազելով կը հասնեմ ձեզ։

Եւ կօշիկներն ու գուլպաները հանելով՝ նա ոտաբոպիկ վազեց դէպի տղաները։

-Պապի, Գիլլիի ափերին էլ ծաղիկներ շատ կան. ինչի՞ էսպէս նուրբ հոտ չունեն,- հարցրեց նա նարգիզների փունջը հոտոտելով։

- Էնտեղ խոնաւ է, աղջիկ ջան։ Որտեղ ջուրը քիչ է, արեւը շատ՝ էնտեղ խոտն էլ, ծաղիկն էլ անուշ հոտ ունեն,- բացատրեց ծերունի ։ Տե՛ս, էս խոտն ու ծաղիկն ուտող կովի կաթն ու իւղն էլ է համով լինում։ Բա, աղջիկ ջան, էդ բանը կենդանիներն էլ գիտեն, որ դաշտերի ծով խոտը թողած, միշտ գնում են խոտից աղքատ ղրերը։ Էս խոտի համը ուրիշ է։ Գիտե՞ս, թէ էս ծաղիկները քանի՛ քանի՛ մարդի կեանք են ազատել։ Տես, էդ դեղին մեծ ծաղիկները տեսնո՞ւմ ես, դրանց մենք "ղանթափի" ենք ասում։ Մի տարի որսկան Կարօն գիշերը մնացել էր սարում, ձիւնի մէջ, սպանուած պախրի կողքին։ Էնպէս էր մրսել, որ թոքերը բռնւել էին, շունչը կտրւում էր։ Անպայման կը մեռնէր եթէ էդ ծաղիկը չլինէր։ Եփեցին, ջուրը խմցրին, մարդը քրտնեց, փրկւեց։

"Ա՜յ, էն երկար տերեւներին մենք "եզան լեզու" ենք ասում. ինչ վէրքի վրայ դրիր՝ կը լաւացնի։ Մի տարի քարափից վէր ընկայ. թեւս կոտրւեց, էդ խոտով լաւացրին։ Չիբանի վրայ դրիր՝ կը հասցնի, կը պատռի. եփեցիր, ջուրը խմեցիր՝ հազը կը կտրի, ոնց որ դանակով կտրես։ Իմ լուսահոգի քաւոր Մուքէլը ասում էր. "մեր սարերում ծաղիկ կայ, որ եփես ջուրը խմես՝ քսան տարով կը ջահելանաս"։

Ապա քիչ լռելուց յետոյ՝ իմաստնալից աւելացրեց.

- Արեւից է ... բոլորը արեւից է..։

Եւ իրօք, այդ լանջերին իշխում էր հարաւի հզօր արեւը, սկզբնաղբիւրը այդ բոլոր հմայիչ գոյների եւ արբեցնող անուշահոտութեան։

Աչք հրապուրող այդ անձեռագործ գոյների մէջ արեան նման կարմիր, կարմի՜ր մի ծաղիկ հեռւից գրաւեց պատանիների ուշադրութիւնը։ Կամօն զւարթ ոստումներով վազեց դէպի այդ անսովոր ծաղիկը։

- Ես պիտի պոկեմ,- ճչաց Յասմիկը եւ այծեամի նման թեթեւ սուրաց նրա ետեւից։ Արմէնը վազքով հետեւեց նրան։

- Սպասիր, ձեռք չտաս, Կամօ... ես դա իր հողով պիտի տանեմ, տանը պահեմ։

Աղջիկը չոքեց, խնամքով արմատից հանեց երկար ցօղունով, շլացուցիչ ալ-կարմիր ծաղիկը եւ հպեց իր կրծքին։

- Ի՞նչ լաւն է... Սա ի՞նչ ծաղիկ է, պապի, ես կեանքումս էսպէս սիրուն ծաղիկ չեմ տեսել,- հարցրեց նա ծաղիկը գուրգուրելով։

- Օխտն աղբօր արին են ասում դրան..։ Ասում են, արնից է դուրս եկել...համա, հազար մարդից մէկը էդ ծաղիկը չի տեսնում իր կեանքում, երեխէք ջան։ Հհա վաթսուն տարի է պտտում եմ էս սարերում, երկու անգամ եմ պատահել էդ ծաղկին. մէկը ջահել վախտս գտայ, տարայ փէշքէշ տւի մեր նարգիզին (իմ խելքով սիրահարուած էի վրէն)․ մէկն էլ, միտս չի,Նապոնի կուին էր, երբ էր...Աղջիկ ջան, էդ ծաղիկը տանը չի ապրիլ, դրան սարի մաքուր օդ է հարկաւոր։ Դա օտար հողում կը մեռնի..։

Իսկապէս աննման էր այդ ծաղիկը։ Ո՞ր նկարիչը կարող էր կտաւի վրայ տալ այն նրբին ու ներդաշնակ, հազիւ նկատելի նրբերանգները, որ ունի այդ ծաղիկը։ Յասմիկը հոտոտում էր, այտում քսում քնքուշութեամբ ու խնդրում․

- Պապի, ի՞նչ կը լինի պատմես էս ծաղկի մասին, ի՞նչի են "Եօթն եղբօր արիւն" անւանում նրան։

- Ինչ պատմեմ,աղջիկ ջան․ ասում են՝ հին ժամանակ սարերում երկու քրդի ցեղ է եղել իրար թշնամի,- սկսեց ծերունին մի քարի նստելով եւ ծխամորճը լցնելով։ Պատանիները նստոտեցին նրա շուրջը եւ ամբողջովին դարձան լսողութիւն։

- Էդ ցեղերից մէկի մէջ եօթն եղբայր են լինում, եօթն իգիթ, բոլորն էլ ձիերի վրայ մեծացած, բոլորն էլ զէնքի մէջ կորած, բոլորն էլ սիրուն ու քաջ։ Դրանք մի քոյր են ունենում, որ արեւին ասում է՝ դուրս մի գալ, ես լոյս կը տամ աշխարհին, իսկ լուսնեակը նրա սիրուն տեսքից՝ ամօթից դուրս չէր գալիս ամպի տակից։ Թշերը՝ ոնց որ ձիւն ու արիւն իրար խառնած, աչքերը՝ սիրոյ, բարութեան կրակով լիքը, ունքերը՝ ծիծեռնակի թեւեր, հասակը՝ չինար։ Ջէյրանի նման անհոգ, թռվռալով մեծանում է էդ աղջիկը սարերում, ծաղիկների մէջ ու նրա քաջ եղբայրների ահից ոչ ոք սիրտ չի անում մօտենալ նրան։

Հարեւան թշնամի ցեղի պետը՝ Աւղալ բէկը մարդիկ է ուղարկում եօթն եղբօր մօտ, թէ՝ ձեր քրոջը տուէք ինձ կնութեան, դիմացը կը տամ իմ նախիրների եւ ձիերի կէսը եւ մէկ էլ իմ բարեկամութիւնը։

Ցեղով խորհուրդի են նստում ու որոշում են աղջկանը տալ, քանի որ Աւղալ բէկը իր ցեղով ուժեղ էր եւ եթէ մերժէին՝ մեծ վնասներ կը հասցնէր իրենց։

Աղջիկն ասում է․"Ես էդ մարդին չեմ սիրում․ ես իմ արիւնակիցների արիւն թափող բէկին սիրել չեմ կարող։ Բայց կը գնամ, եթէ իմ եղբայրները ուզում են։ Ես մեր ցեղը փրկելու համար կը գնամ... կը գնամ ինչպէս զոհ։"

Էդ ժամանակ փոքր եղբայրը, որ բոլորից էլ տաքարիւն է լինում,իրեն թուրը հանում է՝ խփում քարերին ու ասում․

- Ես իմ քրոջ զոհ չեմ տալ։Ես աշխարհքի տակին մի քոյր ունենամ, էն էլ իմ թշնամուն տամ։

Մեծ եղբայրը աւելի հեռատես, կեանք տեսած, զգոյշ մարդ, ուզում է համոզել, բայց միւսներն անցնում են ամենափոքրի կողմը ու որոշում են իրենց քրոջը չտալ իրենց ատելի մարդուն:

Էն ժամանակ Աւդալ բէկը իր մարդկանցով գալիս է աղջկան ուժով տանելու: Գալիս է, ձիուցն իջնում ու ոնց որ էն ժամանակւայ աղաթն էր պահանջում, օխտն ախպօրը մէկ մէկ կուի է կանչում:

Պապենական կարգը էն էր, որ առաջ մեծ եղբայրը պէտք է կուի դուրս գար. բայց մեծ եղբայրը զգոյշ, փորձւած մարդ է լինում ու ինքն էլ մեծ ընտանիքի տէր, չի ուզում սպանւի ու մնում է մոլորւած,կանգնած: Մանաւանդ որ իրենք բաց դաշտում են լինում, իսկ Աւդալ բէկը քարերի մէջ դիրք մտած:

Էն ժամանակ քոյրը վերցնում է աւագ եղբօր կարաբինը ու երգով ասում իրեն խօսքը:-

Ու Միրուք Ասատուրը, իր հին,խանձւած, բայց զգացմունքով լի ձայնով երգեց աղջկայ նախատինք-երգը ուղղւած իր մեծ եղբօրը:

- Քրդերէնից դժւար է թարգմանել,- ասաց նա,- բայց էս երգի միտքը կարճ էս է, որ եթէ ես աւագ եղբայր չունեմ, եթէ իմ եղբօր գլխին քուլոզ չկայ,լաչակ է կապած, ես ինքս իմ արիւնով կը պաշտպանեմ իմ պատիւը:

Լսում է էդ ծանր խօսքերը մեծ եղբայրը, կարաբինն առնում է քրոջ ձեռքից, քուլոզը հանում է դնում քարին ու դիրք մտնում: Սկսւում է կռիւը ու մեծ եղբայրը սպանւում է էդ կուում:

Էն ժամանակ քոյրը իր մազերից պոկում է մի փունջ, դնում եղբօր դիակի վրայ ու երգով գովում է նրա խելքն ու հեռատեսութիւնը: Երգում է աղջիկը իր ողբը, վերցնում է եղբօր նկած կարաբինը ու շարունակում է նրա կիսատ թողած կռիւը:

Էն ժամանակ առաջ է գալիս երկրորդ եղբայրը, համբուրում է քրոջ մարմար ճակատը, նրան հեռացնում է կուի տեղից ու կանչում թշնամուն.

- Է՞յ, նամարդ, դու մեր արիւնը կը տեսնես, բայց մեր քրոջը չես տեսնի քո կեղտոտ յարկի տակ..:

Ու քուլոզը հանում է,դնում քարին ու շարունակում է մեծ եղբօր կիսատ թողած կռիւը:

Հակառակորդ ցեղապետը անւանի կրակող էր եւ դուշ էր վէր բերում երկնքից իր գնդակով: Ու հէնց առաջին կրակոցով նա երկրորդ եղբօրն էլ է սպանում:

Քոյրը մի փունջ մազ էլ է պոկում իր գլխից, դնում է եղբօր դիակի վրայ ու էլի երգում:

Ու էդպէս մէկ մէկ սպանւում են բոլոր եղբայրները: Ամէն սպանւողի վրայ աղջիկը մի երգ է ասում ու ամեն եղբօր դիակի վրայ իր մազերից մի փունջ է դնում:

Ու երբ սպանւում է վերջին եղբայրը, քոյրը իր մազերի վերջին փունջը դնում է իր վերջին եղբօր վրայ ու երգում իր վերջին երգը: Ու էդ երգը ողբ չի լինում, այլ կուի հրաւէր: Վերցնում է նա ամենափոքր եղբօր կարաբինը, կապում է նրա պատրոնտաշը, դնում է նրա մետաքսով փաթաթւած քոլոզը ու շարունակում է իր եղբայրների կիսատ թողած կուիւը՝ իրենց օջախի պատւի համար:

Աւղալ բէկը տապ է անում քարերի ետեւը, բայց աղջկայ արծւի աչքը գտնում է նամարդ թշնամուն, ու նրա ուղարկած արդար գնդակը կէս է անում իր եղբայրների արիւնը թափողի սեւ սիրտը..:

Ահա էդ իգիթ եղբայրների արիւնը ջրում է մայր հողը ու հողից դուրս է գալիս նրանց արեան նման կարմիր ու արդար էս ծաղիկը:-

Ծերունին վերջացրեց "Եօթն եղբօր արիւն" կամ "Աղբրանց արիւն" կոչւող ծաղկի հեքեաթը եւ լուռ ու յուզւած շարունակեց ծխել իր հնամենի ծխամորճը:

Լռութիւնը տեւեց բաւական երկար:

Վերջապէս Ցասմիկը սրբեց իր աչքերը, վեր կացաւ, մօտեցաւ Կամոյին եւ տխուր ժպտալով ասաց.

- Թող, այս ծաղիկն ամրացնեմ կրծքիդ: Ինձ թւում է՝ դու էլ ասպետաբար կը պաշտպանէիր քրոջդ պատիւը, այնպէս չէ՞,- հարցրեց նա աչքերը չարաճճիօրէն փայլեցնելով:

Կամօն գլուխը կախ գցեց.

- Ես քոյր չունեմ. բայց թէ քեզ նամարդ մարդ մօտենայ՝ կտոր կտոր կանեմ:

Ասաց ու կարմրելով ծիծաղեց:

- Հաւատում եմ,- ժպտալով պատասխանեց աղջիկը:

- Է՞հ, մարդ մի քոյր էլ չունի, որ նրա համար սպանւի,սիրտը հովանայ,- կատակեց Գրիգորը, թէեւ Միրուք Ասատուրի պատմութեան ազդեցութեան տակ նրա սիրտն էլ էր լցւել:

Գրիգորի կատակը ցրեց պատանիներին համակած տխրութիւնը: Նրանք վեր կացան եւ ծաղիկներ քաղելով, խնդալով ու թռվռալով շարունակեցին իրենց ճանապարհը դէպի ժանճաքար:

Ծեր որսորդը լսում էր նրանց զւարթ կատակները ու յիշում իր անցած,գնացած ջահելութիւնը.-"Սրանք էլ են ծաղիկներ, էլի",- մտածում էր նա, հայեացքով գուրգուրելով լեռնալանջին թռվռացող պատանիներին:

Բայց, աւելի ճիշդ, նրանք թիթեռների էին նման, որ ծաղկից ծաղիկ էին թռչում, հմայւած ու երջանիկ այն լիառատ գեղեցկութեամբ, որ Սեւանայ աշխարհի բնութիւնը շռայլօրէն սփռել էր նրանց համար:

եօթն եղբօր արիւնը, կամ   օխտն աղբօր արին (գաւառա-
աղբրանց արիւն - Հայաստանի յատուկ   կան)=եօթն եղբօր արիւն
մի ծաղիկ է (anaplanthus Tournefortii)   երեխէք - երեխաներ
ծիածան - ծիրանի գօտի   ջահել վախտս (օտ.) - երիտասարդ
փուել - տարածւել   ժամանակս
հմայել - դիւթել, հրապուրել / փէշքէշ (օտ.) - պարգեւ
ծաղկանկար - ծաղիկներով նկարւած/միտս չի - մոռացել եմ
բնասէր - բնութեան բարեկամ   նրբերանգ - նուրբ երանգ, գոյն
պսպղալ - փայլել   այտ - թուշ
սնահաւատ - աւելորդապաշտ   իգիթ - երիտասարդ մարդ
սարւոր - սար, լեռ գնացող, ապրող / ունք - յօնք
խնոցի - կարագ շինելու անօթ   սիրտ անել - համարձակւել
նրբագեղ - նուրբ ու գեղեցիկ   հարեւան - դրացի
կապտին տալ -կապոյտ գոյնի մօտենալ   թուր - սուր
շոգ -տաքութիւն, տօթ   կեանք տեսած - փորձառու
ծաղկոտ - ծաղիկներով լիքը   ադաթ (օտ.) - սովորութիւն
միալար - միակերպ, միապաղաղ   քոլոզ - քրդական գլխարկ
ջերմանալ - տաքանալ   կիսատ - կէս, անկատար
երազկոտ - երազող   մարմար - ողորկ, փափուկ
անջրդի - չոր   յարկ - տանիք, տուն
ողջ - ամբողջ, համակ   դուշ (օտ.) - թռչուն
մի տեսէք - միանգամ նայէք   պատրոնտաշ(օտ.)- փամփշտակալ
հոտ - բոյր, բուրմունք   հնամենի - հին (ամ - տարի)
ղըր (օտար)- անջրդի, անապատ   սփռել - փռել
չիբան (օտ.)- ուռոյցք
ջահելանալ - երիտասարդ դառնալ
հզօր - զօրաւոր, ուժեղ
լուսահոգի - հանգուցեալ, մեռած

ՊԱՊՆ ՈՒ ԹՈՌԸ

Իդիլլիա

Գրեց Ստեփան Զորեան

Եփրեմ պապը շա՜տ ծեր էր։

Վաղուց նրա աչքերը չէին տեսնում, ականջները ծանր էին լսում, իսկ գլուխը շարունակ դողում էր հասած արեւածաղկի պէս։ Դողում էին եւ նրա սառը, չոր ձեռները, այնպէս որ երբ նա թանով ապուր էր ուտում կամ շորվա, կերակուրը միշտ կաթում էր նրա սպիտակ, մի քիչ էլ կանաչած միրքի վրայ։

Բացի դրանից, Եփրեմ պապը չէր կարողանում երկար ման գալ, հեռու տեղ չէր գնում եւ միայն արեւ օրերին, երբ սիրտն ուզում էր զբօսնել տան առաջի պարտիզում, կանչում էր թոռան-Աստղիկին եւ նրա առաջնորդութեամբ, ձեռնափայտը ձեռին, կամաց-կամաց ման էր գալիս ծառերի տակ։ Յետոյ Եփրեմ պապի ատամներից շատերը թափւել էին, դրա համար էլ ոչ միս էր կարողանում ուտել, ոչ չոր հաց։

Շա՜տ ծեր էր Եփրեմ պապը։ Տանը նրան այնքան էլ չէին սիրում եւ ամեն բան չէին տալիս ուտելու։ Բայց նա սիրում էր ամենքին. եւ ամենից շատ փոքրիկ Աստղիկին. պատմում էր նրան հէքիաթներ, առակներ, պատմում էր ուրիշ տղաների, աղջիկների մասին եւ այն մասին, թէ ինչո՞ւ են ընկնում աստղերը երկնքից։ Երբեմն՝ կոպէկներ էր բախշում նրան, որ կանֆետ առնի... Եւ դրա համար Աստղիկը պապին շատ էր սիրում. ամեն անգամ բռնում էր պապի ձեռից եւ առաջն ընկած ման ածում ծառերի արանքում ու բացատրում, թէ որ ծառը որքան է բռնել եւ թէ ինչպէս է ծաղկել մասրի թուփը... Բայց Աստղիկը շատ էր ափսոսում, որ պապը չի տեսնում այդ բոլորը, եւ որովհետեւ պապը չէր տեսնում, Աստղիկը խղճում էր նրան եւ աւելի սիրում։

Մի բան, սակայն, դուր չէր գալիս Աստղիկին,- որ պապը հիւանդանում էր շուտ-շուտ։

Այժմ էլ՝ երեք շաբաթ էր ահա պապը հիւանդ էր։ Երբ նա հազում էր, Աստղիկին թւում էր, թէ չոր տերեւներ են խշխշում նրա կրծքի տակ, իսկ քնած տեղը այնպէս էր խռխռացնում, մէկը կարծես խեղդում էր նրան... Քանի օր էր պապն ուզում էր դուրս գալ արեւի տակ զբօսնելու, բայց տատը չէր թողնում. ասում էր՝ կը մրսի...Եւ Աստղիկը զարմանում էր տատի վրայ, թէ ի՛նչու է նա այդպէս անխիղճ մերժում պապին։ Ի՛նչ կայ որ, մտածում էր նա, թող պապը դուրս գայ, էլի տուն կը գայ... Բայց տատը եւ մայրիկը չէին թողնում։ Եւ քանի նրանք չէին թողնում, պապն աւելի էր ցանկանում դուրս գալ...

Եւ ահա մի օր պապն անսպասելի վեր կացաւ անկողնից։ Աստղիկն այդ օրը շատ լաւ է յիշում։- Կիրակի էր. տատն ու մայրիկը գնացել էին ժամ, իսկ հայրիկը քաղաքումն էր։ Երբ ինքը՝ Աստղիկը փողոցից եկաւ տուն, տեսաւ պապը նստել է անկողնում եւ ձեռքերով բան է փընտռում կողքին։

-Ի՞նչ ես ուզում, պապի,- հարցրեց Աստղիկը։

-Շորերս,-ասաց պապը դողալով։

Աստղիկը տւեց նրան կապան, չուխան, ոտնամանները եւ գդակը։ Պապը դողդողալով հագնւեց եւ փայտը ձեռին դուրս եկաւ պատշգամ ու նստեց այնտեղ՝ թախտի վրայ, արեւի դիմաց։

Այդ օրը պապի դէմքը շատ տարօրինակ էր։ Աստղիկը նայում էր նրան եւ զարմանում, թէ ինչու այդպէս մտամոլոր է պապը եւ ինչի է ականջ դնում նա։

Պապն իսկապէս ինչ-որ բանի ականջ էր դնում. գլուխը բարձր բռնած, աչքերը խուփ, նա կարծես կամենում էր լսել, թէ ինչ է կատարւում գիւղում եւ գիւղից դուրս...Քանի ժամանակ էր դուրս չէր եկել տնից եւ դրա համար, խորը շունչ քաշելով, ուզում էր լսել կարծես դրսի կեանքը... Մի քանի տարւայ կուրութիւնը սրել էր նրա լսողութիւնը, ուստի եւ նա պարզ լսում էր մեղուների երգը օդի մէջ, քարդիների տերեւների ուրախ ճքճքոցը եւ երեխաների զւարթ աղմուկը մի հեռաւոր տան բակից։ Նրա ականջին էր հասնում եւ եկեղեցու տօնական զանգահարութիւնը որը կարծես թրթռում, խաղում էր օդի մէջ եւ, շունչը կտրած, ընկնում գետնին։

Զանգերի ղօղանջը Եփրեմ պապի հոգում զարթեցնում էր անցած-մեռած յիշողութիւններ, եւ նա իրեն տեսնում էր երեխայ, որ Զատկին հօր հետ գնում էր եկեղեցի, ու զանգերը ղօղանջում էին այդպէս հանգիստ ու միալար... Յետոյ նա իրեն տեսնում էր ջահել ու առողջ,որ նոյնպէս ջահել մի աղջկայ հետ, թեւ-թեւի տւած պսակի է գնում, ու զանգերն էլ ղօղանջում էին այդպէս թրթռալով... Վերջապէս, նա տեսնում էր իրեն հասակն առած տղամարդ, որ գերանդին ձեռքին խոտ էր հնձում դաշտի մէջ... Զնգում էր գերանդին, լորերը թռչում էին խոտի միջից, խոտը լաս-լաս դարսւում էր շարքով եւ այսօրւայ պէս դարձեալ ղօղանջում էին ժամի զանգերը...

Այս բոլորը յիշելով, Եփրեմ պապը յանկարծ զգաց հնձած խոտի բոյր եւ, բերանը բանալով, խորը շունչ քաշեց:

Աստղիկը, որ բոլոր ժամանակ նայում էր հիւանդ պապին, յանկարծ զարմացաւ տեսնելով պապի դէմքը պայծառացած:

Պապը նորից խորը, երկար շունչ քաշեց:

-Աստղիկ:

-Ի՞նչ է, պապի:

-Ինձ տար բաղը:

-Բա որ մրսես, պապի,- ասաց Աստղիկը, տարակուսանքով նայելով պապի կոյր աչքերին:

-Չեմ մրսի, աղջիկս, գնանք...

Եւ պապ ու թոռ ձեռք-ձեռքի տւած՝ մտան պարտէզ: Ծերունին ձեռը թոռանը տւած, քայլում էր նրա ետեւից եւ հարցնում, թէ ի՞նչպէս են ծառերը, բոլորն էլ ծաղկե՞լ են արդեօք. ծաղիկները թափւե՞լ են, թէ ոչ:

-Թափւել են, պապի, թափւել են,- ասում է Աստղիկը:

-Պտուղներ երեւո՞ւմ են ծառերի վրայ:

-Այո, պապի, շա՞տ...

-Էդ լաւ է,- ասաց պապը,- էդ լաւ է:

Խօսելով հասան փոքրիկ պարտէզի ծայրը, որտեղից մի փոքրիկ դըռնակ էր բացւում փողոցի վրայ: Պապն այդտեղ կանգ առաւ եւ նորից շունչ քաշեց:

-Գնանք տուն, պապի,- ասաց Աստղիկը,-կը մրսես, տատը կը բարկանայ...

-Չէ, բալիկս, չեմ մրսի,- հանգստացրեց պապը եւ շարունակեց շունչ քաշել:

Մի փոքր այդպէս կանգնելուց յետոյ պապը հարցրեց.

-Հանդն էստեղից մօտիկ է, չէ՞, Աստղիկ:

-Հա, պապի, իհարկէ, մօտիկ է:

-Դէ որ մօտիկ է, աղջիկս,-ասաց պապը,-ինձ տար հանդը, դու էլ քեզ համար ծաղիկ կը քաղես:

Աստղիկն ուրախացաւ:

-Հա, պապի. էնքա՞ն ծաղիկ կայ հանդում...

Մի քանի րոպէ անց արդէն՝ գիւղացիները զարմանքով տեսան իրանց բակերից, թէ ինչպէս հիւանդ Եփրեմ պապը Թոռան ձեռից բռնած գնում էր դէպի դաշտը: Նրանք գնում էին դաշտ եւ մոռացել էին, որ տանը մարդ չկայ եւ դռները բաց են հաւերի ու մուրացկանների առջեւ:

Փոքր յետոյ Նրանք դուրս եկան դաշտը եւ երկար ժամանակ գնում էին խոտերի միջով: Պապը քայլում էր կռացած եւ հեւում ամեն մի քայլ անելիս, բայց կարծես չէր յոգնում. իսկ Աստղիկը պապի Ձեռը բռնած առաջնորդում էր Նրան եւ շարունակ խօսում. '' պապի, դէսն արի ", "պապի, առաջիդ քար կայ '', "պապի, լոք տուր...": Եւ ծեր պապը, Թոռան ձայնին հնազանդ, կատարում էր Նրա բոլոր պահանջները. լոք էր տալիս ջրի վրայից, Թեքւում էր այն կողմը, ուր քաշում էր իրեն փոքրիկ աղջիկը:

Բաւական տեղ գնալով՝ պապը կանգնեց, շունչ քաշեց բերանով եւ հարցրեց Աստղիկին, Թէ ի՞նչ տեղ են գտնւում իրենք:

-Լաւ տեղ ենք, պապի,- պատասխանեց Աստղիկը:-Էնքան ծաղիկ կա՞յ...

Պապը շունչ քաշեց դարձեալ եւ հարցրեց.

-Անտառը մօտիկ է, հա՞...

-Հա, պապի, հրէս մօտիկ: Դու տեսնո՞ւմ ես որ...

Պապն առանց պատասխանելու, կոյր աչքերը բարձրացրեց եւ ականջ դրեց: Այս անգամ նա ուզում էր լսել անտառի ձայնը: Եւ ահա պարզ Նրա ականջին էր հասնում հրնաւուրց անտառի խշշոցը, որ Նմանում էր գետի շառաչիւնի: Անտառը խշշում էր այնպէս, կարծես բոլոր ծառերը միասին երգ էին ասում: Ի՞նչ լաւ է խշշում անտառը, մտածեց պապը: Այդ խշշոցը նոյնն էր, ինչ որ շատ-շատ տարիներ առաջ: Այդպէս էր խշշում նա, երբ ինքը երիտասարդ էր. այդպէս էր խշշում մէրին, երբ նա հասակն առած տղամարդ էր... Այդ խշշոցը նոյնն է, առաջւանը, նոյնը կը լինի եւ միշտ...

Ու Եփրեմ պապը տխուր հառաչանքով Նստեց կանաչների վրայ հանգըստանալու, իսկ Աստղիկն սկսեց ծաղիկներ քաղել եւ վազել Թիթեռների ետեւից:

Նստած տեղը, բոլոր ժամանակ, Եփրեմ պապը շարունակում էր ականջ դնել:

Այժմ անտառի խշշոցի հետ Նրա ականջին էր հասնում առւի քչքչոցը... նա ճանաչում էր այդ առուն. հնձի ժամանակ քանի՜անգամ էր հաց կերել նրա մօտ... Առուի քչքչոցի հետ Եփրեմ պապի ականջին էին հասնում եւ թռչունների երգը-այդ արտոյտներն էին երգում,-եւ խոտերի շրշիւնը եւ հովից օրօրուող թփերի շշունջը, իսկ հեռուից գալիս էր դարձեալ եկեղեցու զանգերի ձայնը ու խառնւում անտառի խշշոցին:

Ի՜նչ լաւ է խշշում անտառը...

Այսպէս էր մտածում պապն իր սրտի խորքում, եւ նրա շրթունքները դողում էին յուզմունքից. ուզում էր աղօթել, բայց միտքն էլ ականջ դնելով այդ ծանօթ, հարազատ ձայներին, պապը յանկարծ կռացաւ եւ գլուխը խոնարհեց գետնին...

Երկար համբուրում էր նա կանաչով ծածկուած հողը եւ անզուսպ արցունքներն առատօրէն թափւում էին նրա աչքերից... Մի փոքր էլ, մի փոքր էլ, եւ նա ուժասպառ ընկաւ կանաչների վրայ...

Քիչ յետոյ, երբ Աստղիկը ծաղիկներ գրկած վերադարձաւ պապի մօտ, զարմացաւ, որ պապը պառկել է...

„Պապն ինչո՞ւ է քնել էսպէս ”,-մտածեց նա եւ ձայն տւեց:

Բայց պապը նրան չպատասխանեց:

Այդ ժամանակ Աստղիկն աւելի մօտեցաւ նրան եւ շարժեց ձեռը:

-Պապի, այ պապի,- կրկնում էր ձեռքը քսելով պապի երեսին, գըլխին:- Վեր կաց, գնանք... Դէ, պապի, վեր կաց, տատը կը բարկանայ...

Պապը դարձեալ չէր զարթնում: իսկ Աստղիկը շարունակում էր շարժել նրա ձեռը, գլուխը, աղերսում էր, որ զարթնի:Բայց պապը չէր շարժւում...

Այդ տեսնելով, վերջապէս, Աստղիկը որոշեց եւ վազեց տուն՝ յայտնելու, որ պապը քնել է դաշտում ու չի զարթնում...

Բայց պապը չէր քնել...

Գնացին տեսան պապը մեռել էր դաշտում:

Երբ Աստղիկն այդ իմացաւ, նա չէր կարողանում հաւատալ, որ պապը մեռած լինի. նա չէր հաւատում եւ նրան, թէ պապին կը տանեն իրենց տնից եւ նա էլ ետ չի գայ...

„ Հապա էլ ո՞վ կը պառկի նրա անկողնում,- մտածում էր նա,- ո՞վ կը հագնի նրա չուխան...”:

Եւ երբ միւս օրը տէրտէրները պապին տարան ժամ, Աստղիկն սպասում էր, թէ պապը կը վերադառնայ. բայց մութն էլ ընկաւ, նա չեկաւ... իսկ երբ տան դռները փակեցին, որ քնեն, Աստղիկը սաստիկ տխրեց ու լաց եղաւ վերմակի տակ:

Նա լաց էր լինում ու մտածում, թէ ինչո՞ւ տան դռները փակեցին, չէ՞որ պապը կարող է գալ. գուցէ հենց հիմա էլ եկել ու կանգնել է դռան առաջ...

Լաց լինելով մտածում էր, թէ ով պէտք է այնտեղ ման ածի պապին, չէ՞որ նա չի տեսնում, կարող է քարի դէմ առնել կամ ոտքը ջուրը քցել...

Ա՜խ, տեսնես կը լինի մէկը,- մտածում էր Աստղիկը,- մի քարի տղայ կամ մի քարի աղջիկ, որ խեղճ պապին ման ածի այնտեղ...

շարունակ	անընդհատ, միօրինակ
դողալ	տատանուել, երերալ, սարսռալ
սառ	ցուրտ
միրուք,(գրական՝)	մօրուք
ման գալ	պտտել, պտուել
(ատամները) թափուել	ընկել էին
բախշել	բաշխել , տալ
առաջն ընկած	առաջից գնալով, առաջնորդելով
ծառը բռնել է	տերեւ, ծաղիկ է հանել
ափսոսալ	ցաւել
դուր գալ	սիրել
ցանկանալ	բաղձալ , ուզել
անսպասելի	անակնկալ
ժամ	եկեղեցի
ոտնաման	կօշիկ
գդակ	գլխարկ
մտամոլոր	մտքով մոլորած, մտածկոտ
զանգահարութիւն	զանգակների ձայն
միալար	միակերպ, միապաղաղ
հասակ առած	մեծացած, տարիք առած
(խոտ) հնձել	կտրել
դէմքը պայծառացած	փայլուն
քաղ (օտար)	այգի
ի հարկէ	անշուշտ, անտարակոյս
մէրի (գաւառական)	մայրի ծառը
հինաւուրց	հին, անցած օրերի
արցունք թափել	լալ
աղերսել	խնդրել, թախանձել
դէսը	այս կողմ
դէնը	այն կողմ
լոք տալ	ցատկել
հրէս	ահա
լաս լաս	շերտով
թրթռալ	դողալ
կանֆէտ (օտար)	անուշեղէն
ուժասպառ	ուժը հատած

ԳՐԲԱՑԸ

Գրեց Հայաստան Գէորգեան

Մի օր, կիրակնամուտին, տատս խնդրեց մօրիցս որ զարդարւի եւ եկեղեց գնայ: Մայրս զարդ չէր սիրում, նոյն իսկ մատանի չէր դնում մատը եւ տատս շատ անգամ նեղանում էր նրա վերայ այդ պատճառով:’’Օդուլ, ջահէլ ես, դեռ սիրուն ես, ինչո՞ւ չզարդարւես, աշխարհի օրէնք է, կինը առանց զարդի նոյնն է ինչ հացը առանց աղի. տեսնողն էլ կը մտածի թէ պատի տակից ես դուրս եկել, կամ բոշայ ես: Ոսկիներդ կապիր, օղերը անցրու ականջներդ, մարգարիտները շարիր վիզդ, որ տեսնողը հմայւի, կանգնի սէյրան անի, ասի "Երանի քո տիրոջը": Մայրս որ ամէն բանում հնազանդւում էր տատիս, բացեց զարդերի արկղը եւ սառած մնաց. արկղը դատարկ էր: ’’ Լուսս քոռանայ, ասաց տատս, տեսա՞ր, էնքան ուշք չտարար որ գողացնել տւեցիր. դէ՞հ, հիմայ գնա, գողին գտի’’: Եւ իրապէս հեշտ բան չէր գողին գտնելը. հօրս պատճառով չէինք կարող ոստիկանութեան դիմել, իսկ սրա նրա վրայ կարծիք տանելը չէր օգնում:

Կարծիքը ընկաւ մեր հօտաղ Դանէլի վերայ, որը Ռուբէնի հիւանդութեան պատճառով մի քանի շաբաթ մեզ մօտ էր եղել: Դանէլը ուրացաւ եւ նրա հայրը նոյն իսկ երդւեց որդու համար: Տատիկս ուզեց գըրբացի գնալ, ամէն օր համոզում էր մօրս որ նա քաղաք գնար,ուր մի նոր գրբաց էր եկել, որը ’’ Սողոմոն’’ունէր:

Պատմում էին նրա մասին, որ նա ամէն ինչ գիտէ եւ արդէն շատերին է օգնել: Մայրս, որպէս հօրս լաւ աշակերտուհին՝ մերժում էր, նա չէր հաւատում գրբացներին: Բայց վերջ ի վերջոյ տեղի տւեց տատիկիս թախանձանքներին եւ ինձ հետը վերցնելով քաղաք գնաց: Մեր կառքը կանգնեց մի ցածլիկ, պարզ տան առաջ: Երբ ներս մտանք, մի փոքրիկ սենեակ լիքն էր բազմութեամբ, մեծ մասամբ կանանցով:Սենեակի վերեւի մասում, թախտի վերայ բազմած էր մի ծերունի, լայն դէմքով, կնճռոտ ճակատով եւ երկար, սպիտակ մօրուքով: Նրա մօտ նըստած էր մի տարիքաւոր կին, վշտոտ դէմքով, սեւ հագուստներով. Նրա աչքերը կարմրել էին շատ լաց լինելուց եւ նա յուսահատ խփում էր ծնկներին եւ կոտրատում ձեռքերի մատները: Ծերունին իր մօտ կանչեց մի փոքրիկ տղայի եւ նրա աջ ձեռքի բթամատին թանաք քսելով, հրամայեց մէջը նայել: Երեխան կը լինէր մօտ տասը, տասնմէկ տարեկան:

’’ Ի՞նչ ես տեսնում եղունգիդ մէջ’’ հարցրեց նրան ծերունին:

’’ Ոչինչ’’:

’’ Դու լուսին կամ մարդու գլուխ չե՞ս տեսնում. լաւ նայիր’’:

Երեխան անընդհատ նայում էր մատին եւ յանկարծ ճչաց.

” Հա, լուսինը եկաւ, հետն էլ մի կտրած գլուխ’’:

Գրբացը գոհ ժպտաց. ’’լաւ, միշտ նայիր’’ ու ինքը մի գիրք վերցնելով սկսեց կարդալ, ժամանակ առ ժամանակ բացագանչելով՝ ” կարմիր միրուքաւոր արի, սեւ միրուքաւոր արի, ճերմակ միրուքաւոր արի”:

’’ Ի՞նչ ես տեսնում’’, հարցրեց նա նորից տղային, որի աչքերը անընդհատ մի կէտի նայելուց արտասաւում էին:

” Հիմայ եկան, ասեց տղան ցած ձայնով. մէկը կարմիր, միւսը սեւ, երրորդը սպիտակ միրուք ունի’’:

’’ Լաւ, ասա բարի են եկել, սուրճ հրամցրու, թող նստին խմեն”:

Տղան կրկնեց գրբացի պահանջը, անթարթ եղունգին նայելով:

” Նստեցի՞ն’’:

” Այո, նստեցին, սուրճ են խմում’’:

” Հիմայ հարցրու նրանց, թէ էս խեղճ մօր տղէն, որ Անդրանիկի մօտ զինուոր էր, որտե՞ղ է այժմ”:

Երեխան կրկնեց հարցը եւ յանկարծ մեռելի գոյն ստացած՝ լաց եղաւ:

’’ Ի՞նչ ես տեսնում’’:

” Չեմ ասի’’:

” Ես ես...տեսնում եմ Սանդրոյին. բայց նա չի ապրում, մեռած է. պառկած է մի բարձր սարի լանջին, Արագածի նման բարձր. Սանդրոյի մօտ աղբիւր է հոսում, ինքը արիւնլւայ է’’:

Սեւ հագուստներով կինը անձայն նւաղեց. երբ նրան ուշքի բերեցին, սիրտ կտրատող ձայնով կանչեց. ’’ վա՜յ, ջէյրան ջան, հողը գլխիս բերեցիր. կարօտով մեռար, բալա ջան. էլ էս արեւը ի՞նչ եմ անում, օրս սեւացաւ, հոգի ջան”, եւ նա խփում էր ձեռքերով իր երեսին եւ գլխին, փետտում մազերը: Բոլորս լաց էինք լինում նրա հետ:

” Լացը չի օգնի, քոյրիկ ջան, ասաց գրբացը, հիմայ գիտես տղիդ ուր լինելը, գնա տուն, սուգը աւելորդ է. գնացէք քոյրիկներ, գնացէք, հերթը ուրիշներինն է’’: Երկու կին անցան խեղճ մօր թեւերի տակ եւ լացով դուրս տարան նրան:

Մայրս առաջ անցաւ եւ պատմեց գրբացին իր կորուստի մասին։ Գրբացը քննեց բթամատս, հարցրեց թէ հինայ դրե՞լ եմ ձեռքիս․ բացասական պատասխան ստանալով, քսեց թանաքը մատիս եւ նոյն ձեւով ինչպէս արել էր տղայի հետ՝ խօսեց ինձ հետ։ Երբ որ նա սկսեց կարմիր եւ սեւ միրուքաւորներին կանչել, ես յանկարծ չկարողացայ զսպել ծիծաղս եւ մօրս նայելով փռթկացի։ Նա էլ ծիծաղեց։ Ես ինքս էլ չէի կարող բացատրել ծիծաղիս պատճառը, բայց ծերունին բարկացած վեր կացաւ․ ” դուրս գնացէք․ հոգիները վիրաւորւեցին ձեր վարմունքից, այլեւս ոչ մի պատասխան չեն տայ․ ասեցի, որ ոչ ոք չպէտք է ծիծաղի, ով չի հաւատում թող չգայ”։ Մայրս շփոթւած էր։ Ծիծաղը դէմքերիս դուրս եկանք։ Մայրս հարցրեց ինձ իմ վարմունքի պատճառը․ բայց ես ոչինչ չէի կարող պատասխանել։ Մի ջղաձգական քրքիջ խեղդում էր ինձ։ Դատարկ ձեռքերով վերադարձանք տուն։ Տատս շատ վրդովւեց․ բայց ի՞նչ կարելի էր անել։ Նոյն օրը մօրս մօտ եկաւ Խեչանենց հօտաղը եւ պատմեց, որ գարնանը կովերը արածացնելիս նա Դանէլի մօտ մի ոսկի ժամացոյց է տեսել, երկար ոսկի շղթայով, թանկագին քարերով զարդարւած։ Մայրս իսկոյն կանչել տւեց Դանէլին եւ իր հօրը․ Նորէն երկուսն էլ ուրացան։ Բայց Սօսին, մի խելացի երիտասարդ, հօրս կողմնակիցներից, ասեց․ ”Քոյրիկ ջան, թոյլ տուր քո անունով գիւղի հօտաղներին կանչեմ Դանէլի հետ, ես գողը իսկոյն կը բռնեմ, ոչ գրբացի պէտք ունենք, ոչ էլ սատանի”։ Մի ժամ յետոյ գիւղի հօտաղները հաւաքւեցին մեր տանը։ Սօսին գրպանից դուրս հանեց մի քանի կլորւած թղթեր եւ ասեց․ ”այս թղթերը թլսում են եւ թոյն ունեն իրանց մէջ․ Թող ամէն մէկը մի հատ կուլ տայ սրանցից․ ով որ արդար է՝ թլսումը նրան թոյնից կ’ազատի, իսկ գողը անմիջապէս կը մեռնի”։ Բոլոր տղաները վերցրին թղթերը եւ զւարճացած, կուլ տւեցին․ միայն Դանէլը տատանւում էր։ ” Դանէլ, ինչո՞ւ չես վերցնում”։ Ամբողջ մարմնով դողալով նա կըմկմաց․ ” Ես... ես չեմ ուզում մեռնել, արէք ինչ ուզում էք, ես եմ գողացել...մեղաւոր եմ”։ ”Տեսա՞ր, քոյրիկ ջան, գողը այդպէս կը բռնեն” ասեց Սօսին ծիծաղելով եւ մի ապտակ կպցրեց Դանէլին։

Դանէլը ամէն ինչ խոստովանւեց․ բայց նրա հայրը ծախել էր իրերի կէս մասը։ Նա պէտք է այդ պակասի համար դրամ վճարէր, բայց յուսահատ, նա ընկաւ մօրս ոտքերը աղաչեց, որ ների, աղքատութիւնն է նրան գող շինել, սատանէն է նրան փորձութեան մէջ գցել։ Եւ որովհետեւ մայրս միշտ բարի էր, հրաժարւեց դրամից եւ դատից։

գրբաց - կախարդ,գուշակ

օղուլ (օտար)- զաւակ,աղջիկ. խօսակցին կոչ

պատի տակից դուրս ես եկել - մի անծանօթ տեղից --

բոշայ - գնչու

ոսկի - ոսկեդրամ

սէյրան անել (օտ.) - դիտել,հիանալ

արկղ - սնդուկ

սառած մնաց - անշարժ մնաց

լուսս (լոյսս) քոռանայ - աչքերս չտեսնէին

ուշք տանել - ուշադիր լինել, հոգս տանել

Թախանձանք - խնդրանք,աղերսանք

ցածլիկ - սովորականից ցած

կնճռոտ - խորշոմած

վշտոտ - ցաւով, տառապած

կոտրատել (ծեռքի մատները) - գալարել

հինայ - ներկ

բացասական - ժխտական

քրքիջ - ուժեղ ծիծաղ

վրդովւել - խռովւել

հաւաքւել - ժողովւել, խմբւել

կմկմալ - մրմնջել

մեղաւոր - յանցաւոր

(ապտակ) կպցրեց - զարկեց

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ

1869 - 1923

Հանճարեղ բանաստեղծ Յովհաննէս Թումանեանը, իւրացնելով այն մեծ նուաճումները, որին հասել էր հայ դարաւոր պոեզիան, իր վիթխարի անհատականութեամբ մի նոր աստիճանի բարձրացրեց մեր բանաստեղծական խօսքը: Մինչեւ Թումանեանը մենք ունեցել ենք խոշոր տաղանդով օժտուած շատ բանաստեղծներ,բայց Թումանեանի ստեղծագործութեան նշանակութիւնն անհամեմատ բարձր է: Այստեղ կարելի է օգտագործել Բելինսկու նշանաւոր խօսքը, թէ բոլոր նախորդ բանաստեղծները այնպիսի յարաբերութեան մէջ են գտնւում Պուշկինի հետ, ինչպէս մեծ եւ փոքր գետերը ծովի հետ: Այդպէս էլ Թումանեանը: իր նախորդներից նա աւելի լաւ է տեսել հայրենի ժողովրդի հոգեկան գանձերը եւ աւելի մեծ ուժով արտացոլել նրա հոգեբանութիւնը, քաղաքական ու սոցիալական կեանքը: Բանաստեղծի կոչման մասին Թումանեանը շատ խոր եւ իմաստալից մտքեր է յայտնել. ’’Բոլորը հաստատ միայն մի բան գիտեն, որ ունեն մի թշւառ հայրենիք, բայց թէ ի՞նչ բան է այդ հայրենիքը, ինչի՞ մէջն է նրա թշւառութիւնը, ինչպէ՞ս են ապրում, ինչպէ՞ս են խօսում, լալիս, ուրախանում եւ այլն, եւ այլն, նրա ժողովուրդը, ահա, այդ է հարկաւոր, այդ առաւելութիւնները, այդ յատկութիւնները միայն կարող են նրան ձեռնադրել հայոց բանաստեղծ...”:

Թումանեանը եղաւ հայոց այդ բանաստեղծը, որը մեծ բովանդակութիւնն արտայայտեց բանաստեղծական կախարդիչ ձեւերով եւ արտակարգ վարպետութեամբ:

Թումանեանի հանճարի ձեւաւորմանը մեծապէս նպաստել են նաեւ ռուսական եւ համաշխարհային առաջաւոր պոեզիան ու գրականութիւնը. Նա զուգակցել է ազգային եւ համաշխարհային խոշորագոյն պոետների տրադիցիաները: Բանաստեղծական մի շարք ժանրերում ընդգրկման ուժով ու ձեւի կատարելութեամբ նա դուրս է եկել համաշխարհային գրականութեան ասպարէզ, դարձել աշխարհի խոշորագոյն բանաստեղծներից մէկը: Թումանեանի ստեղծագործութիւնը հայ դասական գրականութեան, մասնաւորապէսհայ պոեզիայի բարձրագոյն էտապն է:

Յովհաննէս Թումանեանի մանկութիւնն անցել է աշխատաւոր գիւղացիութեան շրջանում: Նա ծնւել է 1869 թւականին Լոռու Դսեղ գիւղում, քահանայի ընտանիքում: Թումանեանն ապրել է գեղջուկ մանկան բոլոր հետաքրքրութիւններով: Անհոգ ու ուրախ խաղերը՝ ամռան օրերին, հովւական պարզ ու գեղեցիկ կենցաղը՝ հայրենի չքնաղ բնութեան մէջ եւ հէքիաթների կախարդիչ աշխարհը,- այս է եղել գեղջուկ մանուկների առօրեան: Այդ օրերի յիշատակների մասին նա գեղեցիկ, գունագեղ պատկերներ է ստեղծել ”Մարօ’’ պոեմում եւ ’’ Իմ ընկեր Նեսօն’’ պատմուածքում:

Տկլոր, աշխոյժ խմբակով,
Աղաղակով, աղմուկով
Խաղում էինք, վազվզում
Գոյն-գոյն մանրիկ աւազում:
Կամ հետեւում հեւիհեւ
Թիթեռնիկին ոսկեթեւ ...

Մանկական օրերի պայծառ, կենդանի պատկերն է գծուած ”Իմ ընկեր Նեսօն” պատմուածքում. ”Ոչ ուսումնարան կար, ոչ դաս, ոչ դաստիարակութիւն. ազատ էինք միանգամայն ու խաղում էինք. ինչքա՜ն էինք խաղում: Ու ո՜նց էինք իրար սիրում: Ո՜նց էինք իրար սովորել: Սոված ժամանակներս էլ վազում էինք հացի տաշտիցը մի կտոր հաց առնում, պանրի կարասիցը մի կտոր պանիր ու էլ ետ շտապում իրար մօտ: Իրիկուններն էլ հաւաքւում էինք, ծիծաղ բաներ ասում, կամ հէքիաթ պատմում”:

Բայց շուտով անհոգ խաղերի,հէքիաթների աշխարհից արտակարգ ընդունակ եւ դիտող երեխայի հայեացքը կանգ է առնում կեանքի դառնութիւնների վրայ:Նա տեսնում է անհասկանալի տարբերութիւններ ու հակասութիւններ հենց մանուկների աշխարհում, լսում է մանուկ Նեսոյի՝ աղքատ ընկերոջ մղկտոցը դպրոցի պատերի տակ, տեսնում Մարոյի գերեզմանաքարը: Նրա մանկական եւ պատանեկան տարիների կեանքը սերտօրէն միահիւսւում է հարազատ ժողովրդի ուրախութեան եւ տխրութեան հետ, նրա երազանքն ու երեւակայութիւնը խառնւում են իր տառապող ժողովրդի երազանքին ու երեւակայութեանը, ժողովուրդ, որը մխիթարութիւն էր գտնում միայն իր պայծառ բանաւոր ստեղծագործութեան եւ շրջապատող բնութեան մէջ: Ժողովուրդն էլ դառնում է Թումանեանի առաջին, անփոխարինելի ուսուցիչը:

Հայրը՝ գիւղի քահանայ Տէր Թադէոսը, սիրում էր երգ ու երաժըշտութիւն, ժողովրդական տխուր մեղեդիներ, հէքիաթներ, լեգենդներ ու առասպելներ. Նրա ընտանեկան յարկը դառնում է աշուղների ու ասացողների հիւրընկալ վայր: Փոքրիկ Յովհաննէսը խոր եւ անջնջելի տպաւորութիւններ է ստանում ժողովրդական երգի ու խօսքի գանձերից, որոնք հետագայում մեծ չափով նպաստում են նրա շատ ու շատ լաւագոյն երկերի ստեղծմանը: Գրել-կարդալ սովորում է հօր, ապա հօրեղբօր մօտ, յետոյ տեղափոխւում է Սահակ վարժապետի դպրոցը, որտեղ վարժապետի երկաթէ գաւազանի սարսափի տակ ցրտահար ծառերի նման դողում էին գիւղի կիսամերկ երեխաները: Հայրը որդուն ցանկանում է տեղափոխել Գէորգեան ճեմարան, բայց տեսնելով սաների գունատ ու մեռելատիպ դէմքերը, երեխային բերում է Ջալալօղլի Ստեփանաւան: 1879 թւականի աշնանը Թումանեանն ընդունւում է Տիգրան Տէր Դաւթեանի երկսեռ չորսդասեայ դըպրոցը:

Ջալալօղլու երկսեռ դպրոցը մեծ նշանակութիւն ունեցաւ Թումանեանի կեանքում: Այնտեղ նա սովորում է պատմութիւն, գրականութիւն, հայոց եւ ռուսաց լեզուներ, ֆիզիկա, ընդհանուր պատմութիւն, ֆրանսերէն, երգեցողութիւն: Ուսուցչի օգնութեամբ նա սկսում է ծանօթանալ գեղարուեստական գրականութեանը, ընթերցում եւրոպական, ռուս եւ հայ գրողների մի շարք երկեր: Տեսչի տանը մի քանի առաջադէմ աշակերտներ կոլեկտիւ ընթերցանութեամբ ծանօթանում են ”Հիւսիսափայլ”, ”Կռունկ”, ”Փորձ” ամսագրերին, հայ պոեզիային: Դպրոցում Թումանեանը սկսում է իր գրական փորձերը, գրում է երգիծական, հայրենասիրական ու սիրային ոտանաւորները:

1883 թւականին ցարական կառավարութեան հրամանով փակւում են հայկական դպրոցները: Նոյն թւականի աշնանը Թումանեանը տեղափոխւում է Թիֆլիս:

1883 թւականի աշնանը Թումանեանը ընդունւում է Ներսիսեան դըպրոցը: Երեք տարի սովորելուց յետոյ, հնարաւորութիւն չունենալով կրթութիւնը շարունակել, նա ծառայութեան է մտնում Թիֆլիսի հայկական կոնսիստորիայում: Գրագրի տխուր, ձանձրալի եւ հոգեմաշ պաշտօնը ծանր ազդեցութիւն է թողնում պատանու վրայ: Հինգ տարուայ դժոխային աշխատանքի շրջանում նա մխիթարութիւն է գտնում միայն գրքերի աշխարհում. գիւղական պատանին անյագ ծարաւով սկսում է կարդալ ռուս, եւրոպական եւ հայ կլասիկներին: Նրա մտաւոր զարգացման վրայ անջնջելի հետք են թողնում հայ առաջաւոր մամուլը, հրապարակախօսներն ու գրողները՝ Խաչատուր Աբովեանը, Ղազարոս Աղայեանը, Միքայէլ Նալբանդեանը, Պերճ Պռօշեանը, Գաբրիէլ Սունդուկեանը եւ միւսները: Այդ տարիների մասին այսպէս է գրում Յովհաննէս Թումանեանը:

”...Էսպէս էլ իմ կարդացած ու սիրած գրքերից մէկը եղաւ ”Հիւսիսափայլը’’։ Սրանով պէտք է բացատրել էն երեւոյթը, որ իմ էն ժամանակներում գրած ու 1890-1892 թւականներին Մոսկւայում տպւած ոտանաւորների մէջ պատահում են ’’Հիւսիսափայլի’’ ոչ միայն ոճերն ու դարձւածքները, այլ մինչեւ անգամ բառերն ու բառերի ձեւերը...’’։

Այս ազդեցութիւնը եղաւ այն արահետը, որ հետագայում լայնացաւ, մեծացաւ եւ Թումանեանին դուրս բերեց համաշխարհային գրականութեան ու կուլտուրայի ուսումնասիրութեան մեծ ճանապարհը։ Նա ուսումնասիրում է Պուշկինին, Լերմոնտովին, Նեկրասովին, հոգեկան հարազատութեամբ կապւում նրանց հետ, ընթերցում եւ խորապէս սիրում համաշխարհային գրականութեան ’’Երկու հսկայական արեգակներին’’՝ Շեքսպիրին ու Սերվանտէսին, ինչպէս նաեւ Գէօթէին, Հայնէին, Բերանժէին։

1886 թւականին լոյս են տեսնում նրա երկու նշանաւոր լեգենդները՝ ’’Շունն ու կատուն’’ եւ ’’ Անբախտ վաճառականները’’, 1887 թւականին՝ ”Գութանի երգը”, ’’Հին օրհնութիւն” բանաստեղծութիւնները եւ ” Մարօ” պոեմը։ Այս գործերում արդէն ընդգծւում է բանաստեղծի խոշոր անհատականութիւնը։ 1890 թւականին Մոսկվայում տպագրւում է նրա բանաստեղծութիւնների առաջին գիրքը, 1892 թւականին՝ երկրորդ գիրքը։ Այնուհետեւ մի շարք ժանրերով լայնօրէն զարգանում է Թումանեանի ստեղծագործութիւնը։ Շուտով նա դառնում է հայ գրական աշխարհի կենտրոնական դէմքերից մէկը, որը վիթխարի ազդեցութիւն է թողնում գրական-հասարակական կեանքի վրայ։

1892 թւականից մինչեւ 1902-1903 թւականները Թումանեանն ապրեց ստեղծագործական վերելքի բուռն շրջան, ստեղծելով իր անմահ պոեմները, բալլադներն ու բանաստեղծութիւնները, ինչպէս եւ արձակի լաւագոյն մասը։ Նա գրում է ’’Լոռեցի Սաքօն’’ 1889 թ. , ”Հառաչանք” 1890 թ. ,”Դէպի անհունը’’ 1894 թ. , ’’Սասունցի Դաւիթը’’ 1902 թ., ”Թմկաբերդի առումը’’ 1902 թ., 1901-1902 թւականներին Թումանեանը մշակեց, կատարելութեան հասցրեց հռչակաւոր ’’Անուշ’’ պոեմը։ Ուշագրաւ երեւոյթ են նրա փիլիսոփայական քառեակները, որոնք գերազանցապէս ստեղծւել են առաջին համաշխարհային պատերազմի տարիներին։1917 թւականին Թումանեանը գրում է ”Թագաւորն ու չարչին’’ նշանաւոր լեգենդը, այնուհետեւ ծրագրում է իր երկու մեծ երկերը՝ ’’Հազարան բլբուլը” եւ ”Սասունցի Դաւիթ’’ էպոսի մշակումը ամբողջութեամբ, բայց, դժբախտաբար, չի կարողանում աւարտել։

Յովհաննէս Թումանեանը իր ստեղծագործութիւններով նպաստեց հայ կուլտուրայի զարգացմանը, գրականութեան ժողովրդայնութեանն ու դեմոկրատացմանը: Անմրցելի հանճարով նա կարողացաւ արտացոլել հայ ժողովրդի կեանքն ու հոգեբանութիւնը՝ հսկայաքայլ առաջ մղելով հայրենական գրականութիւնը:Նա պոեզիայի մէջ հասաւ անհասանելի բարձրութեան, ստեղծելով երկեր, որոնք իր իսկ բնորոշմամբ աչքի պէս պարզ են եւ աչքի պէս բարդ: Նրա ստեղծագործութիւնը նպաստեց նաեւ միւս արուեստների զարգացմանը, նրա պոեմները երաժշտական հիանալի երկերի նիւթ եղան: Թումանեանի արուեստը ստեղծեց մեծ դպրոց,որի ներկայացուցիչները դարձան հայ նորագոյն գրականութեան խոշոր դէմքերը:

Օգտագործել - օգտակար կերպով գործ ածել:
Զուգակցել - միացնել:
Ժանր - տեսակ:
Տկլոր - մերկ:
Կարաս - կաւէ աման:
Սերտօրէն - մօտիկ, սեղմ:
Անփոխարինելի- միակ, հատը չունեցող:
Ցրտահար - ցուրտը տարած:
Գունատ - տժգոյն, գոյնը նետած:
Մեռելատիպ - մեռելի տեսք:
Կոլեկտիւ - հաւաքական:
Ձանձրալի - տխուր:
Հոգեմաշ - հոգին մաշող:
Անջնջելի - չջնջուող:
Անհուն - անսահման:
Ուշագրաւ - ուշքը գրաւող:
Գերազանցապէս- մեծապէս:
Կուլտուրա - մշակոյթ:
Արտացոլել - դուրս ցոլացնել, դրսեւորել:

ՊԱՊՍ

գրեց Հայաստան Գէորգեան

Էն օրերին մեր միակ մխիթարութիւնը Սարիբեկ պապս էր ։ Նա մօրս շատ նման էր. բարձրահասակ,բարակ, խորը կապոյտ աչքերով եւ խարտեաշ մազերով։ Նա միշտ հայկական տարազով էր-սեւ արխալուղ, լայն շալւար, վրայից սեւ մահուդ չուխայ, մէջքին ոսկէ գօտի, գլխին աստրախանի գտակ։Դեռ հեռուից տեսնում էինք նրան եւ ուրախացած բոլորս միասին ընդառաջ վազում։ Մեզ նկատելիս, նա իսկոյն ձիուց ցած էր իջնում, փաթաթւում, համբուրում մեզ եւ հերթով իր հրաշալի կարմիր ձիուն-Ջոհրաբին նստեցնելով, քաշում էր նրան իր յետեւից եւ աշխոյժ հարց ու փորձով տուն էինք գալիս։ Նրա գոյնզգոյն խուրջինի մէջ ինչե՞ր ասես չկային մեզ համար. գաթայ, հալւայ, տեսակ-տեսակ անուշեղէններ, պատրաստւած մեծ մօրս-Սոփի խաթունի ձեռքերով։ Բայց իմ ամբողջ ուշադրութիւնը գրաւում էր պապիս ձին։ Այդ ձին դեռ այսօր յիշողութեանս մէջ անբաժան է իմ պապից։ Մարդը եւ կենդանին այնպէս էին ներդաշնակում միմեանց որ ես մէկին առանց միւսին չեմ կարող երեւակայել։ Ջոհրաբը մի հպարտ կենդանի, աշխէտ, բարձր վզով եւ մեծ, խելացի աչքերով։ Այդ աչքերը այնքա՜ն հասկացող էին։ Ջոհրաբը շատ էր կապւած պապիս եւ բացի նրանից ոչ ոքի չէր հնազանդւում։ Երբ պապս բարակ եւ ուղիղ նրա վրայ նըստած անցնում էր գիւղի միջով, բոլորի աչքերը հետեւում էին նըրանց հիացմունքով եւ զարմանքով։ Հպարտ Ջոհրաբը անհամբեր օտարների հանդէպ, թոյլ էր տալիս մեզ ժամերով խաղալ իրա հետ։ Ես բարձրանում էի նրա մսուրը, ցած քաշում կենդանու հպարտ գըլուխը եւ փորձում պարանոցի վրայով նրա մէջքին նստել։ Մեծ պապըս շատ անգամ զարմանում էր, որ Ջոհրաբը երբեք չէր փորձում ազատւելու. բայց խելացի կենդանին կարծես հասկանում էր որ երեխաների հետ գործ ունի։ Եւ երբ պապս մեզ նրա մէջքին էր նստեցնում, ձին դանդաղ եւ զգոյշ քայլերով էր շարժւում, կարծես վախենում էր մեզ ցած գցել։

Ամենամեծ երջանկութիւնը ինձ համար նրան ջրելու տանելն էր։ Սանձից ամուր բռնած, ես քաշում էի կենդանուն իմ յետեւից, իջնում բլուրից ներքեւ, հասնում ջրաղացի առուն։ Ես աշխատում էի պապիս նման շւացնել եւ զւարճացած նայում էի, թէ որպիսի՜ ագահութեամբ Ջոհրաբը ջուր էր խմում։ Բայց մի օր նա գլխիս մի խաղ խաղաց։ Երբ հպարտ հպարտ մեր տան դարն էի բարձրանում, յանկարծ նա պոկւեց ինձանից եւ թռչկոտելով ու ուրախ ուրախ խրխընջալով վազեց դէպի դաշտերը։ Սարսափած, իսկոյն հարայ հրոց գըցեցի, մարդիկ օգնութեան վազեցին, ընկան նրա յետեւից,բայց Ջոհրաբը սլանում էր քամու նման եւ շուտով անհետացաւ բլուրի յետեւը։ Շնչասպառ վազեցի պապիս մօտ, բայց նա միայն ծիծաղեց։’’Մի վախենա, քէֆ է անում, յետ կը գայ’’ ասեց նա։ ”Սարօ ջան, ձին քամի է առել պնչները, կը գնայ, կը կորչի, էլ նրան որտեղի՞ց ես գտնելու”, միջամտեց տատս։ Պապս դուրս եկաւ մեզ հետ, չորս կողմը նայեց։ Ջոհրաբը չկար։ Պապս շարունակեց գնալ, մի քանի րոպէից յետոյ սկսեց բարձր շւացնել։ Ջոհրաբը չերեւաց։ Պապս սկսեց վազել. մի արտաշափ անցնելուց յետոյ կանգնեց եւ երգեց հնչուն ու սրտանց։ Հեռուից լըսւեց ուրախ խրխնջոց եւ մի վայրկեանում Ջոհրապը կանգնեց նրա առաջ, քրտնած, կրակոտ աչքերով։ Գլուխը դէպի պապս թեքեց, սպասեց։ ’’ Խելառ ձիս, էդ ի՞նչ խաղեր ես անում’’, ասեց պապս, փաղաքշելով կենդանու վիզը եւ աչքերը։ ’’Իր մօր տիպարն է, իր մայրն էլ խենթ էր, բայց մի օր նրա խենթութիւնը փրկեց կեանքիս երջանկութիւնը,իմ ամենաթանկագին գանձը’’, ասեց պապս մեղմօրէն։Ես ականջներս սրեցի. ’’Ե՞րբ պապի ջան’’. ’’Ախ,սրանից շատ տարիներ առաջ, երբ մեծանաս,քեզ ամբողջը կը պատմեմ, հիմա չես հասկանայ’’։ ”Պապիկ, հիմա պատմիր”, պահանջեցի ես. այնքան ատում էի մեծերից յաճախ կրկնւած նախադասութիւնը. ’’Երբ մեծանաս’’։ ’’Ոչ սիրելի’’, ասեց պապս վճռական եւ տուն գնաց։ Տատիկս էր, որ մի լուսնեակ երեկոյ, մեր պարտէզում,մեզ հետ քարի վրայ նստած, պատմեց մեզ պապիս եւ Ջոհրաբի մօր մասին։ Եւ նրա պատմածը հէքիաթի նման էր։

’’Հարուստ էր պապիդ ընտանիքը, սկսեց տատս, բայց Զարփաստ Ներսէսը իր սիրուն քրոջը Արփիին, որի վրայ պապդ աչք ունէր, չէր ուզում նրան կնութեան տալ։ Ոչ մի լուրջ պատճառ չունէր մերժելու, ինքը աղքատ էր եւ դրա համար էլ մեծ պատիւ էր, որ Սարիբեկը ուզում էր իր քրոջը. բայց հակառակւում էր, պարզապէս կամակորութիւնից։ Որպէս զի քոյրը ծածուկ յարաբերութիւն չանի պապիդ հետ, օրերով փակում էր նրան տանը եւ նոյն իսկ չէր թողնում որ աղբիւրից ջուր բերէ։ Իսկ պապդ հալւում, մաշւում էր սիրուց։ Մի օր էլ, ամօթը մի տեղ նետած, գալիս կանգնում է իր մօր առաջ եւ ասում. ’’Մէրիկ ջան, ճար արա, վառայ, անցայ ներսի կրակից. կամ Արփին իմ կինն է լինելու,կամ գլուխս կ’առնեմ, կը կորչեմ, կը գնամ սար ու ձոր, չոլ ու դուրան,էլ ինձ չես տեսնի’’։Մայրը շատ էր սիրում պապիդ, է՞հ, ո՞ր մայրը չէ սիրում իր որդուն.տղի խօսքերը վրդովեցնում են նրան, մի պահ միտք է անում ու կանչում. ’’Բալամ, կորչելու ի՞նչ կարիք կայ, քեզ նման ջիւանը ուրիշ ճամբայ չունի՞. աղջիկը կամքով քեզ չեն տալիս, վերցրու զօռով, կարօտդ առ. ես քեզ կ’օգնեմ ինչով որ կարող եմ, իմ էլ աչքս կպել է աղջկան”: Խորհուրդ են անում մայր եւ որդի, պայմանաւորւում: Ու մի օր, արեւամուտին, Սարիբեկ պապիդ մայրը գնում է Չարփաստ Ներսէսի տան մօտերքը, որը գերեզմանոցին կից էր գտնւում եւ սկսում է բարձր խօսել. ” Ամա՜ն, հորթերս չկան.մէկն էլ չի երեւում որ ինձ օգնի, աչքերս լաւ չեն տեսնում”: Արփին լըսում է այդ խօսքերը, գլուխը դռնից դուրս է հանում. ”ի՞նչ կայ, նանի ջան, ի՞նչ ես փնտռում":"Ա՜խ, արեւիդ մեռնեմ,հորթեւս փախել են, ասեցին էս կողմերն են եկել, վախենամ էս ձորն են ընկել, ու մէկը չկայ որ ինձ հետ փնտռի, գտնեմ”: Հայ աղջիկը կարո՞ղ է մի ծեր կնոջ չօգնել: Արփին իսկոյն դուրս է գալիս տանից եւ սկսում է գերեզմանոցում հորթերը փնտռել. երբ մօտենում են Արփաչայի ձորին, պապդ որ կազմ ու պատրաստ քարափի յետեւը սպասում էր, իսկոյն վրայ է պրծնում, գրկում ապշած աղջկան, գցում ձիու վերայ եւ ինքն էլ թռչում թամքին, Արփիի երկար շէկ հիւսերը ձեռքին է փաթթում եւ սաստում՝ ”որ ծպտուն հանես, ծամերդ կը պոկեմ". եւ դառնալով մօրը՝ ”Մնաս բարով, նանի ջան” ասում եւ մտրակում է ձին, էն է որ տեսար: Իսկ մայրը յետեւից խաչ է հանում, օրհնում է նրանց ճանապարհը: Այն ժամանակ Ռուսները կուի մէջ էին Թուրքերի հետ եւ Ղօշաւանքը դեռ Թուրքերի երկիր էր: Հազիւ էր մի քանի րոպէ անցել, երբ Չարփաստ Ներսէսը գլխի է ընկում, գիւղը իրար է անցնում եւ մի քանի մարդկանց հետը վերցնելով, հարայ հրոցով, զէնք ու զրահով ընկընում է փախստականների յետեւից: Բայց Ջոհրաբի մայրը, արագավազ եւ հաւատարիմ, գնդակների տարափի տակ-Ներսօն վճռել էր սպանել պապիդ- լողալով ճեղքում է Արփաչայը անանցանելի եւ ամենավտանգաւոր տեղից, եւ դուրս է հանում ձիաւորին իր թանկագին որսի հետ գետի միւս ափը: Այն ժամանակ Արփաչայը սահմանն էր: Հիմայ պապդ ռսի հողի վերայ էր: Այնտեղ մի գիւղում պապդ պսակւեց Արփիի հետ. եւ երբ մի տարուց յետոյ մայրդ ծնւեց, նա վերադարձաւ հայրենի տունը: Ներսէսը էլ ոչինչ չէր կարող անել նրան: Երեխան հաշտեցրեց թըշնամիներին: Բայց Չարփաստ Ներսօն Ներքուստ երբէք չհաշտւեց պապիդ հետ. քանդեց իր տունը, որպէս զի նրա հետ բարեկամութիւն եւ հարեւանութիւն չանի եւ գնաց հաստատւեց գիւղից դուրս, դաշտերի մէջ: Այնտեղ էլ ապրում է մենակ եւ բոլորից հեռու: Բնաւորութիւնը այդպէս է ”:

Իմ առաջ պատկերանում է Արփի մամիս անոյշ դէմքը: Ես էլ կը փախցնէի նրան: Եւ պապս ու մամս աւելի փարելի, աւելի սիրելի են դառնում ինձ։

Շալւար - տաքատ
Չուխայ - վերնազգեստ
Աստրախանի գդակ-մորթէ գլխարկ
Մսուր - խոտի օթեակ
Դար - բարձունք
Խրխինջ - ձիու ձայն
Պնչները, պինչ - քիթ, ռունգ
Չոլ ու դուրան-անապատ
Ջօռ-ոյժ
Շէկ-կարմրադեղին

ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ ՏՕՆԵՐԸ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հատուած

Գրեց Րաֆֆի

Տարօ՜ն, բնազաւառ Հայոց աստուածների եւ աստուածուհիների։ Ահա կրկին երեւաց վեհափառ Արածանին, Հայոց սրբազան Գանգէսը։ Եօթանասուն տարի առաջ՝ այդ գետի ափերի մօտ դեռ ազատ ու համարձակ արածում էին սպիտակ արջառները, որ նուիրուած էին Անահտայ տաճարին։ Եօթանասուն տարի առաջ՝ այդ գետի ափերի մօտ դեռ վազվզում էին Հայոց դիցուհու եղջերուները, որոնց պարանոցները զարդարուած էին ոսկեայ օղամանեակներով։ Այդ գետի ափերի մօտ մի ժամանակ տեսաւ նրանց Լուկուլլոս հռոմէացին եւ սքանչացաւ։

Սամուէլի աչքի առջեւն էր այդ գետը։ Սամուէլն անցնում էր Քարքէ լեռան վրայով։ Դեռ վաղեմի դիցանուէր անտառները հովանաւորում էին այդ լեռան գեղեցիկ բարձրաւանդակները։ Եւ Սամուէլի տխուր յիշողութիւնները թռչում էին դէպի անցեալը, դէպի ոչ այնքան հեռաւոր անցեալը։ Այդ անտառների մթութեան մէջ, այդ սքանչելի բարձրաւանդակների վրայ կանգնած էին Հայոց յաշտից տաճարները։ Այնտեղ Հայաստանը հաշտութեան զոհեր էր մատուցանում իր աստուածներին։ Կարծես Սամուէլը հէնց այդ րոպէին տեսնում էր ”Վիշապաքաղ” Վահագնի տաճարը–քաջութեան աստուծոյ տաճարը, որ լցուած էր Հայոց թագաւորների զանձերով։ Նրա մօտ բարձրանում էր ’’Վահագնի սենեակը”, որի մէջ կանգնած էր Հայոց անպարտելի դիւցազնի գեղեցկուհին՝ ’’ոսկեծոյլ” Աստղիկը։ Տեսնում էր եւ ’’ոսկեմայր”, ”ոսկեծին’’ Անահտի տաճարը, որի մայրական խնամակալութեան ներքոյ Հայաստանը մի ժամանակ վայելում էր փառք եւ կենդանութիւն։ Այդ երեք մեծազանձ տաճարների խումբը ներկայացնում էր Հայոց ’’յաշտից տեղերը”։

Այդտեղ Հայոց տարեմուտին, Նաւասարդ ամսի սկզբում, կատարւում էր ընդհանրական աշխարհախումբ տօնախմբութիւնը։Յայտնւում էր Հայոց արքան, յայտնւում էր Հայոց մեծ քրմապետը, յայտնւում էին եւ Հայոց նախարարները։ Արքան իր ձեռքով բաց էր անում զոհաբերութեան մեծ հանդէսը, հարիւր սպիտակ ցուլ՝ ոսկեզօծ եղջիւրներով՝ զոհ մատուցանելով իր աստուածներին։ Նրա օրինակին հետեւում էին բոլոր մեծամեծները։ Նոր տարին բերում էր իր հետ եւ նոր կեանք։ Հայաստանն այդ տօնախմբութեան ժամանակ պէտք է ցոյց տար իր աստուածներին իր անցեալ տարուայ յառաջադիմութեան պտուղները։ Վահագնը քաջութիւն էր պահանջում, Անահիտը՝ արհեստ, իսկ Աստղիկը՝ սէր եւ բանաստեղծութիւն։

Կատարւում էին հանճարի եւ քաջութեան մրցութիւններ։ Բանաստեղծն իր յօրինած երգն էր երգում, երաժիշտն ածում էր բամբիռը, ըմբիշը իր բազուկների ոյժն էր ցոյց տալիս, իսկ վարպետը՝ իր արւեստի արդիւնքը։ Լինում էին զինախաղեր, լինում էին մենամարտութիւններ, քաջը քաջի հետ եւ մարդը՝ կատաղի ցուլի կամ գազանի հետ։ Լինում էին արշաւներ՝ ձիերով, կառքերով կամ ոտով, արագավազ եղջերուների հետ։ Յաղթողը ստանում էր այն վարդեայ պսակներից մէկը, որոնցով զարդարւած էր լինում Աստղկան՝ վարդերով վառւած տաճարը։ Այդ պատճառով այդ տօնախմբութիւնը կոչւում էր Վարդավառի տօնախմբութիւն։

Նոր տարին բերում էր իր հետ եւ նոր կեանք։ Հին տարին անցնում էր։ Պէտք էր քաւել հին մեղքերը եւ նորոգւած մաքրութեամբ մտնել նոր կեանքի մէջ։Կատարւում էր ընդհանրական մկրտութիւնը։ Մեծ քրմապետն առնում էր Արածանիի ալիքներից սուրբ ջուրը եւ ոսկեայ ցընցուղով արձակում էր բազմութեան վրայ։ Նրա օրինակին հետեւում էին բոլոր ուխտաւորները, ամենքը միմեանց վրայ ջուր էին սրսկում։ Այդ միջոցին օդը լցւում էր սպիտակ աղաւնիների բազմութեամբ։ Իւրաքանչիւր ուխտաւոր մի աղաւնի էր թռցնում։ Եւ սիրոյ աստւածուհու՝ Աստղկան նուիրական թռչունները, մաքուր ու ամբիծ որպէս անարատ ոգիներ, սաւառնում էին, սլանում էին ու ճախր առնում նրա սպիտակ, մարմարեայ տաճարի շուրջը։

Զո՜հ, ջո՜ւր եւ աղաւնի՜, որքան մեծ խորհուրդ կայ ձեր մէջ -հաշտութեան, քաւութեան եւ սիրոյ սուրբ խորհուրդը։ Ամեն տարեմուտի սկզբում, Նաւասարդ ամսին, Հայաստանը այդ հաշտութիւնը կընքում էր իր աշխարհախումբ զոհաբերութեան արիւնով՝ ’’յաշտից’’ տեղերում, Քարքէ լեռան բարձրութիւնների վրայ։ Բայց այդ աւանդութիւնը շատ հին էր, աւելի հին՝ քան ժամանակների սկիզբը, քան ջրհեղեղը։ Այդ համաշխարհային մկրտութիւնից յետոյ՝ Նոյ նահապետն առաջինն եղաւ, որ Նաւասարդի սկզբին Արարատ լեռան գագաթից թռցրեց աստւածային սիրոյ աւետաբեր աղաւնին։ Յետոյ դուրս գալով տապանից՝ Նա նոյն լեռան ստորոտում մատոյց հաշտութեան առաջին զոհը։

Անցան դարեր, երկա՜ր դարեր։ Եւ այդ աւանդութիւնը դարձեալ կատարւում էր Հայոց աշխարհում, մինչեւ նոյն աղաւնին յայտնւեցաւ

Յորդանանի ջրերի վրայ։ Նոյն այդ աւանդութիւնը սրբագործեց եւ քրիստոնեայ Հայաստանը, դարձեալ Վարդավառի տօնախմբութեամբ։ Հեթանոսական տաճարների տեղում՝ Լուսաւորիչ հիմնեց Հայաստանի առաջին Մայր Եկեղեցին, որ պահպանելով իր հին անունը՝ կոչւում էր Աշտիշատի վանք։ Վարդավառի նախնական սովորութիւնները մնացին։ Ոսկին, արծաթը, մարմարիոնը հեշտ էր կործանել, բայց այն զգացմունքը, որ միացած էր ժողովուրդի սրտի եւ հոգու հետ, այն հաւատը,որ նա ունէր դէպի իր հայրենական աստւածները–դրանք դեռ մնում էին եւ մնացին շատ դարեր, այդ կործանումից յետոյ։ Սուրը եւ հուրը չկարողացան ոչնչացնել նրանց։ Կրօնը փոխւեցաւ, բայց ժողովրդի վաղեմի սովորութիւնները մնացին։

Դարձեալ տարին եօթն անգամ յայտնւում էր այնտեղ Հայոց քրիստոնեայ թագաւորն իր նախարարների եւ Հայոց մեծ քահանայապետի հետ եւ բաց անում Աշտիշատի վանքի աշխարհախումբ տօնախմբութեան հանդէսը։ Դարձեալ զոհեր էին մատուցանում, աղաւնիներ էին թռցնում եւ ջուր սրսկում միմեանց վրայ։ Դարձեալ կատարւում էին նոյն խաղերը,նոյն մրցութիւնները եւ նոյն պարգեւաբաշխութիւնները, որ լինում էին հեթանոսական դարերում։ Նոյն վարդերը, որ մի ժամանակ զարդարում էին Աստղկան տաճարը, յետոյ զարդարում էին Աշտիշատի վանքի սուրբ սեղանը։ Եւ այդ տօնը դարձեալ կատարւում էր Նաւասարդ ամսի սկզբում ու կոչւում էր Վարդավառի տօնախմբութիւն։

"ՆԱ ԻՄ ՈՐԴԻՆ Է"

գրեց Շիրվանզադէ

Հալածանքների ծանր օրեր էին:

Կովկասը հեծեծում էր Պետերբուրգից եկող հրահանգների ներքոյ: Տեղական իշխանութիւնները այդ հրահանգները գործադրում էին ստրկական դաժանութեամբ, առանձնապէս հայերի վերաբերմամբ:

Ճիշտ այդ օրերին մի խումբ տաքարիւն երիտասարդներ աշխատում էին կազմել մի խոշոր յեղափոխական կուսակցութիւն ցիրուցան հայ ոյժերից: Վտանգի ենթարկելով իրանց ապահովութիւնը, նոյնիսկ կեանքը, նրանք գործում էին աւելի եռանդով, քան ոստիկանութիւնը: Սակայն, ամեն ինչ կատարւում էր խուլ անկիւններում. կարելւոյն չափ զգոյշ: Երկիւղը չէր պահանջում այդ, այլ գործի լրջութիւնը եւ գաղափարը, որ սրբութիւն էր ամենքի համար:

Միայն մի անկիւն կար, ուր կուսակցութեան հիմնադիրները համեմատաբար ազատ էին զգում իրանց: Եւ, զարմանալի երեւոյթ, ճիշտ այդ անկիւնն էր ամենից աւելի աչքի զարնողը, հետեւաբար եւ աւելի վտանգաւորը: Դա մի համեստ տուն էր, հնաշէն, գրեթէ կիսախարխուլ. գտնւում էր Փոխարքայի պալատի կռնակում, այն է՝ Թիֆլիսի կենտրոնական փողոցներից մէկի վրայ, որ կրում էր Պետրոս Մեծի անունը: Տան առջեւ կար մի բաւական ընդարձակ պարտէզ, որ կից էր պալատի պարտէզին եւ որ նրանից բաժանւած էր մարդու հասակի բարձրութեամբ մի պարսպով: Իսկ փողոցի կողմից, տան ճիշտ դէմ ու դէմ Թիֆլիսի նահանգապետ իշխանը ազգով վրացի էր եւ երդւեալ թշնամի ամեն մի յեղափոխական շարժման:

Յաճախ այդ տան մէջ էին տեղի ունենում կազմակերպւող կուսակցութեան ժողովները: Այստեղ հիմնադիրները խօսում ու վիճաբանում էին աւելի ազատ ու համարձակ, քան ուրեւէ եւ ոչ ոք չէր վախենում, որ մի օր ոստիկանները կարող էին ներս խուժել եւ ամենքին ձերբակալել:

Տանտէրը մի փոքրահասակ մարդ էր, միջին տարիքի, ամրակազմ, վերին աստիճանի խոհուն դէմքով: Ազգով հայ էր նա, դիրքով ռուս »չինովնիկ» պաշտօնեայ : Նա վարում էր Կովկասի վարչական կարեւոր պաշտօններից մէկը: Աստիճանով քաղաքացիական ժեներալ էր: Բազմանդամ ընտանիքի հայր էր, բարձրակիրթ, պարկեշտ, մի քիչ նահապետական, բայց ազատամիտ: Նա յարգւած էր ամբողջ քաղաքից առանց ազգերի եւ կրօնների խտրութեան: Ունէր շատ բարեկամներ երկրի բարձր շրջաններում: Մէկն էր այդ բարեկամներից իշխան Շիրվաշիձէն:

Յետոյ, շատ յետոյ իմացւեց, որ բարեսիրտ վրացի իշխանը հայ ժենրալին մի քանի անգամ ասել է.

-Պատուիրեցէք ձեր որդուն, որ ժողովների ժամանակ գոնէ փողոցի կողմի լուսամուտները փակէ: Չէ՞որ ես ամեն գիշեր անցնում եմ նրանց առջեւով եւ ակամայ լսում այդ անվերջ վիճաբանութիւնները:

Այն էլ ասեմ, որ այդ տանը մէջ ապրող ընտանիքի սովորական լեզուն ռուսերէնն էր: Այդ լեզւով էին, շատ քիչ բացառութեամբ, խօսում եւ վիճաբանում եւ ժողովների մէջ:

Ժողովները լինում էին բացառապէս երեկոները եւ երբեմն տեւում էին մինչեւ լոյս:

Ցերեկը ուրիշ գործ էր կատարւում այնտեղ: Ամեն օր, առաւօտից սկսած պարտէզին նայող ընդարձակ եւ երկայն պատշգամի վրայ կարելի էր տեսնել մօտ 24-25 տարեկան միջահասակ, ամրակազմ, եռանդուն դէմքով, սեւաթոյր, վառվռուն աչքերով մի երիտասարդ, շրջապատւած տարօրինակ պղնձեայ կաթսաներով,ափսէներով եւ այլ ու այլ պարագաներով: Ինչպէս մի միջնադարեան ալքիմիկոս, նա շարունակ ինչ-որ հեղուկներ ու փոշիներ խառնում էր իրարու, կանխապէս կարդալով սեղանի վրայ դրած ինչ-որ գիրք: Նա միշտ խորասուզւած էր անհասկանալի աշխատանքի մէջ եւ այնքան յափշտակւած իր գործով, որ ոչ մի ձայն, ոչ մի աղմուկ չէր գրաւում նրա ուշադրութիւնը: Մերթ ընդ մերթ պատշգամի վրայ երեւում էր ալեխառը մազերով մի ոչ բարձրահասակ կին համեստ հագնւած եւ, լօռնէտը մօտեցնելով իր կարճատես աչքերին, նայում էր երիտասարդին,նայում էր տարօրինակ ափսէներին եւ գլուխը տարակուսանքով շարժելով, ասում էր.

-Բաւական է որդի, թող այդ վտանգաւոր գործը, դու կարող ես քեզ եւ մեզ փորձանքի մէջ ձգել:

Երիտասարդը չէր պատասխանում նրան, որովհետեւ նրա լսելիքը փակ էր դրսի աշխարհի համար: Բայց երբ կինը մօտենում էր նրան, ձեռը դնում էր նրա ուսի վրայ ուշադրութիւնը գրաւելու համար, այն ժամանակ նա ասում էր.

-Մայր, թող ինձ հանգիստ, մի խանգարիր, գնա ներս:

Եւ մայրը, ցածր հառաչելով հեռանում էր, վասնզի, ճանաչելով իր որդու յամառ ու կրակոտ բնոյթը, չէր համարձակւում գրգռել նրան: Նա միայն մտածում էր.

-Ով գիտէ, գուցէ նա իրաւացի է:

Շաբաթներ տեւեց երիտասարդի աշխատութիւնը:

Մի օր նա իջաւ պատշգամից պարտէզ եւ սկսեց այստեղ գործել։ Նա փորեց հողի մէջ մի փոքրիկ,բայց բաւական խորը փոս։ Այնտեղ նա սրբազան զգուշութեամբ տեղաւորեց մատնաչափ մի բան։ Այդ բանին նա միացրեց մի պղնձեայ բարակ ու երկայն պարան, փոսը ծածկեց հողով եւ պարանի միւս ծայրը բերեց պատշգամ ու այնտեղ միացրեց նրան մի ինչ-որ առարկայի հետ։ Այնուհետեւ նա մի քանի վայրկեան կանգ առաւ, մտածեց, տատանւեց, նայեց աջ ու ձախ, փակեց տան պատշգամ նայող դռները, նորէն մօտեցաւ պարանին, նորէն նայեց աջ ու ձախ։ Վերջապէս, նա մի վճռական շարժում անելով, աջ ձեռի ցուցամատը սեղմեց պարանի ծայրին միացրած կոճակի վրայ։

Լսւեց մի սոսկալի թնդիւն։ Այնտեղ, ուր փոսն էր,երկրից պոկւելով մի խոշոր հողակոյտ, օդը լցրեց թանձր փոշիով։ Պատշգամի վրայ գտնւած իրերը իրարու զարնւելով, թափւեցին պարտէզի մէջ։ Տան լուսամուտների ապակիները ջարդուփշուր եղան, եւ թռան դէպի պարտէզ. սենեակներից դուրս նետւեցին մի շարք սարսափահար դէմքեր, որոնց թւում եւ երկու փոքրիկներ։ Թնդիւնն այնքան զօրեղ էր, որ փողոցի հեռաւոր բնակիչներն անգամ դուրս վազեցին իրանց տներից։

Երբ փոշին նօսրացաւ, եւ օդը պարզւեց, պատշգամի վրայ, ջարդւած առարկաների բեկորների մէջ երեւաց երիտասարդը արձանի պէս անշարժ։ Նա սպրդնած էր թղթի պէս եւ հայեացքը յառել էր այն կողմ, ուր փոսն էր։ Նրա դէմքն արտայայտում էր մի տեսակ դիւային հրճուանք։ Թւում էր, որ նա գոհ էր իր կատարած գործից։

-Տեսա՞ր, տեսա՞ր,- գոչեց նրա մայրը, երբ ուշքի գալով իմացաւ թէ ինչ է պատահել,- դու մեզ կործանեցիր։

-Ոչ, մայր, այսուհետեւ պիտի կործանւեն մեր ազգի թշնամիները,- ասաց երիտասարդը ուրախութիւնից յուզւած ձայնով,- փործը սպասածիցս աւելի յաջող եղաւ։ Ի՜նչ ոյժ, ի՜նչ զօրութիւն։

Պարտէզի մէջ երեւացին մի խումբ շփոթւած ոստիկաններ։

-Այստե՞ղ, Նորին Պայծառափայլութեան պալատի քո՞վ,- գոչեց նրանցից մէկը, որ գլխաւորն էր,- ձերբակալեցէք այդ մարդուն։

Ոստիկանները յարձակւեցին երիտասարդի վրայ։

Այդ վայրկեանին պատշգամի վրայ երեւաց ժեներալը, հանգիստ, անվրդով։

-Թողէք նրան ազատ,- ասաց նա հանդարտ ձայնով,- նա իմ որդին է։

Գլխաւոր ոստիկանը, աջ ձեռը մօտեցնելով իր գլխարկին իբրեւ պատուի նշան, արտասանեց.

-Լսում եմ, ձերդ գերազանցութիւն։

Ապա, դառնալով իր ընկերներին, հրամայեց.

-Գնանք, այս տան մէջ չարագործ չի կարող լինել։

Կոնստանդին Խատիսեանն էր երիտասարդը։

Նա որոշել էր Հ. Յ. Դաշնակցութեան պէտքերի համար Պարսկաստանում հաստատել ռումբերի գործարան եւ կանխաւ փորձում էր, թէ որքան զօրեղ պիտի լինի իր պատրաստելիք ռումբերի ոյժը։

Փորձը յաջողեցաւ, եւ նա երջանիկ էր։

Լօրնէտ-ակնոց
Սպրդնած-տժգոյն, գոյնը նետած

ԳԻՔՈՐԸ

գրեց Յովհաննէս Թումանեան

Գիւղացի Համբօի տունը կռիւ էր ընկել: Համբօն ուզում էր իր տասներկու տարեկան Գիքորին քաղաք տանել եւ գործի տալ, որ մարդ դառնայ, աշխատանք անի: Կինը չէր համաձայնում: ”Չեմ ուզում, իմ մատաղ երեխին էն կրակ աշխարհքը մի գցի, չեմ ուզում”, լալիս էր կինը: Բայց Համբօն չլսեց:

Մի խաղաղ, գեղեցիկ առաւօտ էր. մի տխուր առաւօտ: Տանեցիք ու հարեւանները եկան մինչեւ գիւղի ծայրը, Գիքորի Թշերը պաչեցին ու ճամբայ դրին:

Առաջին իրիկունը հիւր եղան մի գիւղում: Տանտէրը Համբօի հին ծանօթն էր: Միւս օրը քաղաք մտան, իջան բազար:

”Էտ երեխին ծառայ ես տալո՞ւ”, խանութի ներսից հարցրեց մի վաճառական: ”Հրամանք ես”,ասաւ Համբօն ու Գրիքորին մի կողմը հրրեց:

-Բեր, ինձ տուր, ես կը բռնեմ, առաջարկեց վաճառականը:

Նրան ասում էին բազազ Արտեմ: ”Հինգ տարի դեռ փող չեմ տայ’’, ասաւ բազազը պայմանը կապելիս: ’’Թէ ճիշտը կ’ուզես, դեռ դու պէտք է տաս, որ քո որդին բան է սովորելու: Ախր իսկի բան չգիտի...”

-Ո՞րտեղից գիտենայ, աղայ ջան, պատասխանեց Համբօն, որ գիտենար, էլ ո՞ւր կը բերէի: Ես էլ բերել եմ, որ բան սովորի...

-Կը սովորի, ամեն բան կը սովորի:

-Իմ հոգն էն է, աղա ջան, որ մարդ դառնայ, լեզու սովորի, գրել-կարդալ սովորի, նստել-վեր կենալ սովորի, մարդ ճանաչի, որ աշխարհքումն ինձ նման խեղճ ու զուրկ չմնայ ..:

Բազազը Համբօին միամտացրեց ու դուրս գնաց, բարձր- բարձր հրամայելով. ’’Թէյ բերէք, հաց բերէք սրանց համար...”

Եւ հայր ու որդի նստած էին բազազ Արտեմի խոհանոցում: ”Դէ, հիմի դու գիտես, Գիքոր ջան, տեսնեմ՝ ինչ տեսակ տղայ ես դուրս գալի... Հէնց պէտք է անես, որ... ես ինչ գիտեմ... ո՞վ Տէր Աստւած...”, մռնչաց Համբօն ու չիբուխը լցրեց:

Խանութում Գիքորին ապրանք կը տային՝ յաճախորդների հետ տանելու, յետոյ չիթ կը ծալէր, խանութը կը սրբէր, իսկ պարապ ժամանակը յաճախորդ կը կանչէր: Եւ ահա մի օր էլ Գիքորը հաց է տանում խանութը: Կերակրամանը ձեռքին, մաշւած ու տժգոյն մեծ-մեծ ոտնամանները քաշ տալով անց է կենում կամուրջով: Նայեց ներքեւ: Քարվանսարանների բարձր պատերին զարկելով ծառս էր լինում Քուռը, ոլորւում, պտտւում ու ճնշւելով խեղդւում, խուլ թշշում կամուրջի տակին:

Ափին մօտիկ պտտւում էր մի կանաչ նաւակ: Երկու հոգի կային նըրա մէջ. մինը ուռկան էր ձգում, միւսը նաւն էր կառավարում: ” Այ, հիմի կը հանի”, ասաւ Գիքորն ու կանգնած նայում էր ձկներին: Ուռկանը դատարկ դուրս եկաւ:

-Էս մինն էլ...

Բայց այդ ժամանակ մօտիկ քարվանսարայի դռանը աղմուկ բարձրացաւ: Մի պարսիկ կապիկ էր պար ածում երգելով:Ժողովուրդը հաւաքւել էր գլխին ու չորս կողմից վազում էին մարդիկ: Գիքորն էլ վազեց: Աշխատեց կանգնած ժողովրդի արանքը մտնել, առաջ անցնել, չկարողացաւ: Վիզը ձգեց, պճեղների վրայ կանգնեց ու ճգնում էր անպատճառ տեսնել, թէ ինչ է կատարւում մէջտեղը:

-Ի՞նչ ես ներս խցկւում, գնա՛ քու բանին, ասաւ մի կինտօ ու զարկեց Գիքորի գլխին: Գիքորը յանկարծ սթափւեց ու վազեց դէպի խանութ ...

Իրիկունը Գիքորը կուչ էր եկել խոհանոցում: Դեռ արտասուքը չէր ցամաքել նրա երեսին, դեռ այրւում էին գործատիրոջ ապտակների տեղերը:

Իսկ առաւօտը նա կրկին կանգնած էր խանութի դռանը ու կանչում է շարունակ. ’Էստի համեցէք, էստի համեցէ՛ք’’ ... Ձմեռ է: Բուքը, Վզզալով մտնում է անկիւնները, աղքատի ու տկլորի է ման գալիս, պանդուխտ ու անտէր երեխայ է որոնում: Ահա գտաւ Գիքորին: Մի բարակ բլուզ հագին, խանութի դռանը կանգնած՝ ձայն էր տալիս նա. ” Էստի համեցէք, էստի համեցէք":

Հրէ՞սս-շարախինդ սուլելով ցուրտը, աներեւոյթ թրի նման զարկեց անցաւ ոսկորները. ու Գիքորը դողաց: Առանց այն էլ նա շատ էր մաշւած, այդքանն էլ հերիք էր նրան: Ու անկողին ընկաւ: Հիւանդ պառկած էր Գիքորը խոհանոցում: Բազազ Արտեմի մայրը օրը մի քանի անգամ ներս էր մտնում, իրեն-իրեն խօսելով. ” Ի՞նչ կ’ուզես, որդի Գիքոր ”: ” Ջո՞ւր ...”

Ծեր կինը շուտ-շուտ ջուր էր տալիս: Հիւանդը դողդոջուն ձեռներով բռնում, ագահ խմում էր ու կրկին ուզում: ’Էս սիրտս հովացընում չի, մայրիկ... ես մեր աղբիւրի սառը ջրիցն եմ ուզում... ես մեր տունն եմ գնում... ես իմ նանին եմ ուզում...”

Բազազ Արտեմը ցաւի մէջ էր ընկել։ Նա դէս-դէն ընկաւ, նրանց կողմերից մարդ գտաւ, ապսպրեց որ Համբօն գայ, իսկ Գիքորին տարաւ քաղաքային հիւանդանոց։ Էստեղ շատ հիւանդներ կային, շարքերով պառկած։ Տխուր տնքում էին ու իրար նայում անզօր հայեացքներով։ Գիքորին էլ պառկեցրին նրանց շարքում։

Էստեղ գտաւ նրան հայրը։ ''Էտ ի՞նչ ես եղել, Գիքոր ջան'' , մղկտալով վրայ ընկաւ Համբօն։ Գիքորը տաքութեան մէջ չիմացաւ հօր գալը։

" Գիքոր ջան, տես, եկել եմ, Գիքոր ջան... ես քո ապին եմ է...'' Հիւանդը ոչինչ չհասկացաւ։ Նա զառանցում էր ու զառանցանքների մէջ կանչում էր. '' Ապի՞, նանի՞...''

-Էստեղ եմ, Գիքոր ջան. Նանը ղրկել է, որ քեզ տանեմ մեր տունը... գալիս չե՞ս... Միկիչն ու Ջանին հրէն կտերը կանգնած քեզ ճամբայ են պահում։ Ի՞նչ ես ասում, դէ խօսի է՞, Գիքոր ջան։

-Էստի համեցէք, էստի համեցէք, բացագանչեց հիւանդը եւ զանազան անկապ, կցկտուր խօսքեր ասաւ։ Ու ծիծաղում էր տաքութեան մէջ ...

Մի երկու օր յետոյ Համբօն գնում էր իրենց գիւղը։ Նա թողել էր Գիքորին ու գնում էր։ Կռան տակին տանում էր նրա հագուստները, որ մայրը լաց լինի վրան։ Գրպաններում մի քուռն փայլուն կոճակներ, նախշուն թղթեր, չթի կտորներ ու մի քանի քորոց գտան։ Այն էլ, երեւի, քրոջ համար էր հաւաքել ու պահել։

Գնում էր Համբօն ու մտածում։ Շատ ժամանակ չէր անցել, որ այդ միեւնոյն ճամբով քաղաք եկաւ իր Գիքորի հետ։ Ահա այստեղ էր, որ նա ասաւ. " Ապի, ոտներս ցաւում են...'' Եւ ահա այն ծառը, որի տակ նստեցին հանգստանալու...

Ահա այնտեղ էր, որ ասաւ. "Ապի, ծարաւ եմ..." Ահա այն աղբիւրն էր, ուր ջուր խմեցին... Ամե՞նը, ամե՞նը կան, մենակ նա չկայ...

Միւս օրը, երբ Համբօն անցնում էր լեռները, հեռուն երեւաց իրենց գիւղը։ Գիւղից դուրս կանգնած սպասում էին նանը, քոյրը՝ Ջանին, եղբայրները՝ Միկիչը, Մօսին, իսկ փոքրիկ Գալօն էլ մօր գրկից կանչում էր.

-Արի՛, արի՛, հէ Գիքոլ ...

Բազար - շուկայ

Բազազ - կերպասավաճառ

Աղա - պարոն

Չիբուխ - ծխամորճ

Չիթ - կերպաս

Հիմի - հիմա, այժմ

Քարվանսարայ-ճամբորդների օթեւան

Պճեղ - ոտքի մատների ծայրը

Էստի - այստեղ, այս կողմ

Բլուզ - վերնաշապիկ

Չարախինդ-չար ծիծաղ

Դէս-դէն-այս ու այն կողմ

Ապսպրել-յանձնարարել

Կտեր - կտուր

ԳԻՇԵՐԻԱՅ ՍԱՐՍԱՓԸ

Գրեց Ա. Շիրվանզադէ

1905 թուականի ամառն էր: Հայ-Թրքական ընդհարումները տակաւին չէին դադարել եւ ընդհակառակը սպառնում էին աւելի ու աւելի տարածուել Կովկասում: Թիֆլիսում գործում էր մի միջազգային ’’Հաշտարար Յանձնաժողով", որի անդամներից մէկն էլ ես էի:

Մի օր իրիկնադէմին ինձ մօտ եկաւ Մելիք-Ասլանով անունով մի Թուրք ինժինեօր, որ յանձնաժողովի անդամներից մէկն էր: Նա յուզւած էր ու գունատ: Դա մի շատ խելացի եւ հայ-Թրքական հաշտութեան ու փոխադարձ բարեկամութեան ամենաանկեղծ կողմնակիցն էր բոլոր Թուրքերի մէջ:

-Ի՞նչ է պատահել,- հարցրի ես, նկատելով նրա անսովոր դրութիւնը:

-Շտապեցէք հագնուել ու դուրս գալ, ճամբին կ'ասեմ:

-Բայց ո՞ւր պիտի գնանք:

-Շտապեցէք, ժամանակ չկայ: Կառքը դրսում սպասում է:

Դուրս եկանք միասին, կառք նստեցինք:

-Դէպի Թրքական արուարձանը,-պատուիրեց Մելիք-Ասլանովը կառապանին:

Ապա, դառնալով ինձ, պատմեց, որ Թուրքերի մէջ լուր է տարածուել, թէ Դաշնակցականները որոշել են մի տեսակ Բարդողիմէոսական գիշերի ենթարկել տեղական Թուրքերին, այսինքն՝ բոլորին կոտորել:

-Ես համոզւած եմ, որ այս լուրը հնարովի է, աւելացրեց Մելիք-Ասլանովը,- սակայն Թուրք ազգաբնակութիւնը խորապէս յուզւած է եւ պէտք է նրան հանգստացնել:

-Ես ի՞նչ կարող եմ անել,- հարցրի ես:

-Շատ բան: Թուրքերը մեծ հաւատ ունին դէպի ձեզ եւ ձեր խօսքը կարող է ազդել նրանց վրայ: Այս րոպէիս մենք գնում ենք Շէյխ-ուլ-Իսլամի տունը: Ինքը՝ Շէյխն այստեղ չէ, գնացել է այս երեկոյ Սալեան: Եթէ նրանք գնան, ամբողջ Թուրք ազգաբնակութիւնը հետեւելու է նրանց: Իսկ դուք գիտէք, թէ ի՞նչ կը նշանակէ խուճապը 20-25 հազար մարդկանց: Պէտք է համոզէք Շէյխի ընտանիքին, որ տեղից չշարժուէ:

Կառքը կանգ առաւ քաղաքի արեւելեան ծայրում եւ մենք իջանք գրեթէ վերջին տան առջեւ: Այստեղ էր կենում Շէյխի ընտանիքը: Մելիք-Ասլանովն ինձ առաջնորդեց մի ընդարձակ սրահ, որ մի վարագոյրով բաժանուած էր երկու մասերի:

-Դուք պէտք է ներողամիտ լինէք դէպի մեր աւանդութիւնները: Թըրքուհին չունի իրաւունք օտար տղամարդի ցոյց տալու իր դէմքը: Խօսեցէք այստեղից, տիկինը վարազոյրի ետեւումն է:

Ես սկսեցի գիտցածիս չափ թուրքերէն լեզուով համոզել տիկնոջը,որ երկիւղի ոչ մի տեղի չկայ, որ հայերը բնաւ չունին որեւէ տրամադրութիւն կուելու իրանց դարաւոր հարեւանների հետ, մանաւանդ գիշերը տմարդաբար կոտորելու անմեղ մարդկանց:

-Բայց ասում են հայերը չեն, այլ ֆեդայիները, Դաշնակցականները:

-Տիկին, Դաշնակցականներն էլ ինձ պէս հայեր են: Երդւում եմ,որ նրանք այդպիսի չար մտադրութիւն չունին եւ չեն կարող ունենալ:

Վերջ ի վերջոյ, ես կարողացայ համոզել տիկնոջը, որ չհեռանայ քաղաքից:

-Օրհնւիս դու,-ասաց թրքուհին,-հաւատում ենք քեզ. գնա, կը մնամ տեղս:

Մենք հեռացանք:

-Այժմ գնանք պտտելու տներն ու խանութները: Պէտք է գոնէ ազդեցիկներին տեսնել ու նոյնպէս համոզել, որ չփախչեն:

Արդէն մութն էր: Բոլոր թրքական խանութները փակ էին: Մեր կառքը կանգ էր առնում իւրաքանչիւրի առջեւ, Մելիք-Ասլանովը զարկում էր դռներին եւ իր անունն ասում: Դռները կամացուկ բացւում էին եւ ես իւրաքանչիւր խանութի ներսում տեսնում էի խումբ խումբ մարդիկ, գունատ, սարսափահար: Մեծ ջանք էր հարկաւոր այդ մարդկանց հանգստացնելու համար: Յետոյ ես իմացայ, որ լուրը տարածել էր արուարձանի ոստիկանապետ, նշանաւոր պրովակատոր Գլեբովը:

Խղճալի էր տեսնել թուրքերին այդ ողբալի վիճակում. եւ ես խղճացի, մոռնալով հայ լինելս:

-Մի վախնաք, ”տին այրի” հաւատով զատ եղբայրներ, ոչինչ չպիտի պատահի այս գիշեր,-ասում էի ես ամէն տեղ, թէեւ միեւնոյն ժամանակ ինքս էլ արդէն սկսել էի կասկածել, որ գուցէ մի բան սպառնում է այդ մարդկանց:

Մենք այցելեցինք այդպիսով 40-50 խանութներ ու տներ, ամենուրեք կրկնելով միեւնոյնը:

-Այժմ գնանք գլխաւորի մօտ, ասաց Մելիք-Ասլանովը եւ մեր կառքը կանգ առաւ մի առանձնակի տան առջեւ: Այստեղ էր կենում Հաշտարար Յանձնաժողովի թուրք անդամներից ամենաազդեցիկը, Լոռուայ յայտնի կալուածատէր Եղիզարովը: Մի աւազակաբարոյ արարած, ռուս սպայի համազգեստով: Յետոյ իմացուեց, որ նա է մէկը Թուրքերի հայասպան շարժման գըլխաւոր պարագլուխներից Լոռուայ շրջանում: Առանց այս գիտնալու, ես բնազդմամբ ատում էի այդ մարդուն եւ հազիւ կարողանում էի թագցնել նրանից իմ ատելութիւնն ու արհամարհանքը: Ինձ տեսնելով, նա մի փոքր շփոթուեց:

-Բէգ,-դարձաւ նրան Մելիք-Ասլանովը,-ահա պարոն Շիրվանզադէն կարող է ձեզ համոզել, որ այս գիշերւայ մասին տարածուած լուրերը սուտ են:

Բէգը նստած էր թախտի վրայ եւ նարգիլէ էր ծխում: Նրա առջեւ ոտքի կանգնած էին երկու յաղթանդամ երիտասարդ Թուրքեր, ձեռները ըստ պարսկական սովորութեան իրանց կրծքի վրայ դրած:

Բէգը արհամարհանքով ժպտալով, արտասանեց,-

-Ես ուրախ եմ, որ այդ լուրերը ճիշտ չեն, ապա թէ ոչ մեծ գլխացաւ պիտի պատճառէին ինձ: Այսօր Լոռուից մարդիկ էին եկել ինձ հարցնելու, արդեօք, ժամանա՞կ է, որ զինուած խմբերը քաղաք մտնեն: Ես նրանց յետ ուղարկեցի, ասելով, որ ժամանակին ես ինքս կը յայտնեմ:

Ապա, դառնալով իր ծառաներից մէկին, ասաց

-Աղա, Մութալիմ, բեր այստեղ նոր գնած ատրճանակս:

Ծառան չքացաւ եւ իսկոյն յետ եկաւ զէնքը ձեռքին: Բէգը ատրճանակը վերցնելով, դարձաւ Մելիք-Ասլանովին:

-Գիտե՞ս, սրա գնդակը անցնում է բազկիս հաստութեամբ հինգ տախտակի միջով:

Այս ասելիս, նա ատրճանակի խողովակն ուղղեց դէպի ինձ:

Յետոյ նա, ատրճանակը մի կողմ դնելով, վերցրեց քովը պատի դէմ դրած հրացանը եւ նրա խողովակն էլ դէպի ինձ ուղղելով, ասաց.

-Իսկ սրա գնդակը հազար քայլից դէն է անցնում:

Այս կոմեդիան ինձ թւաց թէ ծիծաղելի եւ թէ զզւելի: Ես վճռեցի պարծենկոտ բէգին մի քիչ խրատել:

-Պարոն,- ասացի ես ամենայն սառնասրտութեամբ,- եթէ ձեր այդ ցոյցերով ուզում էք ինձ վախեցնել, կարիք չկայ: Ես կէս գիշերին մէն մենակ մի հայ եմ այստեղ, այն էլ անզէն, իսկ դուք չորս Թուրքեր էք իմ դէմ ամենքդ զինուած: Ես ոչ մի երկիւղ չունիմ ձեզնից: Դուք այստեղ կարող էք ինձ սպանել, բայց լաւ գիտցէք, որ վաղն եւ եթ ամենքդ կը կոտորուէք շատ ու շատ ձեր հայրենակիցների հետ: Ես չեմ, որ պիտի վախենամ ձեզնից, այլ դուք: Ես անցայ մի քանի տասնեակ Թուրք տներ ու խանութներ եւ ամենուրեք տեսայ սարսափահար դէմքեր: Դաշնակցութեան անունը միայն ահ ու սարսափ է ներշնչում Թուրքերին եւ նրանք պատրաստւում են փախչել քաղաքից: Ի՞նչ կը լինէր, եթէ փախչէին, դուք գիտէ՞ք...Բարեկամս պարոն Մելիք-Ասլանովը թող ասէ, թէ ես ի՞նչ նպատակով եմ եկել այստեղ: Չէ՞որ դուք եւս, պարոն, ինձ նման Հաշտարար Յանձնաժողովի անդամ էք: Արդ, դրէք մի կողմ ձեր զէնքերը եւ խօսենք մեր անելիքի մասին: Ասացէք, կարճ ու կտրական, կամենո՞ւմ էք խաղաղութիւն ձգել ձեր յուզուած ամբոխի մէջ, թէ ոչ:

Բէգը կակղեց եւ շփոթուեց:

-Ի հարկէ, յարգելի պարոն, ի հարկէ:Պէտք է հաշտուենք, կուելը տխմարութիւն է:Ես բնաւ մտադիր չէի ձեզ վախեցնելու, կատակ էի անում, հաւատացէք:

Եւ, դառնալով ծառաներին, աւելացրեց.-

-Աղա, թէյ բերէք:

Հարկաւ, հրաժարուեցի այդ մարդու հիւրասիրութիւնից եւ շտապեցի դուրս Մելիք-Ասլանովի հետ, որ իր հայրենակցի արարքից շփոթուել էր:

-Յիմար է եւ տգէտ,- ասաց նա,- այդպիսիներն են, որ դրդում են մեր գռեհիկ ամբոխը:

Արդէն ուշ գիշերը էր, երբ տուն վերադարձայ: Չափազանց անհանգիստ էի, քնել չէի կարող: Ես Դաշնակցութեան հետ ոչ մի կապ եւ ոչ մի յարաբերութիւն չունէի եւ ոչ էլ տեղեակ էի նրա գործերին ու տրամադրութիւններին:Սկսեցի մտածել, թէ մի գուցէ նա իրաւ վճռել է գիշերը դարձընել Թուրքերի համար Բարդողիմէոսական, այն ինչ ես վստահութեամբ համոզեցի մարդկանց, թէ այդպիսի բան չի կարող լինել եւ չկայ:

Հանուած էի, նորէն հագնուեցի ու դուրս եկայ: Այդ օրերը Թիֆլիսի Դաշնակցականները գիշեր ցերեկ փողոցներումն էին, պտտում էին, հսկում կարգադրութիւններ անում, մի տեղ հայերին հանգստացնելով, միւս տեղ խրախուսելով: Գրեթէ ամենքը զինուած էին:

Ես համոզուած էի, որ փողոցում որեւէ մէկին կը հանդիպեմ եւ կը գիտնամ իրողութիւնը: Արդարեւ ես պատահեցի մէկին, գուցէ այդ օրերի համար ամենակարեւորին եւ ամենաազդեցիկին, Գարօ Բաստրմաճեանին:

Ես պատմեցի նրան եղելութիւնը:

-Թուրքերի երկիւղը,-ասաց իր սովորական մեղմ ժպիտով,-այնքան էլ անտեղի չէ: Մեր տղերքը բռնած ունին Թուրք արուարձանի բոլոր կարեւոր դիրքերը, որոշ տեղերում դրուած են նաւթով լեցուն տակառներ: Եթէ մի հատիկ հայի արիւն թափւի, վճռուած է ամբողջ արուարձանը կրակի ենթարկել եւ մեծ ու պզտիկ բոլոր Թուրքերին կոտորել:

Ասաց Գարօն եւ շտապով հեռացաւ։

Բարեբախտաբար, այդ գիշեր Թուրքերը անզօր էին որեւէ հայի արիւն թափելու։ Եւ գիշերն անցաւ առանց արկածների...

Ինժինեօր - ճարտարագէտ.
Արուարձան - քաղաքի դրսի բնակավայր
Երկիւղ - վախ

ՏԷՐ ԹՈԴԻԿԻ ԴՊՐՈՑԸ

գրեց Րաֆֆի

Մայրս իմ փոքր հասակից հոգս էր տանում, որ գիր-կարդալ սովորեմ եւ "մարդ"դառնամ: Տաս տարեկան էի, երբ ինձ մեր թաղի քահանայի մօտ տարաւ: Այն օր Հոգեգալստեան տօնն էր."Հոգեգալուստը լաւ օր է,- ասում էր մայրս ,- եթէ երեխան այդ օրը վարժարան տանես, շատ բան կը սովորի, նրա համար որ Հոգին Սուրբ այսօր առաքեալներին լեզու տւաւ":

Մայրս ինձ վարժապետին յանձնելու ժամանակ ասաց. "Տէր հայր,ծառայ լինեմ սուրբ աջիդ, որդիս քեզ համար ծառայ եմ բերել, միսը քեզ, ոսկորն ինձ, ինչ ուզում ես՝ արա, միայն թէ երեխաս մի բան սովորի":

Տէր Թոդիկ էր վարժապետիս անունը. նա մեծ համարում ունէր ոչ միայն մեր քաղաքի մէջ, այլ մեր ամբողջ գաւառում: Ով մի երազ էր տեսնում, նրա մօտն էր վազում եւ մեկնութիւն խնդրում: Ում երեխան հիւանդանում էր, նրան Նարեկ կամ Աւետարան էր կարդացնել տալիս որ առողջանայ: Ով մի գործ էր կամենում սկսել, նրա "Տէր ողորմեա"-ի վրայ էր փորձում իր բախտը: Մի խօսքով նա մեր գաւառի մարգարէն էր. ամէն մարդ նրա խորհրդին էր դիմում, ամէն մարդ նրանից խրատ էր ընդունում:

Աստւած իմ, ինչեր էին պատմում նրա մասին: Ասում էին՝ տէր հայրն իր եղունգի վրայ մի բան է գրում կամ մի աղօթք է կարդում եւ զարու հատիկները մրջիւնի նման բարձրանում են տան սիւնի վրայով, եւ ընդհակառակը, նրա խօսքով արագաշարժ կարիճը քարացած կանգնում է եւ բնաւ չի շարժւում: Ասում էին ծտերի բերանը աղօթքով կապում է եւ նրանք չեն կարողանում արտերի ցորենն ուտել: Ասում էին՝ դեւերին, սատանաներին բռնում է, լցնում ապակէ սրւակների մէջ եւ այնպէս պահում է, որ մարդկանց վնաս չտան:

Մեր դպրոցը տէր Թոդիկի աւելորդ սենեակներից մէկն էր, անասունների ախոռին շատ մօտ,համարեա կպած: Այն նեղ եւ խեղդւած խուցի մէջ լցւած էր թւով մինչեւ քառասուն աշակերտ: Բացի աշակերտներից այնտեղ կապած էին լինում տէր հօր նորածին հորթերը: Ձմեռը շատ լաւ էր, թէեւ վառելիք չունէինք, բայց ախոռը դասարանի հետ միացնող պատուհանները բաց էինք անում եւ անասունների գոլորշին մառախուղի պէս ներս էր թափւում եւ մեր դասարանը տաքանում էր բաղնիսի պէս:

Ամբողջ դպրոցը բաղկացած էր մէկ դասարանից, նրա մէջ էին աւանդւում թէ բարձր եւ թէ տարրական գիտութիւնները, սկսած այբբենարանից մինչեւ այն ահագին գիրքը, որ ես հազիւ էի կարողանում բարձրացնել եւ որը ”Յայսմաւուրք” էր կոչւում:

Մեր դասարանը բոլորովին մերկ էր, նստարան, աթոռ, սեղան կոչւած բաներ այնտեղ չկային: Աշակերտները ծալապատիկ նստում էին խոնաւ յատակի վրայ, առանց տախտակամածի, որը ծածկւած էր խսիրներով: Վարժապետն իր տակին փռած ունէր այծի մորթի. մի քանի հարուստների որդիները նոյնպէս ունէին փոքրիկ օթոցներ, որ բերում էին իրենց տներից:

Միակ առարկաները, որոնք յիշեցնում էին թէ այդ մթին ու խոնաւ սենեակը դպրոց է, դա ֆալախկան էր եւ մի խուրձ դալար ճիպոտներ:

Աշակերտների մերկ ոտները դնում էին այդ պատժական մեքենայի մէջ, պտտացնելով վեր բարձրացնում, յետոյ դալար ճիպոտներով այնքան հարւածում, մինչեւ ողորմելի զոհը բոլորովին թուլանում եւ ուշաթափ էր լինում: Պատժւող աշակերտին ծեծել էին տալիս նրա բարեկամի կամ ամենասիրելի ընկերի ձեռքով: Եթէ սա հարւածները թուլացնում էր կամ հրաժարւում ծեծելուց, սրան եւս ենթարկում էին միեւնոյն զանահարութեան:

Առաւօտեան վաղ սկսում էր դասատւութիւնը: Վարժապետն իր անկիւնում նստած էր լինում, նրա առջեւ դրւած էր փոքրիկ գրակալ: Աշակերտները հերթով մօտենում էին, վարժապետի աջը համբուրում, չոքում էին նրա առջեւ եւ դասագրքերը դնելով գրակալի վրայ՝ սկսում էին ”համար տալ”: Սովորաբար ամէն մի սխալի համար աշակերտն ընդունում էր ’’խըրատ”ի մի-մի սաստիկ զարկ իր ափին: Իսկ եթէ դասը բոլորովին սերտած չէր լինում,նրա համար պատրաստ էր անիծւած ֆալախկան..:

Այդ ’’խրատ’’ կոչւածը Աստծու մի առանձին պատիժ էր. շինւած էր ամենաամուր փայտից եւ փոքրիկ թիակի ձեւ ունէր: Հին գրքերի մէջ գըտնւած բոլոր ասացւածքները, որոնք վերաբերում էին ծեծելու, զանահարութեան, փորագրւած էին նրա վրայ:

Պատիժների մէջ մինչեւ այսօր չեմ մոռացել մէկը, որը որքան ծիծաղելի, նոյնքան էլ սարսափելի էր: Աշակերտին կանգնեցնում էին ոտքի վրայ եւ երկու ձեռքով բռնել էին տալիս մի աղիւս կամ ահագին Յայսմաւուրքը: Տղան ժամերով այդ ծանր գիրքը պէտք է պահէր գլխից բարձր, երկու ձեռքով: Թեւերը յոգնում էին, ջղերը թուլանում, բայց ոչինչ:

Գլխաւոր տանջանքը նրանումն էր, որ յանցաւորը պէտք է կանգնէր մէկ ոտի վրայ. սովորաբար ընտրում էին ձախ ոտը։ Մի աշակերտ էլ մտրակը ձեռքին, կանգնած նրա մօտ՝ հսկում էր այդ անտանելի մարմնամարզութեան։ Երբ յանցաւորը ոտը գետին էր դնում, ընկերն իսկոյն մտրակով զարկում էր ոտին։ Այդ սատանայական պատժին ես այն աստիճան սովորած էի, որ կարողանում էի սագի նման մէկ ոտի վրայ երկար կանգնած մնալ։

Մեր դպրոցն ունէր նաեւ իր ուրիշ խստութիւնները։ Առաւօտները պէտք է դպրոց գնայինք բոլորովին անօթի։ Թէյի կամ սուրճի գործածութիւնը այն ժամանակ դեռ մեր երկրում մտած չէր։ Իսկ եթէ թանից կամ մածունից նախաճաշիկ անէինք, սաստիկ պատժւում էինք։ Վարժապետն ասում էր."Կուշտ փորով չի կարելի դաս սովորել. երբ մարդ մի բան ուտում է, խելքը պակասում է"։ Եւ նա օրինակ էր բերում ճգնաւորներին, վարդապետներին, որոնք ոչինչ չէին ուտում, բայց իրանցից գրքեր էին շարադրում։

Յիշեալ պատուէրների դէմ զեղծումներ անել անկարելի էր. վարժապետն իսկոյն իմանում էր, երբ աշակերտը մի բան կերած էր լինում։Նախ քան ուսման սկսելը, որ աշակերտի վրայ կասկածում էր, սկսում էր նրա լեզուն քննել, որ տեսնի. արդեօք ծոմը լուծել է, թէ ոչ։ Յայտնի բան է, անսուաղ մարդու լեզուն աւելի սպիտակ է լինում, նրա մակերեւոյթի վրայ ճերմակ փառ է նստած լինում. իսկ երբ մի բան ուտում եւ խմում է, լեզուն մաքրւում է եւ աւելի կարմիր գոյն է ստանում։Այդ պատճառով մենք ամէն առաւօտ ոչ միայն ոչինչ չէինք ուտում, այլ մինչեւ անգամ վախենում էինք երեսներս լւանալու ժամանակ բերաններս մաքրել,որ չլինի թէ մեր լեզւի ճերմակութիւնը սրբւի եւ վարժապետն ասի թէ ծոմը լուծել ենք։ Եւ այդպէս մինչեւ կէսօր մենք պարապում էինք բոլորովին սոված փորով, գլուխներս պտտում էր, աչքներիս առջեւը սեւանում էր սովածութիւնից, դարձեալ ոչինչ չէինք կարողանում սովորել։

Մեր ժամացոյցը պատի ստւերն էր. երբ գետնի վրայ նշանակւած խաչին էր հասնում, գիտէինք որ կէսօր է։ Այն ժամանակ միայն թոյլտւութիւն էինք ստանում ճաշելու։ Բայց ի՜նչ անհամբերութեամբ սպասում էինք, որ ստւերը հասնի խաչին։ Կարծես արեւն էլ մեր վարժապետի նման սիրտ չունէր։

Ճաշն ուտում էինք դասարանի մէջ։ Աշակերտներն իրենց հետ էին բերում բոլոր պաշարը եւ անուշ պատառներից բաժին էին հանում տէր հօրը, այնպէս որ, Նրա մասն աւելի ճոխ էր լինում եւ բազմատեսակ,մինչեւ անգամ երէցկինն ու Նրա որդիներն էլ կերակրւում էին տէր հօր սեղանից։

Ճաշից յետոյ թէեւ մենք մի քանի ժամ հանգիստ ունէինք, բայց խաղերը սաստիկ արգելւած էին։ Խաղը համարւում էր մի տեսակ չարութիւն որ ընդդէմ էր համեստութեան կանոններին։ Աշակերտը պէտք է լինէր լուռ, անշարժ, ամօթխած եւ խոնարհ։Այդ պատճառով սաստիկ պատժւում էր աշակերտը, երբ Նրան Նկատում էին խաղալիս․ աւելի վատ, երբ Նրա մօտ գտնւում էին խաղալիքներ։ Երբեմն մեր դպրոցում անակնկալ խուզարկութիւններ էին լինում, աշակերտների գրպաններն որոնում էին։

Ես աղքատ էի, մայրս դժւարութեամբ էր կարողանում վճարել իմ ամսականը․ դրա փոխարէն կատարում էի վարժապետիս տնային գործերը։ Առաւօտից մինչեւ երեկոյ հանգստութիւն չունէի,աղբիւրից խմելու ջուր էի բերում, կովերի համար խոտ էի քաղում դաշտից, հորթերը բռնում էի,մինչեւ երէցկինը կովերը կթում էր, եւ եթէ ուրիշ գործ չէր լինում, ճաշից յետոյ Նստում էի վարժապետիս կողքին, ճանճերն էի քշում, որ Նա անուշ քնի...

Երբ մեր թաղում մկրտութիւն էր լինում կամ թաղում, այն օրը վարժապետիս համար հարսանիք էր, իսկ մեզ համար մահ։ Աշակերտներից մի քանիսը, որոնք հասակով մեծ էին եւ տիրացութիւն անել գիտէին, վերցնում էին տէր հօր փիլոնը, Մաշտոցը, բուրվառը ու քահանայական այլ սպասներ եւ գնում էին խորհրդի տեղը։ Իսկ մեզ Նստեցնում էր միմեանցից հեռու, մեր հագուստի փէշերը տարածում գետնին, Նրանց վրայ ածում էր մանր աւազ, յետոյ աւազը դրոշմում էր փայտէ կնիքով, որ յատկապէս դրա համար պատրաստւած էր։ Երեւակայեցէք մեր դրութիւնը․ ամբողջ ժամերով պէտք է մեխւած մնաս գետնին, մի շարժում անել կարող չես, որովհետեւ իսկոյն աւազը կը խառնւի, կնիքը կը լուծւի եւ վարժապետը հոգիդ կառնի։

Այսպիսի պատիժների խիստ յաճախ ենթարկւում էի ես։ Հօ մեռել չէ՞ի, որ անշարժ մնայի։Վարժապետը դառնում էր տուն մի փոքր տաքացած գլխով, գտնում էր կնիքը լուծւած, այն ժամանակ պատրաստ էր կամ անիծւած փալախկան կամ մերկ ծնկներով չոքելը՝ աղիւսի մանրած կտորների կամ թէ աւազի խոշոր հատիկների վրայ։ Դարձեալ պէտք է անշարժ մնայի։

Լինում էին օրեր, որ պատիժն ընդհանուր էր դառնում․ աշակերտները բոլորը միասին պատժւում էին։ Տարւայ մէջ մի քանի անգամ մենք արձակուրդ էինք ունենում: Մեծ արձակուրդները լինում էին Զատկի եւ Ծննդեան տօներին՝ մի-մի շաբաթ: Երբ տօներից յետոյ աշակերտները նորից հաւաքւում էին դպրոց, մեր վարժապետն առանց խտրութեան աշակերտների ոտները դնում էր ֆալախկայի մէջ եւ բոլորին հաւասարապէս ծեծում: Ինչո՞ւ համար: Այդ նրա համար էր, որ գուցէ աշակերտներն արձակուրդներին իրենց տներում կամ դրսում որեւէ անկարգութիւն արած լինէին: Այդ կարծեցեալ անկարգութիւնն ստուգել անհնարին էր, ուրեմն պէտք էր թէ մեղաւորին եւ թէ անմեղին հաւասարապէս պատժել: Այս բարբարոսութեան մէջ մի ուրիշ միտք էլ կար: Ինչպէս լաւ ձիաւորը, ձին նստածին պէս, տալիս է մի քանի մտրակի զարկ, որ թմրած անասունը զգաստանայ, զրգուի, այնպէս էլ մեր վարժապետը հանգիստ օրերից յետոյ լարում էր մեր մտաւոր ուժերը ճիպոտներով, որ սթափւէինք, որ վայրենացած կեանքից կրկին ընտելանայինք դպրոցական կեանքին:

Մեր վարժապետը չարասիրտ մարդ չէր, ընդհակառակը, նա շատ բարի էր: Այս բոլոր խստութիւնները, այս բոլոր անհանգստութիւններն առաջ էին գալիս նրա հասկացողութիւնից:Նա համոզւած էր որ առանց ծեծի, առանց տանջանքի աշակերտը ոչինչ չի սովորի: Նա այնքան հաւատում էր իր ֆալախկային, որքան հաւատում էր թալիսմաններին եւ կախարդական արարողութիւններին, որոնցով հրաշքներ էր գործում:

Առաջին անգամ վարժապետը ձեռս տւաւ այբբենարանը: Կարծես այս րոպէին էլ աչքիս առջեւն է այն խոշոր տառերով տպւած փոքրիկ տետրակը: Ճակատին նկարած էր մի մեծ խաչ, խաչի տակ գրւած. ’’Խաչ օգնեա ինձ”: Մի քանի ամիս երեսս խաչակնքելով, կրկնում էի այդ երեք բառը: Վարժապետս ասում էր. ’’Եթէ ամէն դասի սկզբում խաչի օգնութիւնը չխնդրես, ոչինչ չես կարող սովորել’’: Բայց երեւում էր, որ խաչն էլ խռովել էր իմ գլխին:

Ես մինչեւ այսօր չեմ կարող ազատւել այն ծանր եւ անախորժ տպաւորութիւնից, որ թողել էր ինձ վրայ այբբենարանը: Նրա ամէն մի տառը կարծես թէ ուզում էր վիշապի նման ինձ կուլ տայ: Գիշերներն անգամ հանգիստ քուն չունէի.երազիս մէջ նոյնքան տանջւում էի, որքան դպրոցում: Ինձ թւում էր թէ՝ Նուն կապիկի նման առջեւս պպզած՝ իր ռեխը ծռելով ուզում էր ինձ վախեցնել. Ռան մի մեծ մողէս դարձած՝ վազում էր, որ ծոցս մտնի: Ամէնից աւելի ես ատում էի Մէն, նա միշտ երեւում էր ինձ վիզը ծռած ուղտի պէս, իսկ ես շատ էի վախենում ուղտից:

Այս դպրոցի մէջ ես անցկացրի ամբողջ եօթը տարի:Այս եօթը տարւայ ընթացքում ես անցայ գիտութեան բոլոր աստիճանները, այսինքն սովորեցի այնքան, որքան կարող էր սովորել այն ժամանակ մի բարձր ուսում ստացող աշակերտ: Կարդացել էի բոլոր գրքերը, որ յայտնի էին մեր երկրում: Սաղմոս,Ժամագիրք, Աւետարան, Հին Կտակարան, Նարեկ եւ մինչեւ անգամ այն ահագին գիրքը, որ ես փոքր հասակումս դժւարութեամբ կարողանում էի վերցնել: Ես կարողանում էի գրել եւ գրածս կարդալ: Ես գիտէի նաեւ մի քանի կանոններ գրաբառ լեզւի քերականութիւնից: Բայց մի բան, որ ես չկարողացայ ձեռք բերել, դա վարժապետիս ունեցած խորին գիտութիւնն էր ոգիների կախարդութիւնների մասին: Այդ գիտութիւնը վարժապետը պահում էր որպէս մի գաղտնիք, որին մասնակից լինելու համար պէտք էր տասը-քսան տարի ծառայել նրան:

Հոգեգալուստ Pentecost

Հոգին Սուրբ Holy Ghost

ծառայ լինեմ սուրբ աջիդ - ծառայ լինեմ քեզ

սուրբ Աջ Holy Right Hand (of St. Gregory, in A-n Church)

վարժապետ - տարրական դպրոցի ուսուցիչ

Նարեկ, Աւետարան կարդալ հիւանդի վրայ, որ առողջանայ (A-n folk usage)

Նարեկ - Գրիգոր Նարեկացու աղօթագիրք (10th century)

Տէր ողորմեա AA Lord have pity!

կարիճ scorpion

խեղդուած խուց, որի օդը անբաւարար է:

տախտակամած - տախտակով ծածկուած յատակ

գրակալ, գրքակալ - գիրք դնելու սեղան

տէր հայր - ամուսնացած քահանայ

երէցկին - տէր հօր կինը

օգնեա (գրաբար) - օգնիր

ռեխ - անասունների բերան

բուրվառ - censer

փիլոն - քահանայի վերնոց

սպաս - sacred service (in church)

համարում ունենալ - յարգել

"ՍԱՄՈՒԷԼ" ՎԷՊԸ ԵՒ ՆՐԱ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԱՐԺԱՆԻՔՆԵՐԸ

Սովետական վերլուծութիւն

Րաֆֆին իր ծրագրային-քաղաքական վէպերից յետոյ պատմավէպին անցնելով՝ գեղարւեստական զարգացման տեսակէտից նոր խոշոր քայլ է անում դէպի առաջ: Յատկապէս ” Սամւէլի” մասին կարելի է ասել, որ այն, առհասարակ, հայ վիպասանութեան լաւագոյն նմուշներից մէկն է, որն իր արժանիքներով մտնում է համաշխարհային կուլտուրայի շրջանակները:

Վէպի թեման Րաֆֆին վերցրել է 4-րդ դարի հայոց պատմութեան անցքերից: Նա իր վէպի սիւժետային զարգացման հիմքում դրել է պատմական այն մոմենտը, երբ պարսից Շապուհ արքան հայոց Արշակունի թագաւոր Արշակ երկրորդին իր մօտ բանակցութիւնների կանչելով՝ դաւադրաբար բանտարկել էր Անյուշ բերդում: Պարսկական բանակները ներխուժել էին Հայաստան՝ դաւաճան իշխաններ Վահան Մամիկոնեանի եւ Մեհրուժան Արծրունու գլխաւորութեամբ: Երկրում բորբոքւում է ազատագրական պայքարը՝ պետականութիւնն ու անկախութիւնը պահպանելու համար: Այդ պայքարը պսակւում է յաղթանակով եւ Արշակի որդու՝ Պապի թագաւորելով: Այս վերջին իրադարձութիւնը, որը ” Սամւէլում” չկայ, հեղինակը, հաւանաբար, պէտք է պատկերէր վէպի վերջին 4-րդ մասում, որը սակայն, նա չհասցրեց գրել: Այսուհանդերձ, ” Սամւէլը” գեղարւեստական տեսակէտից Րաֆֆու ամենաամբողջական երկն է, չնայած սիւժետային մի քանի անցքերի լուծումը մնում է առկախ, օրինակ՝ ծանր վիրաւոր Մեհրուժանի հետագայ վիճակը, Դրաստամատի՝ Արշակի մօտ գնալուց յետոյ Արշակի վիճակը, բայց քանի որ գլխաւոր հերոսը՝ Սամւէլը սիւժետային զարգացման մէջ կարելի է ասել սպառիչ կերպով ցուցադրւում է եւ վէպի վերջին մասում նա արդէն հանդէս է գալիս այնպիսի կարեւորագոյն դէպքերի մէջ, որպիսիք են հօր եւ մօր սպանելու դէպքերը, ապա վէպը բոլորովին կիսատ մնացած գործի տպաւորութիւն չի թողնում:

Եւ իրօք, վէպի վերջում, երբ Սամւէլը մօրն սպանելու ժամանակ ասում է իր նշանաւոր խօսքերը եւ բազմութեան միջից լսւում է ”Արժանի՛ էր” բացագանչութիւնը, դրանից յետոյ, ընթերցողը լիովին բաւարարւած՝ բնաւ չի զգում էլի որեւէ բանի շարունակելու անհրաժեշտութիւն:

Րաֆֆին վէպի առաջաբանում իրաւամբ զանգատւում է, որ հայ անցեալի պատմութեան թեմաներով վէպ գրելու համար հեղինակի առաջ շատ դըժւարութիւններ են ծառանում: Նա ճիշտ կերպով նշում է, որ մեր հին պատմագիրները չեն նկատել, որ բացի թագաւորներից, իշխաններից, հոգեւորականներից Հայաստանում կար եւ ժողովուրդ, որն իր հոգեկան եւ բարոյական հակումներն ունէր, նրանք մոռացել են ժողովրդի մի նշանաւոր տարրը՝ կինը: Նրանք մեզ տեղեկութիւններ չեն թողել մեր հասարակութեան զանազան խաւերի կենցաղի, ընտանեկան կեանքի, ապրած տների մասին, այն մասին, թէ նրանք ինչպէս.էին ապրում ’’իբրեւ մարդ’’:’’Բայց վէպի համար հարկաւոր է ընթացիկ, շարժուն կեանքը իւր բոլոր երեւոյթներով եւ ոչ թագաւորների կամ իշխանների աշխարհակալութեան կամ պարտութեան չոր ու ցամաք տարեգրութիւնը’’,-գրում է հեղինակը: Չնայած ստեղծագործութեան համար այսպիսի անհրաժեշտ տւեալների պակասութեանը, Րաֆֆին, այնուամենայնիւ, հայ եւ օտար աղբիւրների մանրակրկիտ ու նըրբանկատ ուսումնասիրութիւններ կատարելով, ինչպէս եւ իր ստեղծագործական երեւակայութեան ուժով կարողացել է անհրաժեշտ չափով պակասը լըրացնել եւ ստեղծել իր պատմական հերոսների համար կոնկրետ, կենդանի սոցիալական եւ կենցաղային միջավայր ու սքանչելի կերպով պահպանել պատմական կոլորիտը:

Րաֆֆին վէպի մէջ ծաւալւող պատմական դէպքերի համար իբր աղբիւր օգտագործել է գլխաւորապէս Փավստոս Բիւզանդի եւ Մովսէս Խորենացու ’’Հայոց պատմութիւն’’-ները, որոնց մէջ նոյն ժամանակաշրջանի բազմաթիւ տարբերութիւններ կան: Պէտք է ասել, որ իր վէպի գաղափարական մտայղացման համապատասխան սիւժետային զարգացում ստեղծելու եւ իր ընտրած գլխաւոր հերոսին ցուցադրելու ու բնութագրելու համար Րաֆֆին բաւական ազատ է վարւել պատմական որոշ դէպքերի բուն յաջորդականութեան եւ իսկութեան վերաբերմամբ ու ժամանակաշրջանի ոգուն համապատասխան ստեղծել է նաեւ նոր անցքեր: Այսպէս, օրինակ, Մուշեղ Մամիկոնեանը Շապուհի վրայ յարձակւում է Թաւրիզի մօտ, Պապի Հայաստանում թագաւորելուց յետոյ, մինչդեռ վէպում այդ պատմական եղելութիւնը նկարագրւած է Մուշեղի՝ Պապին Հայաստան բերելու նպատակով Բիւզանդիա գնալուց առաջ:

Սակայն այս եւ ուրիշ դէպքերում հեղինակի թոյլ տւած ազատութիւնը բնաւ չի անդրադարձել վէպի պատմականութեան, հետեւաբար եւ գեղարուեստական արժէքի վրայ: Կարեւորն այն է, որ Րաֆֆին հայ ժողովըրդի պատմութեան այդ ժամանակաշրջանի անցքերի պատմական էութիւնը, ներքին պատճառականութիւնը հիմնականում ճիշտ է ըմբռնել: Պէտք է ասել, որ այդ տեսակէտից՝ իրադարձութիւնների էութեան ճիշտ գնահատման տեսակէտից, վիպասանը շատ բարձր է կանգնած իրեն ժամանակակից բուրժուական պատմագիրներից: Այսպէս՝ նա գլխաւոր հերոսներից շատերի գործողութեան շարժառիթներին չի տալիս նեղ անձնական բնոյթ, այլ այդ հերոսներին ներկայացնում է որպէս ժամանակի հայ ֆէոդալական հասարակութեան ներսում եղած քաղաքական որոշ տենդենցների, ուղղութիւնների կրողներ ու ներկայացուցիչներ: Ճիշտ է, օրինակ, Մեհրուժան Արծրունու ապստամբութեան շարժառիթների հիմքում Րաֆֆին անձնական պատճառներ է տեսնում՝ սէրը Որմիզդուխտի նկատմամբ , բայց Վահան Մամիկոնեանին մի կողմից, Մուշեղ եւ Սամուէլ Մամիկոնեաններին միւս կողմից, ներկայացնում է որպէս տարբեր ու հակառակ քաղաքական ուղղութիւնների պարագլուխներ եւ ներկայացուցիչներ: Այլ խօսքով ասած, Րաֆֆին ընդհանրապէս իր կերպարների միջոցով հիանալի բացայայտում է այն կոնկրետ քաղաքական եւ սոցիալական հանգամանքները,որոնց հետեւանքով երկրում ստեղծուել է այդպիսի ծանր դրութիւն: Վէպի պատմականութեան խորութիւնը նախ եւ առաջ պայմանաւորում է նրա գեղարուեստական մեծ արժէքը:

Րաֆֆին մեծ վարպետութիւն է հանդէս բերել դէպքերով հարուստ մեր անցեալի այդ բարդ ժամանակաշրջանը՝ սիւժետային կոնկրետ զարգացման մէջ ներկայացնելու իմաստով: Հասկանալի է, որ հեղինակը չէր կարող իր վերցրած ժամանակաշրջանի բոլոր անցքերն ընդգրկել վէպում, այդ դէպքում գործը կը դառնար սխեմատիկ եւ, թերեւս,կը վերածուէր պատմական դէպքերի ժամանակագրութեան: Նա իբրեւ սկիզբ ընտրում է այն մոմենտը, երբ երկրի եւ գլխաւոր հերոսի՝ Սամուէլի համար սկսում է մի տագնապալից շրջան: Սամուէլը Պարսկաստանից ուղարկուած հայ սուրհանդակի միջոցով իմանում է Արշակ երկրորդի եւ Վասակ Մամիկոնեանի վերաբերմամբ պարսից արքունիքի ուխտադրուժ ու բարբարոսական վարմունքը, Պարսկաստանում իր հօր՝ Վահան Մամիկոնեանի եւ մօրեղբօր՝ Մեհրուժան Արծրունու կրօնափոխութեան եւ դաւաճանութեան լուրը: Արդէն դրանից մինչեւ վերջին դրուագը, երբ Սամուէլը սպանում է իր մօրը, ընկած ժամանակամիջոցի անցքերը ընդգրկուած են վէպում իրենց ողջ հարստութեամբ եւ խոր դրամատիկ բնոյթով:

Վէպի սիւժետային վերին աստիճանի կուռ կառուցուածքի արտայայտութիւնը պէտք է համարել այն, որ դէպքերի լայն ընդգրկումը մի կողմից լիակատար կերպով ներկայացնում է պատմական իրադրութիւնը, միւս կողմից՝ դառնում է մանաւանդ գլխաւոր հերոսի՝ Սամուէլի հոգեկան ապրումների եւ նրա գործողութիւնների պատճառաբանուածութեան ամուր հիմքը:

Սամուէլի կերպարը մեր անցեալի կլասիկ գրականութեան ստեղծած ամենայաջող գրական կերպարներից մէկն է: Այդ կերպարը վէպի գեղարուեստական մեծ արժանիքները պայմանաւորող էական հանգամանքներից է: Րաֆֆին յաջողութեամբ խուսափել է գլխաւոր հերոսին արդիականացնելու եւ իր խօսափողը դարձնելու ռոմանտիկական մեթոդին յատուկ թերութիւնից: Սամուէլն օժտուած է հերոսական բնաւորութեան կոնկրետ-անհատական գծերով, որոնք հարուստ են սոցիալական պատմական երանգներով: Սակայն Սամուէլի կերպարի գեղարուեստական յաջողուածութեան էական կողմը եւ լաւագոյն ապացոյցն այն է, որ Րաֆֆին հոգեբանօրէն լրիւ պատճառաբանել է Սամուէլի՝ իր հարազատ հօրը եւ մօրը սպանելու դէպքերը: Սամուէլը մինչեւ այդ քայլերին դիմելը ապրում է հոգեկան ուժեղ դրամա: Նրա ներքնաշխարհում սկիզբ է առնում պայքար ծնողասէր որդու եւ հայրենասէր հերոսի միջեւ,անձնական ապրումների եւ հասարակական-քաղաքական հայեացքների միջեւ: Այդ դրաման Րաֆֆին լուծում է միանգամայն համոզիչ կերպով՝ կապելով այն պատմական դէպքերի զարգացման ընթացքի հետ:

Երբ սուրհանդակ Սուրէնը Սամուէլին զուժում է հայոց թագաւորի ու սպարապետի հետ Պարսկաստանում պատահած ողբերգական դէպքերը եւ նրա հօր ուրացութիւնն ու դաւաճանութիւնը, նա բուռն յուզումներ ու զայրոյթ է ապրում: Կատարուած դէպքերը, ասում է հեղինակը, սարսափեցնում էին երիտասարդին. բայց միեւնոյն ժամանակ նրա սիրտը լցնում էին մի անբացատրելի կատաղութեամբ. ’Մոգերով ու մոգպետներով է գալիս պարսկացնելու մեզ’’, բայց ահա ’’ մի աղօտ միտք ծագում է նրա մէջ” : Սամուէլը սիրում է իր հօրը, բայց եւ սիրում է իր հայրենիքը. Նրա կրթութիւնն այնպիսի մարդկանց կողմից էր տրուել, որով պատրաստուել է մի անձնուէր որդի նախ՝ հայրենիքի, ապա՝ծնողների համար: Սամուէլը խորհրդածելով պատմական անցքերի շուրջը՝ ինքն իրեն ասում է. ” Մամիկոնեանը ծնում է դաւաճաններ... Մամիկոնեանը ծնում է եւ հերոսներ’’: Եւ նրա մէջ ծագում է իր դաւաճան հօրը պատժելու հերոսական միտքը:

Սամուէլի մէջ ծագած հայրենասիրութեան միտքը, այնուհետեւ, կապակցւած իրադարձութիւնների ծաւալման հետ՝ հետզհետէ խորանում եւ ամրապընդւում է, վերջապէս վերածւելով վճռական գործողութեան: Հեղինակը վէպի սիւժէն այնպէս է կառուցել, որ Սամուէլը Ողական ամրոցից իր հօրը դիմաւորելու նպատակով դուրս գալուց յետոյ անմիջապէս չի հանդիպում նրան: Նա ծանր հիւանդանում է եւ բաւական ժամանակ է անցնում, մինչեւ նա նորից կը մտնէր գործողութեան մէջ: Այդ միջոցում տեղի են ունենում երկրի եւ ժողովրդի համար աղէտալի իրադարձութիւններ: Վահան Մամիկոնեանը եւ Մեհրուժան Արծրունին պարսկական զօրքի գլուխն անցած հրի ու սրի են մատնում բազմաթիւ քաղաքներ եւ գիւղեր: Սամուէլը հօրը հանդիպելու համար իր անցած ողջ ճանապարհին տեսնում է հայրենիքին դաւաճանած իշխանների արարքների՝ ժողովրդի համար ունեցած ծանր հետեւանքները: Հայաստանի բերքառատ եւ խիստ բնակութեամբ գեղեցիկ վայրերը սոսկալի պատկեր են ներկայացնում աւերւած ու ծխացող գիւղերով եւ ամայութեամբ: Հասկանալի է, որ այդ բոլորը պէտք է հայրենասէր հերոսի մէջ ամրապնդէին հօրը պատժելու վաղուց կայացած որոշումը եւ դրա իրականացման համար վճռական քայլերի մղէին:

Սամուէլի կերպարը, անշուշտ, միակողմանի կը լինէր, եթէ հեղինակը նրա մէջ չպատկերէր ” բարոյական պատերազմը”,պայքարը իր խղճի եւ իր սրտի հետ, որը եւ նրա ծանր հիւանդութեան պատճառն է դառնում, բայց եւ այդ ” պատերազմը” պիտի վերջանար կողմերից մէկի յաղթանակով: Դա տեղի է ունենում Իշխանաց կղզում՝ որսորդութեան ժամանակ: Այն դրւագը, երբ Սամուէլը սպանում է իր հօրը, գեղարւեստական ամբողջականութիւն ունի: Դէպքը կատարւում է քաղաքական-գաղափարական բուռն վէճից յետոյ եւ այդ վէճի հետեւանքով: Կողմերից ոչ մէկը չի զիջում իր դիրքերը, հօր եւ որդու միջեւ բորբոքւում է այնպիսի փոխադարձ ատելութիւն, որը պիտի վերջանար մէկն ու մէկի կործանումով:

” Ուրեմն,դու իմ որդին չես,- ասում է Վահան Մամիկոնեանը Սամուէլին,- ով մեզ հակառակ է, մեզանից չէ: Մենք անխնայ պատժել գիտենք այնպիսիին:

-Եւ ոչ դու իմ հայրն ես:

-Սամուէ՞լ...

-Ի՞նչ է, դաւաճա՞ն...” :

Որդին աւելի արագ է մերկացնում իր սուրը... եւ գալարափողը գուժում է Վահան Մամիկոնեանի մահը. Հէնց այդ ժամանակ խելագարի նման մռընչալով բարձրանում է կարմիր քամին: Վէպում նոյնպիսի գեղարւեստական տպաւորիչ միջոցներով պատկերուած է եւ Սամուէլի՝ մօրը սպանելու դրուագը:

Սամուէլի կերպարը, նրա գործողութիւնները համոզիչ դարձնելու համար Րաֆֆին վիպասանի իր մեծ կարողութեամբ ստեղծագործական է , որովհետեւ վէպի գաղափարական բովանդակութիւնը՝ դրական գլխաւոր հերոսի կերպարի գեղարւեստական թուլութեան դէպքում, չէր կարող ընթերցողին ուժգնօրէն համակել:

Այսպէս, հեղինակն իր հերոսի ներքին աշխարհը ու գործողութիւնը բովանդակաւորել է սերտօրէն կապուած նաեւ նրա անձնական կեանքի հանգամանքների հետ: Նա իր հերոսի նկարագիրը սխեմատիզմից զերծ պահելու համար մեծ ուշադրութիւն է դարձրել պատկերելու նրան այնպիսի կենցաղային սովորոյթներով, որոնք միաժամանակ թողնէին նաեւ պատմականութեան տպաւորութիւն: Վէպում հիւթեղ կերպով նկարագրուած են Սամուէլի հագուստների, զէնքերի, նիստուկացի եւ այլն մանրամասները: Բացի դրանից, առհասարակ եւ Ողական ամրոցի ներքին կեանքի, եւ ռշտունցիների կեանքի, միւս իշխանների պալատների արարողութիւնների գունագեղ նկարագրութիւնները ստեղծում են բոլոր հերոսների համար կենդանի կենցաղային միջավայր:

Սակայն, իհարկէ, երբ խօսքը վերաբերում է Սամուէլի անձնական կեանքի հանգամանքներին, այստեղ էականը նրա սիրոյ պատմութիւնն է: Սամուէլը բուռն կերպով սիրում է Ռշտունեաց լեռնաշխարհի իշխանուհի Աշխէնին:Րաֆֆին իր ստեղծագործութիւնների մէջ ինչպէս, օրինակ," Խենթ" վէպում յաճախ է դրական հերոսին կանգնեցնում այսպիսի հարցի առաջ՝ ուժերը նուիրել նախ սիրած աղջկայ կեանքի, թէ հայրենիքի փրկութեան գործին: Երբ ճանապարհի մեծ դժուարութիւնները յաղթահարելով Սամուէլը հասնում է Աշխէնի գտնուած վայրը եւ նրա հետ տեսակցում Արտասուքի աղբիւրի մօտ, այդ ժամանակ նա ասում է. "Երկու սիրելիներ դրած են իմ առջեւ. մէկը՝ վտանգի մէջ գտնուող հայրենիքը, միւսը՝ վտանգի մէջ գտնուող կինը՝ դու: Երկուսն էլ ինձ համար հաւասար չափով պաշտելի են..." Նա դիմում է Աշխէնին եւ ասում. " Ցոյց տուր ինձ ճանապարհ. դէպի ո՞ր գնամ":- Դէպի հայրենիքի փրկութեան գործը,- պատասխանում է օրիորդը ոգեւորուած ձայնով եւ ապա շարունակում. " Դու ինձ արժանի չես լինի, եթէ քո արիւնը չխառնես թափուող հեղեղների հետ":Եւ Սամուէլը գնում է դէպի վտանգի մէջ գտնուող հայրենիքը: Ուրեմն եւ Սամուէլի, եւ Աշխէնի մէջ անձնականը,անձնալ ին երջանկութեան ձգտումն ու գաղափարը ստորադասւում է հայրենիքի պաշտպանութեան գաղափարին, անձնականը զոհաբերւում է ընդհանուրին:

Րաֆֆին ոչ միայն ’’ Սամւէլ” վէպում, այլեւ առհասարակ իր ստեղծագործութիւններում մարդու մէջ մարդկայնօրէն դրականը ու գեղեցիկը նախ եւ առաջ համարում է իր անձը հայրենիքի եւ ժողովրդի ազատագրման գործին նւիրելու եւ հերոսաբար զոհաբերելու պատրաստակամութիւնը: Այսպիսով, հեղինակի դրական հերոսների կերպարների էութեան ինքնատիպութիւնը սերտօրէն կապւում է նրա վէպի գաղափարական նպատակադրման հետ:

” Սամւէլ’’ վէպի գեղարւեստական մեծ արժանիքները պայմանաւորող հանգամանքներից է գլխաւոր հերոսի կերպարի յաջողւածութեան հետ միաժամանակ նաեւ միւս դրական թէ բացասական հերոսների կերպարների յաջողւածութիւնը: Հերոսների բնաւորութիւնների շօշափելի պատկերման գործում Րաֆֆին հասել է հիացմունքի արժանի վարպետութեան: Վէպի հերոսներից շատերին, ինչպէս, օրինակ, Հայր Մարդպետին, Արշակ երկրորդին, Համազասպուհուն, Որմիզդուխտին նոյնիսկ մէկ դրւագում հանդէս բերելով՝ նրանց կերպարները կերտում է հմուտ քանդակագործի չափի զգացումով: Պէտք է ասել, որ Րաֆֆու մօտ թէ հերոսների գործողութեան եւ թէ նրանց հոգեբանութիւնը նկարագրելու արւեստը շատ մօտ է ժողովրդական էպիկական ստեղծագործութիւններին բնորոշ արւեստին ու կուլտուրային: Հեղինակը, սովորաբար, ինչ նկարագրում է, ստացւում է ամբողջական հոյակապ պատկեր, ամբողջական, որովհետեւ վէպում միշտ, արտաքին հանգամանքների հետ զուգակցւած՝ խոր դատողութիւններ են արւում հերոսների հոգեկան աշխարհի, նրանց ապրումների եւ խոհերի մասին: Այսպէս, անջնջելի տպաւորութիւն են թողնում Անյուշ բերդի եւ նրա քարեղէն խցերից մէկում շղթայւած Արշակ Երկրորդի պատկերը. Հայր Մարդպետի՝ գիշերով ամայացած Արտագերսը մտնելու եւ թագուհի Փառանձեմին Թունոտ հեգնանքի ենթարկելու պատկերը եւ այլն:

Նայեցէք Արշակին, կարծես թէ շղթայւած առասպելական Արտաւազդը կամ Պրոմեթէոսը լինի: ” Այդ դրութեան մէջ նա նման էր մի առիւծի, որ փակւած էր երկաթեայ գառազեղի մէջ”, ասում է հեղինակը: Բայց պատկերի ողբերգականութիւնը միայն արտաքին ծանր իրադրութեան նկարագրից չէ, որ բխում է: Արշակի աչքի առաջ քարեղէն պատւանդանի վրայ դրւած է մորթազերծ արւած նրա սպարապետի՝ Վասակ Մամիկոնեանի պաճուճապատանքը, իսկ պարսիկ բանտապետը անվերջ խոցում է թագաւորի հոգին իր լկտի ծաղրական արտայայտութիւններով: Թագաւորը տանջալից ապրումների մէջ երբեմն մեկնում է ձեռքերը՝ գրկելու իր այնքան սիրելի սպարապետի անշարժ պաճուճապատանքը, բայց կարճ շղթաները թոյլ չեն տալիս:

Վէպում հերոսների կերպարների կերտման արւեստի ամենաբնորոշ եւ արժէքաւոր գծերից մէկն այն է, որ հեղինակը մեծ ուշադրութիւն է դարձրել իրական հանգամանքներով պայմանաւորուած միանգամայն համոզիչ ներքին դրամատիկ վիճակներով նրանց ներկայացնելուն: Այդպէս, հոգեկան խոր դրամա է ապրում ոչ միայն Սամուէլը,այլեւ հերոսներից շատերը: Իրենց իւրայատուկ խռովայոյզ դրութիւնների մէջ են ընկնում, օրինակ՝ Սամուէլի խորթ մայրը՝ Որմիզդուխտը, Մեհրուժան Արծրունու մայրը, ինքը՝ Մեհրուժան Արծրունին եւ ուրիշ հերոսներ: Այնուհետեւ, վէպի կերպարների գեղարուեստական յաջողուածութեան էական հանգամանքներից է այն, որ պահպանուած են նրանց բնաւորութեան պատմական երանգաւորումները: Այդ առումով շատ հետաքրքրական է Վահան Մամիկոնեանի կերպարը: Վահան Մամիկոնեանը հանդէս է բերւած որպէս Հայաստանում ֆէոդալական մասնատուածութեան կողմնակիցների պարագլուխ: Այս կերպարի բովանդակաւորմամբ Րաֆֆին դարաշրջանի անցքերի պատճառականութեան խոր ըմբռնման լաւագոյն ապացոյց է տւել: Վահան Մամիկոնեանը համոզւած է, որ ինքը իրաւացի է օտար զօրութեամբ Արշակունիների թագաւորութեան տապալելու նպատակով սկսած պայքարով: Նա ամէն կերպ աշխատում է արդարացնել հայրենիքի համար աղէտաբեր իր դաւաճանական գործողութիւնները: Վէպը պատմականութեան, հետեւաբար եւ գեղարուեստական տեսակէտից շատ է շահում այն բանից, որ հեղինակը երկրի ֆէոդալական մասնատուածութեան դէմ Արշակունիների մղած պայքարը ճիշտ կերպով դիտում է իբրեւ առաջադիմական երեւոյթ, դատապարտում է վահանների եւ մեհրուժանների քաղաքական վարքագիծը եւ բացայայտում նրանց մտադրութիւնների ու գործողութիւնների հակաժողովրդական էութիւնը:

”Սամուէլ’’ վէպում առանձին հետաքրքրութիւն են ներկայացնում ժողովրդի մարդկանց կերպարները: Յուսիկը, Մալխասը եւ ուրիշ հերոսները, որոնք չեն պատկանում ազնուական դասակարգին, մարմնաւորում են աշխատաւորական միջավայրի մարդկանց յատուկ բնաւորութեան գծերը՝ անկաշառ նուիրուածութիւնը իրենց հայրենիքին, հերոսականութիւնը, սրամտութիւնը եւ այլն: Այս բոլորով հանդերձ, այնուամենայնիւ, չի կարելի իբրեւ թերութիւն չնշել, որ աշխարհայեացքային որոշ սահմանափակութիւնների հետեւանքով հեղինակը թէպէտ խօսում է ֆէոդալական Հայաստանում ազնուականութեան եւ գիւղացիութեան միջեւ եղած հակամարտութեան մասին, բայց որեւէ դրւագում չի պատկերում այն:

Վէպի գեղարուեստական խոշոր արժանիքներից առանձնապէս պէտք է յիշատակել նաեւ մասսայական, յատկապէս ռազմի տեսարանների եւ բնութեան վարպետ նկարագրութիւնները:

Ռազմի տեսարանների յաջողւածութեան գաղտնիքը կապւած է մի կողմից այն հանգամանքի հետ, որ հեղինակը, յատկապէս ուսումնասիրած լինելով՝ հրաշալի կերպով պահպանում է ժամանակաշրջանի ռազմական արւեստի ինքնատիպ երանգները. միւս կողմից այն բանի հետ, որ այդ տեսարաններում, որոնք անչափ հեռու են դեկորատիւ լինելուց, շատ բան է բացայայտւում մասնակից հերոսների ներքնաշխարհից, այսինքն, այլ խօսքով ասած՝ ռազմի գործողութիւններում մասսայական հոգեբանութեան դրսեւորման հետ միաժամանակ լայնօրէն ցուցադրւում են եւ գլխաւոր հերոսները՝ իրենց բնորոշ բնաւորութեան ու գաղափարական գծերով:

Ինչ վերաբերում է բնութեան սքանչելի նկարագրութիւններին, որոնցով այնքան հարուստ է վէպը, պէտք է ասել հետեւեալը: Ամէնից առաջ Րաֆֆին այստեղ ինչպէս իր միւս գործերում երբեք բնութիւնը չի պատկերել ինքնանպատակ կերպով, որպէս զբաղեցնող զարդարանք: ” Սամւէլ” վէպում այդ նկարագրութիւնները խորիմաստ են եւ կատարւել են հիմնականում երկու առումով: Նախ՝ բնութեան եւ աշխարհագրական միջավայրի նկարագրութիւնները նրա վէպի կոմպոզիցիայի առանձնայատուկ կողմերից մէկն են: Սովորաբար վէպի առանձին գլուխները սկսւում են բնութեան որեւէ պատկերով: Օրինակ՝ հէնց առաջին գլուխը. ”Լուսնի եղջիւրը ծածկւեցաւ Քարքէ լեռան ետեւում, եւ Տարօնը ընկղմեցաւ գիշերային խաւարի մէջ: Ոչ մի աստղ այդ գիշեր չէր երեւում: Երկինքը պատած էր մոխրագոյն ամպերով, որոնք մեղմ հոսանքով լողում էին դէպի Նրկուռ ու Նեմրութ լեռների կողմերը եւ, այնտեղ կուտակւելով, թանձրանալով, միգային-սեւ կերպարանք էին ստանում: Այդ կողմից երբեմն փայլատակում էր կայծակը, եւ լսելի էր լինում որոտման խուլ դղրդիւն, որ գուշակում էր յորդ անձրեւ”:

Այս, ինչպէս եւ բազմաթիւ այլ դէպքերում բնութեան նկարագրութեամբ հեղինակը ոչ միայն նպատակ է հետապնդում ծանօթացնել հայրենի աշխարհին, ոչ միայն որոշ տրամադրութեամբ համակում է ընթերցողին եւ նախապատրաստում է նրան յաջորդող դէպքերի գեղարւեստական ընկալմանը տւեալ դէպքում՝ երկու սուրհանդակների Ողական ամրոց գալուց յետոյ ստեղծւած ծանր եւ լարւած իրադրութիւնը այլեւ մեծապէս հարստացնում է պատմական երանգաւորումը: Նա շատ նուրբ ճաշակով եւ հմտութեամբ այդ նկարագրութիւնների ժամանակ անւանում է լեռները, գետերը եւ այլն իրենց պատմական անուններով, յիշատակում է տեղի հետ կապւած հին աւանդութիւններ եւ լեգենդներ ու այդպիսով վէպը յագեցնում գործողութեան ժամանակաշրջանի զգացողութեամբ: Օրինակ՝ ’’Տարօնի առաւօտը” գլխում Տարօնի առաւօտը նկարագրելու կապակցութեամբ յիշատակում է հեթանոսական ժամանակների մարդկանց դիցաբանական պատկերացումներից մէկը: ”Այդ գեղեցիկ առաւօտը յիշեցնում էր այն վաղեմի հանդիսաւոր առաւօտներից մէկը, երբ Աստղիկը, Տարօնի Դիցուհին, դուրս էր գալիս Աշտիշատի տաճարներից եւ, շրջապատուած իւր անթառամ նաժիշտներով, իջնում էր Քարքէ լեռան բարձրութիւններից, Արածանիի արծաթափայլ ալիքների մէջ լողանալու”:

Բնութեան նկարագրութիւնները ’’ Սամուէլ’’-ում, այնուհետեւ, յաճախ ունեն փոխաբերական իմաստ եւ արտայայտում են պատմական անցեալի վերաբերմամբ հեղինակի որոշ պատկերացումները, օրինակ՝ Արաքսի նկարագրութիւնը ’’ Արաքսի որոգայթները’’ գլխի սկզբում:

Ընդհանրապէս մեծ է Րաֆֆու դերը մեր աշխարհաբար գրական լեզուի զարգացման գործում: Աբովեանից ու 50-60-ական թւականների գրողներից յետոյ Րաֆֆու ստեղծագործութիւնների լեզուն զարգացման մի նոր բարձր փուլ հանդիսացաւ աշխարհաբարի պատմութեան մէջ:

Րաֆֆու երկերից իր լեզուով առանձնապէս աչքի է ընկնում ’’ Սամուէլ” վէպը: Վէպի լեզուն ամէնից առաջ աչքի է ընկնում իր մաքրութեամբ եւ փայլով: Գործի գեղարուեստական բարձր արժանաւորութեան իմաստով կարեւոր է յիշատակել, որ հեղինակը լեզուով եւս պատմական երանգաւորումը ուժեղացնելու նպատակով չի գնացել հեշտ եւ սովորաբար կիրառուող ճանապարհով՝ առատօրէն արխայիկ գրաբար բառեր եւ արտայայտութիւններ օգտագործելու ճանապարհով: Նա լեզուով եւս պատմականութիւն ստեղծելու համար դիմել է մանաւանդ հերոսների խօսքի յատուկ ոճաւորման: Վէպի բոլոր հերոսներն էլ խօսում են նոյն մաքուր գրական լեզուով, բայց տարբեր ոճերով, ըստ որում ոճաւորման արուեստի մէջ խոշոր տեղ է յատկացւում հերոսների ներքին աշխարհի էական գծերի հետ կապուած արտայայտութիւններին: Օրինակ, երբ խօսում են Յուսիկն ու Սամուէլը, նրանց լեզւական ոճը շօշափելի կերպով դրսեւորում է նրանց վիճակի եւ փոխյարաբերութեան տարբերութեան հետ կապուած հոգեբանութիւնը: Վէպի լեզուն,ըստ բովանդակութեան, համապատասխան տեղերում աչքի է ընկնում նաեւ էմոցիոնալ յագեցւածութեամբ ու հռետորական փայլով:

Ոչ միայն ” Սամուէլ’’ վէպը, այլեւ առհասարակ Րաֆֆու ստեղծագործութիւնը եւ նրա արուեստն ու կուլտուրան անցեալի հայ գրականութեան խոշորագոյն նուաճումներից մէկն է: Րաֆֆու լաւագոյն երկերը թարգմանուած են ռուսերէն եւ ուրիշ շատ լեզուներով:

պատմավէպ - պատմական վէպ
նմուշ - օրինակ
համաշխարհային - ամբողջ աշխարհի
անցք - դէպք
սիւժետ (օտար) - նիւթ
մոմենտ (օտ.)- վայրկեան.ժամանակ
ներխուժել - յարձակել(մի երկիր)
հանդէս գալ - երեւել
կիսատ - ոչ ամբողջական
բաւարարուած - գոհ
թեմա (օտար) - բնաբան
ծառանալ - բարձրանալ,ցցուել
մանրակրկիտ - մանրամասն քննած
կոնկրէտ (օտ.) - թանձրացեալ
սոցիալական (օտ.) - ընկերական
տենդենց (օտ.) - ձգտում
ուխտադրուժ - ուխտին դրժող, անհաւատարիմ
դրուագ - դէպք,միջադէպք
բուռն - սաստիկ
հոյակապ - վսեմ
խուց - փոքր սենեակ
հեզնանք - ծաղրանք
պաճուճապատանք, խրտուիլակ - scare-crow
մորթազերծ - մորթը հանած
լկտի - լիրբ, կեղտոտ
խռովայոյզ - խռովիչ, յուզիչ
մասնատուածութիւն - հատուած,fraction
հակաժողովրդական - ժողովրդի հակառակ
պատկանել - վերաբերել
անկաշառ - կաշառք չընդունող, առանց կաշառքի
մասսայական (օտ.) - զանգուածային
կոմպոզիցիա (օտ.) - կազմութիւն
անթառամ - միշտ կանաչ,միշտ երիտասարդ

փուլ - շրջան
արխայիկ (օտ.) - հին
փոխյարաբերութիւն - փոխադարձ յարաբերութիւն, կապ
էմոցիոնալ (օտ.) - զգացմային
յագեցնել - կշտացնել,to saturate

ԵՐԿՈՒ ՍՈՒՐՀԱՆԴԱԿՆԵՐ

Հատուած ’’ Սամուէլ”ից

Գրեց Րաֆֆի

Լուսնի եղջիւրը ծածկւեցաւ Քարքէ լեռան ետեւում եւ Տարօնն ընկղմեցաւ գիշերային խաւարի մէջ։ Ոչ մի աստղ գիշերը չէր երեւում։ Երկինքը պատած էր մոխրագոյն ամպերով, որոնք մեղմ հոսանքով լողում էին դէպի Կրկուռ եւ Նեմրութ լեռների կողմերը եւ այնտեղ կուտակւելով, թանձրանալով միգային-սեւ կերպարանք էին ստանում։ Այդ կողմից երբեմն փայլատակում էր կայծակը եւ լսելի էր լինում որոտման խուլ դղրդիւն, որ գուշակում էր յորդ անձրեւ։

Գիշերային այդ տագնապալի պահուն երկու ձիաւորներ անցնում էին Մուշի դաշտով։ Նրանք գալիս էին հեռուից, շատ հեռուից։ Մի ամիս առաջ դուրս եկան Տիգրոնի երկաթեայ քաղաքադռնից, անցան Խուժիստանի անապատները, անցան արեւակէզ Ասորեստանը, անցան հայկական Միջագետքը եւ մի օր առաջ ոտք դրեցին Մուշի դաշտի վրայ։ Դրանք երկու սուրհանդակներ էին։

Երկու սուրհանդակներից մէկի ձին սեւագոյն էր, միւսինը կապուտակ։ Կապուտակ ձիաւորն առաջինի ուղեւորութեան մասին տեղեկութիւն ունէր, ամենայն զգուշութեամբ հետեւում էր նրան եւ երբէք իր նկատողութիւնից բաց չէր թողնում։ Իսկ առաջինը չգիտէր, որ իրեն հետեւում են։ Այդ էր պատճառը, որ նրանք, երկու մոլորակների նման թէեւ գնում էին միեւնոյն ուղղութեամբ, բայց այնպիսի զուգահեռական գծերով, որ բնաւ միմեանց չէին հանդիպում։ Երկուսն էլ ճանաչում էին միմեանց։

Նրանք արդէն հասել էին Արածանիի ափերին։

Կապուտակ ձիաւորն այստեղ կանգ առաւ։ Նա նայեց դէպի երկինքը, նայեց դէպի իր շուրջը։ Կամենում էր գիտենալ, թէ որքան ժամանակ էր մնացել մինչեւ լոյսի բացւելը։ Ոչ մի աստղ ցոյց չտւեց նրան գիշերային ժամը։ Ամէն ինչ խորասուզւած էր անվերծանելի մթութեան մէջ։

Բայց պէտք էր շտապել ...

Երկու մտածութիւններ մի քանի րոպէ պահեցին նրան անվճռականութեան մէջ· գետո՞վ անցնել, թէ կամուրջով գնալ։ Կամուրջով-դա շատ հեռու կը տանէր եւ գուցէ կը հանդիպէր ՆՐԱՆ... եւ գուցէ կը բռնւէր կամուրջի գիշերային պահակներից...Վճռեց անցնել գետով։

Հեզ եւ արծաթափայլ Արածանին զարնանային հեղեղներից կատաղել էր եւ պղտոր յորձանքներով ծածկել էր իւր ափերը։ Բայց մեր ուղեւորը ծանօթ էր նրա ծանծաղուտների հետ։ Նա ցած իջաւ ձիուց, ձեռքով փայփայեց իւր կապուտակի գեղեցիկ բաշը, փոքրիկ գլուխը, ասելով․ ''Դու քաջութեամբ կտրեցիր Տիգրիսի ահռելի ալիքները, այժմ հայրենի երկրի Արածանին ինչո՞ւ պէտք է վախեցնէ քեզ''։ Նա ձիու սանձը հանեց բերանից որ լողալու միջոցին ազատ շունչ առնէ․ Նստեց եւ, երեսը խաչակնքելով, քշեց դէպի գետը։

Գետը, մի ահարկու վիշապի նման, գոռում էր, գոչում էր։ Գիշերային մթութեան մէջ՝ նրա պղտոր հոսանքը աւելի մռայլ կերպարանք էր ստացել։ Ձին, ամբողջ մարմնով խորասուզուած ջրի մէջ, միայն գլուխը վեր բարձրացած, մռնչելով եւ փռնչալով, պատերազմում էր ալիքների հետ; Նրա ոտները յատակին չէին դիպչում, անցնում էին լողալով։ Ձիաւորը, սանձի փոխարէն բռնած ունէր նրա բաշից եւ ձեռքերով ուղղութիւն էր տալիս ընթացքին։ Մի քանի պտոյտների մէջ՝ թէ ձին եւ թէ ձիաւորը սկեցին ջրի տակ, կրկին դուրս յայտնուեցան։ Երբեմն անցնում էին նրանց մօտով ծառի կոճղեր, որ ծփալով տարւում էին կոհակների հետ։ Ձիաւորը շտապում էր խոյս տալ դրանցից։ Բայց ահա հեռուից մի ինչ-որ որոտում էր։ Տագնապը մօտենում էր։ Ձիաւորը չկորցրեց իւր սառնասրտութիւնը եւ խորին ուշադրութեամբ նայեց դէպի այն կողմը։ Մի մթին, անորոշ կոյտ լողում էր ջրի երեսին։ Որքան մերձենում էր, այնքան աճում էր նա․ այնքան սոսկալի ձեւ էր ստանում։ Կարծես մի ամբողջ բլուր դանդաղ ընթացքով շրջում էր գետի վրայ, մերթ անյայտանում էր նա, մերթ երեւան էր գալիս աւելի ահարկու կերպարանքով։ Ձիաւորը հասկացաւ նրա ինչ լինելը։ Նա մի ակնթարթում ձիու թամբից սողաց դէպի գաւակը, որ նրա բեռը թեթեւացնէ։ Բռնեց ագիից, սկսեց շտապեցնել նրան։ Օրհասական ժամը մօտենում էր, քանի որ թանձր, այլանդակ հրէշի նման մօտենում էր մթին կոյտը։ Նրա որոտը խլացնում էր ամէն ձայն։ Պէտք էր փախչել նրանից, եթէ ոչ մի թեթեւ տաշեղի նման իւր հետ կը տանէր թէ ձիուն, թէ ձիաւորին։ Ձին անգամ զգաց մօտալուտ վտանգը եւ կրկնապատկեց իւր ուժերը։ Անհնարին արագութեամբ կտրում էր նա կոհակները։ Հրէշն անցաւ։ Դա ուրիշ ոչինչ չէր, եթէ ոչ մերձակայ անտառների մի մասը, որ հեղեղը արմատախիլ անելով, իւր պտոյտների մէջ կծկել էր, գալարել էր, եւ մի այնպիսի գունդի այլանդակ ձեւ էր տուել։

Ձիաւորը կրկին անգամ գոհութեամբ երեսը խաչակնքեց, երբ ոտք դրեց ցամաքի վրայ։

Նա իր հագուստը քամեց, ցամաքացրեց, յետոյ սանձը դրեց ձիու բերանը եւ շարունակեց ճանապարհը, ինքը գնալով ոտով, իսկ ձիուն իր ետեւից քարշ տալով, որ փոքր ինչ հանգստանայ։ Բայց ձին դժուարութեամբ էր հետեւում նրան։ Որքան նա ջրի մէջ արագընթաց էր, այնքան ցամաքի վրայ դանդաղկոտ դարձաւ։ Տէրը վերագրում էր այդ նրա յոգնածութեանը։

Գետեզերքից բաւական հեռանալով, այժմ մօտեցաւ նա Քարքէ լեռան բարձրաւանդակներին։ Ճանապարհը զառիվեր էր, ոլորւում էր սարերի լանջաց վրայով, իջնում էր խորին ձորերի, փապարների մէջ եւ դարձեալ բարձրանում էր բլուրների վրայ։ Նա ծանօթ էր այդ անտառապատ լեռների հետ, գիտէր նրանց դժւարին անցքերն ու շաւիղները, երեխայութիւնից սնւել ու մեծացել էր այդ խոնաւ ծմակների մթութեան մէջ, ուր ցերեկի լոյսը երբեք չէր թափանցում։ Նա ապառաժների ու անտառների որդի էր։

Կայծակը շանթեց մօտակայ ծառերի կատարներին եւ մերձակայքը լուսաւորւեցաւ բաց-վարդագոյն փայլով։ Որոտի ձայնը ահեղ դղրդիւնով տարածւեցաւ մթին ձորերի մէջ։ Ուղեւորը նայեց դէպի ամպամած երկինքը եւ շտապեցրեց իր քայլերը։ Նա չվախեցաւ գետից, բայց վախենում էր փոթորիկից։ Փոթորիկը մեծ արհաւիրք է գործում այդ կուսական անտառների մէջ, մանաւանդ գիշերային պահուն։ Ժայռերի բարձրութիւնից խըլում է նա ողողւած, մերկարմատ ծառերը եւ նետում է ճանապարհի վրայ։ Ծառերի հետ փուլ են գալիս եւ քարերի ահագին բեկորները։ Ամէն մի ճանապարհորդ կ'անհետանար այդ փլատակների տակ, եթէ դժբախտութիւն ունենար հանդիպելու։

Կրկին լսելի եղաւ որոտման ահեղ դղրդիւնը եւ նրա հետ անձրեւի խոշոր կաթիլներն սկսեցին մաղւել երկնքից։ Քամին մռնչում էր եւ անձրեւային տարափը, կարկուտի գնդակների նման, զարկում էր նրա բորբոքւած երեսին։ Բայց նա ոչինչ չէր զգում։ Նրա միտքը, նրա զգացմունքները լարւած էին դէպի մի նպատակ, որ կլանել էր նրա ամբողջ գոյութիւնը, որ ամենայն եռանդով առաջ էր մղում նրան, որպէս մի մարմնացած փութաջանութիւն։ Նա շտապում էր մի քանի ժամ առաջ տեղ հասնել, քան կը հասնէր սեւ ձիաւորը։

Բայց ձին դժւարութեամբ էր հետեւում նրան։ Այժմ միայն նկատեց, որ ետեւի ոտքից կաղում էր նա։ Անշուշտ գետի հոսանքի հետ տարւող կոճղերից մէկը դիպչելով, վնասել էր նրան։ Այդ դէպքը սաստիկ վըրդովեցրեց անվեհեր ուղեւորին։ Նա շտապում էր, իսկ այժմ զրկւեցաւ իւր սրընթաց երիվարից։Ի՞նչ պէտք էր անել։ Թողնե՞լ նրան եւ այնպէս ոտքով շարունակել ճանապարհը։ Բայց ինչպէ՞ս թողնել այն սիրելի նժոյգին, որն այնքան տարիներ թէ պատերազմի դաշտում, թէ իւր ճանապարհորդութիւնների ժամանակ, լաւ ընկեր էր եղել նրա հետ։ Մի քանի րոպէ մընաց նա մտածութեան մէջ։ Յետոյ թողեց մեծ ճանապարհը, բռնեց մի շաւիղ, որ տանում էր դէպի Աշտիշատի վանքը։

Վանքը շատ հեռու չէր այնտեղից. մէկ ժամից յետոյ հասաւ նա։ Դարեւոր, նւիրական ծառաստանի խորքում, վաղեմի սրբազան բարձրութիւնների վրայ, հանգչում էր Տարօնի այդ հին սրբավայրը իւր վսեմ, մեծափառ վեհութեան մէջ։ Պատսպարւած բարձր շրջապարիսպներով եւ բրգաձեւ աշտարակներով, գիշերային մթութեան մէջ ներկայանում էր նա մի անմատչելի ամրոց։ Կատաղի մրրիկը, քամու մռնչիւնը, անձրեւի տարափը չէր վրդովեցնում նրա խաղաղ բարեպաշտական նիրհը։

Շրջապարիսպներից դուրս, մի առանձին շինւածքի նեղ լուսամուտներից լոյս էր երեւում։ Ուղեւորը դիմեց դէպի այն կողմը, մօտեցաւ փակ դռներին։ Այստեղ դռան մի կողմում փայտեայ սիւնից քարշ էր ընկած մի տախտակ, իսկ սիւնի պատւանդանի մօտ դրած էր նոյնպէս փայտեայ փոքրիկ օթակ։ Ուղեւորը վեր առաւ օթակը, երեք անգամ զարկեց տախտակի վրայ։ Կոչնակի ձայնից լուսամուտը բացւեցաւ, մէկը ներսից քնաթաթախ գլուխը դուրս մեկնեց եւ վերեւից հարցրեց.

-Ո՞վ ես։

-ճանապարհորդ եմ,- եղաւ պատասխանը։

Վանքի պարիսպներից դուրս, այդ շինւածքը տարաժամ ճանապարհորդների, օտարականների եւ պանդուխտների օթեւան էր։ Դռնապանը բաւականացաւ ուղեւորի պատասխանով, բաց արեց դռները եւ ճրագը ձեռին յայտնըւեցաւ սեմի վրայ։

-Դու բոլորովին թրջւած ես,- ասաց նա մի առանձին հոգատարութեամբ,- ներս համեցի՛ր, ես իսկոյն կրակ կը վառեմ,քո հագուստը չորացրու։

-Շատ շնորհակալ եմ քո բարեսրտութեան համար,- պատասխանեց ուղեւորը,- բայց ես կը խնդրէի քեզանից ընդունել ձեզ մօտ, որպէս հիւր, իմ ձիուն միայն:

-Ինչո՞ւ քո ձիուն միայն,- հարցրեց դռնապանը զարմանալով:

-Նա կաղում է, վնասւել է ոտքը, իսկ ես պէտք է շարունակեմ իմ ճանապարհը:

-Գոնէ ներս մտիր, մի փոքր տաքացիր. ես իսկոյն կրակ կը վառեմ:

-Չեմ կարող...ես շտապում եմ...պատասխանեց ուղեւորը եւ մօտեցաւ ճրագին:

Նա ծոցից հանեց իւր սանրը, որ կիսալուսնի ձեւ ունէր, շինւած էր զմէշի եղջիւրից, եւ ցոյց տալով դռնապանին ասաց.

-Ճանաչիր այդ սանրը, մի կողմի երկու ատամները կոտրած են. եթէ ես չվերադարձայ, ով որ քեզ ցոյց տալու լինի, ձին նրան կը յանձնես:

-Իսկ դու ո՞վ ես,- հարցրեց դռնապանը, փոքր ինչ կասկածելով:

-Ես զինւոր եմ...պատասխանեց ուղեւորը:

Դռնապանը բաւականացաւ ուղեւորի անորոշ պատասխանով,որովհետեւ այդ տագնապալի ժամանակներում զինւորի հետ շատ հեռուն գնալ՝ փոքր ինչ դժւար էր:

Ուղեւորը բաց արեց ձիու թամբին կապած ճանապարհորդական թեթեւ խուրջինը, ձգեց իւր ուսին, եւ " բարի գիշեր" ասելով, հեռացաւ:

Դռնապանը, ճրագը ձեռին, դեռ կանգնած սեամի վրայ,ապշութեամբ նայում էր նրա ետեւից՝ մինչեւ անյայտացաւ գիշերային խաւարի մէջ: Քամու մռնչիւնը խլացրեց նրա վերջին քայլերի ձայնը:

Հեռանալով վանքից, ուղեւորը բռնեց այն ճանապարհը, որ տանում էր դէպի Ողական ամրոցը:

Կոճղ - ծառի հաստ արմատ
Ագի - պոչ
Կոհակ - փոքր ալիք
Փապար - ճեղք
Ծմակ - խոնաւ անտառ
Բեկոր - կտոր
Երիվար,նժոյգ-Ձի
Սրընթաց-արագընթաց
Վսեմ,վեհ-բարձր
Անմատչելի-անհասանելի

Նիրհ-թեթեւ քուն,նինջ
Կոչնակ-փայտէ զանգ
Սեամ-շէմք

ՎԱՐԴԱՆԱՆՔ

գրեց Դերենիկ Դեմիրճեան

Բուռն կոչնահարութիւնը իր չարագուշակ եւ հանդիսաւոր ձայնով իրարանցման մէջ գցեց ոչ միայն նախարարներին եւ Վասակին, այլեւ բոլոր մայրաքաղաքին բնակիչներին: Փողոցները լցուեց ժողովրդի խուռն բազմութեամբ: Արդէն վերջին օրերի լուրերը, նախարարների եւ հոգեւորականների ժողովւելը, պարսից մեծամեծների հաւաքը մայրաքաղաքում, գիշերային խորհրդակցութիւնները՝ ժողովրդին անհանգստացնում էին:

ժողովուրդը հասկանում էր, որ հաւատուրացութեան գործ կար եւ ճընշում էր արւում պարսից արքունիքից: Առանձնապէս ժողովրդին լարում էր կաթուղիկոսի եւ բոլոր հոգեւորականների անընդմէջ հսկումն ու ընթերցումները տաճարում: Եւ ահա այս կոչնահարումը: Ի՞նչ էր նշանակում սա:

- ծանապա՛րհ, ճանապա՛րհ,- գոչեց սուրհանդակը՝ ջլուտ եւ արագաշարժ մի երիտասարդ, գաւազանն օդում շարժելով եւ սրընթաց կտրելով բազմութիւնը,- ճանապարհ բաց արէք. նախարարները գալիս են:

ժողովուրդը ճեղքւեց եւ անկանոն միաշարք պատերի պէս ճօճւելով՝ իր հազարաւոր աչքերը դարձրեց դէպի արքունական տունը, որ տեղից պիտի երեւային նախարարները:

- Աստուած բարի միտք տայ մեր մեծերին՝ չմոլորւեն:
- Ասա՝պինդ մնան, չվախենան:
- Շապուհի օրերն են, անիծւեն...

Այսպիսի խօսքեր էին լսւում երկշարք կանգնած բազմութեան մէջ, որ նախարարները երեւացին: Նրանք գալիս էին հետեւակ, առանց թիկնապահների: Նրանք բոլորը հանդիսաւոր եւ մտահոգ արտայայտութիւն ունէին: Առջեւից գնում էին Ներշապուհ Արծրունին, Վարդան Մամիկոնեանը, Գադիշոյ Խոռխոռունին եւ ապա միւս իշխանները: Նրանց յետեւից միատեղ գալիս էին թիկնապահները: Ոչ մի հանդիսաւոր տեսք չունէր երթը, այլ բոլորը շտապ քայլում էին, որ շուտ հասնեն տաճար, ուր վճռւելու էր երկրին ճակատագիրը:

- Նախնեաց օրէնքո՛վ,- գոչեց բազմութեան միջից Աբրահամ պապիկը, երբ նախարարները հաւասարւեցին նրան:

- Յիշեցէք Շապուհի նահատակներին,- ձայն տւեց մէկ ուրիշը:

Բազմութիւնը մրմռաց, օրօրւեց եւ յանկարծ տեղահան եղաւ, գնաց նախարարներւ հետ: Տաճարի պարիսպների մօտ զօրականները փորձ արին յարձակւել ժողովրդի վրայ՝ արգելելու, սակայն նախարարները ձեռքով նշան արին չդպչել ժողովրդին, որով եւ սա մի փոքր հանդարտւեց: Բայց երբ նախարարները մտան տաճարը՝ ժողովուրդը գրոհեց եւ լցեց տաճարին մեծ բակը: Նախարարները մտնելով տաճար խտացրին առանց այդ էլ թանձրացած մթնոլորտը:

Տիրեց այն ծանր լռութիւնը, որ կարկամեցնում է սիրտը եւ լեզուն, երբ խօսքը դառնում է անզօր ասելու այն մեծ տագնապն ու յուզումը, որ տիրում է մարդկանց մի ճակատագրական գործ սկսելուց առաջ:

– Ո՞ւր է մարզպանը. պէ՞տք է որ հրաւիրենք նրան,– հարցրեց Յովսէփ կաթուղիկոսը նախարարներին:

– Մարզպանին ոչ է անկ մասնակցել այսպիսի ժողովի,– ասաց Գադիշոն մռայլ նայելով տաճարի յատակին:

Նախարարները լուռ մտածեցին այս պատասխանի մասին:

– Ինչո՞ւ,– հարցրեց մի փոքր զարմանքով Վահան Ամատունին:

– Մարզպանը երկրի իշխանութիւնն է:

– Իսկ նախարարներս ի՞նչ ենք:

– Մենք իշխանութիւն ենք մեր երկրի առաջ, իսկ մարզպանը՝ արեաց արքայի,– դարձեալ յատակին նայելով, նոյն անբարեացակամ, տրամաբանող եւ ներհակ եղանակով պատասխանեց Գադիշոն:

Դարձեալ լռեցին:

– Հրաւէր ուղարկենք, թող ինքն յայտնի իր կամքը,– ասաց մեղմաձայն Վարդանը:

Սուրհանդակ ուղարկեցին մարզպանի յետեւից:

Ու մինչ կը գար պատասխանը՝ իշխանները նստեցին յատուկ աթոռակների վրայ եւ շրջապատեցին կաթուղիկոսին: Վերջինս մաշուել էր եւ դեղնել անքուն գիշերների հսկումներից եւ մտահոգութիւնից: Պակաս չէին եւ միւսները: Միայն Ղեւոնդ Երէցն էր, որի վերասլաց եւ ներշնչուած դէմքին խաղում էր անսպառ եռանդն ու կամքի ուժը: Նա ջլուտ էր եւ երկաթի պէս ամուր: Կոճղի նման պինդ չոքել էր քարերին Եզնիկ Կողբացին՝ պատրաստ ընդունելու մարտը:

Եղիշէ վարդապետը ստեղծագործական մտքերի մէջ կորած՝ այրւում էր անհատնում մոմի պէս եւ անհանգիստ նայում իշխաններին, մէկ մէկ զննելով նրանց, ջանալով գուշակել նրանց մտադրութիւնները: Անքուն գիշերների հսկումները դրել էին իրենց դրոշմը նաեւ ժողովին հաւաքուած եպիսկոպոսների դէմքերին: Նրանք եկել էին Այրարատի, Տուրուբերանի, Վասպուրականի, Մոկաց, Սիւնեաց, Տայոց եւ Բարձր Հայոց գաւառներից՝ վճռելու ճակատագրական խնդիրը, որը նրանց քաշել հանել էր կեանքի ծովի խաղաղ ափերից եւ տանում էր դէպի ալեկոծուող յորձանքներ եւ նաւաբեկութիւն:

Եկաւ սուրհանդակը եւ բերեց Վասակ Սիւնու հրաժարականը ժողովին մասնակցելուց:

- Տէր մարզպանը խնդրեց պատասխանը գրելուց յետոյ՝ նախարարները ներկայացնեն իրան,- ասաց սուրհանդակը:

- Այն ժամանակ մնացինք մենք ու մեր խիղճը,- ասաց Վարդանը սրտմտութեամբ,- սկսեցէք, սրբազան հայրեր:

Կաթուղիկոսը վեր կացաւ եւ դառնալով Եզնիկ Կողբացուն ասաց հանդիսաւոր ձայնով.

- Վերցրու արքայի հրովարտակը:

Բոլորը ոտքի ելան:

Եզնիկը վերցրեց ձեռքէ ձեռք անցնելուց ոլորձուն դարձած հրովարտակը եւ սպասեց կաթուղիկոսին:

- Դարձէք արեւմուտք,- հրամայեց կաթուղիկոսը:

Բոլորը երեսները դարձրին դէպի արեւմուտք: Կաթուղիկոսը դարձաւ ժողովականներին.

- Սրբազան հայրեր, նախարարներ Հայոց աշխարհին: Վերջին ժամն է խորհելու եւ պատասխանը գրելու: Մի անգամ եւս կարդան հրովարտակը: Կարդա, սրբազան հայր:

Եզնիկ Կողբացին հնչեղ ձայնով կարդաց.

"Միհրներսեհ, վզուրկ հրամանատար Երան ու Աներան, հայոց մեծաց ողջոյն շատ:

"Գիտցէք, ամէն մարդ որ բնակւում է երկնքի տակ եւ չունի օրէնքը դէնիմազդէզի, նա խուլ է եւ կոյր եւ Հարամանի դեւերից խաբւած:"

Հրովարտակը պատմում էր այն մասին թէ ինչպէս Զրուանը (ժամանակը) ստեղծեց Որմիզդին եւ Արհմնին:

Քանի դեռ չկային երկինքն ու երկիրը՝ Զրուանը զոհ էր անում հազար տարի եւ ասում էր."Թերեւս ես մի որդի ունենամ Որմիզդ անունով, որ ստեղծի երկինքն ու երկիրը: Եւ յղացաւ երկու զաւակ իր որովայնին մէջ, մէկը զոհ անելու, միւսը կասկած տանելու պատճառով (այստեղ Եզնիկը հեգնաբար ժպտաց): Երբ իմացաւ որ երկուսն են որովայնի մէջ՝ասաց, որը որ վաղ ծնի՝ նրան կը տամ թագաւորութիւնը: Եվ նա, որ թերահաւատութիւնից էր յղացած՝ պատռեց որովայնը եւ դուրս եկաւ: Ասում է նրան Զրուանը. "Ով ես դու": Ասում է,"Քո որդին՝ Որմիզդը":Զրուանը ասում է նրան."Իմ որդին լուսաւոր է եւ անուշահոտ, իսկ դու խաւարային ես եւ չարասէր": Եւ երբ սա խիստ դառնապէս լացեց՝ նրան տուեց թագաւորութիւնը հազար տարի:

Այնուհետեւ գալիս էր բուն մասը՝ քրիստոնէութեան ծաղրը. մոլորութիւն էր համարում այն, որ քրիստոնեաները հաւատում են, որ Աստուած է ստեղծել բարին ու չարը, ինչպէս եւ մահը:

"Եթէ Հոռոմոց աշխարհը (Յունաստանը) իր շատ յիմարութեան պատճառով մոլորուել է եւ զրկուել մեր կատարեալ հաւատից` անձամբ կը զգայ իր վնասը, ապա դո՞ւք ինչու Նրա մոլորութեան յետեւից գնում էք:Ինչ հաւատ որ ունի ձեր տէրը` դուք էլ նոյնը ընդունեցէք":

Եզնիկը հասաւ հրովարտակի վերջաւորութեան."Արդ երկու բան կայ ձեր առաջ. կամ բառ առ բառ պատասխան տուէք, կամ եկէք Դուռը եւ կանգնեցէք մեծ ատեանի առաջ":

- Դարձէք աղօթարան,- ասաց կաթուղիկոսը:

Բոլորը երեսները դարձրին արեւելք: Ոչ ոք չխօսեց: Այն ժամանակ կաթուղիկոսը դարձաւ նախարարներին.

- Տեարք, մենք հոգեւորներս պատրաստ ենք մահուան: Պատրա՞ստ էք նոյնը եւ դուք:

- Պատրաստ ենք,- ասաց Վարդանը:

Կաթուղիկոսը նայեց միւս նախարարներին.

- Պատրաստ ենք,- լսեց նաեւ միւսների մեծամասնութեան ձայնը:

- Ես մի բան պիտի դիտողութիւն անեմ, տեարք,- ասաց Գաղիշոն իր սովորութեան համաձայն աչքերը գցելով յատակին եւ մռայլ դէմքին տալով անթափանց արտայայտութիւն,- նամակն ուղղուած է "հայոց մեծաց". ի՞նչպէս է նա ընկել հոգեւորների ձեռը եւ ինչո՞ւ էք հոգեւորներդ մասնակցում պատասխանին:

Վրդովմունքի մի ալիք անցաւ բոլոր ժողովականների միջով: Հարցը թւաց սրամիտ եւ ուժեղ:

- Ինչու ես այդպէս մտածում, տէր Խոռխոռունեաց,- հարցրեց Վահան Ամատունի:

- Որովհետեւ հրովարտակում ասւում է."Մի հաւատաք ձեր առաջնորդներին, որովհետեւ շատ են խաբեբայ. ինչ որ խօսքով ուսուցանում են ` գործով չեն կարող յանձն առնել": Պարզ է, որ դիմումը նախարարներիս է արւում, ընդդէմ հոգեւորների:

Կաթուղիկոսը յանկարծ ցնցւեց եւ դարձաւ Գաղիշոյին.

- Տէր Խոռխոռունեաց. հայոց մեծերը բոլոր նրանք են, որոնք այսպիսի մեծ աղէտների ժամանակ արիւն են թափել հաւատի համար եւ հիմա էլ պիտի թափեն: Մենք պիտի թափենք:

- Թողէք վէճը, տէր հոգեւոր, եւ դու, տէր Խոռխոռունեաց,- ասաց հանդարտ բայց ներշունչ շեշտով Վարդան Մամիկոնեանը,- եւ այն ժամանակ երբ ազգովին կանգնած ենք կենաց-մահու առաջ՝ այլ եւս չկայ ոչ հայոց մեծ, ոչ հայոց փոքր: Ազգովին պիտի պատասխանենք:

Գաղիշոն լռեց մի պահ եւ ապա խօսեց.

– Ես մնում եմ իմ կարծիքին, տէր Մամիկոնէից, եւ թող ով կամենում է ազգի եւ հոգեւորականների կողմից՝ կանգնի արքայի առաջ: Ես կը պատասխանեմ իմ կողմից:

– Ճշմարիտ է, ամէն մէկս պատասխան ենք տալիս նաեւ մեր անձի կողմից:

– Իրաւո՞ւնք է խօսելու,– հարցրեց Ղեւոնդ Երէց կաթուղիկոսին:

– Խօսիր,– ասաց կաթուղիկոսը արդէն համբերութիւնից ելած:

– Մահու սարսուռն է կարկամեցրեց ձեզ, տեարք. անզգայութեան մշուշը պատել է ձեր հոգուն: Շրջում էք իբրեւ լուսնոտներ եւ չէք տեսնում, խօսում էք եւ չէք խորհում: Ի՞նչ է պահանջում մեզանից դժոխքի ոգին, չարութեան վահանը, սատանայի գործիքը...

– Զգոյշ, տէր հայր,– ասաց Գաղիշոն:

– Սանդարամետը դժոխոց, մի՞թէ երկիւղ ունիմ նրանից,– չլսելով նրան՝ բարձրացրեց ձայնը Ղեւոնդ Երէց,– եւ նա պահանջում է թողնել մեր նախնեաց լոյս հաւատը եւ ընդունել Մազդեզանց սուտ եւ զազիր կրօնը: Ահա ժողովուրդն հայոց տաճարի շուրջը եւ ողջ մեր աշխարհում: Չենք հնազանդի բռնակալին:

Բազմութիւնը, որ տաճարի բակումն էր եւ մերձակայ փողոցներում, հետզհետէ ճնշելով թիկնապահներին՝ սկսեց մտնել տաճար:...

Վարդանը մի ընդհանուր շարժում արեց եւ ձեռքը բարձրացնելով սպասեց որ լռութիւն տիրի: Բազմութիւնը շունչը իրան պահեց:

– Շատ խորհեցինք, շատ վիճեցինք: Ջանք արինք գտնել արքայի համար խաղաղութեան խօսք: Խաղաղութեան խօսքը ուրացումն է: Ո՞վ կ'ուրանայ: Ոչ ով: Չենք ուրանայ մեր լոյս հաւատը. չենք հնազանդի բռնաւորին: Հա՞րկ կը լինի մեռնել՝ կը մեռնենք: Եւ Աստուած մեզ օգնական:

– Աստուած օգնական,– թնդաց բազմութիւնը:

Վարդանը յափշտակւեց.

– Մեր նախնիները մեզ կտակեցին հաւատ, պատիւ եւ ազգ: Արեամբ պահպանեցին նրանք մեր ազատութիւնը, լեզուն եւ մեզ հրաման թողին անքասիր պահել այդ սրբութիւնները: Պաշտպանենք մեզ կտակած գանձերը: Մեռնենք՝ չտանք թշնամու ոչինչ:

– Կը մեռնենք, չենք տայ,– թնդաց բազմութեան թանձր, զանգւածային ձայնը:...Բազմութիւնը տանում էր իրհետ, շարժում դէպի սխրագործութիւն, ապստամբութիւն: Ցնդեցին խօսքն ու հակաճառութիւնը, մեքենայութիւնն ու քանսարկու ձեւերը: Երկիրը շարժւեց. Եւ շարժւեց այնպէս անդիմադրելի ու անդառնալի, որ զուր էր մտածել նրան կանգնեցնել: Վարդանը զգաց, որ ժամը հնչեց: Այլեւս յապաղելը վտանգաւոր էր:

– Եղբայրներ,– բարձրացրեց նա ձայնը,– հրովարտակը պատասխան է պահանջում մեզանից. տանք մեզ արժանի պատասխանը:

– Ճշմարիտը խօսեցիր... այլեւս բաւ... տանք պատասխանը... գրեցէք,– գոչեցին Արտակը, Ատոմը, Արշաւիր Արշարունին, Վահան Ամատունին:...

– Տէր հոգեւոր,– դիմեց Վարդանը կաթուղիկոսին,– այլեւս ժամ է. գրել տուր պատասխանը:

– Ժամ է ահեղ եւ օրհասական: Թող սրբութիւնն ու խիղճը իմաստութիւն տան մեզ,– գոչեց կաթուղիկոսը,– գրենք...

Ամբողջ տաճարի բազմութիւնը՝ հոգեւորականները, ժողովուրդը եւ զօրքը ալեկոծւեցին՝ ինչպէս լցւած գետ: Հազարաւոր գլուխներ բարձրացան:

Երբ վերջապէս ալեկոծումն ու մոլտոցը դադարեց՝ կաթուղիկոսը դարձաւ դէպի Եզնիկ Կողբացին, Ղեւոնդ Երէցն ու Եղիշէն:

– Հրաման քեզ, դու տէր Եզնիկ, եւ քեզ, տէր Ղեւոնդ, նաեւ քեզ, տէր Եղիշէ: Գրեցէք ներշնչմամբ սուրբ Հոգուն՝ պատասխանը փորձիչին: Աստւած եւ ժողովուրդն հայոց զօրաւիգ ձեզ:

– Ամէն, ամէն, ամէն,– լսւեց բազմութեան քաջալերիչ խօսքի զանգւածային ձայնը:

Ապա յանկարծ լռութիւնը սրի պէս կտրեց մոլտոցն ու շարժումների խուլ հոսանքը:

– Գրեցէք պատասխանը, մերժեցէք Մազդեզանց կրօնը: Գրեցէք, որ ընդունում ենք մահը:

Յետոյ դարձաւ իշխաններին.

– Իրաւունք էք տալիս, տեարք:

– Իրաւունք է,– ասաց Վարդանը եւ նայեց բոլոր նախարարներին:

Նախարարները շարժեցին գլուխները հաւանութեան նշաններով:

– Դէ՛, ի գործ,– հրամայեց կաթուղիկոսը:

Տիրեց այն հանգստութիւնը, որ յատուկ է մարդկանց, երբ նրանք անցնում են մահւան գիծը՝ հեղեղի կատաղի յորձանքի միջով, գազանի երախի առջեւից, թշնամու սրերի արանքով: Ամենալարւած վայրկեանը, որ միաժամ եւ ամենահանգիստն է:....

Յանկարծ Եղիշէն բարձրացրեց ձեռը, եւ բոլորը նայեցին նրան: Նա յափշտակութեան մէջ էր.աչքերը ցոլում էին եւ նայում տարածութեան մէջ:

Նա ոգեց.

- Եթէ անմահ իսկ լինէինք եւ պէտք էր մեզ մեռնել Քրիստոսի սիրուն՝ արժանի էր մեռնել, քանի որ Նա էլ անմահ էր եւ այնչափ սիրեց մեզ, որ մինչեւ անգամ մահը յանձն առաւ, որպէսզի մենք եւս Նրա մահով յաւիտենական մահից ազատուենք:

- ճշմարի՜տ, Ճշմարի՜տ,- ձայն տւին զանազան կողմերից ժողովականները:

Եղիշէն շարունակեց գրել:....

- Կարդա,- հրամայեց կաթուղիկոսը Ղեւոնդ Երէցին:

Ղեւոնդ Երէցը սթափւած էր այլեւս: Նրան տիրում էր այժմ գիտակցական մի ոգեւորութիւն: Նա այժմ հասկանալի էր թէ ինքն իրեն եւ թէ բազմութեան: Վերցնելով պատասխանը նա խրոխտ ձայնով ոգեց.

"Յովսէփ կաթուղիկոսը՝մեծամեծներից մինչեւ փոքրերը, միաբաններովս հանդերձ, մեծ Հազարապետիդ Արեաց եւ Անարեաց, Միհրներսէհիդ, շատ խաղաղասէր մտքով ողջոյն է յղում ամենամեծ սպարապետիդ Արեաց:...

"Եթէ դու տգիտութեանդ մէջ մոլորել ես,- կարդաց Ղեւոնդ Երէցը,- ես որ հաստատ գիտեմ այդ՝ չեմ կարող քո մոլորութեան յետեւից գալ:...

"Այս հաւատից չի կարող խախտել մեզ ոչ հրեշտակ, ոչ մարդիկ, ոչ սուր, ոչ հուր, ոչ ջուր, ոչ ամէն տեսակ դառն հարւածներ: Մեր բոլոր ինչքն ու ստացւածքը քո ձեռը, եւ մեր մարմինը քո առջեւ: Քո կամքը՝ արա ինչ կամենում ես: Քեզանից տանջանք, մեզանից յանձնառութիւն. քո սուրը, մեր պարանոցը...

- Յօժար ենք, յօժար,- թնդացին ձայներ բազմութեան խորքից:

"Այլեւս դու այս ամէն բանի մասին մեզ մի հարցնիր, որովհետեւ ոչ թէ մարդու հետ է մեր հաւատի ուխտը, որ խաբւենք իբրեւ երեխաներ, այլ անխզելի է Աստծոյ հետ, որ չի կարելի քանդել եւ հեռու նետել ոչ այժմ եւ ոչ ապա եւ ոչ յաւիտեանս եւ ոչ յաւիտենից յաւիտեան":

Ղեւոնդ Երէցը աւարտեց ընթերցումը տենդային շարժումներով, արագ մօտեցաւ կաթուղիկոսին եւ դողդոջուն ձեռքով Նրան մեկնեց մագաղաթը:

Յանկարծ թնդաց հոգեւոր երգը: Բոլորի աչքերը բոցավառւեցին: Թեթեւցաւ թանձրացած մթնոլորտը: Ինչոր չէր կարելի ասել մի օր առաջ՝ այսօր ահա ասւեց: Ուրեմն կարելի էր ասել...: Եւ ի՜նչ լաւ եղաւ որ ասւեց:

(Հատւած)

չարագուշակ - չարիք գուշակող, ominous

հանդիսաւոր, հանդիսական , ոչ սովորական, solemn

իրարանցում՝ իրար անցնել, շփոթութիւն, խառնաշփոթութիւն, confusion,turmoil

նախարար՝ հայ հին իշխանական տների պետերը.

Վասակ՝ Սիւնեաց նախարարութեան գլուխը, որը Հայաստանի մարզպանն էր 450 թ.։Վարդանանց խմբից բաժանւեց եւ մատնեց Հայոց ապստամբութեան գործը պարսից արքունիքին. դրա համար Վասակ անունը գործ է ածւում իբր"դաւաճան"։

խուռն՝ մեծ բազմութիւն կուտակւած, crowded

հոգեւորական՝եկեղեցու պաշտօնեայ.եկեղեցական դասու անդամ. clergyman

պարսիկ, սեռական՝ պարսից, Պարսկաստանի բնակիչները. Persian

հաւաք՝ ժողով.council, gathering

խորհրդակցութիւն՝ խորհուրդ հարցնել,խորհուրդ անել. consultation

անհանգստացնել՝անհանգիստ անել, հանգիստ չթողնել, խռովել, to disturb

հաւատուրացութիւն< հաւատ(ք) religion + ուրանալ to deny

ճնշում անել՝ ճնշել, ստիպել,բռնութիւն անել, to make pressure

արքունիք՝ թագաւորի պալատը, թագաւորական տունը, court,royal ~

լարել՝ աղեղը լարել to bend the bow թակարդ լարել to set a trap
ժամացոյցը լարել wind up watch ուշադրութիւն - to attract attention;to be all ears
ժողովուրդը լարւած է people are under tension, taut

հսկում՝ հսկել,գիշերն անքուն անցկացնել,դիտմամբ չքնել , vigil

ճանապարհ՝ ճամբայ (ճամփայ), ուղի, way,route

սուրհանդակ՝ որի ձեռքով ուղարկում են նամակ, գրութիւն.courier

ջլուտ՝ ջղուտ՝ որի ջիղերը ուժեղ են,muscular ջիղ muscle;nerve

ճեղքել՝երկու մասի բաժանել, իրարից բաժանել, to split

միաշարք՝ մի շարքի վրայ, in one row

երկշարք՝ երկու շարքի վրայ. in two rows

հետեւակ՝ոտով գնացող,(որի հակառակ՝ ձիաւոր,ձիով գնացող) ,on foot;infantry

թիկնապահ՝անձնապահ զինւոր(թագաւորի, իշխանի),bodyguard;lifeguards

մտահոգ՝ անհանգիստ,հոգսերով զբաղւած,sorrowful,worried

նախնիք, սեռական՝ նախնեաց, ազգի,ժողովրդի հին սերունդները, ancestors

մարզպան՝ Հայաստանի կառավարիչը պարսից տիրապետութեան ժամանակ,428թւից մինչեւ արաբների իշխանութիւնը Հայաստանի մէջ.

Տէր՝ իշխանների, եպիսկոպոսների տիտղոս.

Միհրներսեհի հրովարտակը՝ M's edict, an important document showing what the Christian subjects of Persian Empire knew about the State religion of the Sassanians.The text is kept in Եղիշէ, Վասն

Վարդանայ եւ Հայոց Պատերազմին,Երեւան 1957,էջ 24-27:

ՅԱԿՈԲ ՊԱՐՈՆԵԱՆ

1842-1891

Սովետական վերլուծութիւն

Յակոբ Պարոնեանը հայ երգիծական գրականութեան խոշորագոյն ներկայացուցիչն է, ռէալիստական արձակի սկընաւորողը արեւմտահայերի մօտ: Նա հայ կլասիկ գրականութիւնը հարստացրել է արժէքաւոր այնպիսի երկերով, որոնցից մի քանիսը, շնորհիւ իրենց գաղափարական-գեղարւեստական խոշոր արժէքների, իրաւամբ կարող են մտնել համամարդկային կուլտուրայի հարուստ գանձարանը:

Յակոբ Պարոնեանը ծնւել է 1842 թ. Թուրքիայի Ադրիանապոլիս քաղաքում: Նախնական կրթութիւնն ստացել է ծննդավայրի հայկական Արշակունեան դպրոցում, որը հիմնաւոր որեւէ դաստիարակութիւն չի տւել ուսումնատենչ, սրամիտ եւ մեծ ընդունակութիւնների տէր պատանուն: Արշակունեան վարժարանն աւարտելուց յետոյ, 1857 թ. ընդունւում է յունական դպրոց, որտեղ, ինչպէս ինքն է ասում, մի տարի ”յոյն լեզուին դրժւարութիւնները” սովորելով՝ թողնում հեռանում է: Այլեւս հնարաւորութիւն չի ունենում շարունակելու ուսումը: Մօտ մէկ տարի աշխատում է Անդրիանապոլսի դեղատնում, որպէս աշակերտ, ապա զբաղւում հաշւապահութեամբ: Պարոնեանը իր կրթութիւնը ձեռք է բերել ինքնազարգացմամբ, յամառ ընթերցանութեամբ: Նա սովորել եւ տիրապետել է մի քանի լեզւի ֆրանսերէն, յունարէն,թուրքերէն եւ այլն: Բնագրերով կարդացել է ինչպէս հին յունական գրականութեան ու փիլիսոփայութեան ականաւոր ներներկայացուցիչների երկերը, այնպէս էլ ֆրանսիական կլասիկ եւ ժամանակակից գրականութեան լաւագոյն նմուշները:

1864 թ. Պարոնեանը տեղափոխւում է Կ. Պոլիս, որը հանդիսանում էր արեւմտահայ մտաւորական կեանքի կենտրոնը:Մայրաքաղաքի հասարակական-քաղաքական կեանքը, դասակարգային ուժեղ հակամարտութիւններով, հարուստ նիւթ է տալիս գրական որոշակի հակումներով հասարակական ասպարէզ մտած Պարոնեանին: Կ. Պոլիս գալու յաջորդ տարին, 1865 թւին նա գրում է երգիծական իր անդրանիկ գործը՝ ”Երկու տէրով ծառայ մը’’ կատակերգութիւնը: Նիւթական դժւարութիւնների պատճառով հեղինակը հնարաւորութիւն չի ունենում հրատարակել այն, իսկ նորաստեղծ հայ բեմը զգուշանում է բեմադրելուց: Պարոնեանը առաջին անյաջողութիւնից չի յուսահատւում:1868 թ. նա լոյս է ընծայում ’Ատամնաբոյժն արեւելեան” կատակերգութիւնը, որի մէջ արդէն որոշակիօրէն երեւում է հեղինակի երգիծական տաղանդը:

Հէնց այդ թւականներից Պարոնեանը սկսում է իր խմբագրական, հրապարակախօսական եռուն գործունէութիւնը, լոյս է ընծայում մի շարք երգիծաթերթեր կամ աշխատակցում միւսներին ”Փող առաւօտեան”, ”Մեղու”, ” Թատրոն”, ” Խիկար”, ”Լոյս” եւ այլն, որոնց էջերում լոյս են տեսնում նրա լաւագոյն ստեղծագործութիւններից շատերը:

Վերոյիշեալ պարբերականներից՝ առաջին շրջանում, համեմատաբար երկար կեանք են ունենում ” Մեղուն” 1872-74 եւ ”Թատրոնը” 1874-77:Այս երգիծաթերթերում Պարոնեանը սուր յօղւածներով եւ ուշագրաւ ծաղրանկարներով մերկացնում է պոլսահայ հասարակական կեանքի թերութիւնները, ժողովրդի հաշւին ապրող մակաբոյծ հոգեւորականներին, լիբերալ գործիչներին եւ սուլթանական կառավարութեանը, որը անտանելի պայմաններ էր ստեղծել հայերի համար՝ Թուրքիայում: Ռէակցիոն խաւերի մատնութիւնների պատճառով 1877 թ. սուլթանական կառավարութիւնը փակում է Պարոնեանի ”Թատրոնը”: Մի քանի տարի Պարոնեանը հնարաւորութիւն չի ունենում հրատարակելու որեւէ թերթ: ”Մասիս” պարբերականում փորձում է շարունակել քաղաքական մերկացումները սուլթանական կառավարութեան դէմ ”Կսմիթներ” ընդհանուր վերնագրով, որտեղ տալիս է նաեւ հայ ժողովրդի ճակատագիրը իրենց շահերին ծառայեցնող եւրոպական դիւանագիտութեան ոչնչացնող քննադատութիւնը: ”Մասիսի” լիբերալ խմագիրը փակում է իր էջերը նրա առաջ: Նա միաժամանակ աշխատակցում է Թիֆլիսում հրատարակւող ” Փորձ” հանդէսին, շարունակելով իր ” Կսմիթները”՝ ”Հոսոսի ձեռատետրը” վերնագրի տակ: Կարճ ժամանակից ”Փորձի” դռներն էլ փակւում են Պարոնեանի առաջ:

Հնարաւորութիւն չունենալով ոչ սեփական թերթ հրատարակելու եւ ոչ էլ աշխատակցելու որեւէ պարբերականի, նա 1879-80 թթ. զբաղւում է մամուլում լոյս տեսած ”Ազգային ջոջերը” առանձին գրքով հրատարակելու գործով:

1886 թ. լոյս է ընծայում հայ երգիծական գրականութեան գլուխգործոցներից մէկը հանդիսացող ” Մեծապատիւ մուրացկաններ” ստեղծագործութիւնը:

1884-88 թթ. Պարոնեանը հրատարակում է ”Խիկար” երգիծական հանդէսը, որի էջերում լոյս են տեսնում նրա մի շարք կարեւոր երկերը, ինչպէս ” Պաղտասար աղբար” կատակերգութիւնը, ” Պտոյտ մը Պոլսոյ թաղերուն մէջ”, Քաղաքավարութեան վնասները” եւ այլն:

Սուլթանական կառավարութիւնը 1888 թւին վերջնականապէս փակում է նաեւ ” Խիկարը”: Այնուհետեւ Պարոնեանը օրէցօր խստացող համիդեան բռնապետական ռեժիմի պայմաններում այլեւս չի կարողանում զբաղւել գրական աշխատանքով, հարկադրւած է լինում իր ապրուստը ճարել հաշւապահութեամբ: Նա ընկնում է թշւառ ու անմխիթար վիճակի մէջ, այն աստիճան, որ բժշկի նշանակած դեղերն անգամ գնելու հնարաւորութիւն չի ունենում: Մի քանի տարի թոքախտով տառապելուց յետոյ մեծ երգիծաբանը մեռնում է 1891 թ. ամենաչքաւոր վիճակում:

Յ. Պարոնեանը գրական ասպարէզ էր մտնում այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ Պոլսում սկսւել էր թատերական նշանակալից շարժում, գործում էր ’’ Արեւելեան թատրոնի’’ խումբը, որի խաղացանկում մեծ տեղ էին բռնում արեւմտաեւրոպական հեղինակներից կատարւած թարգմանական պիեսները եւ ինքնուրոյն պատմական ողբերգութիւնները:

Անհրաժեշտ էր ստեղծել իրական կեանքը իր դասակարգային հակամարտութիւններով ցուցադրող դրամատուրգիա:

Պարոնեանի դրամատուրգիան հետապնդում էր այդպիսի նպատակ: Նրա պիեսները թւով շատ չեն՝ ’’ Երկու տէրով ծառայ մը”, ’’ Ատամնաբոյժն արեւելեան ”, ”Շողոքորթը”, ” Պոոյգ” եւ ’’Պաղտասար աղբար”: Սրանցից աւարտուն վիճակի հասցւած են միայն ’’ Ատամնաբոյժն արեւելեանը’’ եւ ”Պաղտասար աղբարը”: Մնացածներն անաւարտ են: Թէ գաղափարական տեսակէտից եւ թէ գեղարւեստական արժանիքներով նոր որակի գործեր են ’’ Ատամնաբոյժն արեւելեանը”եւ ’’ Շողոքորթը”: Դրանք հանդիսանում են քննադատական ռէալիզմի առաջին փորձերը արեւմտահայ իրականութեան մէջ: Այդ երկու կատակերգութիւններում առաջին անգամ գրականութեան նիւթ էին դառնում Պոլսի քաղքենիական ընտանիքի առօրեայի մի շարք բնորոշ կողմերը, որոնք հետագայում աւելի լայն կտաւի վրայ գծագրւեցին հեղինակի այլ երկերում:

” Ատամնաբոյժն արեւելեան’’ կատակերգութիւնում ցուցադրւած են փողի համար կատարւած անհամապատասխան ամուսնութեան հետեւանքները, փոխադարձ անհաւատարմութիւնն ու անվստահութիւնը ընտանեկան կեանքում, արտաքին շքեղութիւնների, շռայլութիւնների տակ թաքնւած երիտասարդների մտաւոր ու հոգեկան աղքատութիւնը եւ այլն: Կատակերգութեան հերոսների վարքագիծը ցոյց է տալիս, որ այդ հասարակարգում գիտութիւնը, ուսումը, ազնւութիւնը եւ արդար աշխատանքը չէ, որ ճանապարհ են հարթում կեանքում, այլ կեղծիքը, խաբեբայութիւնը:

Բուրժուական ընտանիքներում տիրող այլանդակ բարքերը շատ աւելի լայն կտաւի վրայ ցուցադրուած են Պարոնեանի ”Պաղտասար աղբար’’ կատակերգութիւնում, որը գեղարւեստական տեսակէտից մի աւարտուն ու կլասիկ գործ է։ Այնտեղ երգիծանքի ամբողջ ուժով մերկացւում են եւրոպական քաղաքակրթութեան քողի տակ կատարւող այլանդակութիւնները։

Կատակերգութիւնում զուգահեռ ընդգծուած է երկու գաղափար՝ մի կողմից բուրժուական բարքերի ցուցադրումը, միւս կողմից լիբերալ ինտելիգենցիայի խօսքի ու գործի հակասութեան բացայայտումը։ Վառ պատկերներով գծուած է ժամանակի երիտասարդութեան վիճակը, երիտասարդութիւն,որի համար տիպական է իր եսասիրական հաշիւները թաքցնել ժողովրդի լուսաւորութեան, դաստիարակութեան եւ այլ հարցերի մասին արտասանւող դատարկ ֆրազների տակ։

”Պաղտասար աղբարում’’ շօշափւող հարցերից մէկն է կնոջ ազատագրութեան հարցի վերաբերեալ բուրժուական ըմբռնման բացայայտումը։ Այնտեղ անբարոյականութիւնը, կենցաղային այլանդակութիւններն ու այլասերւած բարքերը փաստաբան Օգսէնի ու Կիպարի կողմից ներկայացւում են որպէս կանանց ազատագրութեան յատկանիշներ։

Պարոնեանը այդ կատակերգութեան մէջ սուր քննադատութեան է ենթարկում նաեւ բուրժուական արդարադատութիւնը։ Այդ բնագաւառում աշխատող մարդիկ արդարութիւնը տեսնում են այնտեղ, որտեղ կաշառք կայ. Նրանց մազաչափ անգամ չի հետաքրքրում կողմերի իրական վիճակը,այն հարցը,թէ ով է իսկապէս մեղաւորը։

’’Պաղտասար աղբար” կատակերգութիւնը որպէս դրամատիկական ստեղծագործութիւն համարեա զերծ է այն թերութիւններից, որոնք առկայ են նրա նախորդ շրջանի պիեսներում։ Այն կուռ է, միաձոյլ, գործող անձերը տիպականացւած են իրենց արարքներով եւ բնաւորութեան գծերով։ Դրամատիկական իր այդ խոշոր արժանիքների շնորհիւ այդ կատակերգութիւնը մեր օրերում էլ յաջողութեամբ բեմադրւում է։

8. Պարոնեանի քաղաքական սատիրայի համար բնորոշ է եւրոպական դիւանագիտութեան ու սուլթանական կարգերի, հայ լիբերալիզմի ու հոգեւորականութեան քննադատութիւնը։

Հայ լիբերալիզմի եւ հոգեւորականութեան ոչնչացնող քննադատութիւնը նա տուել է իր ’’ Ազգային ջոջեր’’ նշանաւոր երկում, որտեղ երգիծական բազմազան միջոցներով ծաղրել է ժամանակի ղեկավար բոլոր հայ գործիչների ։Ոմանց , յատկապէս արւեստի բնագաւառի աշխատողների նկատմամբ երգիծաբանը կիրառում է հումորը, ինչպէս դերասան-ռեժիսորներ Յակոբ Վարդովեանի, Թովմաս ֆուսուլաճեանի, դերասանուհի Նրանուհի Գարագաշեանի եւ ուրիշների, սակայն լիբերալ բուրժուազիայի ականաւոր բոլոր դէմքերը Գրիգոր Արծրունի, Նահապետ Ռուսինեան, Կարապետ Ութուճեան եւ այլն, ինչպէս եւ հայ հոգեւորական ղեկավարները Խորէն Նար պէյ,Անտոն Հասունեան ծաղրուած են խստագոյն սատիրայով:

Քննադատելով հայ լիբերալիզմը, Պարոնեանը ցոյց է տալիս լիբերալ գործիչների խօսքի եւ գործի հակասութիւնը, այն որ նրանք հայ ժողովուրդի շահերի մասին շաղակրատելով՝ իրականում հեռու էին կանգնած բուն աշխատաւոր ժողովրդից: Այդ փաստը Պարոնեանը մեծ տաղանդով արձանագրում է ականաւոր լիբերալ գործիչ Ռուսինեանի մասին գրած երգիծական պորտրէտում, որտեղ նա ցոյց է տալիս, թէ ինչպէս Փարիզում սովորած եւ դաստիարակուած, ֆրանսիական քաղաքական վարչաձեւին ծանօթ այդ անձնաւորութիւնը, առանց հաշուի առնելու տնտեսական եւ քաղաքական այն պայմանները, որոնց մէջ գտնւում էր Թուրքիայում ապրող հայ ժողովուրդը, ցանկանում էր Պոլսում հաստատել սահմանադրական նոյնպիսի կարգեր հայերի համար, կատարել լեզուական եւ ուղղագրակաս ռեֆորմներ: Ծաղրելով Ռուսինեանի այդ փորձերը, Պարոնեանը գրում է. ” Նահապետ գրիչը ձեռքէն չէր ձգեր, կը նմանէր այն դերձակին, որ փոխանակ կերպասը մարմնոյն համար ձեւելու, մարմինը իր շինած զգեստին յարմարեցնել կ'աշխատի”:

Առաջադիմութեան, լուսաւորութեան անունից խօսող հայ լիբերալների հաշտւողական քաղաքականութիւնն է ծաղրում Պարոնեանը բազմաթիւ առիթներով. ”Առաջադիմութիւն կը պոռանք, ետ ետ կ'երթանք,- գրում է նա,-լոյս կը պոռանք, դէպի խաւար կ'երթանք, ապագայ կ'ըսենք եւ դէպի անցեալը կը վազենք”:

Նա դիպուկ տողերով բնութագրել է պահպանողականների եւ լիբերալ որոշ գործիչների անսկզբունքայնութիւնը, խստօրէն ծաղրել է այն խմբագիրներին, որոնք եթէ փող ստանան, հաճոյքով ”երկու անգամ երկուքը հինգ կը ներկայացնեն, վսեմափայլ, բարձրապատիւ ածականներով կը կոչեն,երբ մէկը հաճի կէս մետր կտոր նուիրել իրենց”:

Լիբերալ խմբագիրներից մէկի անսկզբունքայնութիւնը Պարոնեանը ծաղրել է հետեւեալ բնորոշ տողերով. ’Այսօրուան պաշտպանած սկզբունքը հետեւեալ օրը կը հարուածէր եւ վաղուան պաշտպանելիք սկզբունքը օր մը առաջ կը հարուածէր...Այնքան շուտ սկսաւ փոխել իւր կարծիքները, որ ընթերցողն ալ ետեւէն չկրցաւ հասնիլ: Անօթի ըլլար նէ՝ ժողովրդական էր, պատառ մը հաց ուտելուն պէս՝ միապետական կը դառնար”:

Պարոնեանը միանգամայն ժխտողական վերաբերմունք է հանդէս բերել հայ բարձրաստիճան հոգեւորականութեան նկատմամբ, որը ” միայն որովայնի կը ծառայէ եւ ազգասիրութիւնը միշտ իւր կոկորդին մէջ կը փնտրէ”: Նա այն կարծիքն է յայտնել, որ հոգեւորականութիւնը որեւէ հանրօգուտ գործ չի կատարում, ապրում է ժողովրդի հաշուին: Բոլոր վարդապետներն ու եպիսկոպոսները՝ օգտագործելով ժողովրդի նախապաշարումներն ու տգիտութիւնը, իրենց ներկայացնելով որպէս հոգու փրկիչներ, ” կ’ելլեն իրենց ժողովրդեան վրայ կը նստին եւ անոնց անտանելի բեռ մը կ’ըլլան”:

Այս տեսակէտից ուշագրաւ է Պարոնեանի մի դիպուկ արտայայտութիւնը Հայաստանում ծայր առած սովը վերացնելու, սովեալներին օգնելու մասին: ” Սովեալներուն օգնելու համար ճամփայ մ’ալ ես կ’առաջարկեմ,- գրում է նա,- այն է՝ սովեալ գաւառներէն հեռացնել այն մարդերը, որ շատ կ’ուտեն, հետեւաբար կ’առաջարկեմ, որ վանահայրերը Պոլիս կանչուին, մանաւանդ Մամբրէ եպիսկոպոսը, որ Մշոյ վանքը ամբողջ կերաւ”:

” Ազգային ջոջերի” այն հատուածները, որոնց մէջ առաւել մեծ տաղանդով քննադատուած են հայ յետադիմականները, նուիրուած են Խորէն Նար Պէյին եւ Տէրոյենցին, որոնք երկուսն էլ ժամանակին ժխտական քննադատութեան են ենթարկուել նաեւ ռեւոլիւցիոն-դեմոկրատ Միքայէլ Նալբանդեանի կողմից:

1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմի տարիներին եւրոպական պետութիւնները ուժեղացրին իրենց ճնշումը Թուրքիայի նկատմամբ, նպատակ ունենալով զաղութացնել Թուրքիան: Նրանք իրենց այդ նպատակը կենսագործելու համար օգտագործում էին սուլթանական կառավարութեան ճիրաններում տառապող քրիստոնեայ ժողովուրդների ազատագրական ձգտումները, հանդէս գալով որպէս այդ ժողովուրդների ”պաշտպան” պետութիւններ: Յատկապէս Անգլիան եւ Գերմանիան, ինչպէս եւ ցարական Ռուսաստանը մրցում էին միմեանց հետ՝ իրենց ներկայացնելով որպէս հայ ժողովրդի պաշտպաններ:

Հայ լիբերալ բուրժուազիան՝ խաբուելով եւրոպական դիւանագէտների ” հայրենասիրական” ճառերից, պարբերական մամուլում եւ առանձին գրքերով հայասէր էր հռչակում այդ դիւանագէտներին, մեծ յոյսեր կապելով նրանց հետ, մի հանգամանք, որ վնասում էր Թուրքիայի գերիշխանութեան տակ գտնուող ճնշուած ժողովուրդների ազատագրական պայքարի միասնական կազմակերպմանը:

Արեւմտահայ գրականութեան մէջ Յ. Պարոնեանը միակն էր, որ արտայայտելով բազմահազար աշխատաւորութեան ձգտումները, վճռական պայքար մղեց եւրոպական դիւանագիտութեան դէմ, ցոյց տալով, որ հայ ժողովրդի անունից ճառող այդ բոլոր պետական գործիչների նպատակը իրենց գաղութարարական ծրագրերի կենսագործումն է: Այն օրերին, երբ Կ. Պոլսի եւրոպական դեսպանները գումարում էին ժողովները, որպէս զի իբր թէ զբաղուեն հայկական հարցով, Պարոնեանը գրում է. ” Կ’ըսէի,ըսի, կ’ըսեմ եւ պիտի ըսեմ,- ամէն մարդ իր շահը կը նայի’’, ” Անցեալ օր մայրաքաղաքիս դեսպանները դարձեալ ժողով ըրին: Ի՞նչ խօսեցան դեսպանները յայտնի է, իւրաքանչիւրը իւր շահուն վրայ խօսեցաւ”:

Հայ բուրժուազիան մեծ յոյսեր էր կապում յատկապէս Անգլիայի հետ, թմբկահարելով այն սխալ տեսակէտը, թէ Անգլիան, չցանկանալով կուլտուրական մի ժողովրդի ստրկական վիճակը Թուրքիայում, ազատագրելու է նրան:

Պարոնեանը անգլիական դիւանագէտներից մէկի ձայնի եւ նրա արձագանքի դիպուկ մի դիալոգով ցոյց է տուել անգլիական կառավարութեան բուն նպատակը հայկական հարցում:

” Մինչեւ վերջը իմ դատս պիտի պաշտպանեմ,- ասում է անգլիացի դիւանագէտի ձայնը:- Պաշտպանեմ,- լսւում է արձագանքը”: ’’ Եթէ հարկ ըլլայ՝ պիտի պատերազմիմ...-Պիտի պատերազմիմ,-պատասխանում է արձագանքը”:” Արդարութեան համար,-ասում է դիւանագէտը:-Շահուդ համար,- պատասխանում է արձագանքը”:

Մերկացնելով հայ ռէակցիոն մամուլի աղմուկ աղաղակը, թէ Անգլիայում հասարակական կարծիք է ստեղծւել ի նպաստ հայերի, Պարոնեանը գըտնում էր, որ այդ հասարակական կարծիքը առաջին հերթին արտայայտում է անգլիական կառավարութեան շահերը, որովհետեւ հայերի հարցով հանդէս էին գալիս հիմնականում պաշտօնական շրջաններին մօտ կանգնած մարդիկ, որոնք հեշտութեամբ կարող էին փոխել վերաբերմունքը, եթէ Անգլիայի գաղութարարական շահերը այլ բան պահանջէին: Այդ բանը երգիծաբանը պատկերաւոր ձեւով արտայայտել է հետեւեալ տողերի մէջ. ’’ Անգլիայի հասարակական կարծիքը իմ հովանոցիս կը նմանի, հովը քիչ մը սաստիկ փչելուն պէս, միւս կողմը կը դառնայ”, ’’որ դիէն որ շահ տեսնայ՝ ան կողմը կը դառնայ’’:

Պարոնեանը ոչնչացնող քննադատութեան է ենթարկել նաեւ սուլթանական կառավարութեան ներքին ու արտաքին քաղաքականութիւնը: Նա մերկացրել է այն մարդկանց,որոնք պաշտպանում էին Թուրքական կառավարութեանը, գտնելով որ հայ ժողովուրդը պէտք է հլու հնազանդ լինի սուլթանական կարգերին եւ նրանից սպասի տնտեսական ու քաղաքական որոշ արտօնութիւններ, այլ խօսքով` կողմ էին հայ ժողովրդի ստրկական վիճակի պահպանմանը Թուրքիայում։

Պարոնեանի գրական-հրապարակախօսական քսանամեայ գործունէութիւնը մի պայքար է ընդդէմ սուլթանական բռնապետութեան, պայքար, որի ընթացքում յաճախ է կառավարութիւնը խափանել, փակել նրա թերթերը, բայց միշտ երգիծաբանը գտել է պայքարի որեւէ ձեւ ու շարունակել իր մերկացումները, գրել է համարձակ, կրքոտ ու սկզբունքային դիրքերից։

Սուլթանական Թուրքիայի ներքին քաղաքականութեան քննադատութիւնը յստակ կերպով երեւում է Պարոնեանի այն երկերում, որոնք մերկացնում են այսպէս կոչուած օսմանեան առաջին սահմանադրութիւնը։ Այդ սահմանադրութիւնը հռչակուեց 1876 թ. եւ նպատակ ունէր խաբել առաջին հերթին թուրք բուրժուազիային, որպէս զի չդիմէ ռեւոլիւցիայի ֆէոդալական կարգերի տապալման համար, միաժամանակ նպատակ ունէր խաբելու Թուրքիայի հպատակ ժողովուրդներին, այդ թւում հայերին, որպէսզի նրանք չդիմեն զինուած ապստամբութեան` իրենց ազատութիւնը ձեռք բերելու համար։

Սահմանադրութիւնը պարունակում էր յօդուածներ ազատութեան,կեանքի եւ ինչքի անձեռնմխելիութեան եւ այլ իրաւունքների մասին, որոնցից եւ ոչ մէկը չէր կենսագործւում։ Պարոնեանը ցոյց էր տալիս այդ սահմանադրութեան խաբեբայական էութիւնը։ Նա, օրինակ, խօսելով խղճի ազատութեան մասին, բերում էր մի օրինակ, թէ ինչպէս Սեբաստիայում Թուրքերը ”Թմբուկով եկեղեցի կը մտնեն ու պատարագիչ քահանային մօրուքը ածիլելով եկեղեցւոյն մէջտեղը կը խաղցնեն։ Ահա դէպք մը, որուն հարստահարութիւն անունը չենք կրնար տալ, որովհետեւ գործին մէջ ոչ զանակոծութիւն կայ, ոչ ալ սպանութիւն, այլ խնդութիւն եւ ցնծութիւն”։

Չնայած Օսմանեան այդ սահմանադրութեամբ Թուրքիայում ապրող ժողովուրդները հռչակւում էին հաւասար, նրանց սեփականութիւնը համարւում էր անձեռնմխելի, իրականում մոլեգնութեամբ շարունակւում էր հալածանքը հայերի դէմ, իսկ գաւառներում հայ անզէն աշխատաւորութեան նկատմամբ կիրառւում էին բարբարոսական մեթոդները` թալան, խոշտանգում, սպանութիւններ։ Սահմանադրութեան հռչակումից ընդամէնը մէկ ամիս անց Վանում Թուրքերը յարձակւում են հայերի վրայ, թալանում բոլոր խանութները, սպանում մարդկանց։ Թուրքական թերթերը` թաքցնելով իրական փաստը, գրում են, թէ հրդեհն է ոչնչացրել այդ հարստութիւնը։ Պարոնեանը, *ծաղրելով Թուրք Թերթերին, գրում է. "Իմացաք սա բարբարոս կրակին Վանայ մէջ գործած անիրաւութիւնները, ամբողջ շուկան մոխիր դարձնելէն ետքը՝ շատ մը ապրանքներ առեր փախեր է... Բայց ինչ որ ըլլայ, վստահ ենք, որ Վանայ բարեխնամ կառավարութիւնը ասանկ չարաբարոյ կրակները պիտի ձերբակալէ... ձեռքով ալ չի բռնուիր, որ ձերբակալէ... ասանկ չարաբարոյ կրակները պիտի...պիտի բանտարկէ":*

Թուրքիայում տիրում էր կատարեալ անիշխանութիւն: Գողերն ու աւազակները համարձակ գործում էին, պետութեան պաշտօնեաները փոխանակ նրանց դէմ պայքարելու, գործակցում էին գողերին: Հայ աշխատաւոր ժողովուրդը մատնւել էր ծայր աստիճան աղքատութեան:

Ցոյց տալու համար, թէ Թուրքական կառավարութիւնը որքան անտարբեր է բնակչութեան վիճակի նկատմամբ, Պարոնեանը, Հայաստանում սկսւած սովի մասին խօսելիս գրում է.

"Փառք տալու ենք, որ Թուրքական բարեխնամ կառավարութիւնը շատ տարիներէ յետէ նախատեսած լինելով այս սովը, ազդու միջոցներ ձեռք առած է իր հաւատարիմ հպատակները անօթութեան վարժեցնելու":

Տնտեսական ու քաղաքական նոյնպիսի դրութիւն էր տիրում մայրաքաղաքում, որտեղ այդ ժամանակաշրջանում ապրում էին երկու հարիւր հազարից աւելի հայեր: Այստեղ էլ տիրապետում էր նոյն կամայականութիւնը, աշխատաւորական հոծ մասսաների ծայրաստիճան աղքատութիւնը: Օսմանեան կառավարութիւնը տնտեսապէս եւ քաղաքականապէս ամբողջովին ենթարկւած էր եւրոպական պետութիւններին, նրանցից ստրկական կախման մէջ էր գըտնւում: Քննադատելով Թուրքական կառավարութեան ստորաքարշ եւ լաքէյական քաղաքականութիւնը եւրոպական պետութիւնների նկատմամբ, այդ կառավարութեան անճարակութիւնը, նրա պաշտօնեաների տգիտութիւնը, որի հետեւանքով ամեն ինչի համար դիմում էին Գերմանիայի կամ Անգլիայի օգնութեանը, Պարոնեանը գրում է."Փոխանակ այսպէս պաշտօնեաներ բերելու Գերմանիայէն, աւելի լաւ չի՞ լինիր, որ մեր գործերը Բիսմարկ իշխանին յանձնենք":

Ակնարկելով Թուրքական բռնապետութեան ռեժիմի ահաւորութիւնը, մի ռեժիմ, որտեղ մարդ արարածը ապրում էր վանդակի մէջ բանտարկւած, Պարոնեանը այդ երկիրը բնութագրում է որպէս մի մեծ բանտ:

Ի՞նչ ելք էր տեսնում մեծ երգիծաբանը, այդ վիճակից: Միակ ելքը նա համարում էր սուլթանական կարգերի վերացումը: Խօսելով սնանկացող վաճառականների թւի օրէցօր մեծանալու, մայրաքաղաքում ամենուրեք խանութների վրայ լիկվիդացիա բառի երեւալու մասին, Պարոնեանը գրում է. „Կարող եմ ըսել, թէ միայն Բ.Դռան վրայ լիկվիդասիոն չէ գրւած: Լաւագոյն չէ՞ր լինի, եթէ քաղաքապետութիւնը այդ լաթերը ժողվել տար եւ մի մեծ լաթ կարել տալով վրան ոսկեզօծ տառերով լիկվիդասիոն դնէր եւ այդ լաթը իբրեւ դրօշակ մայրաքաղաքիս դռներուն վրայ պարզէր”:

Պարոնեանի վճիռը որոշակի է. բռնապետական կարգերի լիկվիդացիա: Բայց ի՞նչ ճանապարհով: Այստեղ է, որ նա կանգ է առնում: Նրա ապրած էպոխայի հասարակական-քաղաքական կեանքի բարդ պայմանները, սուլթանական բռնապետական ռեժիմի ահաւոր խստութիւնները նրան հնարաւորութիւն չեն տւել որոշակի պատասխան տալ դրան:

Շահագործող դասակարգի ներկայացուցիչներին Պարոնեանը ծաղրել է բազմաթիւ առիթներով, նրանց նկատմամբ կիրառելով իր սատիրայի ամբողջ ուժը: Այդ բանը առաւել ցայտունութեամբ երեւում է սուլթանական կառավարութեան հետ սերտօրէն համագործակցող հայ հարուստների՝ ամիրաների նկատմամբ նրա ունեցած վերաբերմունքում: բնութագրական է „Ազգային ջոջերի” այն հատւածը, որը վերաբերում է Կարապետ Երամեան ամիրային:Հեղինակն իր ժխտողական վերաբերմունքը դէպի այդ հարուստը արտայայտել է ոչ միայն պորտրէի գաղափարական բովանդակութեամբ, այլ ձեւի մէջ: Նա Երամեանի մասին խօսում է ընդամէնը երեք տողով, որից մէկը նւիրւած է նրա հասարակական գործունէութեանը՝ հետեւեալն է.

„Մզկիթ մը շինել տւած է”.

Այս մի տողի մէջ երեւում է այլասերւած, օտարացած ամիրայի սերտ կապը թուրքական ռէակցիայի հետ:

Պարոնեանը ցոյց է տւել, որ Պոլսի հայ հարուստները աւելի շատ մտածում են „ իրենց ձիերուն համար բարեկարգ ախոռներ” կառուցելու, քան "իրենց երեխաներուն համար դպրոցներ" շինելու մասին: Նրանց միակ ձգտումը եղել է բարձրանալ դէպի պետական պաշտօնները եւ բարձրանալ՝ հայ ժողովրդին դաւաճանելով, շահագործելով: "Եթէ աստիճան մը բարձրանան,- հայերէն խօսողը ականջէն պատի մը վրայ գամելու չափ առաջ կ'երթան եւ եթէ քիչ մ'ալ բարձրանան, ազգային իրաւունքները աճուրդի կը հանեն, կարծելով թէ այս ընթացքով աւելի բարձր աստիճաններու կը հասնին":

Պարոնեանը ցոյց է տալիս, թէ ինչպէս են հարստացել Պոլսի հայ էֆենդիներն ու ամիրաները, ինչպիսի ստոր ճանապարհով մասսաներին կեղեքելով, շահագործելով: Խօսելով մի ամիրայի մասին, որն իր ամբողջ կեանքում որեւէ օգտակար աշխատանք չի կատարել, բայց Պոլսում կառուցել է հոյակապ սեփական շէնքեր, երգիծաբանը հարցնում է. ” Ինչպէ՞ս կառուցած է անոնք, մի հարցներ՝ յափշտակութեամբ կառուցւած է”: Ապա շարունակում է. ”Այս գողերը մեծ յարգ ու պատիւ կը վայելեն հասարակութեան մէջ, որ կ’ըսէ անոնց համար,շատ խելացի, շատ ճարպիկ մարդեր են, կանխաւ պատրաստած են իրենց ապազան”:

Պարոնեանը ” Մեղու” պարբերականում տպագրել է մի երգիծական ակնարկ ” Հարուստ ըլլալու միջոցները” վերնագրով: Այնտեղ նա ցոյց է տւել այն ճանապարհը, որով հարստանում են մարդիկ: Օգտակար որեւէ աշխատանք չեն կատարում Նրանք՝ ոչ ֆիզիկական եւ ոչ մտաւոր:

” Հարուստ ըլլալու համար,- գրում է Պարոնեանը,-արհեստաւորներուն քերնէն հացը յափշտակելու ես, գործաւորները անօթութենէ մեռցնելու ես...խեղճ գործաւորաց շաբաթականներն կտրելով՝ ստակ հաւաքելու ես եւ այդ հաւաքած ստակովդ շէնք մը շինել տալու ես, վրան ալ շինեցւաւ արդեամբ յափշտակութեան գրելու տեղ՝ քու անունդ գրել տալու ես... հարուստ ըլլալու միջոցներէն մէկն ալ խարդախութիւնն է, եթէ պզտիկ խարդախ ըլլաս, պզտիկ հարուստ կ’ըլլաս, եթէ մեծ խարդախ ըլլաս, մեծ հարուստ կ’ըլլաս...Երանի անոնց, որ մեծ խարդախ են, զի նոցա է արքայութիւն երկրիս...”:

Պարոնեանի սոցիալական սատիրայի համար յատկանշական է ”Պտոյտ մը Պոլսոյ թաղերուն մէջ” ստեղծագործութիւնը: Հեղինակի ռէալիզմը այնտեղ հանդէս է եկել իր ամբողջ ուժով: Առանձին թաղամասերի տեղագրական,աշխարհագրական նկարագրութիւնը, բնակիչների կենցաղային մանրամասնութիւնները, սովորութիւնները, այդ թաղամասերի բնակչութեան կրթական վիճակը,հասարակական հիմնարկների իրական պատկերը տրւած է հարազատութեամբ, հիւթեղ ոճով ու համոզիչ փաստերով: Նա հանդէս չի գալիս որպէս սովորական մի նկարագրող: Մեծ կրքով միջամտում է ամէն քայլափոխում եւ կայացնում իր դատավճիռը: Նա շօշափում է հասարակական յուզող հարցեր, հրապարակի վրայ դնում ազգային հիմնարկութիւնների, զանազան ընկերութիւնների իրական պատկերը բոլոր մանրամասնութիւններով:

Ինչպէս միւս երկերում, այստեղ էլ երգիծականը մերթ օգտագործում է հումորը, մերթ սատիրան, նայած թէ հասարակական որ խաւերի կեանքն ու կենցաղն է նկարագրում։

Տարբեր դասակարգերի նկատմամբ երգիծաբանի վերաբերմունքը յստակ երեւում է Պոլսի հարուստ դասի կենտրոն հանդիսացող Պերա թաղամասի եւ աշխատաւորական Սամաթիա թաղամասի նկարագրութեան մէջ։ Ահա թէ ինչպէս է նկարագրում նա Պերան։ Պերայի ”սահմանն է արեւելքէն՝ խաղամոլութիւն, արեւմուտքէն՝ պճնասիրութիւն, հարաւէն՝ շռայլութիւն եւ հիւսիսէն՝ խարդախութիւն”։

Այդ թաղամասում անհաւատարմութիւնը, փոխադարձ անվստահութիւնը, բամբասանքը, վրէժխնդրութիւնը բնորոշ յատկանիշներ են։ Պերայի բնակիչները, հետեւելով ֆրանսիական կենցաղին, կորցրել են իրենց ազգային յատկանիշները, չեն խօսում մայրենի լեզուով։ Նրանք ոչինչ չունեն հայ ժողովրդի հետ. ”Ընդհանրապէս կամչնան ազգային զգացում կրելու, ինչպէս որ դու կ՚ամչնաս տունդ ջուր կրելու”։

Պարոնեանը Պերային հակադրում է Սամաթիա թաղամասը՝ որտեղ ապրում էին գերազանցապէս արհեստաւորական խաւերը, կօշկակարները, ատաղձագործները, ծկնորսները, երկաթագործները եւ այլն։ Այս թաղի նկարագրութեան մէջ երեւում է երգիծաբանի խոր համակրանքը դէպի սեփական աշխատանքով ապրող մարդիկ։ Սամաթիայի բնակիչների կեանքը համեստ է ու պարզ։ Նրանք աշխատասէր են, օժտուած են ազնիւ գծերով, ունեն արժանապատւութեան գիտակցութիւն,փողի համար չեն օծնում, շողոքորթում։

Պարոնեանը Պերա թաղամասին հակառակ տողերով է սկսում Սամաթիայի նկարագրութիւնը. ”Բաժանւին մեզմէ նախ անոնք, որք սորված են ծառայեմ-ի. հոս ամէն մարդ տէր է, վասնզի ամէնքն ալ իրենց աշխատութեամբ եւ արհեստովը կ՚ապրին, եւ հետեւաբար՝ պէյերու, էֆէնդիներու ոտները լզելու պարտաւոր չեն”։

Պարոնեանի ուշագրաւ ստեղծագործութիւններից է ”Քաղաքավարութեան վնասները” շարքը, որ բաղկացած է երգիծական փոքրիկ նովելներից ու պատկերներից։ Այդ շարքը երգիծաբանը գրել է իր ստեղծագործական կեանքի վերջին տարիներին, համիդեան բռնապետութեան ամենախստագոյն շրջանում, երբ նա հնարաւորութիւն չունէր ոչ քաղաքական եւ ոչ էլ սոցիալական հարցերի մասին ազատ գրելու։ Նա հարկադրուած էր ”Խիկարի” հրատարակման այդ տարիներին դուրս չգալ ընտանեկան կենցաղային հարցերի ոլորտից։ Վերոյիշեալ նովելները արտաքուստ ունեն կենցաղագրական բընոյթ,շօշափում են առտնին յարաբերութիւններ, սակայն, նրանց մէջ ի յայտ է եկել Պարոնեանի համակրութիւնն ու հակակրութիւնը այս կամ այն դասի նկատմամբ, եւ, որ առաւել կարեւոր է, ի յայտ է եկել երգիծական խոշոր տաղանդը։

Պարոնեանը իր երգիծական դիպուկ բնութագրումներով ժխտել է շահագործող դասակարգերին։ Բայց ո՞րն է նրա իդէալ հասարակարգը։ Ինչպէս 18-19-րդ դարի շատ առաջադիմական մտածողներ, նա իր իդէալ հասարակարգը ներկայացրել է ուտոպիական ձեւով, իր երկերում այն պատկերելով հազար տարի յետոյ կամ լուսնի վրայ։ Նրա երեւակայական մոլորակը տարբեր է մեր երկրագնդից, այնտեղի մարդկանց կեանքը ամենեւին չի յիշեցնում այն վիճակը, որի մէջ ապրել է մեծ երգիծաբանը։ Նրա երազած հասարակարգում բացակայում է բռնութիւնը, շահագործումը, չարքաշ ու հարկադիր աշխատանքը, այնտեղ մէկի քմահաճոյքը չի որոշում միլիոնաւոր մարդկանց բախտը։ Մարդիկ ապրում են հանրապետական կարգերում։ Պարոնեանի բառերով ասած՝ ” Ամբողջ մարդիկ հասարակապետութեան” մէջ են, չկայ հարուստ դասակարգի տիրապետութիւն աղքատների վրայ։ Այնտեղ չկան մարդկանց բնաջնջող պատերազմներ։ Մտաւոր աշխատողները գիտութիւնը չեն ծառայեցնում կեանքը ոչնչացնելու համար, այլ ի սպաս են դնում մարդու բարօրութեան։Նրանք ”ամբողջ միտքերնին, բոլոր հոգերնին ալ աւելի առաջ երթալու համար” են ի սպաս դնում։ Պարոնեանի պատկերացրած ապագայ հասարակարգում ”ստակ ըսուած բանը պիտի վերնայ”, ”փողոցներուն մէջ մուրացկան չպիտի լինի”։ Նկարագրելով այս բոլորը, Պարոնեանը բացագանչում է. ” Այդ ի՜նչ աղուոր բան է”։

Պարոնեանը լաւատես է հայ ժողովրդի ապագայի նկատմամբ եւ կոչ է անում տոկունութեան, համբերութեան ու պայքարի։ Նրան յատուկ չէ յոռետեսութիւնն ու լալկանութիւնը. ” Թերութիւններու վրայ լալը՝ թերութիւններու մեծագոյնն է, խեղճութեան վրայ արտասուք թափելը՝ ապացուցանել է, թէ արիւն չունինք թափելու”,- գրում է նա.

” ՄԵԾԱՊԱՏԻՒ ՄՈՒՐԱՑԿԱՆՆԵՐ”

Հասարակական տարբեր խաւերի նկատմամբ Պարոնեանի վերաբերմունքը, նրա խոր դեմոկրատիզմը եւ ռէալիստական խոշոր տաղանդը առաւել յստակութեամբ հանդէս է եկել ” Մեծապատիւ մուրացկաններ” նշանաւոր ստեղծագործութեան մէջ։

վիպակի սիւժէն հետեւեալն է։ Տրապիզոնի մի հարուստ վաճառական՝ Աբիսողոմ աղան, ամուսնանալու նպատակով գալիս է մայրաքաղաք։ Նրան ներկայանում են հասարակական տարբեր խաւերի ներկայացուցիչներ՝ խմբագիր, քանաստեղծ, լուսանկարիչ, սափրիչ, քահանայ, տպարանատէր, դերասան եւ այլն։ Դրանց բոլորի նպատակն է օգտագործել Աբիսողոմ աղայի փառասիրութիւնը, խաբել ու փող կորզել նրանից։ Աբիսողոմ աղան, կարծելով, որ իր տուած ոսկիները նպաստելու են ամուսնական նպատակի կենսագործմանը, առատօրէն շռայլում է փողերը, բաւարարում գրեթէ բոլորին. միայն վերջում, երբ տեսնում է, որ իրեն դիմողների թիւը գնալով շատանում է, թողնում փախչում է։

Այս պարզ սիւժէն զարգացնելիս Պարոնեանը երգիծական բազմաթիւ հնարներով, զուգահեռ էպիզոդներով կարողացել է մեծ տաղանդով պատկերել 19-րդ դարի երկրորդ կէսի պոլսահայ հասարակական կեանքն ու կենցաղը իր բնորոշ գծերով։

” Մեծապատիւ մուրացկաններ” վիպակում հանդէս են բերուած հասարակական կեանքում իշխող դեր կատարող խաւերն իրենց ներկայացուցիչներով։ Այնտեղ առկայ է առեւտրա-վաշխառուական կապիտալի ներկայացուցիչ, խոշոր վաճառական Աբիսողոմ աղան։ Ցուցադրուած են մանր բուրժուական մտաւորականութեան տարբեր ներկայացուցիչները։ Այնտեղ պատկերուած են իրենց ֆիզիքական աշխատանքով ապրող մարդիկ՝ յանձինս բեռնակիրների։

Պարոնեանի մօտեցումը միանգամայն տարբեր է հասարակական այս խաւերի ներկայացուցիչների նկատմամբ։

Խոշոր բուրժուազիայի, վաճառականութեան նկատմամբ նա գրաւում է ժխտողական դիրք, կիրառում է ոչնչացնող սատիրա։

3. Պարոնեանի ստեղծած բազմաթիւ կերպարների մէջ բացառիկ տեղ է գրաւում Աբիսողոմ աղան։ Նա հասարակական մի ամբողջ խաւի՝ բուրժուականացող կալուածատիրութեան ներկայացուցիչն է. նա շահագործելով աշխատաւորներին, կուտակել է նիւթական հարստութիւն, տէր է դարձել կալուածքների, ագարակների։

Աբիսողոմ աղայի մօտ տգիտութիւնը միացուած է զարմանալի մեծամտութեան, ինքնավստահութեան, փառասիրութեան ու ցուցամոլութեան հետ։ Նա համոզուած է, որ փողը ամենազօր ուժ է, ով փող ունի՝ իմաստուն է, եւ քանի որ ինքը հարուստ է, հետեւաբար իր հասցէին շռայլուած գովեստները բնական են եւ օրինական.” Ես ալ պատուական ազգային մ’եմ,- ասում է նա եւ դրա համար փաստ բերում հետեւեալը,- մեր քաղաքին մէջ արտերու, եզներու, կովերու եւ ագարակներու տէր եմ’’։ Նիւթական հարստութիւնը նրան իրաւունք է տուել արհամարհանքով խօսելու մտաւոր աշխատողների հետ։

Չնայած այն բանին, որ ուսում չունի, Աբիսողոմ աղան հմուտ է վաճառականական հաշիւների մէջ, գիտէ լաւ սակարկել։ Նրա ”Նւիրատւութիւն” վարծատրութիւնները հետապնդում են որոշակի նպատակ՝ ”հարուստ աղջիկ մը” ձեռք գցելով՝ այդ բոլորի փոխարէն հարիւրապատիկ աւելի ստանալու եւ վաճառականական հրապարակի վրայ հուշակ ձեռք բերելու նպատակը։

Իր բարոյական նկարագրով էլ Աբիսողոմ աղան հարազատ է իր հասարակական համոզմունքներին։ Նա իւրօրինակ կարծիք ունի ամուսնութեան մասին։ Նրա ընբռնումով՝ աղջիկը պէտք է ունենայ երկու յատկանիշ՝ պէտք է լինի գեղեցիկ, փոքրիկ եւ ստրկական կախման մէջ լինի ամուսնուց, միաժամանակ պէտք է ունենայ փող։ Աղջիկը, ըստ Աբիսողոմ աղայի, առուծախի ենթակայ սովորական մի ապրանք է, նա միջնորդ կնոջ պատւէր տալու ժամանակ ասում է. ”Ես շատ աժան չեմ ուզեր”։

Աբիսողոմ աղայի դասակարգային պատկանելութեան համար աւելի բնորոշ է նրա թունոտ ատելութիւնը աշխատաւորների նկատմամբ։ Եթէ աղքատների անուններն էլ թերթերում տպելու սովորութիւն լինի, ապա ինքը չի ցանկանայ, որ իր անունը տպւի։ Եթէ լուսանկարւելու սովորութիւնը յատուկ է նաեւ աղքատներին, չի լուսանկարւի։ Նա իրեն համարում է բարձր կանգնած՝ ծառաներից ու մշակներից, իր կալւածում աշխատող գիւղացիներից։ Նրա համար գերագոյն հաճոյք է ծառաներին ծեծելը, նրանց գլխիկոր իր առաջ կանգնած տեսնելը։

Նա ուսման, կրթութեան մասին գաղափար չունի, նրա համար կեանքի գերագոյն նպատակը լաւ ուտելն ու լաւ քնելն է. սիրում է դատողութիւններ անել ճաշերի տեսակների, նրանց մէջ օգտագործւող մթերքի մասին։ Նրա միտքը անընդհատ զբաղւած է ուտելով։ Խմբագրի այն հարցին, թէ նաւի մէջ Աբիսողոմ աղան ինչպէս է անցկացրել, վերջինս պատասխանում է. ” Շատ հանգիստ էի, պատւականապէս կերայ, խմեցի եւ պառկեցի”։ Մանուկ աղայի տանն էլ նա ճաշելուց յետոյ իսկոյն ասում է. ”Փառք քեզ աստւած, այս գիշեր ալ կշտացանք”։

Մանուկ աղան շատ կողմերով տարբեր է Աբիսողոմ աղայից։ Նա բուրժուական այն խաւի ներկայացուցիչն է, որի բնորոշ յատկանիշը ուրիշների հաշւին ապրելն է։ Մանուկ աղան լաւ իւրացրել է մայրաքաղաքի եռուն կեանքի մեխանիզմը, ապրում է այն մարդկանց հաշւին, որոնք կարիք ունեն իր նման ճարպիկ ու գործիմաց միջնորդի օգնութեանը։ Նա ճանաչում է տարբեր պրոֆեսիայի շատ մարդկանց, սերտ կերպով կապւած է ազգային հիմնարկութիւններում ծառայող պաշտօնեանների հետ։

Մանուկ աղային յատուկ է արտակարգ շատախօսութիւնը, շաղակրատանքը, դատարկաբանութիւնը, միաժամանակ մոլութեան հասնող արագաշարժութիւնն ու արագախօսութիւնը։

Նրա բնաւորութեան բնորոշ գծերից մէկն էլ հետաքրքրութիւնն է դէպի թաղականների, այսինքն՝ թաղային լիազօրների ընտրութեան գործը։ Դա նրա տարերքն է։ Ով պէտք է լինի թաղական, ում պէտք է քուէ տալ, սրանք հարցեր են, որոնց մասին սիրում է պատմել մեծ եռանդով։ Ինչպէս կալուածատէրը ծանօթ է իր կալուածի ամէն մի մանրամասին, այնպէս էլ Մանուկ աղան գիտի, ճանաչում է իր շրջապատի բոլոր մարդկանց, նրանց բարեկամներին, վերջիններիս ազգականներին, գիտէ նրանց բնաւորութեան գծերը, նախասիրութիւնները։

"Անմուսայ բանաստեղծ”-ը մտել է գրականութեան պատմութեան մէջ որպէս թեթեւսոլիկ, անտաղանդ, շաղակրատ մի մարդ, որի բնորոշ գծերն են իրական կեանքի հետ ոչ մի առնչութիւն չունեցող վերացական հարցերի մասին սնամէջ ճառեր արտասանելը, հայ լիբերալիզմի թմբկահարած գաղափարների կրկնումը։ Պէտք է ասել, որ Պարոնեանը այս տիպը կերտելիս՝ ընգծելով հանդերձ այն միտքը, որ կապիտալիստական կարգերում բանաստեղծի վիճակը այսքան ողբալի է, միաժամանակ պայքարում է այն մարդկանց դէմ, որոնք չունենալով բանաստեղծական շնորհք, նւիրւում են այդ ասպարէզին։ Պարոնեանի ապրած ժամանակաշրջանում դա մի տեսակ հասարակական չարիք էր։ Ամէն մի գրագէտ մարդ փորձում էր բանաստեղծութիւններ գրել եւ անպայման տպագրել,գրում էին խրթին գրաբարով, անհասկանալի եւ անըմբռնելի պատկերներով, գրում էին այնպիսի բանաստեղծութիւններ, որոնք ընթերցողի ոչ սրտի հետ էին խօսում, ոչ մտքի։ Եւ այդ բոլորը նրանք տպագրում էին մեկենասներ գտնելով, սրանից նրանից փող խնդրելով։ Պարոնեանը, ահա, յանձին անմուսայ բանաստեղծի՝ սուր կերպով ծաղրում է ինտելինգենցիայի այդ խաւին։ Եթէ խմբագիրը ծգտում է Աբիսողոմ աղայի վրայ ազդել հարկադրանքով, ապա բանաստեղծը դրա համար օգտագործում է զգացմունքային գրոհը։ Նա մերթ խեղճանում է, ծայնը ցածրացնում, աղաչում, մերթ լաց լինում եւ կիսահիստերիկ հոգեվիճակով փորձում ազդել Աբիսողոմ աղայի վրայ. ”Մի կոտրեր սիրտս, որ ազգին համար կը բաքախէ, սիրտս լեցւած է, հիմա կը սկսիմ լալ”,-ասում է նա։

Հասարակական միակ խաւը, որ "Մեծապատիւ մուրացկանների" մէջ բոլորովին չի քննադատւած ու ծաղրւած, այդ աշխատաւոր խաւն է, յանձինս բեռնակիրների: Բեռնակիրները ներկայացւած են նահապետական հայ գիւղացուն յատուկ մի շարք ազնիւ գծերով: Նրանք վեհանձն են, ազնիւ, աշխատասէր: Ընթերցողը համոզւում է, թէ ծայրաստիճան չքաւոր վիճակում գտնւող այդ մարդիկ որքան բարձր են կանգնած հարուստ խաւերից: Բեռնակիրները նոյնիսկ իրենց ֆիզիկական ծանր աշխատանքի փոխարէն ստանալիք գումարը պահանջում են վեհանձնօրէն, առանց արժանապատւութեան որեւէ վիրաւորանք թոյլ տալու իրենց նկատմամբ: Նրանք Աբիսողոմ աղայի իրերը տանում են ծաղկի փողոց՝ առանց տիրոջ ուղեկցութեան, առանց որեւէ մէկի հսկողութեան:

Պարոնեանը իր բազմաժանր ստեղծագործութեամբ տւել է ռէալիզմի ամենափայլուն օրինակը: Ռեալիզմը նրա երկերի հիմնական յատկանիշն է: Նա ամենափոքր՝ անգամ երկտողանի մի արտայայտութեան կամ դիալոգի մէջ դրսեւորում է հասարակական կեանքի ու յարաբերութիւնների ճանաչման արտասովոր մեծ կարողութիւն: Նրա ոճին անհարազատ է աւելորդ շաղակրատանքը, գրական պճնանքը: Միաժամանակ նրա բնութագրումները ունեն մեծ ընդհանրացումներ բուրժուական հասարակարգի վերաբերեալ:

Այս տեսակէտից բնորոշ են երգիծաբանի աֆորիզմները, որոնք սեղմ տողերում ընդհանրացումներ կատարելու փայլուն նմուշներ են: Օրինակ՝ "Տաճկաստանի մէջ բանտ, բանտի մէջ բա՞նտ":

Պարոնեանի ստեղծագործութեան հիմնական արժանիքներից մէկը անմիջական ծիծաղն է, որով պարուրւած է նրա գրեթէ իւրաքանչիւր արտայայտութիւնը: Այդ ծիծաղը առաջանում է երգիծական այն բազմապիսի ու իւրօրինակ հնարներից, որոնց դիմում է հեղինակը ամէն անգամ, միշտ գտնելով նորանոր սրամիտ ձեւեր:

Պարոնեանի ծիծաղը մեծ մասամբ առաջանում է կոմիկական այն հոգեվիճակներից ու դրութիւնից, որոնց մէջ դիմում է նա իր հերոսներին եւ կամ խօսքի այն կոմիզմից, որին դիմում է նա յաճախ:

Դրութեան կոմիզմի հիանալի օրինակ է "Մեծապատիւ մուրացկանների" այն հատւածը, որտեղ անմուսայ բանաստեղծը՝ ցատկելով սեղանի վրայ, բարձր ձայնով աղաչում է Աբիսողոմ աղային խղճալ իրեն եւ փող տալ, մինչդեռ վերջինիս թւում է, թէ սպառնում է իրեն. "Միտքդ ի՞նչ է, եղբայր, ես ի՞նչ ըրի քեզի":

Խօսքի կոմիզմի լաւ օրինակ է "Մեծապատիւ մուրացկանների" այն տեսարանը, որտեղ բանաստեղծը խօսում է իր մուսայի գալու մասին, իսկ Աբիսողոմ աղան, կարծելով, թէ մուսան մարդ է, առաջարկում է փող՝ խոստանալով արագ հրաւիրել նրան, կամ այն հատւածը, որտեղ բանաստեղծը ասում է Աբիսողոմին.

”Վսեմափայլ տէր, ձեր գալուստն լսելով փութացի հոս գալ իմ խորին մեծարանացս հաւաստին ձեր ոտքերուն տակը դնել”:

Աբիսողոմ աղան չհասկանալով այդ ճոռոմ լեզուն եւ կարծելով, որ նա մի զոյգ կօշիկ է բերել, որպէսզի իր ոտքերի տակը դնի, հանգիստ պատասխանում է. ’’Ոտքերուս տա՞կը, շատ աղեկ, դիր”:

Նոյնքան բնորոշ է դերասանի եւ Աբիսողոմի զրոյցի այն մասը, որտեղ դերասանը ասում է. ”Տասը տարի է, որ թատերական բեմի վրայ կը քալեմ”: Աբիսողոմը քալել բառը ըմբռնելով ուղիղ իմաստով, ասում է.”Թող նստէիր”:

Պարոնեանը սիրում է կատարել զուգահեռ գաղափար արտայայտող համեմատութիւններ: Օրինակ՝ նկարագրելով Պոլսի գիւղերից մէկի անպլան կառուցւածքը, գրում է. ” Այս գիւղը մտնելու համար քանի մը դժւարութիւններ կան...իսկ անկէ ելլելու համար դժւարութիւնները աւելի մեծ են... Արեւելեան խնդրոյն ձեւով շինւած գիւղ մը’’: Այստեղ նա քննադատում է եւ տւեալ գիւղի փողոցները, եւ խճճւած հայկական հարցը, որից դուրս գալու դժւարութիւնը Պարոնեանը համեմատում է վերոյիշեալ գիւղի փողոցներից դուրս գալու հետ:

Պարոնեանի ստեղծագործութիւնները անմահ են: Նրանք ամենալայն ժողովրդականութիւն են ձեռք բերել հայ ժողովրդի թէ արեւելահայ եւ թէ արեւմտահայ հատւածներում:

Ինտելիգենցիա - մտաւորականութիւն

Բնագաւառ - շրջանակ, միջավայր

Առկայ - գոյութիւն ունեցող, ներկայ եղող

Երկ - աշխատութիւն, գրական ստեղծագործութիւն

Բռնապետութիւն - բռնի իշխանութիւն

Հրապարակախօս - բեմերի վրայ խօսող

Հրապարակագիր - մամուլում գրող

Յափշտակել - հրապուրել, տարել

Կապիտալ - դրամագլուխ

Երգիծանք - ծաղր

Յոռետես - վատատես. հակառակը՝ լաւատես.

Ստակ - դրամ

Գործիմաց - գործ իմացող, հմուտ

Կալուածատէր - հողատէր

Հոգեվիճակ - հոգեկան վիճակ, դրութիւն

Դրսեւորել - արտայայտել, հրապարակ հանել

Կոմիկ - խեղկատակ

Անպլան - առանց պլանի, առանց ծրագրի, յատակագծի

Նահապետը գրիչը ձեռքէ չէր ձգեր. Կը նմանէր այն դերձակին, որ փոխանակ կերպասը մարմնոյն համար ձեւելու` մարմինը իր շինած զգեստին յարմարցնել կ'աշխատի:

Առաջադիմութիւն կը պոռանք` ետ ետ կ'երթանք. լոյս կը պոռանք` դէպի խաւար կ'երթանք. ապագայ կ'ըսենք եւ դէպի անցեալը կը վազենք:

Երկու անգամ երկու հինգ կը ներկայացնեն: Վսեմափառ, բարձրապատիւ ածականներով կը կոչեն, երբ մէկը հաճի կէս մետր կտոր նուիրել իրենց:

Այսօրուան պաշտպանած սկզբունքը` հետեւեալ օրը կը հարուածէր. եւ վաղուան պաշտպանելիք սկզբունքը` օր մը առաջ կը հարուածէր: Այնքան շուտ սկսաւ փոխել իր կարծիքները, որ ընթերցողն ալ ետեւէն չկրցաւ հասնիլ: Անօթի ըլլար նէ` ժողովրդական էր. պատառ մը հաց ուտելուն պէս` միապետական կը դառնար:

Սովեալներուն օգնելու ճամփայ մ'ալ ես կ'առաջարկեմ, այն է ` սովեալ գաւառներէն հեռացնել այն մարդերը, որ շատ կ'ուտեն. հետեւաբար կ'առաջարկեմ որ վանահայրերը Պոլիս կանչուին, մանաւանդ Մամբրէ եպիսկոպոսը, որ Մշոյ վանքը ամբողջապէս կերաւ:

Կ'ըսէի, ըսի, կ'ըսեմ եւ պիտի ըսեմ` ամեն մարդ իր շահը կը նայի: Անցեալ օր մայրաքաղաքիս դեսպանները դարձեալ ժողով ըրին: Ինչ խօսեցան դեսպանները` յայտնի է. իւրաքանչիւրը իր շահուն վրայ խօսեցաւ:

"Մինչեւ վերջը իմ դատս պիտի պաշտպանեմ," ասում է անգլիացի դիւանագէտը: "Պաշտպանեմ",- լսւում է արձագանքը:"Եթէ հարկ ըլլայ` պիտի պատերազմիմ", -"Պիտի պատերազմիմ",- պատասխանում է արձագանքը:-"Արդարութեան համար",- ասում է դիւանագէտը:"Շահուդ համար," պատասխանում է արձագանքը:

Անգլիայի հասարակական կարծիքը իմ հովանոցիս կը նմանի, հովը քիչ մը սաստիկ փչելուն պէս` միւս կողմը կը դառնայ,- որ դիէն որ շահ տեսնայ` ան կողմը կը դառնայ:

(Սեբաստիայում թուրքերը) Թմբուկով եկեղեցի կը մտնեն ու պատարագիչ քահանային մօրուքը ածիլելով եկեղեցւոյն մէջտեղը կը խաղցնեն: Ահա դէպք մը, որուն հարստահարութիւն անունը չենք կրնար տալ, որովհետեւ գործին

Translation of WA quotations.

Nahapet did not drop the pen from his hand; he was like the tailor who instead of shaping the material to the body, tries to fit the body to the suit he has manufactured.

We shout "progress" and we go backward; we shout "light" and we go to darkness; we say "future" and we run to the past.

They make twice two equal five; they call with "eminence; very honorable", the man who gives them one meter of stuff.

The principle (policy) he defended today, he attacked the next day, and the principle he was going to defend tomorrow, he attacked a day before. He started to change his mind so quickly that his readers could not follow. When he was hungry he was a 'populist'; when he ate a piece of bread he turned into a monarchist.

I suggest another way of helping starving people, that is, to take away from the famished regions those men who eat too much; consequently, I suggest to call the abbots back to Constantinople, especially Bishop Mambre who ate up the entire monastery of Mush.

I was saying, I said, I am saying and I will say that everyone is looking out for his own interest. Recently the ambassadors in our capital had another meeting. What the ambassadors have talked about is evident: each one of them spoke of his interest.

"I will defend my judgment to the end," says the English diplomat. "I will defend", repeats the echo. "If necessary I will wage a war."-"Wage a war." answers the echo."For justice", says the diplomat;"For your interest," answers the echo.

The public opinion of England is like my umbrella; when the wind is a little stronger, it turns inside down.- Where it sees its interests, in that direction it turns.

(The Turks in Sebastia) enter the church with a drum,shave the

մէջ ոչ զանակոծութիւն կայ, ոչ ալ սպանութիւն, այլ խնդութիւն եւ ցնծութիւն։

Իմացա՞ք սա բարբարոս կրակին Վանայ մէջ գործած անիրաւութիւնները. ամբողջ շուկան մոխիր դարձնելէ ետք՝ շատ մ’ապրանքներ առեր փախեր է։ Բայց ինչ որ ըլլայ, վստահ ենք, որ Վանայ բարեխնամ կառավարութիւնը ասանկ չարաբարոյ կրակներ պիտի ձերբակալէ...ձեռքով ալ չի բռնուիր, որ ձերբակալէ...ասանկ չարաբարոյ կրակներ պիտի ... պիտի բանտարկէ։

Փառք տալու ենք որ Թուրքական բարեխնամ կառավարութիւնը շատ տարիներէ յետէ նախատեսած լինելով այս սովը՝ ազդու միջոցներ ձեռք առած է իւր հպատակները անօթութեան վարժեցնելու։

Փոխանակ այսպէս պաշտօնեաներ բերելու Գերմանիայէն, աւելի լաւ չի՞ լինիր, որ մեր գործերը Բիսմարկ իշխանին յանձնենք։

Կարող եմ՞ ըսել թէ միայն Բարձր Դռան վրայ լիկվիդասիոն չէ գրւած։Լաւագոյն չէ՞ր լինի, եթէ քաղաքապետութիւնը այդ լաթերը ժողվել տար եւ մի մեծ լաթ կարել տալով՝ վրան ոսկեզօծ տառերով լիկվիդասիոն դնէր եւ այդ լաթը իբրեւ դրօշակ մայրաքաղաքիս դռներուն վրայ պարզէր։

Մզկիթ մը շինել տւած է։

(Պոլսի հայ հարուստները աւելի շատ մտածում են) իրենց ձիերուն համար բարեկարգ ախոռներ (կառուցելու,քան) իրենց երեխաներուն համար դպրոցներ (շինելու մասին)։

Եթէ աստիճան մը բարձրանան, հայերէն խօսողը ականջէն պատի մը զամելու չափ առաջ կ’երթան եւ եթէ քիչ մ’ալ բարձրանան, ազգային իրաւունքները աճուրդի կը հանեն, կարծելով թէ այս ընթացքով աւելի բարձր աստիճաններու կը հասնին։

Հարուստ ըլլալու միջոցները. հարուստ ըլլալու համար՝ արհեստաւորներուն բերնէն հաց յափշտակելու ես, գործաւորները անօթութենէ մեռցնելու ես... խեղճ գործաւորաց շաբաթականներն կտրելով՝ ստակ հաւաքելու ես եւ այդ հաւաքած ստակովդ շէնք մը շինել տալու ես, վրան ալ "շինեցաւ արդեամբ յափշտակութեան" գրելու տեղ՝ քու անունդ գրել տալու ես... Հարուստ

the priest's beard and make him dance in the church.- There is an event that we can't qualify as oppression, because in that act there was no scourge, no murder, but just amusement and jubilation.

Did you hear of the injustices done by the barbarous fire in Van?(satire,see text) After having burned down the market it took many goods and went away. We are confident, however, that the government of Van, caring for the welfare of its people, will arrest such mischievous fires...(unfortunately) they can't be caught and arrested...(finally) these mischievous fires will be jailed.

We have to thank that the Turkish Government, caring for its people, had foreseen the famine many years ago, and had taken effective measures to get its faithful subjects accustomed to hunger.

Instead of bringing employees from Germany, as we do, will it not be better to trust our affairs to Prince Bismark?

I can say that only on the Sublime Porte there is no bankruptcy written. Wouldn't it be better if the municipality (of Istambul) gathered all cloths (with bankruptcy advertisement),stitched them together into a larger cloth, and writing upon it "bankruptcy" in golden letters,hoisted it up on the gates of our capital as a (national) flag?

He has built a mosque.

(The rich Armenians of Constantinople are thinking more of building) reformed stables for their horses,(than) schools for their children.

If they advanced a grade, they dare to nail anyone speaking Armenian by his ears on the wall; if they advance a little more, they offer the rights of the nation for sale in an auction, thinking that they will reach higher grades that way.

How to become rich. In order to become rich you have to rob the artisans of their bread; let the workers starve...Cutting down the

Ըլլալու միջոցներէն մէկն ալ խարդախութիւնն է, եթէ պզտիկ խարդախ ըլլաս՝ պզտիկ հարուստ կ'ըլլաս, եթէ մեծ խարդախ ըլլաս՝ մեծ հարուստ կ'ըլլաս: Նրանի անոնց որ մեծ խարդախ են, զի նոցա է արքա ութիւն երկրիս:

Պերայի"սահմանն է արեւելքէն՝ խաղաղամոլութիւն, արեւմուտքէն՝ պճնասիրութիւն, հարաւէն՝ շռայլութիւն եւ հիւսիսէն՝ խարդախութիւն:"

Ընդհանրապէս կ'ամչնան ազգային զգացում կրելու, ինչպէս որ դուն կ'ամչնաս տունդ ջուր կրելու:

Նրանք "ամբողջ միտքերնին,բոլոր հոգերնին ալ աւելի առաջ երթալու համար" են ի սպաս դնում: Պարոնեանի պատկերացրած ապազայ հասարակարգում "ստակ ըսւած քանը պիտի վերնայ","փողոցներուն մէջ մուրացկան չպիտի լինի":...
"Այդ ի՞նչ աղուոր բան է":

Թերութիւններու վրայ լալը՝ թերութիւններու մեծագոյնն է. խեղճութեան վրայ արտասուք թափելը՝ ապացուցանել է, թէ արիւն չունինք թափելու:

Միտքդ ի՞նչ է, եղբայր. ես ի՞նչ ըրի քեզի:

Վսեմափայլ տէր, ձեր գալուստն լսելով՝ փութացի հոս գալ իմ խոնարհ մեծարանացս հաւաստին ձեր ոտքերուն տակը դնել:
Ոտքերուս տակը.շատ ալէկ, դիր:

Տասը տարի է, որ թատերական բեմի վրայ կը քալեմ:
Թող նստէիր:

Այս գիւղը մտնելու համար քանի մը դժւարութիւններ կան... իսկ անկէ ելլելու համար դժւարութիւնները աւելի մեծ են... Արեւելեան խնդրոյն ձեւով շինւած գիւղ մը:

weekly salaries of the poor workers, you have to gather money, and with that money you have to build a house, and on that house you write your name, instead of "built by benefits of robbery"(AA). Another means of becoming rich is fraud; if you are a small cheater, you will become a small rich man; if you are a big cheater, you will become a big rich man. Happy are those who are big cheaters, because the kingdom of Earth is theirs.

The frontiers (of Pera) are: gambling in the east, coquetry in the west, lavishness in the south, and fraud in the north.

In general they are ashamed of carrying national feelings, as you would be ashamed of carrying water to your home.

They have put "all their mind, their attention in the service of progress". In future social order that Baronian imagines "the thing called money will disappear","there will be no beggars on the streets"..."How nice is that!"

To lament own's own faults is the biggest of faults. To shed tears on our misery is a proof that we have no blood to shed.

What is in you mind, brother? What (wrong) did I do to you?

"Your eminence, having heard of your arrival I hurried to come here to put the assurance of my humble respects under you feet."
"Under my feet? All right, put them there!"

"For ten years I have been walking on the stage."
"You could sit down."

There are some difficulties to enter this village...but there are much more difficulties to come out of it...It is a village built in the shape of the 'Oriental Question' (political).

PRECEDING PAGE BLANK-NOT FILMED

ԲԱՌԱՐԱՆ

ՀԱՅԵՐԷՆ - ԱՆԳԼԻԵՐԷՆ

GLOSSARY

ARMENIAN - ENGLISH

Abreviations:

AA	Ancient Armenian
A-n	Armenian
EA	East Armenian
SA	Soviet Armenian
WA	West Armenian
